ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

3(115)2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
3(115)2024



ISSN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱՋԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ,
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

© ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ (ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ) – **Ս. ՍԻՄՈՆՅԱՆ**..... 11

- ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ - **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** 39

- ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ - **Մ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**.....54

- ԱՊԱԿԻՆԵՐԻ ԼՈՒՍԱԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹՅԱՆ՝ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՄՔԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ - **Գ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ** 79

- ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ - **Բ. ՂԱԶԻՆՅԱՆ**.....95

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

- «ԿԱԼԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԱՆՁ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ - **Ս. ՀԱԿՈԲՅԱՆ**.....115

- ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ - **Լ. ԹԵՎՈՍՅԱՆ**.....130

- «ՆԱԽՆԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԸ ՈՐՊԵՍ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ SUI GENERIS ՕԲՅԵԿՏ - **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**.....147

- ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ - **Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**.....170

- ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ - **Հ. ՍԱՐԿԻՍՈՎ**.....181

- ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ - **Ա. ՉԱԽՈՅԱՆ**.....195

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ - **Շ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**.....209

- ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ (ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ) ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ - **Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**.....221

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1729-1742)

- ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 101-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 90-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՆԱԵՎ ՆՇՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1729, 21 մայիսի 2024 թվականի) 233

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ (ՏՐՄԱՆ), ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1730, 4 հունիսի 2024 թվականի).....261

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....266

- 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԺՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ՝ ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1731, 4 հունիսի 2024 թվականի) 273

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....278

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԴԱՇԻՆՔԻ (ՄԱԴ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1732, 4 հունիսի 2024 թվականի).....285

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....289

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԹՈՒՆԻՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՆԻՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՎԻԶԱՅԻ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1733, 4 հունիսի 2024 թվականի).....296

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....300

- «ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ (CMR)՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԵՌՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1734, 4 հունիսի 2024 թվականի).....307

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....311

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՍՈՉԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ, ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1735, 4 հունիսի 2024 թվականի).....318

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....335

- ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 401-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1736, 4 հունիսի 2024 թվականի).....342

- 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1737, 11 հունիսի 2024 թվականի).....364

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....369

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 2 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1738, 11 հունիսի 2024 թվականի).....377

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....383

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1739, 11 հունիսի 2024 թվականի).....390

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....399

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՎԱՐԿ 3449-ARM. «ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱ-ԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ6 ՎԱՆԱՁՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» - ՎԱՐԿԻ ՓԱԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱ-

ՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1740, 2 հուլիսի 2024 թվականի).....406

- ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998 Թ. ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1741, 22 հուլիսի 2024 թվականի).....409

- 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԵՎՐԱՋԱՍԹ) ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1742, 6 օգոստոսի 2024 թվականի).....437

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....449

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՍԱՐՄԱՏԱՐԻՆ.....457

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ «ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ» ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՍՏԱՑԵԼ ԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ.....459

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....461

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԵՎ ԻՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ.....462

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԵՐ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՎԱՇԻՆԳՏՈՆ.....464

- ՍԴ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ՄԵԿՆԵԼ Է ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.....465

DOI: 10.59560/18291155-2024.3-11

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ
Հայաստանում ֆրանսիական համալսարանի
հետազոտող դասախոս,
Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի
իրավագիտության դոկտոր

ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ (ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ)

Ամփոփագիր

Տեսահսկման համակարգերը լայնորեն կիրառվում են անձանց կյանքի, գույքի պաշտպանության, իրավախախտումների կանխարգելման և բացահայտման, ինչպես նաև այլ օրինական շահերի պաշտպանության համար: Միևնույն ժամանակ, տեսահսկումը կարող է հանգեցնել ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալների ապօրինի մշակման: Վերոնշյալ համատեքստում մի կողմից առաջանում է տեսահսկում իրականացնող անձի շահերի պաշտպանության անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ անձնական տվյալների պաշտպանության երաշխիքները պահպանելու հրամայականը: Եթե պետական մարմինների կողմից տեսահսկման իրականացման առանձնահատկություններն արդեն իսկ կարգավորված են օրենսդրությամբ, ապա իրավունքի մասնավոր սուբյեկտների կողմից իրականացվող տեսահսկման իրավաչափությունը, որպես կանոն, հատուկ նորմերի բացակայության պայմաններում գնահատվում է անձնական տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնների հիման վրա:

Հաշվի առնելով հայաստանյան դոկտրինայում քննարկվող հարցի վերաբերյալ ուսումնասիրությունների բացակայությունը՝ սույն հոդվածի առաջին մասը կոչված է բացահայտելու տեսահսկման միջոցով անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները: Աշխատանքի երկրորդ մասը կոչված է քննարկելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված այն երաշխիքները, որոնց վրա պետք է հիմնվի իրավունքի մասնավոր սուբյեկտների կողմից տեսահսկման միջոցով անձնական տվյալների մշակումը:

Հիմնաբառեր. տեսահսկում, անձնական տվյալ, օրինականություն, համաչափություն, թափանցիկություն:

Ներածություն

Տեսահսկման համակարգերի օգտագործումն ինչպես պետության, այնպես էլ մասնավոր իրավունքի սուբյեկտների կողմից կարող է ծառայել վերջիններիս օրինական նպատակների իրագործմանը. այժմ տեսահսկման համակարգերը լայնորեն կիրառվում են անձանց, գույքի պաշտպանության, իրավախախտումների կանխարգելման, ինչպես նաև այլ օրինական շահերի պաշտպանության համար:

Այնուամենայնիվ, տեսահսկումը կարող է բացասական ազդեցություն ունենալ մարդկանց վարքագծի վրա, քանի որ կարող է առաջացնել պարբերաբար հսկողության ներքո լինելու զգացողություն[1], ինչպես նաև հանգեցնել անձի վերաբերյալ տվյալների անհամաչափ և չհիմնավորված մշակման: Վերոնշյալ համատեքստում մի կողմից առաջանում է տեսահսկում իրականացնող անձի շահերի պաշտպանության անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ անձնական տվյալների պաշտպանության երաշխիքները պահպանելու հրամայականը:

Եթե ՀՀ-ում պետական մարմինների կողմից իրենց լիազորությունների շրջանակներում տեսահսկման միջոցով անձնական տվյալների

[1] European data protection board, Guidelines 3/2019 on processing of personal data through video devices, 2020. p. 5.

մշակումը ենթարկվել է ոլորտային կարգավորումների[1], ապա նույնը չի կարելի ասել մասնավոր իրավունքի սուբյեկտների մասով: Տեսահսկման մասով հատուկ նորմերի բացակայության պայմաններում գործում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերը, որոնք չեն նախատեսում հատուկ կարգավորումներ տեսահսկման համար, սակայն նախատեսում են անձնական տվյալների մշակման սկզբունքներ ու կանոններ:

Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում մասնավոր իրավունքի սուբյեկտների կողմից տեսահսկման միջոցով անձնական տվյալների մշակման իրավակարգավորումը և, մասնավորապես, տեսահսկման իրավական հիմքերն ու դրա իրականացման այլ իրավական երաշխիքները՝ տեսահսկման վերաբերյալ ներպետական հատուկ կարգավորումների բացակայության պայմաններում: Վերոնշյալ հարցերի քննարկումը նախևառաջ պահանջում է հասկանալ տեսահսկմամբ անձնական տվյալներ մշակելու էությունն ու առանձնահատկությունները:

Հոդվածում կատարվող ուսումնասիրությունների համար որպես իրավական հիմք են ծառայում ՀՀ և ԵՄ իրավունքները: Աշխատանքում կներկայացվեն նաև տեսահսկման վերաբերյալ անձնական տվյալների պաշտպանության բնագավառում լիազոր մարմնի՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ նաև՝ Գործակալություն) վարչական վարույթների արդյունքում ընդունված

[1] Օրինակ, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված է, որ հանցագործությունները կանխելիս կամ բացահայտելիս, հասարակական կարգի պահպանությունը (այդ թվում՝ ճանապարհային երթևեկության անվտանգությունը) ապահովելիս ոստիկանությունը կարող է հանրային վայրերում օգտագործել անշարժ տեսանկարահանող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ: ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է տեսաձայնագրման հնարավորություն՝ դատապարտյալների կամ այլ անձանց անվտանգության ապահովման կամ այլ իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով՝ դատապարտյալների փախուստները, ինքնավնասումները, ինքնասպանությունները, պատժի կատարման սահմանված կարգի խախտումները, անկարգությունները, հանցանքները կամ այլ իրավախախտումները կանխելու կամ խափանելու նպատակով:

որոշումները, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ-ում և ԵՄ-ում ձևավորված փափուկ իրավունքը»[1]:

1. Տեսահսկումը՝ որպես անձնական տվյալների մշակման եղանակ

1.1. Անձանց նույնականացումը տեսապատկերների միջոցով

Եվրոպայի անձնական տվյալների պաշտպանության վերահսկողի (անգլ՝ European data protection supervisor) ուղեցույցներում տեսահսկումը սահմանվում է որպես տարածքի, միջոցառման, գործունեության կամ անձի տեսահսկումը էլեկտրոնային սարքավորման միջոցով[2]: Հասկանալու համար, թե ինչպես է տեսահսկմամբ իրականացվում անձնական տվյալների մշակում, անհրաժեշտ է նախևառաջ համադրել «անձնական տվյալ» եզրույթը տեսահսկման տեսադաշտում հայտնվող պատկերների հետ:

Այսպես՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալը ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն է, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Այս դրույթից հետևում է, որ անձնական տվյալն այնպիսի տեղեկություն է, որն ունի ֆիզիկական անձին ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնականացնելու հատկություն, այսինքն բնութագրվում է մարդուն նույնականացնելու հատկանիշով: Անձնական տվյալի վերը նշված սահմանման բովանդակությունից հետևում է, որ մարդու տեսապատկերը, այսինքն՝ այն պատկերը, որում տեսանելի է մարդու դեմքը, անձնական տվյալ է, քանի որ տեսապատկերն ունի մարդուն նույնականացնող

[1] Գործակալության՝ «փափուկ իրավունք» ձևավորելու լիազորությունը նախատեսված է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետով, որի համաձայն՝ Գործակալությունը կատարում է հետազոտություններ և մշակողների դիմումների կամ լուսաբանումների հիման վրա տալիս տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն կամ տեղեկացնում է անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին:

[2] European data protection supervisor, Video-surveillance guidelines 2010. p. 7.

հատկություն: Մարդու պատկերի նույնականացնող հատկությունը կայանում է նրանում, որ այն ի ցույց է դնում մարդու ուրույն, միայն իրեն հատուկ դեմքի և մարմնի կառուցվածքի առանձնահատկությունները և տարբերակում է մարդուն այլ մարդկանցից:

Մարդու տեսապատկերը կամ պատկերը որակվել է որպես անձնական տվյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործով: Այդ գործով ՄԻԵԴ-ն արձանագրել և վերահաստատել է այն դիրքորոշումը, որ անձի պատկերը հանդիսանում է իր անհատականության գլխավոր հատկանիշներից մեկը, քանի որ այն ի ցույց է դնում **անձի ուրույն հատկանիշները և տարբերակում է անձին իր նմաններից**[1]: Տեսապատկերի՝ որպես անձնական տվյալի որակմանն անդրադարձել է նաև ԵՄ անձնական տվյալների պաշտպանության վերահսկողը: Այսպես՝ ըստ EDPS-ի՝ դիմապատկերները միշտ անձնական տվյալներ են համարվում նույնիսկ այն դեպքում, երբ **տեսահսկվող անհատները ճանաչված կամ նույնականացված չեն տեսահսկում իրականացնողների կողմից**[2]: Այլ կերպ ասած՝ տեսահսկողի կողմից տեսահսկվողին անձամբ նույնականացնելը կամ չնույնականացնելը որևէ կերպ չի պայմանավորում տեսահսկվող անձի տեսապատկերի անձնական տվյալ լինելը, քանի որ տեսապատկերի՝ որպես անձնական տվյալ որակվելը որոշվում է ոչ թե տեսահսկողի կողմից տեսանյութում պատկերված անձին նույնականացնելով, այլ տեսապատկերի՝ մարդուն նույնականացնելու հատկությամբ: Մասնավորապես, թեև իրավախախտում կատարած անձը նույնականացված չէ տեսահսկում իրականացնող ընկերության կողմից, այնուամենայնիվ, վերջինիս տեսապատկերն ինքնին այնպիսի տվյալ է, որի միջոցով վերջինս կարող է նույնականացվել իրավապահ մարմինների, կամ համացանցում, հեռուստատեսությամբ հրապարակվելու դեպքում՝ այլ անձանց կողմից:

[1] ՄԻԵԴ, *Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի* (թիվ 2), գանգատներ թիվ 40660/08 և 60641/08, կետ 96:

[2] European data protection supervisor, Video-surveillance guidelines, 2010. p. 8.

Այնուամենայնիվ, երբեմն անհրաժեշտ չէ տեսանկարահանել անձի ճանաչելի դեմքի պատկերներ, որպեսզի վերջինս նույնականացվի: Անձի ավելի քիչ տեսանելի կամ անճանաչելի դիմապատկերը նույնպես կարող է անձնական տվյալ համարվել՝ պայմանով, որ վերջինս հնարավոր լինի նույնականացնել անձի ֆիզիկական կամ վարքագծային առանձնահատկություններն այլ տվյալների հետ համադրելով[1]:

Տեսահսկման՝ որպես անձնական տվյալներ մշակելու մասին կարող են վկայել նաև այն նպատակները, որոնց իրագործման համար տվյալներ մշակողն իրականացնում է տեսահսկում: Մասնավորապես, երբ տեսախցիկները տեղադրվում են անձանց և նրանց գույքի անվտանգությունն ապահովելու, իրավախախտումները կանխելու կամ բացահայտելու նպատակով, ապա միջադեպի առկայության դեպքում անձի վերաբերյալ հավաքված տվյալները իրավապահ մարմինների կողմից ձեռքբերված այլ տվյալների հետ համադրության արդյունքում հնարավոր է նույնականացնել իրավախախտումը կատարած անձին:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ անձնական տվյալների մշակումը ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ է՝ անկախ իրականացման ձևից և եղանակից, այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց (...): Այս համատեքստում պետք է հիշատակել C–345/17 գործով ԵՄ Արդարադատության դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ անձանց շարունակական տեսաձայնագրումը և տեսաձայնագրության պահպանումը համակարգչային համակարգի կոշտ սկավառակի վրա համարվում է անձնական տվյալների մշակում[2]: Մեկ այլ գործով նույն դատարանն արձանագրել է, որ տեսահսկման համակարգի միջոցով իրականացվում է անձնական տվյալների մշակում, եթե այն հնարավորություն է տալիս գրանցել և պահպանել

[1] European data protection supervisor, Video-surveillance guidelines, 2010. p. 8.

[2] CJEU, Case C-345/17, *Sergejs Buivids vs. Datu valsts inspekcija*, 14 February 2019, §34.

անձնական տվյալները, օրինակ՝ տեսապատկերները, որոնք թույլ են տալիս նույնականացնել ֆիզիկական անձանց[1]:

Հարկ է նաև նշել, որ անձնական տվյալների փաստի առկայությունը որևէ կերպ չի կարող կախվածության մեջ դրվել մշակման ձևից և եղանակից. այն փաստը, որ տվյալներ մշակողը տեսանյութերին հեռավար եղանակով իրական ռեժիմում հասանելիություն չունի, և որ այս կամ այն տեսանյութի ուսումնասիրությունը կարող է իրականացվել ըստ անհրաժեշտության՝ բողոքի դեպքում կամ ընտրանքային, որևէ ազդեցություն չունի տվյալների մշակման փաստի առկայության վրա:

1.2. Անձանց նույնականացումը կենսաչափական անձնական տվյալների միջոցով

Տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց վերափոխվում են նաև տեսահսկմամբ անձնական տվյալներ մշակելու եղանակները: Ներկայումս հատկապես տարածված է կենսաչափական անձնական տվյալների մշակման միջոցով անձանց նույնականացման պրակտիկան: Կենսաչափական տվյալների՝ որպես անձնական տվյալի առանձնահատուկ տեսակի մասին համապարփակ կարգավորումներ նախատեսված են ԵՄ օրենսդրությամբ: Մասնավորապես, ըստ Անձնական տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (այսուհետ նաև՝ GDPR կամ Կանոնակարգ) կենսաչափական են համարվում **հատուկ տեխնիկական մշակման արդյունքում ստացված անձնական տվյալները**, որոնք վերաբերում են անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական կամ վարքագծային առանձնահատկություններին, և որոնց միջոցով իրականացվում է նրանց **եզակի նույնականացումը**, օրինակ՝ դեմքի պատկերները կամ մատնահետքը: Բովանդակային առումով կենսաչափական անձնական տվյալի նույնական սահմանում նախատեսված է Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիայի

[1] CJUE, Case C-708/18, *TK vs. Asociaţia de Proprietari bloc M5A-ScaraA*, 11 December 2019, §35.

(առավել հայտնի անվանումը՝ 108+ կոնվենցիա) պաշտոնական պարզաբանումներով[1]:

Պրակտիկայում հաճախ առաջանում է այն հարցը, թե արդյոք անձի տեսապատկերը համարվում է կենսաչափական անձնական տվյալ: Այս առումով հարկ է նշել, որ GDPR-ի 51-րդ կետը նախատեսում է, որ տեսանկարները համարվում են կենսաչափական տվյալներ միայն այն դեպքում, երբ մշակվում են հատուկ տեխնիկական միջոցներով, որոնք թույլ են տալիս ֆիզիկական անձի եզակի նույնականացումը: Նմանատիպ նույնականացումը իրավակիրառ պրակտիկայում բնորոշվում է որպես դեմքի ճանաչում (անգլ.՝ facial recognition):

Տեսապատկերի՝ որպես կենսաչափական անձնական տվյալի միջոցով անձի եզակի նույնականացման բացահայտումը պահանջում է տեխնիկական տեսանկյունից վերլուծել այդպիսի անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները: Նախևառաջ, տեսախցիկի կամ տեսաձայնագրող սարքի միջոցով նկարահանվում է անձի տեսապատկերը, այսինքն՝ տեղի է ունենում անձնական տվյալի հավաքում: Այնուհետև, վերոնշյալ եղանակով հավաքված անձի տեսապատկերի հիման վրա ստեղծվում է հատուկ թվային մոդել, որը պարունակում է անձի արտաքին տեսքի որոշակի առանձնահատկություններ[2]: Թվային մոդելները պահպանվում են տվյալների հատուկ բազաներում: Եվ վերջապես, անձին նույնականացնելու նպատակով տեսախցիկի կամ տեսաձայնագրող սարքի միջոցով հավաքվում են տվյալներ անձի տեսապատկերի մասին, համեմատում տվյալների բազայում առկա թվային մոդելների հետ, և տեսապատկերի և վերջինիս թվային մոդելի միջև համընկման պարագայում իրականացվում է անձի ինքնաշխատ նույնականացումը: Անձի տեսապատկերի յուրաքանչյուր թվային

[1] Վերը նշված պարզաբանումների 58-րդ կետով սահմանված է, որ կենսաչափական են համարվում հատուկ տեխնիկական մշակման արդյունքում ստացված անձնական տվյալները, որոնք վերաբերում են անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական կամ վարքագծային առանձնահատկություններին, և որոնց միջոցով իրականացվում է նրանց եզակի նույնականացումը:

[2] CNIL, Reconnaissance faciale pour un debat à la hauteur des enjeux, 2019. p. 3.

մոդելով հնարավոր է նույնականացնել միայն կոնկրետ այդ անձին, հետևաբար նմանատիպ նույնականացումը կոչվում է եզակի: Այլ կերպ ասած՝ կենսաչափական անձնական տվյալների միջոցով անձի եզակի նույնականացումը ենթադրում է տվյալներ մշակողի մոտ առկա տվյալների բազայում առկա անձի կենսաչափական տվյալների համեմատում/համադրում անձի՝ հետագայում տեսախցիկների միջոցով նույնականացման շրջանակներում ստացված տվյալների հետ:

Վերոնշյալից կարելի է բխեցնել, որ տեսահսկման կամ տեսանկարահանման արդյունքում ստացված անձի տեսապատկերը կարող է համարվել կենսաչափական անձնական տվյալ միայն այն պարագայում, երբ բավարարում է կենսաչափական անձնական տվյալի մշակման վերոնշյալ չափորոշիչներին: Մասնավորապես, տեսախցիկները, որոնք հնարավորություն են տալիս նկարահանել սահմանված տարածքում գտնվող մարդկանց և նույնիսկ նրանց դեմքերը, սակայն թույլ չեն տալիս ինքնաշխատ (ավտոմատ) կերպով վերջիններիս ուղղակիորեն նույնականացնել, չեն մշակում կենսաչափական անձնական տվյալներ:

Ինչ վերաբերում է ՀՀ իրավունքում անձանց տեսապատկերի՝ որպես կենսաչափական անձնական տվյալ որակելու հնարավորությանը, ապա Օրենքի 3-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ կենսաչափական անձնական տվյալներ են անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկությունները: Եթե համեմատենք վերոնշյալ սահմանումը GDPR-ով և 108+ կոնվենցիայով տրված սահմանումների հետ, ապա ակնհայտ է, որ Օրենքով տրված կենսաչափական անձնական տվյալը բովանդակային առումով ավելի լայն է, քանի որ չի պահանջում, որ կենսաչափական տվյալը լինի անձին հատուկ տեխնիկական միջոցներով եզակիորեն նույնականացնող տվյալ: Այսինքն՝ Օրենքի տեսանկյունից տեսապատկերը կամ անձի արտաքին տեսքը բնութագրող այլ տվյալներն ինքնաբերաբար կորակվեն կենսաչափական անձնական տվյալներ այնքանով, որքանով թույլ են տալիս ինքնին կամ այլ տվյալների հետ համադրության արդյունքում նույնականացնել անձին:

Տեսապատկերի՝ որպես անձնական տվյալի որակման առանձնահատկությունները բացահայտելուց հետո սույն աշխատանքը կոչված է քննարկելու տեսահսկման միջոցով անձնական տվյալներ մշակելու իրավական հիմքի հիմնախնդիրը:

2. Տեսահսկման միջոցով անձնական տվյալների մշակման իրավական երաշխիքները

Տեսահսկումը՝ որպես անձնական տվյալների մշակում, պետք է իրականացվի անձնական տվյալների պաշտպանության սկզբունքներին համապատասխան: Վերոնշյալ սկզբունքներն ամրագրված են Օրենքով: Դրանց շարքում անկյունաքարային նշանակություն ունեն օրինականության, համաչափության և թափանցիկության սկզբունքները:

2.1. Անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքը

Անձնական տվյալների մշակումը, այդ թվում՝ տեսահսկումը պետք է լինի օրինական: Այս սկզբունքը ենթադրում է, որ տվյալներ մշակողը պարտավոր է մշակել անձնական տվյալներ՝

1. միայն օրինական և որոշակի նպատակներով,
2. համապատասխան իրավական հիմքի հիման վրա:

Այսպես՝ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով: Տվյալների մշակման նպատակի որոշակիությունը ենթադրում է, որ չի թույլատրվում տվյալների մշակումն անորոշ, ոչ ճշգրիտ կամ վերացական նպատակներով[1]: Օրինական նպատակի պահանջն ակնհայտ է. տվյալները չեն կարող մշակվել ապօրինի նպատակներով: Պետական մարմնի դեպքում տվյալների մշակման նպատակը պետք է լինի օրենքով սահմանված, մասնավոր սուբյեկտների դեպքում՝ օրենքով չարգելված:

[1] Explanatory Report to the Convention for the protection of individuals with regard to the processing of personal data, 2018. p. 20.

Անձնական տվյալների մշակումն օրինական է, եթե այն իրականացվում է համապատասխան իրավական հիմքի հիման վրա: Գործերից մեկով Գործակալությունն արձանագրել է, որ սեփական կամ ընտանիքի կամ գույքի անվտանգության նպատակով ընդհանուր օգտագործման կամ հանրային տարածքների հատվածներ համաչափության սկզբունքի պահպանմամբ տեսահսկելու անհրաժեշտության դեպքում պետք է ապահովել նաև տվյալների մշակման իրավական հիմքի առկայությունը[1]: Այսինքն՝ նույնիսկ օրինական և որոշակի նպատակներով իրականացված տեսահսկումը կարող է խախտել Օրենքը, եթե այն չի իրականացվել պատշաճ իրավական հիմքի հիման վրա:

Օրենքի՝ «Անձնական տվյալները մշակելու օրինականությունը» վերտառությամբ 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե՝ 1) տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ սույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, 2) մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից: Վերոնշյալ հոդվածից բխում է, որ անձնական տվյալների մշակումը կհամարվի օրինական, եթե իրականացվի կամ անձնական տվյալի սուբյեկտի ***համաձայնությամբ***, կամ համաձայնության բացակայության դեպքում մշակումն ***ուղղակիորեն նախատեսված լինի օրենքով***, կամ տվյալները ձեռք բերվեն անձնական տվյալների ***հանրամատչելի աղբյուրներից***[2]:

Որպես կանոն, մասնավոր իրավունքի սուբյեկտների համար անձնական տվյալների մշակման առավել տարածված իրավական հիմքը համաձայնությունն է: ԵՄ իրավունքում որդեգրված և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից հաստատված դիրքորոշման համաձայն՝ «տվյալների սուբյեկտի համաձայնություն» նշանակում է որոշակի և տեղեկացված, ազատ տրված ցանկացած կամահայտնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը՝ իր անձնական

[1] N-014/05/22 վարչական գործով Գործակալության որոշումը:

[2] N-017/09/17 վարչական գործով Գործակալության որոշումը:

տվյալները մշակելու համար[1]: Համաձայնությունը կարող է տրվել գրավոր՝ հաստատված ստորագրությամբ, բանավոր, գործողության միջոցով, որն ակնհայտ վկայում է համաձայնության մասին: Թեև համաձայնությունը կարող է տրվել ցանկացած ձևով, սակայն այն պետք է հստակ արտացոլի տվյալների սուբյեկտի կամքը իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ: Այսինքն՝ համաձայնությունը պետք է լինի «միանշանակ» և չպետք է որևէ կասկած մնա, որ տվյալների սուբյեկտի համաձայնությունն ուղղված է հենց անձնական տվյալների մշակմանը: Այլ կերպ ասած՝ տվյալների սուբյեկտի կամահայտնությունը, որով նա տալիս է իր հավանությունն անձնական տվյալների մշակման վերաբերյալ, պետք է միանշանակորեն վկայի տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ, իսկ եթե կա տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ ողջամիտ կասկած, ապա համաձայնությունը չի կարող համարվել միանշանակորեն տրված[2]: Վերոշարադրյալից հետևում է, որ տվյալների սուբյեկտի կողմից մինչև տեսահսկվող տարածք մտնելը տեսահսկման դաշտում տեղադրված վահանակի միջոցով տեսահսկման մասին տեղեկանալիս տեսահսկվող տարածք մտնելն ինքնին չի կարող համարվել որպես միանշանակորեն տրված համաձայնություն: Բացի այդ, միշտ չէ, որ հնարավոր է ստանալ տվյալների բոլոր սուբյեկտների (տեսահսկվող անձանց) համաձայնությունը (օրինակ՝ առևտրի կետերում՝ հաճախորդների համաձայնությունը, կրթական հաստատություններում՝ ուսանողների համաձայնությունը, բազմաբնակարան շենքերում՝ բոլոր սեփականատերերի համաձայնությունը): Ավելին, անձինք կարող են հրաժարվել իրենց անձնական տվյալները մշակելու համաձայնությունը տրամադրելուց, որի պարագայում տվյալներ մշակողը չի ունենա հնարավորություն տեսահսկման իրականացմամբ պաշտպանելու իր սեփականությունը, անվտանգությունը և այլ օրինական շահերը:

Ինչ վերաբերում է անձի դիմապատկերի և ֆիզիոլոգիական այլ առանձնահատկությունների՝ որպես հանրամատչելի տվյալ որակվելու

[1] Վճռաբեկ դատարան, գործ թիվ ԵԴ/10036/02/19, 10.03.2023 թ.:

[2] Վճռաբեկ դատարան, գործ թիվ ԵԴ/10036/02/19, 10.03.2023 թ.:

հնարավորությանը[1], ապա այն ակնհայտորեն անհիմն է, քանի որ որևէ իրավական ակտով նշված տվյալների հանրամատչելիության ռեժիմ սահմանված չէ, իսկ անձի վարքագծից հնարավոր չէ ակնհայտորեն բխեցնել, որ տեսահսկման տարածք մտնելով վերջինս հանրամատչելի է դարձնում իր տվյալները: Արդյունքում պարզ է դառնում, որ անձնական տվյալները մշակելու համաձայնության բացակայության պարագայում տեսահսկման միակ իրավական հիմքն օրենքով անձնական տվյալների մշակումն ուղղակիորեն նախատեսված լինելն է:

Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված անձնական տվյալների մշակման՝ օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելու պահանջը ենթադրում է, որ տվյալների մշակման հնարավորությունը, ինչպես նաև դրա իրականացման պայմանները պետք է սահմանված լինեն օրենսդիր մարմնի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտով՝ օրենքով: Վերոնշյալից բխում է, որ ՀՀ օրենսդիր մարմինը որդեգրել է այն գաղափարը, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, տվյալների մշակման մյուս հիմքերի բացակայության պարագայում, անձնական տվյալների մշակման իրավական հիմք նախատեսելու հնարավորությունը վերապահված է բացառապես օրենսդիր մարմնին: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր»: Այսինքն՝ օրենքով համապատասխան լիազորության առկայության դեպքում անձնական տվյալների մշակումը կարող է նախատեսվել նաև ենթաօրենսդրական ակտերով:

[1] Օրենքի 3-րդ հոդվածի 15-րդ կետը հանրամատչելի անձնական տվյալները սահմանում է որպես տեղեկություններ, որոնք տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ իր անձնական տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք օրենքով նախատեսված են որպես հանրամատչելի տեղեկություններ:

Մասնավոր իրավունքի սուբյեկտների կողմից անձնական տվյալներ մշակելու ուղղակիորեն նախատեսող նորմ ամրագրված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 132-րդ հոդվածով, որը, ի թիվս այլ նպատակների, թույլատրում է գործատուին մշակել աշխատողների անձնական տվյալները՝ աշխատողների անձնական անվտանգության ապահովմանը աջակցելու, ինչպես նաև գույքի ամբողջականությունն ապահովելու նպատակով: Սակայն օրենսդրության վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդիր մարմինն ուղղակիորեն չի նախատեսել հանրությանը հասանելի վայրերում (առևտրի կետեր, ժամանցային վայրեր), ինչպես նաև սահմանափակ հասանելիություն ունեցող վայրերում (բազմաբնակարան շենքեր, համալսարաններ) մասնավոր իրավունքի սուբյեկտների կողմից տեսահսկում իրականացնելու իրավական հիմքերը:

Հաշվի առնելով այն փաստը, որ օրենսդիր մարմինը մի կողմից մասնավոր իրավունքի սուբյեկտների կողմից տեսահսկման միջոցով անձնական տվյալներ մշակելու համար տվյալների սուբյեկտի կողմից տրված համաձայնության բացակայության դեպքում տվյալների մշակման պատշաճ իրավական հիմք է համարել բացառապես օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելը, մյուս կողմից ձեռնպահ է մնացել մասնավոր իրավունքի որոշ սուբյեկտների համար օրենքով ուղղակիորեն տեսահսկման իրականացման հնարավորություն սահմանելուց, կարելի է արձանագրել, որ տվյալ իրավիճակում գործ ունենք օրենսդրական բացի, այսինքն՝ ինչպես բնորոշել է Սահմանադրական դատարանը, իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայություն հետ[1]:

Այսպիսով, հաշվի առնելով մասնավոր իրավունքի գերակշռող սուբյեկտների՝ բազմաբնակարան շենքերի սեփականատերերի, մասնավոր ընկերությունների, կրթական հաստատությունների կողմից տեսահսկում իրականացնելու իրավական հիմքի բացակայությունը՝ իրավակիրառ մարմինը կանգնում է երկընտրանքի առջև. առաջնորդվել

[1] Սահմանադրական դատարան, ՍԴՈ–922, 2 նոյեմբերի 2010 թ., կետ 6:

պոզիտիվ իրավունքի կարգադրագրերով՝ չնայած իրավահարաբերության կողմերից մեկի շահերի պաշտպանության անհրաժեշտությանը, թե կողմերից մյուսի լեգիտիմ շահերով՝ անտեսելով օրենսդրի կողմից անձնական տվյալների մշակմանն առաջադրված պահանջները:

Այս համատեքստում ԵՄ անձնական տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը նախատեսում է անձնական տվյալների մշակման առավել լայն իրավական հիմքեր: Մասնավորապես, Կանոնակարգի 6-րդ հոդվածի 1-ին մասի f կետի համաձայն՝ տվյալների մշակումն օրինական է, եթե մշակումն անհրաժեշտ է տվյալներ մշակողի օրինական շահերի պաշտպանության նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալների սուբյեկտի հիմնարար իրավունքներն ու ազատությունները գերակայում են այդ շահերի նկատմամբ: Ընդ որում «օրինական շահ» եզրույթը ներառում է ինչպես անձի հիմնարար իրավունքներն ու ազատությունները, այնպես էլ օրենսդրությամբ ուղղակիորեն չսահմանված շահերը[1]: Կանոնակարգի հիմքում ընկած է այն գաղափարը, որ հնարավոր չէ օրենսդրական մակարդակով կարգավորել բոլոր այն դեպքերը, երբ կառաջանա տվյալների մշակման անհրաժեշտություն: Հետևաբար, տվյալների մշակման իրավաչափությունը պետք է որոշվի յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում (case by case analysis):

Վերոնշյալ բանաձևի կիրառումը ՀՀ իրավունքում խնդրահարույց է մի շարք պատճառներով: Նախ, եթե դիտարկենք, որ ինքնին օրինական շահի առկայությունը բավարար հիմք է տվյալներ մշակելու համար՝ առանց օրինական շահի պաշտպանությունը Օրենքում որպես տվյալների մշակման հիմք նախատեսելու, ապա տեսահսկման միջոցով անձնական տվյալների մշակումը կհամարվի օրինական միայն օրենքի contra legem իրավակիրառման արդյունքում: Տվյալ պարագայում առկա կլինի օրենքի կարգավորում (քննարկվող դեպքում՝ չմշակել անձնական տվյալներ առանց օրենսդրությամբ սահմանված իրավական հիմքի), սակայն

[1] **C. Kuner** (ed), The EU Data Protection Regulation: A Commentary. «Oxford university press», 2020, p. 321.

իրավակիրառ մարմինը, տեսահսկման իրավաչափության վերաբերյալ վեճի շրջանակներում ելնելով որոշակի իրավաչափ նպատակներից (քննարկվող դեպքում՝ տեսահսկում իրականացնող անձի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից), կայացնում է օրենքի կարգավորմանը հակառակ որոշում (քննարկվող դեպքում՝ չի պահանջում տեսահսկում իրականացնող անձից ներկայացնել տվյալների մշակման իրավական հիմքը)[1]: Որպես contra legem իրավակիրառման դրսևորում հնարավոր է գնահատել տեսահսկման իրավաչափությունը՝ անձնական տվյալների մշակման մյուս հիմնական սկզբունքների պահպանումը ստուգելով: Այսպիսի մոտեցումը ենթադրում է, որ՝

1. տեսահսկումը պետք է ունենա օրինական և որոշակի նպատակ (Օրենքի 4-րդ հոդված),

2. տեսահսկմամբ մշակվող անձնական տվյալները պետք է լինեն համաչափ հետապնդվող նպատակին (Օրենքի 5-րդ հոդված),

3. տեսահսկումը պետք է իրականացվի թափանցիկության սկզբունքի հիման վրա, այսինքն՝ տվյալների սուբյեկտները, որոնց տեսապատկերները՝ որպես անձնական տվյալներ, հավաքվելու և այլ կերպ մշակվելու են տվյալներ մշակողների կողմից պետք է լինեն տեղեկացված տեսահսկման մասին (Օրենքի 18-րդ հոդված, 4-րդ մաս)[2]:

Միևնույն ժամանակ, տեսահսկման իրավական հիմքի բացակայությունը պրակտիկայում կարող է հանգեցնել հակասական իրավակիրառ պրակտիկայի. մասնավորապես, դատարանների դիրքորոշումը կարող է տարբերվել ոլորտի լիազոր մարմնի դիրքորոշումից: Բացի այդ, միևնույն դատարանի դատավորները կարող են ունենալ տարբեր դիրքորոշումներ քննարկվող հարցի վերաբերյալ:

Մյուս խնդիրն այն է, որ երբեմն օրինական շահի առկայությունը գնահատելիս հարկավոր է հաշվի առնել ոչ միայն կոնկրետ և օրինական

[1] **Ա. Ղամբարյան**, Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը Հայաստանի Հանրապետության անկախացման գործընթացում: «Գիտական Արցախ», № 3(10), 2021, էջ 87:

[2] Անձնական տվյալների մշակման համաչափության և թափանցիկության սկզբունքները կներկայացվեն սույն աշխատանքի հաջորդ ենթապարագրաֆներում:

նպատակի առկայությունը, այլ նաև տեսահսկմանն առարկող անձանց կամահայտնությունը: Այսպիսի իրավիճակի վառ օրինակ է բազմաբնակարան շենքերում տեսահսկման իրականացումը: Այս համատեքստում նախ պետք է պարզել, թե սեփականատերերի ձայների ինչպիսի հարաբերակցությամբ է որոշվում բազմաբնակարան շենքերի մուտքերում, ինչպես նաև ընդհանուր սեփականություն հանդիսացող տարածքներում տեսահսկում իրականացնելը: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասը նախատեսում է միաձայն կամ ձայների կեսից ավելիի առկայության դեպքում որոշումների ընդունման պահանջներ՝ կախված քննարկվող հարցից, սակայն նշված հոդվածը որևէ կերպ չի անդրադառնում տեսահսկմանը: Գործակալության կողմից ընդունված տեսահսկման ուղեցույցով սահմանված է, որ *«տեսահսկման համակարգը տեղադրելու համար պահանջվում է ձեռք բերել բնակարանների սեփականատերերի կեսից ավելիի գրավոր համաձայնությունը: Շենքի բոլոր բնակիչները պետք է տեղեկացված լինեն տեսահսկման համակարգ տեղադրված լինելու մասին»:* Սակայն վերոնշյալ ուղեցույցի մեջ առաջարկվող լուծման նորմատիվ նշանակությունը խնդրահարույց է, քանի որ այն ոչ թե կոչված է մեկնաբանելու օրենսդրորեն ամրագրված նորմը, այլ լրացնելու բացակայող նորմը, այսինքն՝ պոզիտիվ իրավանորմի բացակայությունը լրացնել ուղեցուցային կանոնով: Նման պայմաններում տեսահսկման իրականացման համար համաձայնություն չտված անձը կարող է դատարանում վիճարկել տեսահսկման օրինականությունը, այն է՝ իրավական հիմքի բացակայությունը, իսկ դատարանների կողմից նշված հարցի վերաբերյալ կարող է ստեղծվել հակասական իրավակիրառ պրակտիկա:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ օրենսդրական մակարդակով տեսահսկման իրավակարգավորումը չունի ողջամիտ այլընտրանք: Օրենքի մակարդակով տեսահսկման յուրաքանչյուր դեպքի համար պետք է սահմանվեն տեսահսկման իրականացման հիմնական պայմաններ, ինչպիսիք են՝ 1) տեսահսկման թույլատրելի նպատակները,

2) անհրաժեշտության դեպքում՝ այն տարածքները, որոնց տեսահսկումը թույլատրված է, 3) եթե տեսահսկումը կարող է իրականացվել որոշակի կատեգորիայի անձանց համաձայնությամբ (օրինակ՝ բազմաբնակարան շենքի բնակիչների), ապա ձայների նվազագույն քանակը, որոնց առկայության դեպքում տեսահսկումը կհամարվի օրինական:

2.2. Անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքը

Անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքն ամրագրված է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Անձնական տվյալների մշակման **պիտանի** լինելը ենթադրում է, որ հետապնդվող նպատակին հասնելու տեսանկյունից տվյալների մշակումն արդյունավետ միջոց է: Այս առումով Գործակալությունն արձանագրել է, որ գույքի անձեռնմխելիության, անվտանգության, այլ անձանց կողմից միջամտությունը կանխելու կամ միջամտությունն արձանագրելու նպատակով այնպիսի տեսահսկում իրականացնելը, որը տեխնիկապես թույլ չի տալիս արձանագրել գույքի նկատմամբ միջամտությունը, թույլ չի տալիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնականացնել միջամտողին, ոչ պիտանի կլինի սահմանված նպատակին հասնելու համար և ըստ այդմ խնդրահարույց կլինի անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքի տեսանկյունից[1]:

Նպատակին հասնելու միջոցի **անհրաժեշտությունը** նշանակում է, որ պետք է մշակվեն միայն տվյալների մշակման նպատակի իրականացման համար անհրաժեշտ տվյալները և պետք է արգելվի այնպիսի անձնական տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն տվյալները մշակելու նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ: Տվյալների մշակման **անհրաժեշտ** լինելը ենթադրում է, որ հետապնդվող նպատակին հասնելու միջոցներից անձնական տվյալների կոնկրետ մշակումը պետք է լինի մարդու իրավունքներին և ազատություններին

[1] N-019/06/22 վարչական գործով Գործակալության որոշումը:

առավել նվազ միջամտող միջոցը, այսինքն այն պետք է լինի առկա բոլոր հնարավոր միջոցների շարքում առավել նվազ միջամտողը[1]: Միաժամանակ, «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի փոփոխող արձանագրության/ 108+ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ անձնական տվյալի մշակման միջոցի չափավոր լինելը նշանակում է, որ պետք է լինի արդար հավասարակշռություն տվյալների մշակմամբ (տեսաձայնագրմամբ) հետապնդվող նպատակի և տեսաձայնագրվող անձի հիմնարար իրավունքների և ազատությունների միջև:

Միջոցի **չափավորության** ներքո նկատի է առնվում, որ անձնական տվյալները պետք է մշակվեն այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է մշակման օրինական նպատակներին հասնելու համար: Վարույթներից մեկով Գործակալությունը գտել է, որ տեսախցիկով իրականացվող տեսահսկմամբ անձնական տվյալների մշակումը **չափավոր** չէ տեսախցիկով իրականացվող տեսահսկման նպատակին հասնելու համար, քանի որ տեսախցիկը կահավորված չէ այնպես, որ դրա տեսադաշտում ներառվի միայն այն նվազագույն տարածքը, որը համադրելի է անձի սեփականության անվտանգությունն ապահովելու համար, առնվազն, առանց Դիմումատուների տան պատուհանի: Ավելին, տվյալ դեպքում համաչափության սկզբունքի տեսանկյունից հիմնավորված չէ նաև տեսահսկման արդյունքում իրականացվող այնպիսի ձայնագրումը, որը կներառի Դիմումատուների տանը (ներառյալ՝ պատուհանի անմիջական հարևանությամբ տեղի ունեցող) ընդհանուր խոսակցությունները[2]: ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ սուպերմարկետում գողության կասկածների հիմքով իրականացված տեսահսկումը իրավաչափ էր և համաչափ, քանի որ սահմանափակված էր դրամարկղերի տարածքով[3]:

[1] Guidelines 3/2019 on processing of personal data through video devices. Version 2.0. Adopted on 29 January 2020, p. 10.

[2] Ն-019/06/22 վարչական գործով Գործակալության որոշումը:

[3] ՄԻԵԴ, *Լոպեզ Ռիբալդան ընդդեմ Իսպանիայի*, գանգատներ թիվ 1874/13 և 8567/13:

Այնուամենայնիվ, հնարավոր է, որ տարածքի տեսահսկումը գերազանցի այն սահմանները, որոնց տեսահսկումն անհրաժեշտ է իրավաչափ նպատակին հասնելու համար: Այս համատեքստում տվյալներ մշակողը պետք է ձեռնարկի տեխնիկական միջոցներ, օրինակ՝ իր սեփականության շրջանակներից դուրս գտնվող տարածքների արգելափակումը կամ պիքսելավորումը[1], որի դեպքում վերոնշյալ տարածքում գտնվող անձանց հնարավոր չի լինի նույնականացնել: Վերոնշյալ միջոցառման կիրառումը բխում է Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջից, ըստ որի՝ արգելվում է անձնական տվյալների մշակումը, եթե տվյալները մշակելու նպատակին հնարավոր է հասնել ապանձնավորված կերպով:

Անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքի չափանիշներից է նաև տվյալները պահպանելու ժամկետը: Այսպես՝ Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ անձնական տվյալները պետք է պահպանվեն այնպես, որ բացառվի տվյալների սուբյեկտի հետ դրանց նույնականացումն ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է դրանց նախօրոք որոշված նպատակներին հասնելու համար: Գործակալությունը տեսահսկմամբ ստացված տվյալների պահպանման ժամկետին չի անդրադարձել իր իրավակիրառ պրակտիկայում: Փոխարենը, ոլորտում ձևավորված փափուկ իրավունքը նախատեսում է, որ մարդկանց և գույքի նկատմամբ կատարված հանցանքների արձանագրումը շատ դեպքերում տեղի է ունենում դրանց իրագործմանը հաջորդող ժամերում: Ուստի հետապնդվող նպատակի տեսանկյունից 24 ժամը բավարար է տվյալների պահպանման համար, քանի դեռ այդ ժամկետում չի արձանագրվել անձանց կամ գույքին վնաս պատճառելու դեպք: Սակայն օբյեկտիվ և հիմնավոր շարժառիթների առկայության դեպքում տվյալների պահպանման ժամկետը կարող է երկարաձգվել[2]:

[1] Guidelines 3/2019 on processing of personal data through video devices. Version 2.0. Adopted on 29 January 2020, p. 11.

[2] ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Տեսահսկման ուղեցույց: 2016, էջ 4:

2.3. Անձնական տվյալների մշակման թափանցիկության սկզբունքը

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ամրագրված է տվյալներ մշակողի՝ իր կողմից մշակվող անձնական տվյալների մշակման, հետևաբար նաև՝ տեսահսկման մասին տվյալների սուբյեկտին տեղեկություններ տրամադրելու պարտականություն: Այս պահանջը հիմնված է տվյալների մշակման թափանցիկության սկզբունքի վրա, համաձայն որի՝ տվյալների սուբյեկտները պետք է հասանելի և հասկանալի եղանակով տեղեկացված լինեն, թե ինչպես է իրականացվում նրանց անձնական տվյալների մշակումը[1]: Այնուամենայնիվ, ըստ ՄԻԵԴ-ի դիրքորոշման՝ որոշ դեպքերում տեսահսկման մասին չտեղեկացնելը կարող է իրավաչափ լինել: Մասնավորապես, առևտրի կենտրոնում գողությունները կանխելու և բացահայտելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում գործատուի կողմից դրամարկղի տարածքը տեսահսկելն առանց այդ մասին աշխատողներին տեղեկացնելու չի խախտում Կոնվենցիայի 8-րդ հոդվածը[2]:

Օրենքով սահմանված է տվյալներ մշակողների վերոնշյալ պարտականության կատարման երկու դեպք՝ կախված տվյալների մշակման իրավական հիմքից: *Առաջին*՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ տվյալներ մշակողը տվյալների սուբյեկտի համաձայնությունն ստանալու նպատակով ծանուցում է տվյալներ մշակելու մտադրության մասին: Նույն հոդվածի 2-րդ մասով նշվում են այն տեղեկությունները, որոնք պետք է տրամադրվեն տվյալների սուբյեկտին[3]: *Երկրորդ*՝ Օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում

[1] Article 29 Working Party, Guidelines on transparency under Regulation 2016/679, p. 6.

[2] ՄԻԵԴ, *Լոպեզ Ռիբալդան ընդդեմ Իսպանիայի*, գանգատներ թիվ 1874/13 և 8567/13:

[3] Այդ տեղեկություններն են՝ 1) տվյալների սուբյեկտի ազգանունը, անունը, հայրանունը, 2) անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը և նպատակը, 3) մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը, 4) անձնական տվյալների հետ կատարման ենթակա գործողությունների ցանկը, որոնց համար հայցվում է տվյալների սուբյեկտի համաձայնությունը, 5) այն անձանց շրջանակը, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները, 6) անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունը հայցող մշակողի կամ նրա ներկայացուցչի անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը) և գտնվելու կամ հաշվառման (փաստացի բնակության) վայրը, 7) տվյալների սուբյեկտի

է, որ եթե անձնական տվյալները ստացվել են ոչ տվյալների սուբյեկտից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև հանրամատչելի անձնական տվյալների, ապա մշակողը մինչև այդպիսի անձնական տվյալները մշակելը պարտավոր է տվյալների սուբյեկտին տրամադրել սույն հոդվածով նշված տեղեկությունները[1]: Այսպիսով, Օրենքը տվյալներ մշակողներին պարտավորեցնում է տվյալների սուբյեկտին տրամադրել տեղեկություններ՝ անկախ նրանից՝ տեսահսկումն իրականացվում է տվյալների սուբյեկտի համաձայնությամբ, թե առանց դրա:

Տվյալների սուբյեկտի համաձայնության հիման վրա մինչև տեսահսկում իրականացնելը տվյալների մշակման վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը իրավական տեսանկյունից խնդիրներ չի առաջացնում: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «տեղեկացված լինելը» նշանակում է, որ տվյալների սուբյեկտի համաձայնությունը պետք է հիմնված լինի անձնական տվյալների մշակման հանգամանքները և հետևանքները գիտակցելու և հասկանալու, անձնական տվյալների մշակման (մշակվող տվյալների, մշակման նպատակի, այլ անձանց հնարավոր փոխանցման, տվյալների սուբյեկտի իրավունքների և այլնի) վերաբերյալ ճշգրիտ և լիարժեք տեղեկությունների վրա: Ընդ որում, Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները պետք է հասանելի, հասկանալի և տեսանելի լինեն տվյալների սուբյեկտի համար, այլ ոչ թե «հասանելի ինչ-որ տեղ»[2]: Որպես օրինակ, Օրենքի

կողմից անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում պահանջելու կամ մշակման հետ կապված այլ գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկություններ, 8) հայցվող համաձայնության գործողության ժամկետը, ինչպես նաև համաձայնությունը հետ կանչելու կարգը և դրա հետևանքները:

[1] Այդ տեղեկություններն են՝ 1) մշակողի կամ նրա լիազորած անձի (առկայության դեպքում) անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը) և գտնվելու կամ հաշվառման (փաստացի բնակության) վայրը, 2) անձնական տվյալները մշակելու նպատակը և իրավական հիմքը, մշակվող տվյալների ցանկը, 3) անձնական տվյալների հավանական օգտագործողների շրջանակը, 4) տվյալների սուբյեկտի՝ սույն օրենքով սահմանված իրավունքները:

[2] Վճռաբեկ դատարան, գործ թիվ ԵԴ/10036/02/19, 10.03.2023 թ.:

10-րդ հոդվածում սահմանված տեղեկությունները կարող են նշված լինել այն փաստաթղթի մեջ, որը ստորագրելով անձը տալիս է իր տվյալները մշակելու համաձայնությունը, կամ կայքում, որտեղ կոնկլյուդենտ գործողություն կատարելով (վանդակի վրա սեղմելով)՝ անձը համաձայնում է, որ իր տվյալները մշակվեն:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ տեսահսկումը հիմնված չէ տվյալների սուբյեկտի համաձայնության վրա, ապա Օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ հոդվածով ամրագրված է, որ մշակողի կողմից տվյալների սուբյեկտին անձնական տվյալների վերաբերյալ տեղեկությունները պետք է տրամադրվեն հասանելի ձևով և չպետք է պարունակեն տվյալների այլ սուբյեկտի վերաբերող անձնական տեղեկություններ: Այսպիսով, Օրենքը սահմանում է տվյալների սուբյեկտին տեղեկություններ տրամադրելու հիմնական, ելակետային կանոնները, իսկ տեխնիկական միջոցների ընտրության հարցը թողնված է տվյալներ մշակողներին: Գործակալության տարբեր որոշումներում արձանագրվել է, որ տեսահսկվող անձինք պետք է տեղեկացված լինեն տեսահսկման մասին նախքան տեսահսկվող տարածք մտնելը[1]: Գործակալության կողմից մշակված տեսահսկման ուղեցույցի մեջ նշված է, որ տեսահսկում իրականացնող սուբյեկտը **տեսանելի նախազգուշացման միջոցով** պետք է տեսախցիկների նկարահանման դաշտ մտնող բոլոր անձանց տեղեկացնի տեսահսկման մասին[2]:

Տվյալների սուբյեկտին տեսահսկման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների փոխանցման իրագործման մասին առավել մանրակրկիտ լուծումներ են առաջարկվել Անձնական տվյալների պաշտպանության եվրոպական խորհրդի կողմից: Հաշվի առնելով տեղեկատվության ծավալը, որը պահանջվում է տրամադրել տվյալների սուբյեկտին, տվյալներ մշակողները կարող են հետևել տեղեկությունների տրամադրման աստիճանական մոտեցմանը, որի համաձայն՝

[1] Գործակալության որոշումը N-014/05/22 վարչական գործով:

[2] ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Տեսահսկման ուղեցույց: 2016, էջ 4:

տեսահսկման վերաբերյալ ամենակարևոր տեղեկատվությունը պետք է ցուցադրվի հենց նախազգուշացման նշանի վրա, իսկ մյուս տեղեկությունները կարող են տրամադրվել այլ միջոցներով: Մասնավորապես՝ նախազգուշացման նշանը կարող է հղում կատարել ինտերնետային կայքի, հեռախոսահամարի կամ պարունակել QR կոդ, որի միջոցով տվյալների սուբյեկտը հասանելիություն կստանա այդ տեղեկություններին[1]: Հետևելով ստորև նկարագրված մոդելին՝ այնպիսի առաջնային կարևորության տեղեկություններ, ինչպիսիք են մշակողի կամ նրա լիազորած անձի (առկայության դեպքում) անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը) և գտնվելու կամ հաշվառման (փաստացի բնակության) վայրը, անձնական տվյալները մշակելու նպատակը և իրավական հիմքը, մշակվող տվյալների ցանկը, պետք է նշված լինեն նախազգուշացման նշանի վրա, մինչդեռ մնացած տեղեկությունները, ինչպիսիք են անձնական տվյալների հավանական օգտագործողների շրջանակը և տվյալների սուբյեկտի՝ սույն օրենքով սահմանված իրավունքները, կարող են տրամադրվել վերոնշված այլ եղանակներով:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով սույն աշխատանքում կատարված վերլուծությունները՝ կարելի է եզրակացնել, որ.

1. Տեսահսկման միջոցով իրականացվում է անձնական տվյալների մշակում, եթե դրա արդյունքում հավաքվում են ֆիզիկական անձանց վերաբերյալ այնպիսի տվյալներ, որոնց միջոցով հնարավոր է նրանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնականացնել՝ ինչպես դիմապատկերի, այնպես էլ ֆիզիոլոգիական այլ հատկանիշների հիման վրա:

2. Մասնավոր իրավունքի սուբյեկտների կողմից տեսահսկման միջոցով անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը գերակշռող

[1] Guidelines 3/2019 on processing of personal data through video devices. Version 2.0. 2020, pp. 26-27.

դեպքերում բացակայում են, քանի որ օրենսդիր մարմնի կողմից դրանք օրենքով ուղղակիորեն նախատեսված չեն: Իրավակիրառ պրակտիկայում իրավական որոշակիության հրամայականից է բխում օրենքով սահմանել մասնավոր իրավունքի սուբյեկտների կողմից տեսահսկում իրականացնելու հնարավորությունն ու պայմանները:

3. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ամրագրված համաչափության և թափանցիկության սկզբունքները նախատեսում են անհրաժեշտ և բավարար իրավական երաշխիքներ տեսահսկվող սուբյեկտների իրավունքների պաշտպանության, վերջիններիս և տվյալներ մշակողների շահերի հավասարակշռման համար:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

Օրենսդրություն

1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՕ-49-Ն ՀՀ օրենք՝ ընդունված 18.05.2015 թ.:

2. ԵՄ Անձնական տվյալների պաշտպանության մասին 2016 թվականի ապրիլի 27–ի թիվ 2016/679 ընդհանուր կանոնակարգ՝ ընդունված 27.04.2016 թ.:

3. Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիա՝ ընդունված 28.01.1981 թ.:

Դատական և վարչական գործեր

4. ՄԻԵԴ, *Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի* (թիվ 2), գանգատներ թիվ 40660/08 և 60641/08:

5. ՄԻԵԴ, *Լոպեզ Ռիբալդան ընդդեմ Իսպանիայի*, գանգատներ թիվ 1874/13 և 8567/13:

6. CJEU, Case C-345/17, *Sergejs Buivids vs. Datu valsts inspekcija*, 14 February 2019.

7. CJUE, Case C-708/18, *TK vs. Asociaţia de Proprietari bloc M5A-ScaraA*, 11 December 2019.

8. Վճռաբեկ դատարան, գործ թիվ ԵԴ/10036/02/19, 10.03.2023 թ.:

9. Սահմանադրական դատարան, ՍԴՈ–922, 02.11.2010 թ.:

10. N-014/05/22 վարչական գործով Գործակալության որոշումը:

11. N-017/09/17 վարչական գործով Գործակալության որոշումը:

12. N-019/06/22 վարչական գործով Գործակալության որոշումը:

Խորհրդատվական որոշումներ և կարծիքներ

13. CNIL, Reconnaissance faciale pour un debat à la hauteur des enjeux, 2019.

14. European data protection board, Guidelines 3/2019 on processing of personal data through video devices, 2020.

15. Article 29 Working Party, Guidelines on transparency under Regulation 2016/679.

16. European data protection supervisor, Video-surveillance guidelines, 2010.

17. Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիայի պաշտոնական պարզաբանումներ, 2018:

18. ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Տեսահսկման ուղեցույց, 2016:

Տեսական գրականություն

19. **C. Kuner** (ed), The EU General Data Protection Regulation: A Commentary. «Oxford university press», 2020, 1393 p.

20. **Ա. Ղամբարյան**, Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը Հայաստանի Հանրապետության անկախացման գործընթացում: «Գիտական Արցախ», № 3(10), 2021, էջ 86-97:

ГАРАНТИИ (ПРИНЦИПЫ) ОБРАБОТКИ ПЕРСОНАЛЬНЫХ ДАННЫХ ПОСРЕДСТВОМ ВИДЕОНАБЛЮДЕНИЯ СУБЪЕКТАМИ ЧАСТНОГО ПРАВА

Аннотация

Системы видеонаблюдения широко используются для защиты жизни людей, имущества, предупреждения и раскрытия преступлений, а также защиты других законных интересов. В то же время видеонаблюдение может привести к незаконной обработке данных о физических лицах. В вышеизложенном контексте, с одной стороны, возникает необходимость защиты интересов лица, осуществляющего видеонаблюдение, а с другой – необходимость сохранения гарантий защиты персональных данных. Если особенности осуществления видеонаблюдения государственными органами уже урегулированы законодательством, то законность осуществления видеонаблюдения частными субъектами права, как правило, при отсутствии специальных норм, оценивается на основании общих правил защиты персональных данных.

Учитывая отсутствие исследований по обсуждаемому вопросу в армянской доктрине, первая часть данной статьи призвана раскрыть специфику обработки персональных данных посредством видеонаблюдения.

Вторая часть работы призвана обсудить установленные законодательством РА гарантии, на которых должна основываться обработка персональных данных частными субъектами права посредством видеонаблюдения.

Ключевые слова: видеонаблюдение, персональные данные, законность, соразмерность, прозрачность.

GUARANTEES (PRINCIPLES) OF PERSONAL DATA PROCESSING THROUGH VIDEO SURVEILLANCE CARRIED OUT BY SUBJECTS OF PRIVATE LAW

Annotation

Video surveillance systems are widely used to protect people's lives, property, prevent and detect crimes and protect other legitimate interests. At the same time, video surveillance can lead to illegal processing of data on individuals. In the above context, on the one hand, there is the need to protect the interests of the person conducting video surveillance, and on the other hand, the necessity to maintain the guarantees of personal data protection. The specifics of the implementation of video surveillance by state bodies are already regulated by legislation, but the legality of video surveillance implemented by private subjects of law, as a rule, in the absence of special norms, is assessed on the basis of the general rules of personal data protection legislation.

Taking into account the lack of studies on the issue discussed in the Armenian doctrine, the first part of this article is intended to reveal the specifics of personal data processing through video surveillance.

The second part of the work is called to discuss the guarantees established by RA legislation, on which the processing of personal data by private subjects of law through video surveillance should be based.

Keywords: video surveillance, personal data, legality, proportionality, transparency.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 07.07.2024 թ., տրվել է գրախոսության 02.08.2024 թ., ընդունվել է տպագրության 01.09.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.3-39

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, Հայ-ռուսական համալսարանի դոցենտ, իրավաբանական գիտությունների դոկտոր, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ[1]

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է «Ժողովրդավարություն» հասկացության իրավական և քաղաքական հիմքերի որոշ հիմնահարցերի ուսումնասիրմանը: Հետազոտության մեջ ուսումնասիրվում են հասկացության առաջացման նախադրյալները, հիմնական սահմանումները, հետազոտության են ենթարկվում «ժողովրդավարության» զարգացման առանձնահատկությունները: Ուսումնասիրության մեջ առանձին ուշադրություն է դարձվել «ժողովրդավարության» արդի ընկալումներին:

Հիմնաբառեր. ժողովրդավարություն, ժողովրդավարական պետություն, իշխանություն, քաղաքական իրավունքներ:

1. Ներածություն

«Ժողովրդավարության» մասին առաջին պատկերացումները ձևավորվել են դեռևս Հին Հունաստանում՝ հայտնվելով անտիկ աշխարհի փիլիսոփաների մտորումների կենտրոնում: Արդեն իսկ հին հույն մտածող Պլատոնը, ով ազնվականության (արիստոկրատիա)

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5E006):

կողմնակիցն էր, իր հայտնի «Պետություն» տրակտատում քննադատում էր ժողովրդավարությունը՝ դիտարկելով այն որպես կառավարման հատուկ ձև, որտեղ իշխանությունը պատկանում է աղքատ և տգետ մարդկանց:

Ըստ նրա՝ «թվում է, թե ժողովրդավարությունը լավագույն պետական կարգն է, քանի որ պետության մեջ հայտնվում է լիակատար ազատություն, անկեղծություն և հնարավորություն՝ անել այն, ինչ ուզում ես, բոլորն իրավունք ունեն իրենց կյանքը կազմակերպել իրենց սրտով, սակայն ժողովրդավարության գլխավոր դժբախտությունը հենց դրանում է. ժողովրդավարության պայմաններում փաստացի չեն գործում օրենքները և չկա պատշաճ կառավարում: Մարդիկ, ովքեր չեն ցանկանում ենթարկվել, չեն ենթարկվում, ովքեր չեն ցանկանում մասնակցել պատերազմին, երբ մյուսները կռվում են, չեն մասնակցում, մահվան կամ աքսորի դատապարտվածները շրջում են ազատության մեջ: Այս ամենն իր հերթին բերում է ամբողջական քաոսի, որտեղ յուրաքանչյուրն իրավունք ունի չպահպանել օրենքները, միևնույն ժամանակ կառավարելով և դատապարտելով ուրիշներին»[1]: Բացի դա, Պլատոնը քննադատում է ժողովրդավարությունը նաև այն պատճառով, որ այն իշխանության է բերում չլուսավորված ամբոխին: Ամբոխը պետական գործերի լուծման համար հատուկ պատրաստված մարդիկ չեն, այլ ցանկացած մարդ, ով այդպիսի ցանկություն է հայտնում և արժանանում ամբոխի հավանությանը[2]: Բացի Պլատոնից, ժողովրդավարությունը, որպես քաղաքական կառուցվածքի ձև, գտնվում էր նաև այլ հին մտածողների հետաքրքրությունների շարքում: Այսպես, ժողովրդավարության առավել խորը և մանրամասն վերլուծություն է պարունակում Պլատոնի աշակերտ, հույն մեծ մտածող Արիստոտելի «Պոլիտիկա» աշխատությունը: Արիստոտելի քաղաքական տեսության կարևոր առանձնահատկությունն այն է, որ նա իր «Պոլիտիկա» աշխատության մեջ պետության ձևերը դասակարգում է ճիշտ ձևերի, որոնցում կառավարիչները ծառայում են

[1] **Платон.** Государство. – М.: Директ-Медиа, 2002. - С. 492-494.

[2] Նույն տեղում, էջ՝ 495:

ընդհանուր բարիքին (միապետություն, արիստոկրատիա, պոլիտիա) և սխալ, որոնցում կառավարիչները հետապնդում են անձնական շահի նպատակներ (բռնակալություն, օլիգարխիա, ժողովրդավարություն)[1]: Չնայած այն հանգամանքին, որ մտածողը ժողովրդավարությունը դասում է սխալ ձևերի շարքին, այդուհանդերձ, բռնակալության և օլիգարխիայի հետ համեմատության մեջ հավանություն է տալիս ժողովրդավարությանը, որի սահմանումը տալիս է իր հիմնական հատկանիշների միջոցով. «ժողովրդավարությունը սովորաբար սահմանվում է երկու հատկանիշով՝ գերագույն իշխանության կենտրոնացումը մեծամասնության ձեռքում և ազատությունը»[2]: Արիստոտելը նախընտրելի էր համարում, որ գերագույն իշխանությունը լինի մեծամասնության ձեռքում, բայց, ըստ նրա, խոսքը չպետք է գնար բարձրագույն պաշտոններ զբաղեցնելու մասին: Մեծամասնությանը հնարավորություն է տրվում մասնակցել խորհրդակցական և դատական իշխանությանը, ընտրել պաշտոնատար անձանց և ընդունել նրանց գործունեության վերաբերյալ հաշվետվություններ[3]: Հարկ է նշել, որ Պլատոնի և Արիստոտելի տեսակետները ձևավորվել են պատմական իրականության ազդեցության տակ՝ անտիկ աշխարհում գոյություն ունեցող ժողովրդավարության պայմաններում, սակայն երկուսն էլ, քննադատելով հանդերձ, ժողովրդավարությունը ասոցացնում էին ազատության հետ:

2. Ժողովրդավարությունը և ընտրական ցենզերը

Ըստ հին մտածողների, ժողովրդավարութունը, մեծամասամբ, օժտված է հետևյալ հատկանիշներով[4].

[1] **Исаев Б.А.** Политическая история. Демократия. – 2-е изд. – М.: Изд-во Юрайт, 2021. – С. 77-78. - 490 с.

[2] **Аристотель**. Политика / Под общ. ред. А.И. Доватура. – М.: Изд-во Юрайт, 2020. - С. 154. - 297 с.

[3] **Омеличкин О.В.** Теория демократии. – Кемерово: Кемеровский государственный университет, 2014. - С. 40. - 160 с.

[4] **Платон.** Законы. - М., 1999. - С. 71-459; **Аристотель.** Сочинения. В 4-х т. - М., 1983. Т. 4 - С. 375-680.

- քաղաքացիների ընդհանուր մասնակցությունը պետության կառավարմանը,
- բարձրագույն պետական պաշտոնների հասնելու հնարավորությունը բոլոր քաղաքացիների համար,
- յուրաքանչյուր քաղաքացու անհատական համալիր իրավունքների և ազատությունների առկայությունը, որոնք ոչ կարող են խախտվել, ոչ էլ՝ սահմանափակվել,
- պետության ղեկավարի առկայությունը, որը մարմնավորում էր քաղաքացիների կոլեկտիվը, ընտրվում էր ժողովրդի կողմից և ղեկավարում էր նրա անունից,
- գործադիր իշխանության կրողներ հանդիսացող մագիստրատուրայի կոլեգիալ մարմինների առկայությունը:

Հարկ է ընդգծել, որ համաձայն անտիկ ժողովրդավարության՝ պետական կառավարմանը մասնակցություն կարող էին ունենալ բացառապես հասարակության միայն արական բնակչության լիիրավ մասը: Կանայք, այլ պոլիսներից (քաղաք-պետություններից) տեղափոխվածներն ու ստրուկները քաղաքական իրավունքներով օժտված չէին: Աթենական ժողովրդավարության ժամանակակիցը Հռոմեական Հանրապետությունն էր, որտեղ, ինչպես Աթենքում, մասնակցության իրավունք տրվում էր միայն լիիրավ տղամարդկանց: Արդարության համար հարկ է նշել, որ գենդերային խտրականությունը և ընտրական այլ սահմանափակումները այս կամ այն ձևով պահպանվեցին ժողովրդավարության և հանրապետությունների բոլոր հետագա ձևերում ընդհուպ մինչև 20-րդ դարը: Մասնավորապես՝ ժամանակակից ժողովրդավարության հայրենիք համարվող ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում մինչև տասնութերորդ դարի վերջը բնակչության ընդամենը 2-5%-ն էր օժտված ընտրական իրավունքներով: Մեծ Բրիտանիայում կանանց, տղամարդկանց հետ հավասար, թույլատրվեց մասնակցել ընտրություններին միայն 1928 թվականից, իսկ բազմակի քվեարկությունը, երբ մեկ ընտրող ուներ մի քանի ձայն, չեղյալ

հայտարարվեց 1948 թվականին, իսկ ԱՄՆ-ում գույքային ցենզը վերջնականապես վերացվեց միայն 1964 թվականին: Ֆրանսիայում քաղաքացիներն առաջին անգամ ընտրական իրավունքով օժտվեցին Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո[1] և միայն 1848-ի հեղափոխության արդյունքում Ֆրանսիայում հռչակվեց համընդհանուր ընտրական իրավունք, վերացվեց գույքային ցենզը, ինչը, սակայն, 1850-ին կրկին ներդրվեց: Գույքային ցենզը Ֆրանսիայի Պատգամավորների պալատի ընտրությունների համար վերջնականապես վերացվեց միայն 1875 թվականի սահմանադրական օրենքներով[2]:

Անտիկ աշխարհի փորձը փաստում է, որ մինչև 18-րդ դարը «ժողովրդավարություն» հասկացությունը ենթադրել է ուղիղ ժողովրդավարություն՝ փոքր քաղաքներում, որտեղ ամբողջ բնակչությունն ի վիճակի էր համատեղ հավաքվել:

3. Ժողովրդավարության արդի ընկալումները

Չնայած այն հանգամանքին, որ ժամանակակից ընկալմամբ ժողովրդավարական արժեքների, իրավունքների և ազատությունների համակարգի հիմքում ընկած են դեռևս հին հունական քաղաք-պետություններում ձևավորված սկզբունքները, այդուհանդերձ, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով քաղաք-պետությունների դարաշրջանն ավարտվեց՝ իր տեղը զիջելով ազգային պետություններին: Ներկայացուցչությունը մղվեց առաջին պլան՝ հաճախ մրցակցության մեջ մտնելով ուղիղ ժողովրդավարության հետ: Ներկայացուցչական ժողովրդավարության տեսության հիմնադիր Շ.Լ. Մոնտեսքյոյի պնդմամբ, պետական ապարատում որոշակի ժամկետով ընտրված ժողովրդի ներկայացուցիչների առկայությունն անհրաժեշտություն է: Կանոնավոր ընտրությունների միջոցով ժողովուրդը կարող է

[1] Ֆրանսիայի Սահմանադրություն, 1791 թվական, Բաժին 3, https://www.hist.msu.ru/ER/Etext/cnst1791.htm

[2] Выборы во всем мире: Электоральная свобода и общественный прогресс: Энцикл. словарь / Сост. А. А. Танин-Львов. - М.: РОССПЭН, 2001. - С. 11-174. - 1112 с.

ազդել ներկայացուցչական մարմնի աշխատանքի վրա[1]: Ուղիղ և ներկայացուցչական ժողովրդավարության դիմակայության մասին, թերևս, հետաքրքիր դիրքորոշում է հնչեցնում Ջ. Մեդիսոնը, ով բացահայտորեն ընդգծելով ուղղակի ժողովրդավարության վտանգավոր բնույթը, նշում է, որ դրա դեպքում միջոցներ նախատեսված չեն «ապստամբողների» դեմ պայքարի համար, մի խումբ անհատների, որոնք հնարավորություն ունեն ազդելու որոշումների ընդունման վրա, որոնք հակասում են այլ քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին կամ ամբողջ հասարակության մշտական և ընդհանուր շահերին: Ըստ նրա՝ «ապստամբողների» ազդեցությունը չափավորել ի զորու է միայն Հանրապետությունը, որը ներկայացուցչական համակարգ է ենթադրում[2]:

Ընդհանուր առմամբ, որոշ բացառություններով, անտիկ շրջանին հաջորդող յուրաքանչյուր պատմական դարաշրջան այս կամ այն կերպ իր ներդրումն է ունեցել ժողովրդավարության զարգացման մեջ՝ ընդգծելով դրա որևէ կողմը, սակայն ժողովրդավարության հայեցակարգի վերածննդի և տարածման հարցում շրջադարձային եղան Ֆրանսիական մեծ հեղափոխության գաղափարներն ու լուսավորիչների շարժումը:

Արդի աշխարհում «Ժողովրդավարություն»-ն ամենալայն կիրառում ունեցող բառերից է, որն օգտագործվում է տարբեր նշանակություններով.

- որպես պետության ձև,
- որպես պետական-քաղաքական կամ պետական-իրավական վարչակարգ (ռեժիմ),
- որպես պետական մարմինների և հասարակական կազմակերպության կազմակերպման և գործունեության սկզբունք:

4. Ժողովրդավարության հիմնական սահմանումները

«Ժողովրդավարություն» բառն առաջացել է հունարեն δῆμος (դեմոս) – ժողովուրդ և κράτος (կրատոս) – ուժ, զորություն, իշխանություն բառերից

[1] **Монтескье Ш.Л.** О духе законов. - М.: Мысль. 1999. - С. 295. - 672 с.

[2] Федералист. Политические эссе Гамильтона А., Мэдисона Дж. и Джея Дж. - М.: Издательская группа “Прогресс” – “Литера”, 1994. - С. 83. - 592 с.

և բառացի նշանակում է ժողովրդաիշխանություն: Ի տարբերություն աշխարհի տարբեր ազգերի, որոնք կիրառում են հին հունական դեմոկրատիայի տեղայնացված տարբերակը, հայերենում որպես կանոն օգտագործվում է «ժողովրդավարություն» եզրույթը:

Հասկացության կիրառման ընթացքում շրջանառության մեջ են «ժողովրդավարության» մի շարք սահմանումներ: «Ժողովրդավարություն» եզրույթը մասնագիտական գրականության և բառարանների մեջ սահմանվում է տարբեր ձևակերպմամբ.

- «Ժողովրդավարությունը հասարակության պետական-կառուցվածքի ձև է, որը հիմնված է ժողովրդի կողմից իշխանության աղբյուր ճանաչելու սկզբունքի վրա»[1]:
- «Ժողովրդավարությունը պետության ձև է, որը բնութագրվում է մի շարք հատկանիշներով. իշխանության աղբյուրը ժողովուրդն է, ազատ ընտրությունները՝ որպես իշխանության ինստիտուտների ձևավորման միջոց, քաղաքացիների իրավահավասարություն, անհատի իրավունքների և ազատությունների երաշխիք և այլն»[2]:
- «Ժողովրդավարություն նշանակում է կառավարման ձև, որտեղ բնակչությունը մասնակցում է քաղաքացիական իշխանության իրականացմանը ուղղակի (երբ քաղաքացիները, օրինակ, հանրաքվեով ուղղակիորեն որոշում են կայացնում քաղաքական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ) և ներկայացուցչական ժողովրդավարության միջոցով (երբ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է իր կողմից ընտրված ներկայացուցչական մարմինների միջոցով)»[3]:
- «Ժողովրդավարությունը իշխանության կազմակերպման միջոց է, որի ընթացքում հասարակությունը հնարավորություն

[1] Политология: Краткий словарь основных терминов и понятий / Под ред. проф. В.С. Пусько. - М.: Изд-во МГТУ им. Н.Э. Баумана, 2010. - С. 36. - 110 с.

[2] **Мухаев Р.Т.** Политология: Учеб. пособие. - М.: Проспект, 2010. - С. 630. - 640 с.

[3] **Тавадов Г.Т.** Политология: Учеб. пособие. - М.: ФАИР-ПРЕСС, 2000. - С. 115. - 416 с.

ունի կանոնավոր կերպով, իրավաբանորեն ամրագրված ոչ բռնի ընթացակարգերի միջոցով, շտկել կառավարիչների գործունեությունը, ինչպես նաև իշխող խմբավորման և քաղաքական էլիտայի անհատական կազմը»[1]:

Ներկայացված մոտեցումները փաստում են, որ չնայած տարբեր ձևակերպումներին, ժողովրդավարության առանցքը «ժողովուրդ»-ն է և որ ժողովուրդն ունի իշխանություն իրականացնելու կամ դրա իրականացման վրա ազդելու հնարավորություն: Այս առումով չափազանց հետաքրքրական և դիպուկ է ԱՄՆ 16-րդ նախագահ Ա. Լինքոլնի մոտեցումը, համաձայն որի՝ «Ժողովրդավարությունը ժողովրդի իշխանությունն է, որն ընտրվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար»[2]:

Հարկ է շեշտել նաև, որ ժողովրդավարությունը չի կարող գոյություն ունենալ առանց պետության: Այսինքն՝ «ժողովրդավարություն» եզրույթը կիրառվում է պետության որոշակի որակական առանձնահատկությունն ընդգծելու համար: Այս առումով, «ժողովրդավարություն»-ը պետական վարչակարգի (ռեժիմ) տարատեսակ է: Հայրենական մասնագիտական գրականության մեջ ժողովրդավարական է համարվում այն պետությունը, որի կառուցվածքն ու գործունեությունը համապատասխանում են ժողովրդի կամքին, մարդու և քաղաքացու հանրաճանաչ իրավունքներին ու ազատություններին[3], իսկ ահա Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններում ժողովրդավարական պետությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Ժողովրդավարական պետությունը ժողովրդի իշխանության քաղաքական կազմակերպությունն է, որն ապահովում է քաղաքացիների հավասար մասնակցությունը պետական և հասարակական գործերի կառավարմանը, պետության հիմնական մարմինների ընտրովիությունը և հասարակության

[1] Политология: Учеб. пособие / А.Ю. Мельвиль [и др.]. - М.: Московский гос. ин-т международных отношений МИД России, ТК Велби, Проспект, 2008. - С. 221. - 618 с.

[2] **Пугачёв В.П., Соловьёв А.И.** Введение в политологию: Учебник для студентов вузов. 4-е изд., перераб. и доп. - М.: Аспект-пресс, 2005. - С. 198. - 477 с.

[3] Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Երևանի պետ. համալս. հրատ., 2008, էջ 120:

քաղաքական համակարգի բոլոր սուբյեկտների գործողության օրինականությունը, մարդու և քաղաքացու, փոքրամասնությունների իրավունքների կենսագործումը, պահպանությունը և պաշտպանությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան» [1]:

5. Ժողովրդավարական պետության հիմնական արժանիքները և նշանակությունը

Ժողովրդավարական պետության՝ որպես հասարակական-քաղաքական երևույթի հիմնական արժանիքները և նշանակությունը երեքն են.

1. հասարակական՝ ծառայել անհատի, հասարակության շահերին և նպատակներին, թույլ չտալ, որ պետությունը բռնանա ժողովրդի և անհատի վրա,
2. գործառութային, այն է՝ ծառայել մարդուն և ժողովրդին՝ հասարակական և պետական գործերը լուծելու համար,
3. մարդկային-անհատական՝ ճանաչում, ամրագրում, երաշխավորում, պահպանում, ապահովում և պաշտպանում է մարդու իրավունքները[2]:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է փաստել, որ ժողովրդավարությունը՝ որպես իդեալ և իրականություն՝ չեն համընկնում: Ժողովրդավարությունը կարծես թե անհասանելի իդեալ է, որին ձգտում են անգամ քաղաքակիրթ հասարակություններն ու պետությունները: Այսինքն՝ գործնականում չկա ժողովրդավարության վերջնական այնպիսի փուլ, որն ամբողջապես կհամապատասխանի ժողովրդավարության իդեալներին՝ համարվելով ժողովրդավարության գագաթնակետը:

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի: Եր., «Իրավունք», 2010, էջ 41:

[2] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի: Եր., «Իրավունք», 2010, էջ 41:

Արդի ժամանակաշրջանի հիմնական ժողովրդավարական իդեալների շարքում տեղին է առանձնացնել քաղաքացիների քաղաքական և իրավական հավասարության սկզբունքը: Քաղաքացիների քաղաքական և իրավական հավասարության սկզբունքն առաջնահերթ ենթադրում է մարդու իրավունքների քաղաքական օգտագործման համընդհանուր գործիքակազմի փաստացի առկայություն: Իրավական հավասարությունը քաղաքացիների իրավահավասարությունն ու բոլորի հավասարությունն է օրենքի առաջ: Իսկ ահա քաղաքացիների քաղաքական հավասարությունը ենթադրում է իշխանություն ձեռք բերելու համար անհրաժեշտ գիտելիքներ, կարգավիճակ ձեռք բերելու հավասար հնարավորություններ, հավասար իրավունքներ (քվեարկել, ազդել որոշումների կայացման գործընթացի վրա, առաջադրվել պաշտոնում և այլն), իշխանության ռեսուրսների հավասար հասանելիություն: Ընդ որում, քաղաքական գործունեության ցանկացած սահմանափակում կարող է սահմանվել միայն օրենքի հիման վրա: Առհասարակ, ժողովրդավարության կենտրոնական հասկացություններն են իրավունքը, ազատությունը և արդարությունը. մարդու իրավունքներն ու ազատությունները ենթակա են սահմանափակման միայն այն դեպքերում ու այն չափով, երբ այդ սահմանափակումներն անհրաժեշտ են այլոց իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար: Ժամանակակից ժողովրդավարության կենտրոնում անհատն է, նրա կարծիքը, շահերը, ազատությունը: Այն՝ ժողովրդավարությունը, պետք է նպաստի յուրաքանչյուրի առաջադիմությանը, անհատի ու հասարակության զարգացմանը:

Ազատության իդեալները, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը և պարբերական և արդար ընտրություններ անցկացնելու սկզբունքը ժողովրդավարության կարևոր տարրեր են: Ժողովրդավարությունն իր հերթին բնական պայմաններ է ապահովում մարդու իրավունքների պաշտպանության և արդյունավետ իրականացման համար: Այս մոտեցումն ընկած է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) գործունեության հիմքում, և բոլորովին պատահական չէ, որ երկար

տարիների ընթացքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան փորձել է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային գործիքների միջոցով հասնել ժողովրդավարության հիմք հանդիսացող սկզբունքների, նորմերի, ստանդարտների և արժեքների ընդհանուր ըմբռնմանը, որպեսզի անդամ պետություններին օգնի զարգացնել սեփական ժողովրդավարական ավանդույթներն ու ինստիտուտները, ինչպես նաև պահպանել իրենց պարտավորությունները մարդու իրավունքների, ժողովրդավարության և զարգացման ոլորտում: Ժողովրդավարական միտումների զարգացման ու մարդու իրավունքների ճանաչման և պաշտպանության շրջանակում էր ընդունվել նաև կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան[1], որի 7-րդ և 8-րդ հոդվածներով մասնակից պետությունները պարտավորվում էին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու կանանց նկատմամբ ցանկացած տիպի խտրականության բացառման համար:

Արդեն 2002 թվականին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը, որին լուծարումից հետո 2006 թվականին հաջորդեց Մարդու իրավունքների խորհուրդը[2], հանդես եկավ հայտարարությամբ, որում նկարագրվում էին ժողովրդավարության հետևյալ կարևոր տարրերը[3].

- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանում,
- հավաքների ազատություն,
- համոզմունքի ազատության և ինքնարտահայտման իրավունք,
- իշխանության հասանելիությունը և դրա իրականացումը իրավունքի գերակայության սկզբունքին համապատասխան,

[1] Конвенция о ликвидации всех форм дискриминации в отношении женщин. Принята Резолюцией 34/180 Генеральной Ассамблеи от 18 декабря 1979 года; https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/cedaw.shtml

[2] Совет по правам человека; https://www.ohchr.org/ru/hrbodies/hrc/home

[3] О демократии и правах человека; https://www.ohchr.org/ru/about-democracy-and-human-rights

- համընդհանուր և գաղտնի քվեարկության հիման վրա պարբերական ազատ և արդար ընտրությունների անցկացում՝ որպես ժողովրդի կամարտահայտություն,
- քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների բազմակարծիք համակարգ,
- իշխանության ճյուղերի բաժանում,
- դատական իշխանության անկախություն,
- թափանցիկություն և հաշվետվողականություն պետական կառավարման մարմինների աշխատանքում,
- ազատ, անկախ և տարբեր տեսակետներ արտացոլող լրատվամիջոցներ:

6. Ամփոփում

Ամփոփելով, կարող ենք փաստել, որ ժողովրդավարությունը իշխանության կազմակերպման այնպիսի ձև է, որի դեպքում հասարակությունը հնարավորություն ունի կանոնավոր հիմունքներով, իրավաբանորեն ամրագրված ընթացակարգերի միջոցով կարգավորել պետական մարմինների գործունեությունը, ինչպես նաև իշխող խմբի և քաղաքական էլիտայի անհատական կազմը: Այն պետության կառավարման ձև է, որը բնութագրվում է ժողովրդի՝ որպես իշխանության աղբյուրի ճանաչմամբ, քաղաքացիների իրավահավասարությամբ, փոքրամասնության շահերի արժեքի ճանաչմամբ, պետական կառավարման հիմնական մարմինների ընտրովիությամբ և այլ բնութագրական հատկանիշներով, որոնց հիմքում ընկած է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հարգումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Платон.** Государство. – М.: Директ-Медиа, 2002, 495 с.

2. **Исаев Б.А.** Политическая история. Демократия. – 2-е изд. – М.: Изд-во Юрайт, 2021. - 490 с.

3. **Аристотель.** Политика / Под общ. ред. А.И. Доватура. – М.: Изд-во Юрайт, 2020. - 297 с.

4. **Омеличкин О.В.** Теория демократии. – Кемерово: Кемеровский государственный университет, 2014. - 160 с.

5. **Платон.** Законы. - М., 1999.

6. **Аристотель.** Сочинения. В 4-х т. - М., 1983. Т. 4.

7. Ֆրանսիայի Սահմանադրություն, 1791 թվական, Բաժին 3, https://www.hist.msu.ru/ER/Etext/cnst1791.htm

8. Выборы во всем мире: Электоральная свобода и общественный прогресс: Энцикл. словарь / Сост. А.А. Танин-Львов. - М.: РОССПЭН, 2001. - 1112 с.

9. **Монтескье Ш.Л.** О духе законов. - М.: Мысль, 1999. - 672 с.

10. Федералист. Политические эссе Гамильтона А., Мэдисона Дж. и Джея Дж. - М.: Издательская группа “Прогресс” – “Литера”, 1994. - 592 с.

11. Политология: Краткий словарь основных терминов и понятий / Под ред. проф. В.С. Пусько. - М.: Изд-во МГТУ им. Н.Э. Баумана, 2010. - 110 с.

12. **Мухаев Р.Т.** Политология: Учеб. пособие. - М.: Проспект, 2010. - 640 с.

13. **Тавадов Г.Т.** Политология: Учеб. пособие. - М.: ФАИР-ПРЕСС, 2000. - 416 с.

14. Политология: Учеб. пособие / А.Ю. Мельвиль [и др.]. - М.: Московский гос. ин-т международных отношений МИД России, ТК Велби, Проспект, 2008. - 618 с.

15. **Пугачёв В.П., Соловьёв А.И.** Введение в политологию: Учебник для студентов вузов. 4-е изд., перераб. и доп. - М.: Аспект-пресс, 2005. - 477 с.

16. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք: Երևանի պետ. համալս. հրատ., 2008:

17. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի: Եր., «Իրավունք», 2010:

18. Конвенция о ликвидации всех форм дискриминации в отношении женщин. Принята Резолюцией 34/180 Генеральной Ассамблеи от 18 декабря 1979 года; https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/cedaw.shtml

19. Совет по правам человека; https://www.ohchr.org/ru/hrbodies/hrc/home

20. О демократии и правах человека; https://www.ohchr.org/ru/about-democracy-and-human-rights

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ ПРАВОВЫХ И ПОЛИТИЧЕСКИХ ОСНОВ ДЕМОКРАТИИ

Аннотация

Статья посвящена изучению некоторых проблем правовых и политических основ понятия “демократия”. В исследовании рассмотрены предпосылки возникновения понятия, основные определения, исследуются особенности развития понятия “демократия”. Отдельное внимание уделено современным представлениям о демократии.

Ключевые слова: демократия, демократическое государство, власть, политические права.

ON SOME PROBLEMS OF THE LEGAL AND POLITICAL FOUNDATIONS OF DEMOCRACY

Annotation

The article is devoted to the study of some problems of the legal and political foundations of the concept of “democracy”. The study examines the prerequisites for the emergence of the concept, the main definitions, and examines the

features of the development of the concept of "democracy". In the study, special attention was paid to modern ideas about democracy.

Keywords: democracy, democratic state, government, political rights.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 02.09.2024 թ., գրախոսության 03.09.2024 թ., ընդունվել է տպագրության 10.09.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.3-54

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
Փաստաբանների պալատի
Հանրային պաշտպանի գրասենյակի
մոնիտորինգի պատասխանատու,
Երևանի «Գլաձոր» համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ամփոփագիր

Հայաստանում ներկայացուցչական օրենսդիր մարմիններ կազմավորվել ու գործել են հնագույն ժամանակներում: Ասել է թե՝ հայ ժողովրդին խորթ չեն եղել պառլամենտարիզմի գաղափարները, որի հիմնական բաղադրիչներն առկա են եղել նրա պետական և հասարակական-քաղաքական կյանքում: Հայոց պետականության հազարամյակների պատմության ընթացքում ձևավորվել և ամրապնդվել են պետական կյանքի որոշակի ավանդույթներ, որոնք հարատևել են ընդհուպ մինչև 20-րդ դարը: Ինչ վերաբերում է դեռևս դարերի խորքից հայ իրավական մտքին հայտնի իշխանությունների տարանջատման գաղափարներին, ապա ըստ Ռ. Պապայան՝ իշխանությունների բաժանման համակարգի արմատները պետք է փնտրել հենց Աստվածաշնչում: Նա հանգում է այն եզրակացության, որ «Հայր-Աստված, Որդի-Աստված և Սուրբ Հոգի Աստված երրորդությունում նախանշված են երկնային իշխանության երեք ճյուղերը, որոնք օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների երկրային համարժեքներն են»: Հենվելով իրավաբանական գրականության մեջ առկա հիմնավորումների և հենց իրենց՝ Աստվածաշնչյան նորմերի վրա,

մեկ այլ երախտավոր՝ պրոֆեսոր Ռ. Պետրոսյանը ցույց է տվել, որ Հին Կտակարանից են սկիզբ առել իշխանության տարբեր ճյուղերի միջև հակակշիռներ և զսպումներ ստեղծելու գաղափարները, և որ իրավունքն ու նրա հիմնարար ճյուղերը, դատարանն ու արդարադատությունը աստվածային ծագում ու բովանդակություն ունեն:

Հիմնաբառեր. Քրիստոնեություն, եկեղեցականներ, աշխարհականներ, Հայոց Տուն, բարձրագույն ներկայացուցչական օրենսդիր մարմին, երեսփոխաններ, նախարար, գործադիր իշխանության պետական մարմիններ, «Հայոց ազգային Սահմանադրություն», Կաթողիկոս, Պատրիարք, Կրոնական ժողով, Քաղաքական ժողով, Խառը ժողով:

Հայոց պետականության պատմաիրավական հետազոտությունները ցույց են տալիս, որ հնագույն ժամանակներից ի վեր հայոց պետական կյանքում կարևոր դեր է խաղացել, այսպես կոչված, խորհրդակցման սկզբունքը, որը վերածվել է համազգային խնդիրները աշխարհաժողովներում լուծելու ավանդույթի: Հայ ժողովրդի բոլոր շերտերի ներկայացուցիչները աշխարհաժողովներում քննարկել և ընդհանուր համաձայնությամբ լուծել են իրենց առջև ծառացած ազգային-պետական կարևորագույն խնդիրները[1]: Հատկանշական է, որ այնպիսի մի կարևորագույն և կենսական հարց, ինչպիսին է քրիստոնեության ընդունումը, քննարկվել և լուծվել է համազգային ժողովի կողմից: Այդ համազգային ժողովը եղել է բազմամարդ և ներկայացուցչական: Հայոց Տրդատ արքայի հրամանով Վաղարշապատ քաղաքում են հավաքվել հայոց աշխարհի մեծամեծերը, կուսակալները, գավառապետերը, պատվավորները, պատվականները, զորավարները, պետերը, իշխանները, նախարարները, ազատները, դատավորները

[1] **Սարվազյան Լ.**, Խորհրդակցական սկզբունքը Հայ Եկեղեցու կառավարման համակարգում: Փիլիսոփայությունը արդի աշխարհում: Գիրք V, Երևան, 2014, էջեր 43-57: Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2002, համապատասխան հոդվածներ:

և զորագլուխները[1]: Նկարագրելով այդ համազգային ժողովը՝ Ագաթանգեղոսը գրում է. «Թագավորն ամենքի հետ խորհուրդ արեց, որ փութան, հասնեն բարի գործերի ժառանգորդ դառնալու: «Եկեք, ասում է փութանք Աստծու կողմից մեզ տրված կյանքի առաջնորդին՝ Գրիգորին, Հովիվ դարձնել, որպեսզի մկրտությամբ լուսավորի և վերանորոգի մեր արարիչ Աստծու ամենաուսույց խորհրդով»[2]:

Հայ ժողովրդի կողմից քրիստոնեության ընդունումից հետո ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր իշխանության գործառնման խորհրդակցական սկզբունքն առավել խորացավ և կատարելագործվեց: Բանն այն է, որ քրիստոնեական հնագույն ավանդույթի համաձայն՝ կարևոր հոգևոր հարցերը լուծվում էին հավատացյալների ժողովի կողմից: Այդ ավանդույթը ձևավորվել էր դեռևս առաքյալների ժամանակաշրջանում: Քրիստոնեության ընդունումը պատճառ դարձավ, որ այդ ավանդույթը տարածվի տարբեր ժողովուրդների մեջ: Հոգևոր հարցերը ժողովի միջոցով լուծելու ավանդույթը պարարտ հող գտավ հատկապես հայերի մեջ, որոնց խորթ չէր կարևոր խնդիրներն ազգովի լուծելու եղանակը:

Հայ ազգային եկեղեցական առաջին ժողովը տեղի է ունեցել **354** թվականին, Աշտիշատում: Ժողովը գումարվել է Հայոց Կաթողիկոս Ներսես Մեծի կողմից: Պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ, Ներսես Մեծը գումարում է եպիսկոպոսների և աշխարհականների ժողով, կանոնական սահմաններով հաստատում ողորմությունը և արմատախիլ անում անգթությունը[3]: Հատկանշական է, որ Աշտիշատի ժողովին հրավիրված են եղել ինչպես եկեղեցականները, այնպես էլ աշխարհականները, որը հազվագյուտ երևույթ է եղել քրիստոնյա ժողովուրդների կյանքում: Այդ կապակցությամբ եկեղեցական իրավունքի երախտավոր Մելիք-Թանգյանը գրում է. «Ժողովին հրավիրված էին երկու դասակարգն էլ, հոգևոր և աշխարհական, այս փառավոր սկզբունքը մնաց իբրև հիմնական կետ մեր պատմության մեջ հետագա

[1] **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն: Երևան, 1983, էջ 445:

[2] Նույն տեղում, էջ 445:

[3] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն: Երևան, 1990, էջ 181:

դարերի բոլոր ժողովներում. մինչև անգամ ոչ թե կարգադրական ապա դավանաբանական հարցեր որոշող բոլոր մեր ժողովներում մասնակցել են մեր աշխարհականները. շեշտելի է՝ այս սկզբունքն այն տեսակետից, որ մյուս եկեղեցիները կարող են նախանձով նայել այս բանի վրա և ձգտել նույն դրության հասնել, քանի որ եկեղեցի ասելով հասկանում ենք հավատացյալների ժողով, որը երկու դասակարգի մասնակցությամբ միայն կարող է վճռել բոլոր եկեղեցական հարցերը և խնդիրները»[1]:

Աշտիշատի ժողովն ընդունել է եկեղեցական և աշխարհիկ հարաբերությունները կարգավորող մի շարք կարևոր իրավական նորմեր, որոնք տարածվել և կիրառվել են Հայոց աշխարհով մեկ: ***Այս առումով կարելի է ասել, որ Աշտիշատի ժողովը եղել է ողջ հայ ժողովրդի ներկայացուցչական օրենսդիր մարմինը:***

Եկեղեցականների և աշխարհականների հաջորդ համատեղ ժողովը գումարվել է **444** թվականին, Շահապիվան ավանում: Այս ժողովը քննել է ինչպես եկեղեցական, այնպես էլ աշխարհիկ կյանքին, մասնավորապես, հանցագործություններին և պատիժներին վերաբերող հարցեր: Շահապիվանի եկեղեցական ժողովին նույնպես մասնակցել են մի կողմից՝ եպիսկոպոսներ, վանականներ, երեցներ, սարկավագներ, մյուս կողմից՝ իշխաններ, գավառապետեր, գավառականներ, պետեր, զորագլուխներ, հարյուրապետեր, նախարարներ, ինչպես նաև Վասակ մարզպանը, Վահան հազարապետը, Վարդան Մամիկոնյանը և այլն[2]: Այս ժողովն էլ ունեցել է ներկայացուցչական բնույթ և իրականացրել օրենսդրական գործառույթ՝ ընդունելով մի շարք կանոնական և աշխարհիկ հարաբերություններ կարգավորող նորմեր:

Հայոց պատմությանը հայտնի է, որ համազգային խնդիրներ լուծելու նպատակով Հայաստան աշխարհում եկեղեցական և աշխարհիկ դասերի համատեղ ժողով գումարվել է նաև թագավորի նախաձեռնությամբ: Այդպիսի ժողով է գումարվել Արցախի և Ուտիքի թագավոր

[1] **Ն.Վ. Մելիք-Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունք: Թեհրան, 2004, էջ 275:

[2] **Կանոնագիրք Հայոց**: Մաս Ա: Երևան, 1964, էջ 427:

Վաչագան Գ. Բարեպաշտի կողմից, **488** թվականին: Ինչպես վկայում է Մովսես Կաղանկատվացին, Վաչագանի թագավորության տարիներին շատ վեճեր են ծագել աշխարհականների և եպիսկոպոսների, երեցների և եպիսկոպոսների, ազատների և ռամիկների միջև: Այդ պատճառով Վաչագանը որոշել է բոլոր դասերի ներկայացուցիչների մասնակցությամբ ժողով հրավիրել: Այդ ժողովի մասնակիցներն են եղել Պարտավի արքեպիսկոպոսը, այլ հոգևորականներ, Արցախի նահապետներ: Ժողովն ընդունել է քսանմեկ հոդվածից բաղկացած «Սահմանադրություն կանոնական», որը կարգավորել է եկեղեցական և աշխարհիկ հարաբերություններ[1]: ***Հատկանշական է, որ Կանոնական Սահմանադրությունն ընդունել է ոչ թե Վաչագան թագավորը՝ ժողովի համաձայնությամբ, այլ ժողովը՝ Վաչագան թագավորի համաձայնությամբ:***

Հաջորդ ազգային եկեղեցական ժողովը հրավիրվել է **506** թվականին, Դվինում, Բաբկեն Ա. Ութմսեցու կողմից: Այդ ժողովում քննարկվել են միայն դավանաբանական խնդիրներ, այնուամենայնիվ, ժողովին մասնակցել են ոչ միայն եկեղեցականներ, նախարարներ, այլ նաև Հայաստանի մարզպան Վարդան Մամիկոնյանը: Ժողովի մասին Մելիք-Թանգյանը գրում է հետևյալը. «Այս ժողովը նշանավոր է ուրիշ տեսակետով, որ թեև ժողովը պարպեց զուտ կրոնական խնդրով բայց և այնպես, կայացավ աշխարհական դասի, նախարարների, իշխանների մասնակցությամբ. «Ի մեծաց և ի փոքունց, յազատաց և շինականաց»: Թեև նախկին երկու ժողովներում մասնակցում էին աշխարհականները, բայց այնտեղ դավանաբանական խնդիր չէր քննարկվում: Այս փառավոր սկզբունքը, որ հայոց եկեղեցական ազգային ժողովներում, թե՛ կարգադրական–օրենսդրական և թե՛ դավանաբանական, մտավ հայոց մեջ և մնաց մինչև այսօր: Ահա մեր եկեղեցու բացառիկ, ինքնուրույն և փառավոր սկզբունքը, որը Եզրների քմահաճույքին վետո է դնում»[2]:

Այսպիսով, կարելի է ասել, որ պառլամենտարիզմի մի այնպիսի կարևոր բաղադրիչ, ինչպիսին է ներկայացուցչական օրենսդիր մարմինը,

[1] **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանաց աշխարհի: Երևան, 1969, էջ 65:

[2] **Ն.Վ. Մելիք-Թանգյան,** Հայոց եկեղեցական իրավունքը: Թեհրան, 2004, էջ 316:

հնագույն ժամանակներից ի վեր արմատացած է եղել հայ ժողովրդի պետական-իրավական կյանքում և հարատևել է դարեր շարունակ: ***Ճիշտ է, այդ ներկայացուցչական օրենսդիր մարմինները՝ ազգային եկեղեցական ժողովները, մշտապես գործող մարմիններ չեն եղել, սակայն միշտ կյանքի են կոչվել համազգային խնդիրներ լուծելու անհրաժեշտության դեպքում:***

Հայ իրավական–քաղաքական մտքի պատմության մեջ պառլամենտարիզմի գաղափարներն առաջին անգամ արծարծվել են 1773 թվականին Շահամիր Շահամիրյանի կողմից Մադրասում հրատարակված ***«Որոգայթ Փառաց»*** գրքում: Շահամիրյանի կարծիքով՝ հայոց ապագա պետության կառավարման լավագույն ձևը կարող է լինել հանրապետությունը, ուր իշխանությունը պետք է պատկանի ողջ հայ ժողովրդին: Եթե ընդհանուր առմամբ բնութագրելու լինենք պառլամենտարիզմի վերաբերյալ Շահամիրյանի պատկերացումները, ապա կարող ենք ասել, որ նրա կարծիքով՝ ապագա ***Հայաստանը պետք է ունենա համընդհանուր ընտրությունների միջոցով ձևավորված իր բարձրագույն ներկայացուցչական օրենսդիր մարմինը՝ պառլամենտը***: Վերջինս իր հերթին պետք է ձևավորի գործադիր և դատական մարմինները: Շահամիրյանը խոսում է նաև պառլամենտարիզմի այնպիսի կարևոր բաղադրիչների մասին, ինչպիսիք են օրենսդիր, գործադիր և դատական մարմինների բաժանումը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները և ազատությունները:

Շահամիր Շահամիրյանը գտնում էր, որ ապագա Հայաստանի բարձրագույն ներկայացուցչական օրենսդիր մարմինը պետք է լինի Հայոց Տունը՝ պառլամենտը: Հայոց տունը պետք է կառուցվի մայրաքաղաքում, ապահով գավառում, ուր պետք է գտնվի նախարարի (վարչապետի) պալատը՝ պարսպված և պահակների պաշտպանությամբ: Այնուհետև, Շահամիրյանը գրում է. «Դահլիճը, որտեղ բազմում են տանուտերերը, նա է Հայոց Տան կարգադրության օրենքը, նա պետք է լինի հայոց թագավոր, նրանով պետք է բովանդակ հայոց ազգը համախոհ թագավոր հանդես գա Հայաստան աշխարհում՝ միշտ

հաստատուն մնալով իրավունքին և արդարությանը՝ ըստ օրենքի կերպի և համեմատության, որով և հույս ունեմ, որ այդ թագավորությունը թերություն չի ունենա» (գլուխ 235):

Հայոց Տունը պետք է կազմավորվի համընդհանուր ընտրությունների միջոցով, որոնք պետք է անցկացվեն երկու փուլով: Ընտրությունների առաջին փուլում Հայոց աշխարհի 12.000 տուն ունեցող յուրաքանչյուր Գավառի յուրաքանչյուր գյուղից պետք է ընտրվի տղամարդկանցից մեկ մարդ: Նա պետք է լինի ազգությամբ հայ, Հայ Եկեղեցու դավանանքին հետևող հեզ ու խոնարհ մարդ: Երկրորդ փուլում գավառում ընտրված բոլոր մարդկանց թվից վիճակահանությամբ պետք է ընտրվի երկու մարդ: Այս երկուսին բոլոր գյուղերի գյուղապետերը միաբանված տալիս են փոխանորդության թուղթ՝ երեք տարի ժամկետով: Նրանք՝ որպես փոխանորդներ (պատգամավորներ) պետք է Գավառը ներկայացնեն Հայոց Տան մեջ: Երեք տարվա ժամկետը լրանալուց հետո գավառի ժողովրդի կամքով նույն անձանց պատգամավորությունը կարող է հաստատվել (երկարացվել) երեք տարի ժամկետով կամ նրանց փոխարեն կարող են ընտրվել այլ անձինք: Ընտրված երկու անձանցից մեկը պետք է դառնա Հայոց տան տանուտեր (պատգամավոր), մյուսը՝ Հայոց Տան կողմից ընտրված՝ գործադիր կամ դատական իշխանության մարմնի պաշտոնատար անձ (գլուխ 19)[1]:

Հայոց Տանը իր ներկայացուցչությունը պետք է ունենար նաև Հայոց Եկեղեցին: Ամենայն Հայոց Ծայրագույն Հայրապետը՝ բոլոր եպիսկոպոսներով հանդերձ, իրենց միջից պետք է ընտրեին մեկ արքեպիսկոպոսի և նրան տային իրենց փոխանորդության թուղթը՝ Հայոց Տանը երեք տարի ժամանակով տանուտերության պաշտոնը զբաղեցնելու համար (գլուխ 12): Այս արքեպիսկոպոսը պետք է ունենար երկու ձայնի իրավունք, մեկը հոգևոր, մյուսը՝ մարմնավոր գործերի համար (գլուխ 233):

Հայաստանի բոլոր պաշտոնատար անձանց պետք է նշանակեր Հայոց Տունը: Հատուկ ամրագրվում էր, որ թե՛ նախարարի, թե՛

[1] Որոգայթ Փառաց: Թարգմ. Պ. Խաչատրյան: Գլուխ 234: Երևան, 2002, էջ 51: Այսուհետ՝ մեջբերումները տեքստում նշելով միայն հոդվածները:

դատավորի և թե՛ խորհուրդների ամեն պաշտոն, զինվորության, դպրության, գրագրության և առհասարակ կառավարության ամեն կարգ տրվում է Հայոց Տան և տանուտերի կողմից: Տվյալ պաշտոնը վարելու իշխանության վերաբերյալ պաշտոնական հրամանը ևս, Հայոց Տան և տանուտերի կողմից պետք է տրվեր՝ համաձայն օրենքի (գլուխ 18):

Հայոց Տունը պետք է իրականացներ հիմնականում երկու՝ օրինաստեղծ և պետական իշխանության մարմինների ձևավորման գործառույթներ: Այդ գործառույթներն իրականացնելու համար Հայոց Տունը պետք է ստեղծեր երեք տանուտերերից կազմված հանձնաժողով, որի անդամները պետք է անվանվեին տանուտերեր: Նրանցից մեկը պետք է լիներ երկու ձայնի իրավունք ունեցող՝ Հայ Եկեղեցու փոխանորդը: Այդ հանձնաժողովը ձևավորելու, նրա անդամներին երդվեցնելու և նրանց առաջին տանուտերության իշխանություն տալու նպատակով Հայոց Տունը պետք է ընտրեր հատուկ պաշտոնատար անձ՝ Հայաստանյայց Հայր անունով, որը գործելու էր միայն երեք օր: Այդ ընտրությունը պետք է կատարվեր հետևյալ կերպ: Հայոց Տան բոլոր փոխանորդների միջից վիճակահանությամբ ընտրվում է մեկ մարդ՝ Հայաստանյայց Հայրը, ով ստանում էր իշխանության լիազորություն: Նա պետք է իրավունք ունենար երեք փոխանորդներին առաջին տանուտերության լիազորություն տալու, եթե նրանք հայ ազգից էին, հայոց աշխարհից էին և ունեին փոխանորդության վկայական (գլուխ 35):

Հայոց Տունն առաջին հերթին պետք է ձևավորի կենտրոնական գործադիր իշխանության մարմիններ: Հայաստանի կենտրոնական գործադիր մարմինը պետք է կազմված լինի նախարարից (վարչապետ) և նրա տասներկու խորհրդակիցներից (խորհրդականներ), որոնք կազմում են նախարարի գաղտնի խորհրդակցությունը կամ խորհուրդը: Նախարարը և գաղտնի խորհուրդը Հայոց Տան կողմից ընտրվում են հետևյալ կերպ: Հայոց Տան բոլոր փոխանորդների կազմից ընտրվում են տասներեք մարդ: Նրանք պետք է լինեն ազգությամբ հայ, ծնունդով Հայաստանցի, Հայ Եկեղեցու հետևորդ, պատիվ վայելող, հայոց ազգն ու աշխարհը սիրող, առաքինությամբ և քաջիմաստությամբ զարդարված,

հեզ ու խելացի մարդիկ: Այս ընտրվածների մեջ վիճակահանություն է կատարվում՝ մեկից մինչև տասներեքերորդ համարը: Ում որ ընկնում է թիվ առաջին վիճակը, նա պետք է լինի նախարար, ում որ ընկնում է թիվ երկրորդ վիճակը, պետք լինի առաջին խորհրդական, և այդպես՝ մինչև վերջ՝ տասներեքերորդ վիճակը: Հայոց Տունը նրանց բոլորին պետք է պատվի պաշտոնի հրամանով (օժտի լիազորություններով), նախարարին՝ երեք տարի ժամկետով, խորհրդականներին՝ ցմահ (գլուխ 49):

Շահամիրյանը նախատեսում է նաև նախարարի ժառանգականության ինստիտուտի հնարավորությունը: Նա նշում է, որ եթե ներկայումս կամ ժամանակներ անց, մեր նախնի Հայկի սերնդից կամ Վաղարշակի կամ Բագրատի սերունդներից հայտնվի մեկը և հավակնի Հայաստանի նախարարի պաշտոնին, կամ թե որդեցորդի ժառանգությամբ և երդմամբ խոստանա պաշտել Աստծուն՝ ըստ Հայոց Եկեղեցու ավանդության կարգի, հնազանդվել օրենքներին, որոնք հրապարակվում են Հայոց Տնից և պարտավորվի հատուցել իր գործողություններով պատճառված վնասը, այդ դեպքում պետք է սիրով ընդունել նրան և մեծարել փառք ու պատվով, նրան օժտել նախարարի լիազորություններով (գլուխ 52):

Հայաստանի նախարարն օժտված էր լայն լիազորություններով, միաժամանակ, ուներ մի շարք պարտականություններ: Հայաստանի նախարարը պետք է լինի համայն հայերի պետը, միևնույն ժամանակ պետք է ծառայի նրանց: Պետք է լինի Հայոց օրենքի և ազգի պաշտպանը, իշխանություն ունենա կատարելու ամեն բարի գործ, իսկ Հայոց օրենքի դեմ չկատարի ոչինչ: Նա ինքը պետք է լինի Հայոց օրենքի պաշտպանը և կանխի օրենքի ցանկացած ոտնահարում: Նա իր սրտում պետք է պահպանի Հայոց օրենքի յուրաքանչյուր հոդվածը: Նրա կյանքն ու կյանքի փառքը կախված են Հայոց օրենքից, և նրա պատճառով Հայոց օրենքի մի փոքր հոդվածի խախտումն իսկ ծանր հետևանքներ կառաջացնեն նրա համար: Նախարարին իշխանություն է տրվում հայ ժողովրդին շահ բերելու և որևէ մեկին չվնասելու համար:

Նախարարը պետք է արտահայտի հայոց շահերը և ոչ մի խոսք չասի ընդդեմ Հայոց օրենքի: Նա իշխանություն ունի պատերազմելու ընդդեմ թշնամիների և խաղաղություն վարելու հայոց բարեկամների հետ: Նա իրավունք ունի կյանք պարգևելու մահապարտներին, մեկ տարվա մեջ մինչև յոթ մարդու, բայց իշխանություն չունի «որևէ մեկի գլխից մազ իսկ վերցնելու»:

Նախարարը պարտավոր է Հայոց Տանն ահազանգելու թշնամիների մոտենալու, հայ ազգի ու աշխարհի դեմ վնասարարության և անարգանքի վտանգի մասին, պարտավոր է կանխել թշնամու կողմից Հայոց աշխարհի ավերումը և ժողովրդին նեղություն պատճառելը, **և թշնամիների կողմից պատճառված վնասի համար ինքն է պատասխանատու:**

Նախարարը իրավունք ունի հրամայելու Հայոց համայն զորքերին ու զորապետերին՝ համաձայն օրենքի՝ իրավունք ունի խոսքով դատապարտելու կամ շղթայելու իր հրամանը չկատարող զինվորներին և զորապետերին՝ հանձն առնելով կալանավորման պատասխանատվությունը, եթե կալանավորը դատարանի կողմից անպարտ ճանաչվի և ազատվի:

Նախարարն իշխանություն ունի իր և բոլորի գործողությունների, ինչպես նաև Հայաստանի երկրի երեսին ամենայն մարդկային բնության վրա, բացառությամբ բարձրագահ և բարեկարգ Հայոց Տնից, **քանի որ ոչ ոք իրավասու չէ իշխելու Հայոց Տան վրա** (գլուխ 51):

Հայոց տունը պետք է ձևավորի նաև գործադիր իշխանության այլ մարմիններ: Հայոց Տունը ձևավորում է սպարապետություն՝ փոխանորդների միջից երեք տարի ժամկետով ընտրելով ինը մարդ, որոնցից երեքը համարվելու են առաջին սպարապետ, երեքը՝ երկրորդ, երեքը՝ երրորդ սպարապետ՝ անվանվելով համապատասխանաբար կարմիր, կապույտ և նարնջագույն սպարապետներ (գլուխ 24): ***Հատկանշական է, որ հենց այս գույներն են ներկայիս Հայաստանի դրոշի գույները:***

Այնուհետև, Հայոց Տունը ձևավորում է սպարապետություն՝ իր փոխանորդների միջից երեք տարի ժամկետով ընտրելով ինը մարդ,

որոնք պետք է լինեն հեծելազորի հրամանատարներ (գլուխ 25): Հայոց Տունը ձևավորում է հրաձգության զորագլխություն, իր փոխանորդների միջից ընտրելով երեք մարդ, որոնք պետք է պաշտոնավարեն երեք տարի (գլուխ 26): Հայոց Տունը ընտրում է նաև բանակի այլ պաշտոնյաներ՝ քսանյոթ մարդ, որոնք պետք է լինեն հետախուզության պետեր, զինապետեր, վառոդապետեր և այլն (գլուխ 27):

Հայոց Տունը պետք է ձևավորի հազարապետություն, այդ նպատակով ընտրելով իննսուն մարդ, որոնք ցմահ պետք է պաշտոնավարեն (գլուխ 30):

Հայոց Տան տանուտերերի ատյանում հանդես գալու և ժողովրդի շահերը մաքսապետերից պաշտպանելու համար Հայոց Տունը պետք է երեք տարի ժամկետով ընտրի հարկերի և մաքսերի հարցերով երեք տեսուչներ (գլուխ 31), ռոճկահատուցման պաշտոնյաների նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ երեք տեսուչներ (գլուխ 32):

Հայոց Տունը ձևավորում է նաև գործադիր իշխանության պետական մարմիններ: Այդ նպատակով նա իր փոխանորդների միջից երեք տարի ժամկետով ընտրում է վաթսուն մարդ՝ քաղաքներում կառավարում իրականացնելու համար (գլուխ 28):

Հայոց Տունը պետք է ձևավորի երկրի դատական իշխանության մարմինները: Այդ նպատակով Հայոց Տունը իր փոխանորդների միջից պետք է ընտրի քսանհինգ մարդ, որոնք կազմում են բարձրագույն դատավարությունը: Ընտրվածներից մեկին պետք է տրվի գլխավոր դատավորի պաշտոն (գլուխ 22): Բացի այդ, Հայոց Տունն իր փոխանորդների միջից ընտրում է գլխավոր դատավորներ՝ վաթսուն մարդ: Նրանք ընտրվում են երեք տարի ժամկետով և քաղաքներում պետք է վարեն դատական գործերը՝ Հայաստանի օրենքներին համապատասխան (գլուխ 29):

Հայոց Տունն ընտրում է նաև ատենաբաններ (դատախազներ): Նրանք կոչված են պաշտպանելու Հայաստանի օրենքը և կարգուկանոնը, արտահայտելու օրենքի իրավունքն ու արդարադատությունը: Ատենաբաններն ընտրվում են Հայոց Տան փոխանորդներից, երեք տարի

ժամկետով, թվով երեսունվեց մարդ: Նրանք պետք է լինեն հռետորական արվեստի և դպրության մեջ կրթված, օրենքներին գիտակ մարդիկ: Ընտրված ատենաբաններից տասնութը պետք է պաշտոնավարեին Հայոց Տանը, տասներկուսը՝ բարձրագույն դատաստանի պալատում, վեցը՝ նախարարի գաղտնի խորհրդում (գլուխ 23):

Բոլոր բարձրագույն պաշտոնները, հատկապես տանուտերերի, նախարարի, դատավորի, իշխանի, սպարապետի, ասպետի՝ խորհրդականներով, դպիրներով, ատենաբաններով և բոլոր կարգի զորագլուխներով հանդերձ, ***կարող են սրանալ միայն նրանք, ովքեր բուն հայ ազգից են, Հայաստանի ծնունդ և մկրտված են Հայ Եկեղեցու ավանդությամբ*** (գլուխ 33):

«Որոգայթ փառաց»-ի սահմանադրական-իրավական նորմերի ուսումնասիրությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ Հայոց Տունը պետք է լիներ անսահմանափակ իրավասության պառլամենտ, ընդ որում, ***նկատի ունենալով իշխանության գործադիր և դատական մարմինների կազմավորման կարգի առանձնահատկությունները, կարելի է ասել, որ այստեղ գործ ունենք մինիսպերիալ պառլամենտարիզմի հետ:***

Շահամիրյանը կարևորում էր նաև պառլամենտարիզմի այնպիսի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են իշխանությունների տարանջատումը և օրենքի գերակայությունը: Հենց այս սկզբունքները պետք է ընկած լինեին պետական իշխանության կազմակերպման հիմքում: Շահամիրյանի համաձայն՝ Հայաստանում պետական իշխանությունը պետք է իրականացվի իրենց գործառույթներն ունեցող օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջոցով, որոնք պետք է տարանջատված լինեն: Ընդ որում, ինչպես նշվում է «Որոգայթ փառաց»-ի իրավաքաղաքական ուսումնասիրություններում, Շահամիրյանը տարանջատում է մի կողմից՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունները, մյուս կողմից՝ պետական իշխանության ճյուղերը[1]:

[1] **Սարվազյան Լ.**, Ազգային սահմանադրական, փիլիսոփայաքաղաքական մշակույթը 18-19-րդ դարերում: Երևան, 2017, էջ 50-51:

Ինչ վերաբերում է օրենքի գերակայությանը, ապա Շահամիրյանը դեռևս իր գրքի ներածության մեջ գրում է. «Ինչ կանոն և օրենք որ ընդունելի լինի և կհաստատվի հայոց մեջ, նույն կանոնն էլ թող Հայաստան աշխարհում հայոց թագավոր լինի: Դրանք ամենքն էլ ընդհանուր թագավոր և տեր կլինեն իրենց աշխարհի և ժողովրդի վրա, որովհետև այդ կանոններն ստեղծել, հաստատել և ընդունել են բոլորով՝ ըստ օրենքի ամենքին հատուցելու համար իրենց կատարած գործերի վարձը, որպեսզի բոլորն էլ ստանան ամեն տեսակի հարկեր, մաքսեր և պատիվներ՝ հնազանդության համար, և պատիժ՝ համաձայն օրենքի, իսկ մեր օրենքի պաշտոնատարները լինեն Հայոց աշխարհի և հասարակ ժողովրդի սպասավոր»:

Պետք է արձանագրել, որ հայրենական պառլամենտարիզմի ավանդույթների զարգացման գործում առանձնահատուկ տեղ է ունեցել նաև Արևմտահայերի **«Հայոց ազգային Սահմանադրությունը»**, որը 1863 թվականի մարտի 17-ին հաստատվել է Թուրքիայի Բարձր դռան կողմից և անմիջապես գործողության մեջ է դրվել: Թեպետ այդ ժամանակ հայերը գտնվել են թուրքական տիրապետության ներքո, և սահմանադրության դասական պատկերացումների տեսակետից այդ փաստաթուղթը սահմանադրություն համարել չի կարելի, սակայն «Հայոց ազգային Սահմանադրությունը» թե՛ իր նպատակներով, թե՛ խնդիրներով, թե՛ ոգով հայոց ներքին կյանքի կազմակերպման հիմնական օրենքն էր, հետևաբար՝ իսկական Սահմանադրություն: Հայոց Ազգային Սահմանադրության ուսումնասիրությունը վկայում է, որ հայերը, իրենց իրավական-քաղաքական մշակույթի մակարդակով մի քանի անգամ գերազանցում էին տիրապետող ազգին՝ թուրքերին:

Հայոց Ազգային Սահմանադրությունը բաղկացած էր հիմնական սկզբունքներից և 99 հոդված ունեցող հինգ գլուխներից[1]:

Սահմանադրության համաձայն՝ հայոց ազգի բարձրագույն ներկայացուցչական մարմինն ***Ազգային ընդհանուր ժողովն էր***, որը կազմված էր 140 երեսփոխաններից (պատգամավորներից): Նրանց

[1] **Ազգային Սահմանադրություն Հայոց**: Կոստանդնուպոլիս, 1863: Այսուհետ՝ հոդվածները կնշվեն տեքստում:

մեկ յոթերորդ մասը, այսինքն՝ քսանը եկեղեցական երեսփոխաններն էին, որոնց ընտրում էին Կոստանդնուպոլսի եկեղեցականները, երկու յոթերորդ մասը, այսինքն՝ քառասունը, գավառներից ընտրված երեսփոխաններն էին, չորս յոթերորդ մասը, այսինքն՝ ութսունը, Կոստանդնուպոլսի թաղերից ընտրված երեսփոխաններն էին (հոդված 57):

Եկեղեցական երեսփոխաններն ընտրվում էին հետևյալ կերպ: Պատրիարքի հրավերով Կոստանդնուպոլսի բոլոր եկեղեցականները ժողով էին գումարում և գաղտնի քվեարկությամբ Ազգային ժողովի երեսփոխաններ էին ընտրում թե՛ եպիսկոպոսներից, թե՛ վարդապետներից և թե՛ քահանաներից: Ընտրվողները պետք է պաշտոն չունենային, նրանց երեսուն տարին պետք է լրացած լիներ, ձեռնադրված լինեին գոնե հինգ տարի առաջ և դատաստանի տակ չգտնվեին (հոդված 63): Եկեղեցական երեսփոխաններն ընտրվում էին տասը տարի ժամկետով, և երկու տարին մեկ նրանց մեկ հինգերորդ մասը պետք է նորացվեր (հոդված 64):

Աշխարհական երեսփոխանների ընտրությունները տեղի էին ունենում մեծամասնական ընտրակարգով, ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրությունների միջոցով: Ընտրական իրավունքի հիմքն ազգային տուրքի վճարումը և անձնական արժանիքներն էին: Ընտրողը պետք է տարեկան առնվազն յոթանասունհինգ ղուրուշ տուրքի գումար վճարած լիներ: Անձնական արժանիքներով ընտրական իրավունք ունեցող էին համարվում արքունի դիվաններում և այլ պետական մարմիններում պաշտոններ զբաղեցնողները, վկայված բժիշկները, օգտակար գրքերի հեղինակները, ուսուցիչները և ազգային օգտակար ծառայություններ մատուցած անձինք (հոդված 65): Ընտրական իրավունքից կարող էին օգտվել քսանհինգ տարին լրացած, օսմանյան տերության հպատակ անձինք (հոդված 66):

Ընտրական իրավունքից զրկված էին՝ ա) քրեական հանցագործության համար դատապարտվածները, որոնք տերության օրենքով քաղաքականապես մեռյալ էին համարվում, բ) հակազգային գործողություններ կատարած և ազգային ժողովներից մեկի կողմից

դատապարտված անձինք, որոնց նկատմամբ ազգային գործերին մասնակցելն արգելող վճիռ կա «դատող ժողովրդի» կողմից, գ) պետության դատարանների կողմից սահմանված «զգաստացնող պատիժներ» կրող անձինք, որոնց պատժի պայմանական ժամկետը դեռ չի լրացել, դ) խելագարության պատճառով անգործունակ ճանաչված անձինք, որոնց առողջանալը օրենքով սահմանված կարգով հաստատված չէ (հոդված 67):

Ընտրվել կարող էին ընտրական իրավունք ունեցող, երեսուն տարին լրացած, պետության օրենքներին գիտակ և ազգային գործերում հմուտ, օսմանյան հպատակ հայազգի անհատները: Ընդ որում, Կոստանդնուպոլսի թաղերից ընտրվող ութսուն երեսփոխաններից յոթը պետք է լինեին պաշտոնատար անձինք (հոդված 68):

Սահմանադրությունն ամրագրում էր պատգամավորի ազատ մանդատի սկզբունքը: ***Ազգային երեսփոխանները համարվում էին ոչ թե իրենց ընտրող թաղի կամ գավառի, այլ ազգի՝ համազոր իշխանությամբ երեսփոխանները***: Սահմանվում էր նաև, որ թե՛ Պոլսի թաղերից, թե՛ գավառներից ընտրված երեսփոխանները պարտադիր չէ, որ իրենց ընտրող թաղի կամ գավառի բնակիչները լինեին: Բավական էր, որ նրանք Կոստանդնուպոլսում բնակվեին, իրենց ներկայացրած թաղի կամ գավառի ազգային գործերում հմուտ լինեին և իրենց ազգասիրությամբ, ճշմարտացիությամբ ու արդարախոհությամբ ընտրողների հարգն ու համարումը ստացած լինեին (հոդված 70):

Ազգային ընդհանուր ժողովի նիստը համարվում էր իրավազոր, եթե նիստին մասնակցում էին երեսփոխանների ընդհանուր թվի կեսից ավելին, այսինքն՝ յոթանասունմեկ մարդ (հոդված 59):

Ազգային ընդհանուր ժողովի իրավասությունն էր՝ Պատրիարքին, Կաթողիկոսին և ազգի գլխավոր պաշտոնյաներին, Կրոնական և Քաղաքական ժողովների անդամներին ընտրելը, Ազգային ժողովի վարչության նկատմամբ հսկողությունն իրականացնելը, նշված ժողովների իրավասությանը վերաբերող, բայց նրանց ձեռնահասությունից վեր համարված գործերը քննելն ու վճիռ

կայացնելը, ազգային Սահմանադրությունն անխախտ պահելը (հոդված 60)։ Այսինքն՝ Սահմանադրությունը նախատեսում էր բարձրագույն ներկայացուցչական օրենսդիր մարմնի՝ Ազգային ընդհանուր ժողովի կողմից ազգային գործադիր իշխանության մարմինների ձևավորումը և բոլոր պաշտոնատար անձանց ընտրությունը, ինչպես նաև նրանց գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելը, ***ինչը պառլամենտարիզմի բնորոշ գծերից մեկն է:***

Ազգային ընդհանուր ժողովը ձևավորում էր կենտրոնական գործադիր իշխանություն՝ **Կրոնական և Քաղաքական ժողովներ**: Կրոնական ժողովը բաղկացած էր առնվազն երեսուն տարին լրացած և հինգ տարի ձեռնադրված տասնչորս եկեղեցականներից (հոդված 24)։ Կրոնական ժողովի անդամներն ընտրվում էին հետևյալ ընթացակարգով։ Նախ, տեղի էր ունենում եկեղեցական համագումար ժողով, որը գաղտնի քվեարկությամբ ընտրում էր Կրոնական ժողովի անդամների եռապատիկ թվով եկեղեցականների և նրանց անունները ստորագրված հայտագրերով ներկայացնում էր Ազգային ընդհանուր ժողովին։ Վերջինս, ներկայացված անձանցից, գաղտնի քվեարկությամբ ընտրում էր Կրոնական ժողովի անդամներին, որոնք հետագայում հաստատվում էին կայսերական հրամանով (հոդված 25)։ Կրոնական ժողովը գործում էր երկու տարի։ Նրա անդամները չէին կարող վերընտրվել, սակայն, կարող էին կրկին ընտրվել երկու տարի անց (հոդված 26)։

Կրոնական ժողովը կոչված էր իրականացնելու **ազգային կրոնական գործերի ընդհանուր տեսչությունը:** Նրա պարտականություններն էին՝ ազգի մեջ կրոնական զգացումը զարգացնելը, Հայ Եկեղեցու դավանությունն ու ավանդույթներն անխախտ պահելը, եկեղեցիների և եկեղեցականների բարեկարգությունը (բարեվարքությունը) վերահսկելը, եկեղեցականների վիճակը բարելավելը և նրանց բարեկեցիկ ու ապահով ապագայի համար միջոցներ ձեռնարկելը, ազգային վարժարաններում քրիստոնեական վարդապետության ուսուցման նկատմամբ հսկողություն իրականացնելը, արժանավոր և գրագետ վարդապետներ ու քահանաներ կրթելը, ինչպես նաև ազգի մեջ ծագած վեճերը քննելը և

եկեղեցական օրենքներին համապատասխան լուծելը (հոդված 28): Կրոնական ժողովն ընտրում էր նաև Կոստանդնուպոլսի եկեղեցիների քարոզիչ վարդապետներին և ավագերեցներին, իսկ Պատրիարքը նշանակում էր նրանց (հոդված 33):

Եթե կրոնական ժողովը չկարողանար լուծել որևէ զուտ կրոնական կարևոր խնդիր, ապա պետք է գումարվեր եկեղեցական ժողով, որին պետք է հրավիրվեին Կ. Պոլսի եպիսկոպոսները, քարոզիչ վարդապետները, ավագերեցները, աթոռակալները, անհրաժեշտության դեպքում՝ նաև շրջակա գավառների առաջնորդները: Եթե եկեղեցական համագումար ժողովն էլ չէր կարողանում լուծել խնդիրը, ապա պետք է դիմեին ընդհանրական Կաթողիկոսին (հոդված 29):

Քաղաքական ժողովը բաղկացած էր ազգային գործերին և պետության օրենքներին գիտակ քսան աշխարհականներից (հոդված 36): Նրանց երկու տարի ժամկետով, գաղտնի քվեարկությամբ և քվեների բացարձակ առավելությամբ ընտրում էր Ազգային ընդհանուր ժողովը: Քաղաքական ժողովի անդամները նույնպես հաստատվում էին կայսերական հրամանով (հոդված 37):

Քաղաքական ժողովը կոչված էր իրականացնելու ազգային քաղաքական գործերի ընդհանուր տեսչությունը: Նրա պարտականություններն էին՝ ազգի բարեկարգության և առաջադիմության մասին հոգալը, իր տեսչության տակ գտնվող խորհուրդների ներկայացրած ազգօգուտ առաջարկները քննելը և նրանց կարևորության հաստատումից հետո այդ առաջարկների իրականացմանը նպաստելը կամ նրանց իրականացման խոչընդոտները վերացնելը (հոդված 43):

Գործադիր իշխանության բարձրագույն մարմինը **Խառը ժողովն էր**, որը կազմված էր Կրոնական և Քաղաքական ժողովներից: Խառը ժողովի նիստն իրավազոր էր, եթե նիստին ներկա էին ինչպես Կրոնական, այնպես էլ Քաղաքական ժողովի մեծագույն մասը: Խառը ժողովում քննված որևէ հարցի կապակցությամբ որոշում կայացնելու համար երկու ժողովները պետք է քվեարկեին առանձին: Եթե երկու ժողովները միևնույն որոշումն էին կայացնում, ապա խնդիրը լուծված էր համարվում,

իսկ եթե նրանց որոշումները տարբեր էին, խնդրի լուծումը հանձնվում էր Ազգային ընդհանուր ժողովին (հոդված 88):

Քաղաքական ժողովը ձևավորում էր խորհուրդներ և հոգաբարձություններ: Քաղաքական ժողովի կողմից ուսումնական, տնտեսական, դատաստանական գործերի և վանքերի տեսչության համար հաստատվում էր չորս խորհուրդ, իսկ այդ գործերի հետ կապված խնդիրները լուծելու համար՝ երեք հոգաբարձություն: Խորհուրդների և հոգաբարձությունների անդամները պաշտոնավարում էին երկու տարի, պայմանով, որ ամեն տարեգլխին կիսով չափ նորոգվեն: Դատաստանական խորհրդի նախագահը պետք է լիներ Կոստանդնուպոլսի Պատրիարքի փոխանորդը (հոդված 44):

Ուսումնական խորհուրդը բաղկացած էր յոթ ուսումնական (կրթված) աշխարհականներից: Այն կոչված էր իրականացնելու Հայոց ազգի դաստիարակության և կրթության ընդհանուր տեսչությունը: Ուսումնական խորհրդի պարտականություններն էին՝ ազգային վարժարանների բարեկարգությունը հսկելը, տղաների և աղջիկների դաստիարակությունը հոգալու համար ստեղծված ընկերություններին խրախուսելն ու օգնելը, դպրատների դաստիարակների կյանքը բարելավելը և նրանց ապագայի մասին հոգալը, հաջողակ և քաջահմուտ ուսուցիչներ պատրաստելը, դպրոցական դասագրքեր ստեղծելը: Բացի այդ, ուսումնական խորհուրդը վկայականներ էր տալիս ուսումն ավարտած աշակերտներին, որոշում էր ուսման համար անհրաժեշտ դասագրքերը, կազմակերպում էր տարեկան քննությունները: Կրոնական ուսման համար Ուսումնական խորհուրդը դիմում էր Կրոնական ժողովին, որպեսզի վերջինս ընտրի դասագրքերը և համապատասխան ուսուցիչներին, քննություններ անցկացնի և վկայականներ տա (հոդված 45):

Տնտեսական խորհուրդը բաղկացած էր յոթ տնտեսագետ աշխարհականներից, որոնց ընտրում էր Քաղաքական ժողովը՝ քվեների առավելությամբ: Տնտեսական խորհուրդը կոչված էր իրականացնելու Կոստանդնուպոլսում գտնվող հայկական հաստատությունների և նրանց կալվածքների սպասարկման ընդհանուր տեսչությունը: Տնտեսական խորհրդի պարտականություններն էին՝ այդ հաստատությունների

բարեկարգությունը հսկելը և նրանց համար հոգալը: Տնտեսական խորհուրդը պետք է հետևեր, որ ամեն մի ազգային կալվածք ունենա օրինական կալվածագիր: Ինչպես Կոստանդնուպոլսում, այնպես էլ գավառներում գտնվող ազգային անշարժ գույքի կալվածագրերի օրինակները խորհրդի միջոցով պետք է հավաքվեին և պահվեին պատրիարքարանի դիվանատանը: Առանց տնտեսական խորհրդի գիտության, Քաղաքական ժողովի հաճության և Պատրիարքի կնիքով հաստատվելու՝ ցանկացած ազգային կալվածք չէր կարող գնվել կամ վաճառվել: Բացի այդ, Կոստանդնուպոլսում և շրջակայքում գտնվող որևէ շինության կառուցում կամ վերանորոգում չէր կարող ձեռնարկվել՝ առանց խորհրդի գիտության և Քաղաքական խորհրդի հաճության: Տնտեսական խորհուրդը նաև հսկողություն էր իրականացնում ֆինանսական, կտակների և հիվանդանոցների հոգաբարձությունների, ինչպես նաև թաղային խորհուրդների տնտեսական գործունեության նկատմամբ՝ նրանցից որոշակի ժամանակաշրջանի համար հաշվետվություն պահանջելով և Քաղաքային խորհրդին ներկայացնելով (հոդված 46):

Դատաստանական խորհուրդը բաղկացած էր մասնագիտությամբ իրավագետ, ամուսնացած, քառասուն տարին լրացած ութ անձանցից, որոնցից չորսը՝ աշխարհական և չորսը՝ եկեղեցական: Դատաստանական խորհրդի նախագահը, ինչպես նշվեց, պետք է լիներ Պատրիարքի փոխանորդը: Խորհրդի բոլոր անդամները պետք է ընտրվեին Խառը ժողովի կողմից՝ ձայների մեծամասնությամբ: Դատաստանական խորհուրդը կոչված էր լուծելու ընտանեկան վեճերը, ինչպես նաև քննելու և վճռելու Բարձր Դռան կողմից պատրիարքարան ուղարկված գործերը: Այն դեպքում, երբ Դատաստանական խորհուրդը չէր կարողանում լուծել վեճը, այն, իր բնույթից ելնելով, ուղարկվում էր Կրոնական, Քաղաքական կամ Խառը ժողովներին: Եթե Դատաստանական խորհրդի վճիռը բողոքարկվում էր, ապա գործի բնույթից ելնելով՝ այն վերստին քննվում էր Կրոնական, Քաղաքական կամ Խառը ժողովում (հոդված 47) :

Քանի որ վանքերը հայոց ազգի սեփականությունն էին, ուրեմն և նրանց մատակարարության, հասույթների և ծախսերի ընդհանուր

տեսչությունն ու քննությունը ազգի իրավունքն էր համարվում: Ընդ որում, յուրաքանչյուր վանք պետք է ունենար Ազգային ընդհանուր ժողովի կողմից հաստատված իր կանոնադրությունը: Վանքերի գործունեության հետ կապված խնդիրները լուծելու համար Քաղաքական ժողովն ընտրում էր **Վանքերի խորհուրդ**: Այդ խորհուրդը բաղկացած էր յոթ անձանցից: Վանքերի խորհուրդը պետք է վերահսկողություն իրականացներ յուրաքանչյուր վանքի կողմից իր կանոնադրության գործադրման նկատմամբ, ստուգեր վանքերի եկամուտները և հասույթները, քններ և կանոնակարգեր նրա ծախսերը (հոդված 48):

Ֆինանսատնտեսական (ելևմտից) հոգաբարձությունը բաղկացած էր յոթ հաշվեգետ անձանցից, որոնց ընտրում էր Քաղաքական ժողովը՝ ձայների մեծամասնությամբ: Այս հոգաբարձությունը կոչված էր իրականացնելու կենտրոնական գանձատան տնօրինումը և նրա մուտքերի և ելքերի հաշվառումը: Գանձատան մուտքերը գոյանում էին ազգային ընդհանուր տուրքից, պատրիարքարանի դիվանատան հասույթներից, ազգին կտակված գումարներից և նվիրատվություններից: Գանձատան ելքերն էին պատրիարքարանի և դիվանատան ընթացիկ ծախսերը, ազգային հաստատություններին և կարիքավոր թաղերին հատկացվող նպաստները, ինչպես նաև զանազան այլ ծախսերը: Այս հոգաբարձությունը հավաքում էր բոլոր հասույթները և Քաղաքական ժողովի ու Տնտեսական խորհրդի հավանությամբ կատարում էր անհրաժեշտ ծախսերը: Նույն հոգաբարձությունը տոմարակալության կանոնով կազմում էր ազգային գանձատան հաշվետվությունը, ներկայացնում Տնտեսական խորհուրդ, որն այն պետք է ստուգեր, վավերացներ և ներկայացներ Քաղաքական ժողովին (հոդված 49):

Կտակների հոգաբարձությունը կազմված էր յոթ անդամներից, որոնցից երեքը՝ եկեղեցական, չորսը՝ աշխարհական: Հոգաբարձության անդամներին ընտրում էր Խառը ժողովը՝ ձայների մեծամասնությամբ: Կտակների հոգաբարձության գործառույթն ազգային կտակների տնօրինումն էր: Նրա պարտականությունն էր կտակների օրինավոր և կտակարարների նպատակներին ու դիտավորություններին համա-

պատասխան գործադրման նկատմամբ հսկողություն իրականացնելը: Կտակների հոգաբարձությունը գործում էր Խառը ժողովի կողմից նախապատրաստված և Ազգային ընդհանուր ժողովի կողմից ընդունված կանոնադրության հիման վրա: Այս հոգաբարձությունը հաշվետվություն էր ներկայացնում Տնտեսական խորհրդին, որն այն ստուգում, վավերացնում և ուղարկում էր Քաղաքական ժողովին (հոդված 50):

Հիվանդանոցների հոգաբարձությունը բաղկացած էր ինը անձանցից, որոնց ընտրում էր Քաղաքական ժողովը՝ ձայների մեծամասնությամբ, ընդ որում, նրանցից երկուսը պետք է լինեին վկայական ունեցող բժիշկներ: Հիվանդանոցի հոգաբարձության հիմնական գործառույթը ազգային հիվանդանոցի և նրա կալվածքների տնտեսությունը վարելն էր, ինչպես նաև նրանց հասույթով և ազգային գանձատնից ստացված նպաստներով նրանց գործունեությունն ապահովելը: Ազգային հիվանդանոցն ուներ չորս բաժին: Առաջին՝ աղքատ հիվանդներին բժշկելու, երկրորդ՝ ծեր և անկարող աղքատներին պատսպարելու, երրորդ՝ հոգեկան հիվանդներին խնամելու, և չորրորդ՝ որբ և անտերունչ երեխաներին դաստիարակելու բաժիններ: Հիվանդանոցի հոգաբարձությունը տնտեսական գծով հաշվետու էր Տնտեսական խորհրդին, դաստիարակության գծով՝ Ուսումնական խորհրդին և համապատասխան հաշվետվություններ էր ներկայացնում նրանց (հոդված 51):

Ազգային Սահմանադրության համաձայն՝ հայոց ազգային կյանքի կազմակերպման մարմինների մեջ առանձնահատուկ դեր ուներ **Կոստանդնուպոլսի Պատրիարքը**: Նա համարվում էր ազգային բոլոր ժողովների նախագահը, իսկ առանձին դեպքերում՝ տերության հրամանների գործադրման միջնորդը: Ազգի վստահությանը և հարգանքին արժանանալու համար Պատրիարք ընտրվող անձը պետք է ունենար պատրիարքական աթոռին վայել բոլոր հատկանիշները և արժանիքները: Բացի այդ, նա պետք է լիներ եպիսկոպոսների դասից, վայելեր պետության կատարյալ վստահությունը, գոնե իր հորից սկսած՝ օսմանյան հպատակ լիներ, և երեսունհինգ տարին լրացած

լիներ: Պատրիարքին ընտրում էր Ազգային ընդհանուր ժողովը, սակայն, Կրոնական և Քաղաքական ժողովներն իրավունք ունեին իրենց կարծիքը հայտնել ընտրվողների ցուցակում ընդգրկված թեկնածուների արժանիքների վերաբերյալ (հոդված 2):

Պատրիարքի պարտականություններն էին՝ Սահմանադրության սկզբունքներին համապատասխան վարվելը և նրա յուրաքանչյուր կետի ճշտիվ գործադրությանը ուշի ուշով հետևելը: Այստեղ խոսքն, ըստ էության, Պատրիարքի կողմից սահմանադրական վերահսկողության գործառույթի իրականացման մասին է: Պատրիարքն իրեն ուղղված գործերը հանձնում էր համապատասխան ժողովներին՝ քննելու և որոշում կայացնելու համար: Իսկ եթե գործը հրատապ լիներ և նրա լուծման համար անհնար լիներ ժողովի գումարման օրվանը սպասելը, կամ հնարավոր չլիներ ժողովի գումարումը, ***Պատրիարքն ինքն էր լուծում այդ գործը՝ իր վրա վերցնելով պատասխանատվությունը***: Միևնույն ժամանակ, ***Պատրիարքը պարտավոր էր հանձնարարել արձանագրելու եղելությունը՝*** համապատասխան ժողովի հաջորդ նիստում ներկայացնելու և վավերացնելու համար (հոդված 8):

Արդեն նշել ենք, որ Պատրիարքն իրականացնում էր տարբեր գործառույթներ, մասնավորապես, Ազգային ընդհանուր ժողովի կողմից ընտրված Կրոնական և Քաղաքական ժողովների անդամների վերաբերյալ տեղեկագիրները ներկայացնում էր Բարձր Դռանը՝ կայսերական հրամանով հաստատելու համար, նշանակում էր Կրոնական ժողովի կողմից ընտրված՝ Կոստանդնուպոլսի եկեղեցիների քարոզիչ վարդապետներին և ավագերեցներին: ***Նա ուներ նաև արտաքին գործառույթներ՝ ազգը ներկայացնում էր Բարձր Դռան հետ հարաբերություններում, այսինքն՝ իրականացնում էր նաև ներկայացուցչական գործառույթ***: Պատրիարքի գործառույթները որոշակի առումով կարելի է նմանեցնել պառլամենտական հանրապետություններում գործող նախագահների գործառույթներին:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդին խորթ չեն եղել պառլամենտարիզմի գաղափարները, իսկ պառլամենտարիզմի

հիմնական բաղադրիչներն առկա են եղել նրա պետական և հասարակական-քաղաքական կյանքում: Մասնավորապես, Հայաստանում ներկայացուցչական օրենսդիր մարմիններ կազմավորվել ու գործել են հնագույն ժամանակներում, և այդ ավանդույթը հարատևել է ընդհուպ մինչև 20-րդ դարը, իսկ իշխանությունների տարանջատման և օրենքի գերակայության գաղափարները հայ քաղաքական–իրավական մտքում հայտնվել են դեռևս 18-րդ դարում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Սարվազյան Լ.**, Խորհրդակցական սկզբունքը Հայ Եկեղեցու կառավարման համակարգում. Փիլիսոփայությունը արդի աշխարհում: Գիրք IV, Երևան, 2014: Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2002:

2. **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն: Երևան, 1983:

3. **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն: Երևան, 1990:

4. **Մելիք-Թանգյան Ն.Վ.**, Հայոց եկեղեցական իրավունքը: Թեհրան, 2004:

5. **Կանոնագիրք Հայոց**: Մաս Ա: Երևան, 1964:

6. **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանաց աշխարհի: Երևան, 1969:

7. **Որոգայթ Փառաց: Թարգմ. Պ. Խաչատրյան**: Երևան, 2002, գլուխ 234:

8. **Սարվազյան Լ.**, Ազգային սահմանադրական, փիլիսոփայա-քաղաքական մշակույթը 18-19-րդ դարերում: Երևան, 2017:

9. **Ազգային Սահմանադրություն Հայոց**: Կոստանդնուպոլիս, 1863:

10. **Պապայան Ռ.Ա.**, Ժամանակակից իրավունքի քրիստոնեական արմատները: Մ., Նորմա, 2002:

11. **Պետրոսյան Ռ.Գ.,** Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները: Եր., Ոսկան Երևանցի:

ТРАДИЦИИ ПАРЛАМЕНТАРИЗМА В АРМЕНИИ

Аннотация

Представительные законодательные органы формировались и действовали в Армении еще в древние времена. Иными словами, армянскому народу не были чужды идеи парламентаризма, основные компоненты которого присутствовали в его государственной и общественно-политической жизни. За тысячелетнюю историю армянской государственности сформировались и укрепились определенные традиции государственной жизни, которые просуществовали до XX века. Что касается многовековой армянской правовой мысли, идей разделения властей, то корни системы разделения властей, согласно Р. Папаяну, следует искать в самой Библии. Он отмечает, что в троице «Бога-Отца, Бога-Сына и Бога-Святого Духа указываются три ветви небесной власти, являющиеся земными эквивалентами законодательной, исполнительной и судебной властей». Другой известный профессор Р. Петросян, опираясь на обоснования существующих в юридической литературе библейских норм, показал, что идеи создания противовесов и ограничений между разными ветвями власти берут свое начало из Ветхого Завета, а право и его основные отрасли - суд и справедливость имеют божественное происхождение и содержание.

Ключевые слова: христианство, духовенство, миряне, Армянский дом, высший представительный законодательный орган, депутаты, министр, государственные органы исполнительной власти, «Национальная конституция Армении», Католикос, Патриарх, Религиозное собрание, Политическое собрание, Смешанное собрание.

THE TRADITIONS OF PARLIAMENTARISM IN ARMENIA

Annotation

Representative legislative bodies were formed and operated in Armenia in ancient times. In other words, the ideas of parliamentarism were not alien to the Armenian people, the main components of which were present in their state and socio-political life. Over the thousand-year history of Armenian statehood, certain traditions of state life were formed and strengthened, which lasted until the 20th century. As for the centuries-old Armenian legal thought, the ideas of separation of powers, the roots of the system of separation of powers should be sought in the Bible itself, writes R. Papayan. He concludes that the trinity of "God the Father, God the Son and God the Holy Spirit indicates three branches of heavenly power, which are earthly equivalents of the legislative, executive and judicial powers". Another famous professor R. Petrosyan, relying on the justifications of biblical norms existing in legal literature, showed that the ideas of creating counterbalances and restrictions between different branches of power originate from the Old Testament, and the law and its main branches - court and justice - have divine origin and content.

Keywords: Christianity, clergy, laity, Armenian House, supreme representative legislative body, deputies, minister, state executive bodies, "National Constitution of Armenia", Catholicos, Patriarch, Religious Assembly, Political Assembly, Mixed Assembly.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 08.08.2024 թ., փրվել է գրախոսության 11.08.2024 թ., ընդունվել է տպագրության 31.08.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.3-79

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՊԱԿԻՆԵՐԻ ԼՈՒՍԱԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹՅԱՆ՝ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՄՔԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամփոփագիր

Հեղինակի հետազոտության առարկան ապակիների լուսաթափանցելիության՝ օրենսդրությամբ սահմանված չափի խախտմամբ տրանսպորտային միջոց վարելու համար պատասխանատվության անհրաժեշտության հիմնավորումը, պատասխանատվության հիմքերի մեկնաբանման և կատարելագործման խնդիրներն են:

Որպես պատասխանատվության նախատեսման հիմնավորում հեղինակը մատնանշում է ճանապարհային երթևեկության անվտանգության և Ոստիկանության պարեկային ծառայողի անձնական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը:

Անդրադառնալով պատասխանատվության հիմքերի մեկնաբանման խնդիրներին՝ հեղինակը նշում է, որ առանձին դեպքերում քննարկվող իրավախախտման համար վարչական ակտեր կազմվել են այն պարագայում, երբ տրանսպորտային միջոցը գտնվել է կայանված վիճակում: Մինչդեռ օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ տվյալ

արարքի արձանագրում կարող է կատարվել միայն այն դեպքերում, երբ վերոհիշյալ խախտումը հայտնաբերվել է տրանսպորտային միջոցի շարժման մեջ՝ վարելու ընթացքում:

Հաջորդ խնդիրը Ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության և Վարչական դատարանի՝ պատասխանատվության բլանկետային հիմքերի մեկնաբանման հարցում տարակարծությունն է: Վարչական դատարանը գտնում է, որ կազմված վարչական ակտերի հիմքում չեն կարող դրվել «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» մաքսային միության տեխնիկական կանոնակարգի կարգավորումները: Հեղինակը ներկայացնում է հակառակ փաստարկներ:

Հոդվածում ձևակերպված են նաև ապակիների լուսաթափանցելիության՝ օրենսդրությամբ սահմանված չափի խախտմամբ տրանսպորտային միջոց վարելու համար պատասխանատվության հիմքերի կատարելագործման առաջարկություններ:

Հիմնաբառեր. ապակիների լուսաթափանցելիություն, իրավախախտում, վարչարարություն, Ոստիկանության պարեկային ծառայություն:

Ներածություն

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում իրականացվող վարչարարության խնդրահարույց հարցերից է ապակիների լուսաթափանցելիության՝ օրենսդրությամբ սահմանված չափի խախտմամբ տրանսպորտային միջոց վարելու դեպքերի որակման, արձանագրման և կիրառվող իրավական հիմքերի ընտրության իրավաչափությունը: Վերոհիշյալ հարցն ի հայտ է եկել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123-րդ հոդվածի (Տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտումը) 4-րդ մասով նախատեսված արարքի հատկանիշներով կազմված վարչական ակտերի բողոքարկման բազմաթիվ դեպքերից: Արարքի որակման և վարչական ակտերի բողոքարկման հիմքում դրվող իրավակար-

գավորումները տարբեր կերպ են մեկնաբանվում իրավակիրառողների կողմից:

Հիշատակված արդիական խնդրի ուսումնասիրության անհրաժեշտությունն ակնհայտ է: Ըստ այդմ, սույն հետազոտության նպատակն է ներկայացնել ուսումնասիրության առարկային առնչվող խնդրահարույց հարցերը, իսկ խնդիրներն են՝ հիմնավորել ապակիների լուսաթափանցելիության՝ օրենսդրությամբ սահմանված չափի խախտմամբ տրանսպորտային միջոց վարելու համար պատասխանատվության անհրաժեշտությունը, մեկնաբանել պատասխանատվության իրավական հիմքերը, ներկայացնել դրանց կատարելագործման առաջարկություններ:

Հիմնական հետազոտություն

1. Պատասխանատվության անհրաժեշտությունը

2023 թվականի հունիսի 1-ից Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պարեկային ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) սկսեց պատասխանատվության միջոցներ կիրառել առջևի կողային ապակիների լուսանցիկության սահմանված չափի խախտումների համար: Հանրության մեջ դժգոհություն և հարց առաջացավ՝ անհրաժե՞շտ է արդյոք պատասխանատվությունը նշված խախտումների համար:

Ապակիների լուսաթափանցելիության՝ օրենսդրությամբ սահմանված չափի խախտման, այդ թվում՝ դրա մասնավոր դրսևորման՝ առջևի կողային ապակիների լուսանցիկության սահմանված չափի խախտման համար պատասխանատվությունը նախատեսվել է կատարված հետազոտությունների արդյունքների հենքի վրա ձևավորված հետևյալ հիմնավորումներով.

1. Ապակիների թաղանթապատման կամ վարագուրապատման միջոցով վարորդի տեսանելիության սահմանափակումը ճանապարհատրանսպորտային պատահարները պայմանավորող գործոններից է: Այդ պատահարները, մասնավորապես, հետևանքն են՝ թիրախի հայտնաբերման հեռավորության կրճատման (դեռևս 1955 թվականին խնդրո առարկան հետազոտող Հայնց Հաբերը պարզել է, որ

լուսաթափանցելիության նվազեցումը 88-ից մինչև 73 տոկոս կրճատում է թիրախի հայտնաբերման հեռավորությունը 9-15 տոկոսով)[1], տեղեկատվության փոքր ծավալի (առջևի կողային ապակիների միջոցով վարորդն ավելի քիչ տեղեկատվություն է ստանում, օրինակ՝ հեռվում տեղակայված օբյեկտների վերաբերյալ), իրադրության ընկալման հնարավորության սահմանափակության (մգեցված ապակիներով մեքենան կարող է բարդացնել այլ վարորդների կողմից շրջակա իրադրության ընկալումը, օրինակ՝ զուգահեռ կայանված 2 տարբեր մեքենաների 35 տոկոս մգություն ունեցող առջևի կողային ապակիների միջով հայացք նետելիս գումարային լուսաթափանցելիությունը կազմում է ընդամենը 18 տոկոս), այլ հանգամանքների (պատահարները կարող են պայմանավորվել վարորդների տարիքային հատկանիշներով, առողջական վիճակով, օրինակ՝ լուսաթափանցելիության նվազեցումը 70-ից մինչև 35 տոկոս խստորեն վատթարացնում է տարեց մարդկանց տեսողական ընկալումը)[2]:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանատվության նախատեսումը նախ և առաջ բխում է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:

2. Ցածր լուսաթափանցելիություն ունեցող ապակիներով տրանսպորտային միջոց կանգնեցնելիս Ծառայության աշխատակիցների (այսուհետ՝ Ծառայողներ) վարչարարության բովանդակությունը կազմող գործողությունների կատարումը (վարորդի և ուղևորների անձի պարզումը, փաստաթղթերի ստուգումը և այլն) բարդանում է: Այսպես, մոտենալով ցածր լուսաթափանցելիություն ունեցող ապակիներով տրանսպորտային միջոցին (հատկապես գիշերային ժամերին)՝ պարեկային ծառայողը տեղեկատվություն չի ունենում այնտեղ գտնվող անձանց քանակի վերաբերյալ, չի կարող կանխատեսել նրանց վարքը և այլն: Ըստ այդմ, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման նպատակից

[1] Տես **Корыц С.И., Бокова И.Б.** Актуальность формулы расчета эффективности административного наказания // Закон и право. № 6. 2021, էջ 202:

[2] Տես **Краснов А.** Опасна ли тонировка? Что говорит наука // https://74.ru/text/auto/2015/07/13/51021281/ (վերջին մուտք՝ 15.01.2024):

բացի, պատասխանատվության նախատեսումը հետապնդում է նաև Ծառայողների անձնական անվտանգության ապահովման նպատակ[1]:

Այսպիսով, պատասխանատվության սահմանումը ոչ թե խնդրի կամայական, այլ տարաբնույթ հետազոտությունների արդյունքներին հիմնված լուծում է:

Անդրադառնալով խնդրի միջազգային փորձին՝ փաստենք, որ մի շարք երկրներում նախատեսվել են ապակիների լուսաթափանցելիության սահմանափակման թույլատրելի տարբեր չափեր: Այսպես, Ավստրալիայում թույլատրվում է մգեցնել առջևի կողային ապակիները մինչև 35 տոկոսով, ԱՄՆ Նյու-Մեքսիկո նահանգում՝ 20 տոկոսով, Մոնտանա նահանգում՝ 24 տոկոսով և այլն: Նշված չափանիշների խախտումների համար նախատեսված են խիստ սանկցիաներ: Օրինակ՝ ԱՄՆ-ում լուսաթափանցելիության աստիճանի սահմանափակումը 70 տոկոսով գերազանցելու համար սահմանված է տուգանք 1.000 դոլարի չափով[2]:

2. Պատասխանատվության հիմքերի մեկնաբանման և կատարելագործման խնդիրները

Նախ, անդրադարձ կատարենք Օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասի դիսպոզիցիայի կարգավորմանը: Այն պատասխանատվություն է նախատեսում ապակիների լուսաթափանցելիության՝ օրենսդրությամբ սահմանված չափի խախտմամբ կամ առջևի հողմապակին թաղանթապատված վիճակում կամ կարգի խախտմամբ վարագուրապատված տրանսպորտային միջոցներ վարելու համար:

Փաստորեն, քննարկվող իրավախախտման պարտադիր հատկանիշներն են[3].

[1] Տե՛ս **Слышалов И.В.** Некоторые вопросы правового обеспечения личной безопасности сотрудников ДПС ГИБДД при осуществлении ими контрольно-надзорной деятельности в области дорожного движения // Вестник Омской юридической академии. 2018, № 4, էջեր 261-264:

[2] Տե՛ս **Шпедт В.В., Макаров Л.Л.** Влияние тонировки стекол автомобиля на безопасность дорожного движения // Сборник тр. конф.: "Дни науки студентов Владимирского государственного университета им. Александра Григорьевича и Николая Григорьевича Столетовых". 2019, էջեր 970-975:

[3] Իրավախախտման սուբյեկտիվ հատկանիշներին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է, քանզի դրանք խնդրահարույց չեն:

1. Իրավախախտման առարկան, այդ թվում՝

1) Լուսաթափանցելիության սահմանված չափի խախտում ունեցող ապակիները.

Ակնհայտ է, որ Օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասն ապակիների լուսաթափանցելիության չափ չի սահմանում: Մինչ 2024 թվականի փետրվարի 28-ին կատարված օրենսդրական փոփոխությունը Օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում էր, որ ապակիների, արտաքին թաղանթապատում ունեցող ապակիների լուսաթափանցելիության թույլատրելի չափերը (…) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սակայն նման կարգավորումը բացակայում էր, քանզի խնդիրը լուծված էր միջազգային համապատասխան ակտով, որին անդրադարձ կկատարվի ստորև:

2) Թաղանթապատված առջևի հողմապակին.

Օրենսդրական ձևակերպման եղանակից բխում է, որ առջևի հողմապակին, անկախ լուսաթափանցելիության աստիճանից, թաղանթապատում չպետք է ունենա:

3) Վարագույրները.

Իրավախախտումն առկա կլինի, եթե տրանսպորտայինի միջոցը կահավորված է ցանկացած տեսակի վարագույրներով, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված տեսակի: Այսպես, «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 28.06.2007 թ. թիվ 955-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելված 2-ի 6-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության կարգավորումը թույլատրելի է համարում տրանսպորտային միջոցն արտադրող գործարանի կողմից տեղադրված հետևի դիտապակու կամ հետևի կողային ապակիների ցանցավոր վարագույրները: Հետևաբար նման կահավորում ունենալու պարագայում իրավախախտման առարկան, ուստի և իրավախախտումը բացակայում է:

2. Արարքը և դրա կատարման եղանակը.

Արարքը դրսևորվում է գործողությամբ՝ տրանսպորտային միջոցները վարելով, և կրում է տևող բնույթ: Իրավախախտման եղանակը՝ նշված գործողությունը ապակիների լուսաթափանցելիության՝ օրենսդրությամբ սահմանված չափի խախտմամբ կամ առջևի հողմապակին թաղանթապատված վիճակում կամ կարգի խախտմամբ վարագուրապատված վիճակում կատարելն է:

Օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ տվյալ արարքի արձանագրում կարող է կատարվել միայն այն դեպքերում, երբ վերոհիշյալ ձևով սարքավորված տրանսպորտային միջոցը գտնվում է շարժման մեջ և նկատվում Ծառայողի կողմից (այդ թվում՝ վարելուց անմիջապես հետո): Հետևաբար, չշահագործվող, որևէ տեղում կայանված տրանսպորտային միջոցի վերաբերությամբ քննարկվող զանցանքը չի կարող արձանագրվել: Սա շեշտելու անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ առանձին դեպքերում վարչական ակտեր կազմվել են քննարկվող իրավախախտման, ինչպես նաև առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելու համար՝ այն պարագայում, երբ տրանսպորտային միջոցը գտնվել է կայանված վիճակում[1]:

Հաջորդ խնդիրը Ծառայության և Վարչական դատարանի՝ պատասխանատվության բլանկետային կարգավորումների մեկնաբանման հարցում տարակարծությունն է:

Իրավակիրառ պրակտիկայի վերլուծության արդյունքները հավաստում են, որ Ծառայողները վերոհիշյալ իրավախախտումն արձանագրելիս և դրա համար պատասխանատվության միջոց կիրառելիս հղում են կատարել Որոշման հավելված 2-ի 6-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պար-

[1] Տես Արձանագրություններ են կազմվել կայանված տրանսպորտային միջոցների վարորդների նկատմամբ // https://144.law.media/offencse/text/auto/2023/51021281/ (վերջին մուտք՝ 22.12.2023):

բերությանը և «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 8-րդ հոդվածի 4.3 կետին[1]:

Վարչական դատարանը բողոքների բավարարման հիմքում դրել է հետևյալ փաստարկները.

1) Որոշմամբ սահմանված չէ ապակիների լուսաթափանցելիության չափ և առկա է վարչական ակտի որոշակիության պահանջի խախտում:

Նշվածի կապակցությամբ դատարանը նշել է. «(…) վիճարկվող որոշման բովանդակությունից պարզ չէ, թե լուսաթափանցելիության ինչ չափ է սահմանված: (…) Վիճարկվող որոշման բովանդակությունը հնարավորություն չի տալիս պարզելու հայցվորին վերագրվող արարքի էությունը: Արդյունքում դատարանն արձանագրում է, որ խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 56-րդ հոդվածում ամրագրված՝ վարչական ակտի որոշակիության պարտադիր պայմանը: Որպեսզի վարչական ակտից պարզ լինի, թե կոնկրետ ինչ խախտում է թույլ տվել անձը և որպեսզի վերջինս կարողանա հետագայում զերծ մնալ նման արարքը կրկնելուց, ինչը բխում է վարչական տույժի հիմնական՝ կանխարգելիչ գործառույթից, վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման մեջ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը պետք է բովանդակի կիրառված զանցակազմի կարևոր տարրերը բացահայտող տվյալները: Վերացական նշումները, որոնք չեն պարունակում, ի թիվս այլնի, զանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորման կոնկրետ եղանակը, թույլ չեն տալիս սուբյեկտին ճշգրտորեն գնահատել իր արարքը: (…)»[2]:

2) Կանոնակարգի համապատասխան կարգավորումը չի կարող դրվել խնդրո առարկա իրավախախտման արձանագրման հիմքում:

Կանոնակարգի համապատասխան կարգավորումը սահմանում է, որ հողմապակու և ապակիների լուսանցիկությունը, որոնց միջով ապա-

[1] Օրինակ՝ Վարչական դատարանի 22.01.2023 թ. վճիռները թիվ ՎԴ/8208/05/23, թիվ ՎԴ/8112/05/23 վարչական գործերով:

[2] Օրինակ՝ Վարչական դատարանի 20.06.2024 թ. վճիռը թիվ ՎԴ/3986/05/24 վարչական գործով:

հովվում է վարորդի համար տեսանելիությունը, պետք է կազմի առնվազն 70%: Վարչական դատարանը բազմաթիվ վճիռներում արտահայտված դիրքորոշման հիման վրա գտել է, որ Կանոնակարգը քննարկվող հարթությունում չէր կարող գործել, քանզի այն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում չէ, ինչպես պահանջում էր Օրենսգիրքը[1]՝ մինչ համապատասխան օրենսդրական փոփոխությունը:

Այն հանգամանքը, որ Որոշումը լուսաթափանցելիության չափեր չի սահմանում, ակնբախ է, ըստ այդմ՝ անվիճելի: Ընդ որում, դրա անհրաժեշտությունը չի եղել, քանի որ գործում են Կանոնակարգի կարգավորումները: Ըստ այդմ՝ Կանոնակարգի կարգավորումների կիրառման հնարավորության վերաբերյալ հարցում դժվար է համաձայնել Վարչական դատարանի՝ վերը նշված դիրքորոշման հետ: Խնդիրն այն է, որ Կանոնակարգն ընդունվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) խորհրդի կողմից: Հանձնաժողովը, «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 18-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, Եվրասիական տնտեսական միության մշտապես գործող կարգավորող մարմինն է: Պայմանագրի հավելված 1-ի 3-րդ կետում Հանձնաժողովի լիազորությունների թվում նշվում է տեխնիկական հիմնադրույթը, ինչպես օրինակ՝ Կանոնակարգի ընդունումը: Նույն հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ընդունում է նորմատիվ իրավական բնույթի և անդամ պետությունների համար պարտադիր որոշումներ, կազմակերպչական ու կարգադրիչային բնույթի կարգադրություններ և ոչ պարտադիր բնույթի հանձնարարականներ: Հանձնաժողովի որոշումներն ընդգրկվում են Միության իրավունքի մեջ և ենթակա են անմիջական կիրառության անդամ պետությունների տարածքներում: Իսկ 14-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ Հանձնաժողովի որոշումները, կարգադրությունները և հանձնարարականներն ընդունվում են Հանձնաժողովի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) և Հանձնաժողովի կոլեգիայի կողմից (…): Հավելված

[1] Օրինակ՝ Վարչական դատարանի 30.01.2024 թ. վճիռը թիվ ՎԴ2/0467/05/23 վարչական գործով:

1-ի 22-րդ կետի համաձայն՝ Խորհուրդն իրականացնում է Միությունում ինտեգրացիոն գործընթացների ընդհանուր կարգավորումը, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումը:

Վերոգրյալից բխում է, որ Կանոնակարգի կարգավորումները ենթակա են անմիջական կիրառության անդամ պետության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում, ուստի պետք է կիրառվեին նախկինում, ինչպես նաև նոր օրենսդրական կարգավորումների պարագայում: Խոսքը 28.02.2024 թ. կատարված փոփոխությունների մասին է: Օրենսգրքի 4-րդ մասի դիսպոզիցիան լրացվել է «օրենսդրությամբ սահմանված» արտահայտությամբ և ուժը կորցրած է ճանաչվել Օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ ապակիների, արտաքին թաղանթապատում ունեցող ապակիների լուսաթափանցելիության թույլատրելի չափերը Կառավարության կողմից սահմանելու վերաբերյալ դրույթը:

Այդուհանդերձ, օրենսդրական փոփոխությունից հետո դատական պրակտիկան փոփոխություն չկրեց[1]: Ուստի կարծում ենք, որ Օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասի դիսպոզիցիայում «օրենսդրությամբ» բառի փոխարեն անհրաժեշտ է օգտագործել «Կանոնակարգով» բառը՝ ուղղակիորեն ցույց տալով Կանոնակարգի գործողության հնարավորությունը և կանխելով վերը նշված նորմերի մեկնաբանման հարցում հետագա տարակարծությունները:

Պատասխանատվության հիմքերի կատարելագործման ուղղությամբ անհրաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել նաև հետևյալ հարցին: Օրենսգրքի 123-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է ներողական նորմ: Այն իրավակիրառողին հնարավորություն է ընձեռում անձին չենթարկել պատասխանատվության նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար, եթե այդ մասին իրազեկելուց անմիջապես հետո նշված անձը սկսում է իրականացնել վարչական իրավախախտման հատկանիշներն անմիջականորեն վերացնելուն ուղղված գործողություններ: Փաստորեն, օրենսդիրը նախատեսել է տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող

[1] Տես օրինակ՝ Վարչական դատարանի 25.06.2024 թ. վճիռը թիվ ՎԴ/0220/05/24 վարչական գործով:

անսարքությունների կամ պայմանների առկայությամբ տրանսպորտային միջոցները վարելու դեպքում անձին պատասխանատվության չենթարկելու հնարավորություն՝ նման հնարավորություն չամրագրելով, ըստ էության, վտանգավորության ավելի ցածր աստիճան[1] ունեցող արարքի՝ լուսաթափանցելիության սահմանված չափի խախտմամբ տրանսպորտային միջոց վարելու համար: Մինչդեռ Որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերին ապակիների (այդ թվում՝ արտաքին թաղանթապատում ունեցող) լուսաթափանցելիության անհամապատասխանությունը դիտարկում է որպես «տրանսպորտային միջոցի այլ անսարքություն ու պայման»: Ուստի կարծում ենք՝ անհրաժեշտ է նման դեպքերի համար ևս նախատեսել վարչական պատասխանատվության միջոց չկիրառելու հնարավորություն՝ խախտման հատկանիշները տեղում վերացնելուն ուղղված գործողությունները կատարելու պայմանով:

Եզրակացություն

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ.

1. Ապակիների լուսաթափանցելիության օրենսդրությամբ սահմանված չափի խախտմամբ տրանսպորտային միջոց վարելու համար արգելքի առկայությունը պայմանավորված է կատարված հետազոտությունների արդյունքների հենքի վրա ձևավորված հիմնավորումներով՝ ճանապարհային երթևեկության անվտանգության, Ծառայողների անձնական անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ:

2. Առանձին դեպքերում քննարկվող իրավախախտման համար վարչական ակտեր կազմվել են այն պարագայում, երբ տրանսպորտային միջոցը գտնվել է կայանված վիճակում: Մինչդեռ օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ տվյալ արարքի արձանագրում կարող է կատարվել միայն այն դեպքերում, երբ վերոհիշյալ խախտումը հայտնաբերվել է տրանսպորտային միջոցի շարժման, վարելու ընթացքում:

[1] Եթե իհարկե վտանգավորության աստիճանը չորոշենք զուտ սանկցիաների շրջանակներով:

3. Առկա է տարակարծություն Ծառայության և Վարչական դատարանի՝ պատասխանատվության բլանկետային հիմքերի մեկնաբանման հարցում: Վարչական դատարանը գտնում է, որ կազմված վարչական ակտերի հիմքում չեն կարող դրվել «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» մաքսային միության տեխնիկական կանոնակարգի կարգավորումները: Սակայն առկա են հակառակը հիմնավորող իրավակարգավորումներ:

4. Խնդրո առարկա զանցանքի համար պատասխանատվության իրավական հիմքերն ունեն կատարելագործման կարիք: Այդ առնչությամբ ձևակերպվել են Օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասի դիսպոզիցիայում փոփոխություն կատարելու և խնդրո առարկա իրավախախտման համար ներողական նորմ նախատեսելու առաջարկություններ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր: Ընդունվել է 29.05.2014 թ., ուժի մեջ է մտել 02.01.2015 թ.: ՀՀՊՏ 2015.01.21/3(1092): Հոդ. 24:

2. «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 09.12.2011թ. № 877 որոշում:

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք: Ընդունվել է 06.12.1985 թ., ուժի մեջ է մտել 01.06.1986 թ.: ՀՍՍՀԳՍՏ 1985/23:

4. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: Ընդունվել է 18.02.2004 թ., ուժի մեջ է մտել 31.12.2004 թ.: ՀՕ-41-Ն: ՀՀՊՏ 2004.04.14/21(320): Հոդ. 413:

5. «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող

անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության № 955-Ն որոշում: Ընդունվել է 28.06.2007 թ., ուժի մեջ է մտել 01.09.2007 թ.: ՀՀՊՏ 2007.09.05/45(569): Հոդ. 945:

6. Վարչական դատարանի 22.01.2023 թ. վճիռը թիվ ՎԴ/8208/05/23 վարչական գործով:

7. Վարչական դատարանի 22.01.2023 թ. վճիռը թիվ ՎԴ/8112/05/23 վարչական գործով:

8. Վարչական դատարանի 30.01.2024 թ. վճիռը թիվ ՎԴ2/0467/05/23 վարչական գործով:

9. Վարչական դատարանի 20.06.2024 թ. վճիռը թիվ ՎԴ/3986/05/24 վարչական գործով:

10. Արձանագրություններ են կազմվել կայանված տրանսպորտային միջոցների վարորդների նկատմամբ // https://144.law.media/offencse/text/auto/2023/51021281/

11. **Краснов А.** Опасна ли тонировка? Что говорит наука // https://74.ru/text/auto/2015/07/13/51021281/.

12. **Корыц С.И., Бокова И.Б.** Актуальность формулы расчета эффективности административного наказания // Закон и право. № 6.2021.

13. **Слышалов И.В.** Некоторые вопросы правового обеспечения личной безопасности сотрудников ДПС ГИБДД при осуществлении ими контрольно-надзорной деятельности в области дорожного движения // Вестник Омской юридической академии. 2018, № 4.

14. **Шпедт В.В., Макаров Л.Л.** Влияние тонировки стекол автомобиля на безопасность дорожного движения // Сборник тр. конф.: “Дни науки студентов Владимирского государственного университета им. Александра Григорьевича и Николая Григорьевича Столетовых”. 2019.

НЕОБХОДИМОСТЬ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ВОЖДЕНИЕ ТРАНСПОРТНОГО СРЕДСТВА С НАРУШЕНИЕМ УСТАНОВЛЕННЫХ ЗАКОНОДАТЕЛЬСТВОМ СТАНДАРТОВ СВЕТОПРОПУСКАНИЯ СТЕКОЛ, ПРОБЛЕМЫ ТОЛКОВАНИЯ И СОВЕРШЕНСТВОВАНИЯ ЕЕ ОСНОВАНИЙ

Аннотация

Предметом исследования автора являются обоснование необходимости ответственности за вождение транспортного средства с нарушением стандартов светопропускной способности стекол, а также проблемы толкования и совершенствования оснований ответственности за указанное правонарушение.

В качестве обоснования предусмотрения ответственности автор отмечает необходимость обеспечения безопасности дорожного движения и личной безопасности сотрудников Патрульной службы Полиции.

Обращаясь к проблемам толкования оснований ответственности, автор отмечает, что в отдельных случаях административные акты об ответственности за рассматриваемое правонарушение были составлены, когда транспортное средство не было в движении. Между тем из законодательной формулировки следует, что протоколирование описуемого действия может быть произведено только в случаях, когда вышеотмеченное нарушение было обнаружено во время движения транспортного средства.

Следующий вопрос – разногласия между Патрульной службой Полиции Министерства внутренних дел и Административным судом относительно толкования бланкетных оснований ответственности. Административный суд считает, что административные акты не могут основываться на положениях Технического регламента Таможенного союза “О безопасности колесных транспортных средств”. Автор приводит противоположные аргументы.

В статье также сформулированы рекомендации по совершенствованию оснований ответственности за вождение транспортного средства с нарушением стандартов светопропускания стекол.

Ключевые слова: светопропускание стекол, правонарушение, администрирование, Патрульная служба Полиции.

THE NECESSITY OF RESPONSIBILITY FOR DRIVING A VEHICLE IN VIOLATION OF LIGHT TRANSMITTANCE STANDARDS DEFINED BY LEGISLATION, AND THE ISSUES OF INTERPRETATION AND IMPROVEMENT OF ITS GROUNDS

Annotation

The object of the author's research is the justification of the necessity of responsibility for driving a vehicle in violation of light transmittance standards, as well as the issues of interpreting and improving the grounds of responsibility for the specified offense.

As a justification for defining responsibility, the author indicates the responsibility to ensure road safety and personal safety of Police Patrol officers. Turning to the issues of interpretation of the grounds of responsibility, the author notes that in some cases administrative acts have been drawn up for the offense in question when a vehicle was parked. Meanwhile, it follows from the legislative wording that protocols for the described action can be drawn up only in cases where the offense is detected when the vehicle is in motion.

The next issue is the disagreement between the Patrol Service of the Police of the Ministry of Internal Affairs and the Administrative Court related to the interpretation of the blanket grounds for responsibility. The Administrative Court considers that administrative acts cannot be based on the provisions of the Customs Union Technical Regulation "On Safety of Wheeled Vehicles". The author presents opposite arguments.

The article also contains recommendations on improving the grounds of responsibility for driving a vehicle in violation of light transmittance standards.

Keywords: light transmittance, offense, administration, Police Patrol Service.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 16.08.2024 թ., տրվել է գրախոսության 21.08.2024 թ., ընդունվել է տպագրության 31.08.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.3-95

ԲԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի իրավագիտության ամբիոնի դոցենտ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածը վերաբերում է պետական իշխանության մարմինների համակարգում դատախազության տեղի հիմնախնդրի ուսումնասիրությանը և վերլուծությանը: Այս առումով կասկածից վեր է, սահմանադրական զարգացման արդի շրջափուլում կարևոր նշանակություն է ձեռք բերում պետական իշխանության իրավապահպան գործառույթ իրականացնող մարմինների տեղի հստակեցումը իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում, ինչը կարևոր նշանակություն ունի ոչ միայն նրանց ինստիտուցիոնալ կայացման և զարգացման, այլ նրանց միջև արդյունավետ գործառնական տարանջատումն ապահովելու տեսանկյունից՝ ապահովելով արդյունավետ համակարգի կայուն զարգացումը:

Սույն գիտական հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրությամբ հեղինակը, դիտարկելով տեսական գրականության մեջ դատախազության տեղի վերաբերյալ առկա մոտեցումները և համադրելով դրանք սահմանադրական արդարադատության

միջազգային պրակտիկայում արտահայտված մի շարք իրավական դիրքորոշումների հետ, եկել է այն եզրահանգման, որ դատախազությունը չի մտնում պետական իշխանության որևէ թևի մեջ, այն անկախ սահմանադրական մարմին է՝ կոչված իրականացնելու սահմանադրորեն իրեն վերապահված լիազորությունները:

Դրա հետ մեկտեղ՝ կատարված ուսումնասիրությամբ հեղինակը դիտարկել է նաև ներպետական սահմանադրաիրավական կարգավորումները՝ ներկայացնելով իր սեփական լուծումները առկա խնդիրների հաղթահարման նպատակով:

Հիմնաբառեր. դատախազություն, պետական իշխանության թև, պետության գլուխ, օրենսդիր մարմին, արդարադատություն, վերահսկողական իշխանություն, լիազորություն:

Ներածություն

Կասկածից վեր է, սահմանադրական զարգացման արդի շրջափուլում կարևոր նշանակություն է ձեռք բերում պետական իշխանության իրավապահպան գործառույթ իրականացնող մարմինների տեղի հստակեցումը իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում, ինչը կարևոր նշանակություն ունի ոչ միայն նրանց ինստիտուցիոնալ կայացման և զարգացման, այլև նրանց միջև արդյունավետ գործառնական տարանջատումն ապահովելու տեսանկյունից՝ ապահովելով այդ համակարգի արդյունավետ և կայուն զարգացումը:

Օրինականության և իրավակարգի ապահովման ոլորտում անկյունաքարային նշանակություն ունի դատախազությունը՝ որպես սահմանադրական ինստիտուտ: Պետության և հասարակության շահերից է բխում, որ իրավունքի գերակայությունը երաշխավորվի արդարադատության արդար, անաչառ և արդյունավետ իրագործմամբ: Դատախազները պետք է ապահովեն, որ վարույթի բոլոր փուլերում երաշխավորվեն անձնական իրավունքներն ու ազատությունները և

պաշտպանվի հանրային կարգը: Սա ներառում է պաշտպանության կողմի և տուժողների իրավունքների լիարժեք պահպանումը: Արդարադատության արդար իրականացման համար անհրաժեշտ է, որ մեղադրանքի և պաշտպանության կողմերը լինեն իրավահավասար: Դատախազների տարաբնույթ կամ փոխլրացնող գործառույթների պատշաճ կատարումն արդարադատության արդար, անաչառ և արդյունավետ իրագործման անհրաժեշտ երաշխիքն է: Դատախազները պետք է ինքնուրույն լինեն ինչպես իրենց գործառույթներն իրականացնելիս, այնպես էլ միմյանցից: Հետևաբար, ինչպես քրեական արդարադատության ոլորտում, առօրյա կյանքում ևս՝ դատախազությունն ունի հանրությանը իրավական իրողություն հաղորդելու առաքելություն՝ հատկապես հանրային այն շահերի մասով, որոնք այլ կերպ չեն պաշտպանվելու կամ այն անձանց շահերի մասով, ովքեր խոցելի վիճակի բերումով ի զորու չեն իրականացնել իրենց իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար, դատախազության՝ որպես սահմանադրական միասնական ինստիտուտի կարգավիճակի առանձնահատկությունը ոչ միայն պայմանավորված է սահմանադրական գործառույթների բացառիկությամբ, այլև դրանց սոցիալ-իրավական նշանակությամբ:

Ուստի պետությունում օրինականության ռեժիմի ապահովման ոլորտում դատախազությունն ունի բացառիկ կարևոր դերակատարում, որպիսի պայմաններում կարևորվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում նրա տեղի բացահայտման և հստակեցման հարցը: Այդ խնդիրը մշտապես գտնվել է տարբեր գիտատեսական ուսումնասիրությունների կիզակետում, դրա վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ, որպիսի պարագայում խնդրի ամբողջական լուծման վերհանումը, սահմանումը և ամրագրումը հնարավորություն կտա հստակեցնել նրա ինստիտուցիոնալ և գործառնական անկախությունը:

Առաջադրված նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել և վերլուծել պետական իշխանության մարմինների համակարգում դատախազության տեղի վերաբերյալ

մոտեցումները՝ ներկայացնելով դրա վերաբերյալ սեփական մոտեցումները,

2. ուսումնասիրել և վերլուծել դատախազության ինստիտուտի վերաբերյալ ներպետական սահմանադրաիրավական կարգավորումները՝ առկա խնդիրների հաղթահարման ուղղությամբ ներկայացնելով սեփական լուծումները:

Պետական իշխանության համակարգում դատախազության տեղի վերաբերյալ առկա մոտեցումները

Տեսական գրականության վերլուծությունը վկայում է, որ դատախազության տեղի վերաբերյալ մոտեցումներն իրենց հիմքում ունեն սահմանադրական նորմերին, ինստիտուտներին և սկզբունքներին տրված տարբեր մեկնաբանություններ, որոնք շատ հաճախ իրենց բնույթով իրարամերժ են և հակասական:

Մասնավորապես՝

1. Դատախազությունը պետք է գործի պետության գլխին առընթեր.

Այս մոտեցման հիմքում ընկած է այն տեսակետը, որ դատախազությունը, իր կարգավիճակով համագործակցելով պետության գլխի հետ, պետք է դիտարկվի նրա լիազորությունների իրականացման կազմակերպական-իրավական կառուցակարգի համատեքստում[1]: Նշված տեսակետի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ պետության գլուխը՝ որպես Սահմանադրության երաշխավոր, պետական իշխանության բնականոն գործունեությունը և շարունակականությունը ապահովող սահմանադրական սուբյեկտ, շատ հաճախ իր սահմանադրական լիազորություններն իրականացնելիս ստիպված է դիմել նաև իրավական տարբեր մեխանիզմների կիրառման, ինչն անհնարին է իրականացնել առանց դատախազության: Այս տեսակետի կողմնակիցների գնահատմամբ՝ այս մոտեցումը կհամապատասխանի նաև «Око государево» հայեցակարգին և ամբողջապես կընդգծի Հանրապետության

[1] **Бозров В.М.** Правоохранительные органы РФ / Под ред. В.М. Бозрова. – 2-е изд., перераб. и доп. - М.: Юрайт, 2014. - С. 433.

Նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը՝ որպես պետության ղեկավար[1]:

Այս մոտեցումը, մեր գնահատմամբ, խնդրահարույց է հատկապես այն պայմաններում, որ դատախազությունը դրանով իսկ կդառնա գերատեսչական ենթակայություն ունեցող մարմին, կզրկվի իր անկախությունից, որպիսի հանգամանքն, ինքնին, խոչընդոտ կհանդիսանա նրա գործունեության արդյունավետության ապահովման համար: Պետության գլուխը, իր հերթին, իր ենթակայության ներքո ունենալով նման ինստիտուտ, ուղղակիորեն հնարավորություն կստանա իր ձեռքում կենտրոնացնել վերահսկողական լիազորությունների մի ստվար զանգված, ինչը կհանգեցնի իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի խախտման:

2. Դատախազությունը հանդիսանում է գործադիր իշխանության մարմին.

Դատախազության հիմնական սահմանադրական առաքելությունն է օրենսդրության կատարումն ապահովելը և իր բնույթով իրականացվող գործունեությունը կրում է գործադիր բնույթ: Նա համակարգում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, վերահսկում է օրենքների կատարումը և փոխգործակցում իշխանության այս ճյուղի այլ մարմինների հետ[2]: Այնինչ, նշված տեսակետի դեմ արտահայտվող տեսաբանների գնահատմամբ նման պարագայում արդարացիորեն կխախտվի իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական հաշվեկշիռը, քանի որ գործադիր իշխանության ձեռքում կհայտնվի հսկողական գործառույթներ իրականացնող մարմին, ինչը կհանգեցնի իշխանության այդ թևի լիազորությունների ուժեղացմանը[3]:

[1] **Винокуров А.Ю., Винокуров Ю.Е.** Прокурорский надзор: Учебник для вузов / Под общ. ред. А.Ю. Винокурова. - 3-е изд., перераб. и доп. - М.: Юрайт, 2017. - С. 352.

[2] Проблемы общей теории права и государства: Учебник / Под общ. ред. В.С. Нерсесянца. - М.: Норма: ИНФРА-М, 2018. – С. 696.

[3] **Капинус О.С. и др.** Прокурорский надзор. В 2-х т. Том 2. Особенная и специальные части: Учебник для вузов / Под общ. ред. О.С. Капинус. - 4-е изд., перераб. и доп. - М.: Юрайт, 2017. - С. 420.

3. Դատախազությունը հանդիսանում է օրենսդիր իշխանության մարմին.

Այս մոտեցման կողմնակիցների գնահատմամբ դատախազությունը պետք է դիտարկվի որպես օրենսդիր իշխանության մարմին՝ հատկապես այն պատճառով, որ իր լիազորությունների ուժով հսկողություն է իրականացնում օրենքների կատարման նկատմամբ: Դատախազությունն իր կարգավիճակով դասվում է օրենսդիր իշխանության մարմինների շարքին, քանի որ դատախազներն իրենց գործունեության մեջ մեծապես կախված են օրենսդիր մարմնի կողմից տրված՝ տարաբնույթ իրավախախտումների վերաբերյալ ստացված տվյալներից և իրենց հսկողական և վերահսկողական գործունեության իրականացումը պայմանավորում են դրանով[1]:

Այս պարագայում, սակայն, անուշադրության է մատնվում այն հանգամանքը, որ դատախազությունն իր սահմանադրաիրավական կարգավիճակով նորմատիվ-իրավական ակտերի ընդունման լիազորությամբ օժտված չէ, որպիսի պարագայում որևէ կերպ չի կարող դիտարկվել որպես օրենսդիր իշխանության մարմին:

4. Պետական իշխանության մարմինների համակարգում դատախազության տեղն այնքան կարևոր չէ, որքան նրան անհրաժեշտ և բավարար լիազորությունների ծավալով ապահովելը.

Այս տեսակետի մոտեցման կողմնակիցների գնահատմամբ բացարձակապես կարևոր չէ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի բացահայտումը, քանի որ դրա վերաբերյալ բոլոր վեճերը կրում են գիտատեսական բնույթ և բնականաբար առաջնային պլան է մղվում նրա լիազորությունների և պետական իշխանության համակարգում նրա արդյունավետ համագործակցության կառուցակարգերի սահմանումը[2]:

[1] **Ломовский В.** Какой власти принадлежит прокуратура? // Российская юстиция. - 2017. - №9. - С. 21.

[2] Прокурорский надзор: Учебник и практикум для академического бакалавриата / Под ред. А.Ф. Смирнова, А.А. Усачева. - М.: Издательство Юрайт, 2016. - 402 с.

Այս տեսակետը, մեր խորին համոզմամբ, հիմնավոր համարվել չի կարող, քանի որ պետական մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակի սահմանման հիմքում ընկած են հենց նրան վերապահված լիազորությունները, որոնց անհրաժեշտ և բավարար ծավալն էլ հենց պայմանավորում է նրա տեղը պետական իշխանության մարմինների համակարգում:

5. Դատախազությունը պետական իշխանության առանձին՝ վերահսկողական իշխանության կենտրոնական մարմինն է.

Այս տեսակետի կողմնակիցների գնահատմամբ՝ դատախազությունը և պետական իշխանության այն ինստիտուտները, որոնք օժտված են հսկողական կամ վերահսկողական բնույթի լիազորություններով, պետք է դառնան պետական իշխանության ինքնուրույն թև՝ ապահովելով նմանատիպ խումբ լիազորությունների իրականացման արդյունավետությունը, որտեղ կենտրոնական դերակատարումը պետք է վերապահվի դատախազությանը[1]: Անկախությունը վերահսկողության գործունեության արդյունավետության ապահովման առաջին նախապայմանն է: Դատախազներն իրենց գործունեությունն իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար անձանցից անջատ, չեն մտնում պետական իշխանության և ոչ մի թևի մեջ, որպիսի պայմաններում օրինականության և իրավակարգի լիարժեք ապահովման համար նրանք պետք է օժտված լինեն անհրաժեշտ և բավարար լիազորություններով՝ իրավախախտումների վերհանման և դրանց հետևանքների վերացման համար: Այնինչ, նման մոտեցումն ուղղակիորեն խաթարում է պետական իշխանության եռաթև համակարգում առկա զսպումների և հակակշիռների համակարգը, քանի որ նմանատիպ լիազորություններով օժտված են պետական իշխանության գրեթե բոլոր մարմինները, իսկ դրանց առանձնացումը կխաթարի բնականոն գործունեությունը:

[1] **Григорьева Н.В.** Прокурорский надзор: Учебное пособие. 6-е изд. - М.: ИЦ РИОР, НИЦ ИНФРА-М, 2016. - С. 215.

6. Դատախազությունն անկախ սահմանադրական ինստիտուտ է և չի հանդիսանում դատական իշխանության մարմին.

Դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանը մասնակցում են տարաբնույթ պետական մարմիններ, որոնք այս կամ այն կերպ աջակցում են երկրում արդարադատության իրականացմանը: Այդ մարմիններից է դատախազությունը: Իր իրավական կարգավիճակով և գործունեության նպատակային նշանակությամբ դատախազությունն անկախ պետական մարմին է, որը չի մտնում դատական իշխանության համակարգի մեջ, ուստի չի կարող լինել դատական իշխանության ինստիտուտներից մեկը[1]:

Այս տեսանկյունից կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև դատախազության գործունեությունը քրեաիրավական ոլորտից զատ, երբ մի շարք երկրներում դատախազներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև իրավունքի այլ ճյուղերին՝ քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան, կենսաթոշակային, վարչական իրավունքներին առնչվող բնագավառներում՝ որպես անկախ պետական մարմին ապահովելով քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Ընդ որում՝ ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ մի շարք եվրոպական երկրներ /օրինակ՝ Հունգարիա, Սլովակիա, Չեխիա և այլն/ ստիպված եղան բարեփոխումներից հետո նորից վերադառնալ հենց այս մոդելին, ինչն արդյունավետ գործիք հանդիսացավ քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար[2]: Մասնավորապես, մի շարք երկրների փորձը, մասնավորապես՝ Բելգիա, Չեխիա, Գերմանիա, Բուլղարիա, Հունգարիա, Իռլանդիա, Էստոնիա, Դանիա, Ֆինլանդիա, Վրաստան, Շվեդիա, Շվեյցարիա և Միացյալ Թագավորություն և այլն, ցույց է տալիս, որ դատախազությունը քրեական ոլորտից դուրս օժտված է լայն լիազորություններով, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին՝

[1] **Бутаева Е.А., Виницкий Л.В.** Участие прокурора в ходе предварительного следствия. - М.: Юрлитинформ, 2013. - С. 78.

[2] https://rm.coe.int/-8-/168071f92e

դատախազը կարող է հարուցել վարույթ՝ ամուսնությունը անվավեր ճանաչելու համար, մահացած երեխայի անունից հայրությունը չեղյալ ճանաչելու համար, եթե որպես հայր ճանաչված անձը մահացած երեխայի հայրը չէ, այն անձի անունից, որը ճանաչվել է որպես երեխայի հայր, և որն ի վիճակի չէ վարույթ հարուցելու իր հայրությունը չեղյալ հայտարարելու համար, անչափահասների որդեգրումը անվավեր ճանաչելու համար, ալիմենտի պահանջով, երեխայի խնամքի հարցով, ծնողական իրավունքից զրկելու համար, եթե անձը ցանկացած պատճառով ի վիճակի չէ պաշտպանելու սեփական իրավունքները, ինչպես նաև, եթե հիմնադրամը չի իրականացնում իր ստեղծման նպատակները կամ եթե հիմնադրամի գրանցումը ենթակա է մերժման օրենքի փոփոխության հիմքով՝ հիմնադրամը լուծարելու համար, հանրային հիմնադրամների ստեղծման օրինականությունն ապահովելու համար, եթե հիմնադրամի գործունեության օրինականությունն այլ կերպ հնարավոր չէ ապահովել, մահացած անձի կամ լուծարված իրավաբանական անձի զրպարտության դեպքում, եթե խախտվում է հանրային շահը, ցանկացած պայմանագրի պայման կարող է վիճարկվել դատախազության կողմից, պայմանագիրն առոչինչ ճանաչելու համար, եթե այդ պայմանագիրը վնասում է հանրային շահին, եթե, բացառությամբ կուսակցությունների, հասարակական կազմակերպության գործունեության օրինականությունն այլ կերպ հնարավոր չէ ապահովել, կազմակերպության գրանցումը չեղյալ ճանաչելու համար, քաղաքացիության վկայականով հաստատված փաստերը դատարանում վիճարկելու համար, շրջակա միջավայրին վնաս հասցնելու դեպքում՝ արգելելով այդպիսի գործունեությունը կամ վնասի հատուցում պահանջելով, ցանկացած անձի դեմ վարույթ է հարուցում, որը խախտել է կենդանիների պաշտպանության օրենսդրությունը, ապրանքային նշանի գրանցման և գրանցումը չեղյալ հայտարարելու մասին, արտոնագրի տրամադրման կամ վերացման մասին որոշումը փոխելու համար, եթե դրանք առևտրային նպատակով շահագործելը հակասում է հանրային կարգին կամ բարոյականությանը, հինգ տարի

շարունակ անհայտ կորած անձանց մահացած ճանաչելու համար և այլն[1]:

Ի տարբերություն նշված մոդելի՝ ՀՀ դատախազության մոդելը նման իրավական լուծումներով օժտված չէ, որպիսի կարգավիճակի վերապահումը, մեր խորին համոզմամբ, էապես կբարձրացներ նրա տեղը և դերը պետական իշխանության մարմինների համակարգում: Չնայած դրան՝ ուրախությամբ պետք է արձանագրել, որ 2023 թվականի ապրիլի 6-ից ուժի մեջ մտած «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ուժով դատախազությանն իրավունք վերապահվեց նաև համայնքային շահերի պաշտպանության հայցով դիմել դատարան:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է արձանագրել, որ դատախազությունը չի պատկանում պետական իշխանության և ոչ մի թևի, այլ զբաղեցնում է իր յուրահատուկ տեղը պետական իշխանության մարմինների համակարգում՝ հանդիսանալով անկախ սահմանադրական ինստիտուտ:

Դատախազության անկախության վերաբերյալ սահմանադրական դատարանների միջազգային պրակտիկայում առկա որոշ իրավական դիրքորոշումներ, միջազգային փաստաթղթերում, եզրակացություններում առկա կարգավորումներ.

ԵԽ Նախարարների կոմիտեի R (2000) 19 հանձնարարականի 14-րդ կետի համաձայն՝ այն պետություններում, որտեղ դատախազությունն անկախ է կառավարությունից, պետությունը պետք է ձեռնարկի արդյունավետ միջոցներ, որպեսզի օրենքով ամրագրի դատախազության անկախության բնույթը և ծավալը: Նույն հանձնարարականի 19-րդ կետում նշված է՝ դատախազը բոլոր դեպքերում պետք է հնարավորություն ունենա անխոչընդոտ կերպով հարուցելու քրեական հետապնդում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հատկապես կոռուպցիայի, լիազորությունների անօրինական օգտագործման, մարդու իրավունքների խախտման համար[2]: Վենետիկի հանձնաժողովի

[1] **Շաքարյան Թ.,** Դատախազության սահմանադրաիրավական հիմքերի իրացման արդի ուղենիշները: «Օրինականություն», թիվ 95, 2016, էջ 24-25:

[2] https://www.refworld.org/docid/43f5c8694.html

2017 թվականին ընդունված՝ CDL-PI (2018)001 «Դատախազության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքների և զեկույցների ամփոփում» վերտառությամբ փաստաթղթում ներկայացվել են դատախազության անկախության վերաբերյալ այս կառույցի դիրքորոշումները[1]: Ընդհանուր առմամբ պետք է առանձնացնել հետևյալ դրույթները:

1. Դատախազության անկախության մասին միջազգային չափանիշ գոյություն չունի, որը, կարծում ենք, պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք պետություններում դատախազությունը գործադիր իշխանության մաս է և ենթարկվում է Արդարադատության նախարարությանը:

2. Առկա է դատախազության անկախության ապահովման ընդհանուր միտում: Ավելին՝ «Դատական համակարգի անկախության վերաբերյալ եվրոպական չափանիշների հաշվետվության մասին» CDL-AD (2010) 040 փաստաթղթում Հանձնաժողովը նշել է, որ առկա է ոչ թե դատախազությունը գործադիր իշխանությանը կապելու կամ ենթարկելու միտում, այլ առավել անկախ դատախազական համակարգ ստեղծելու՝ լայն տարածում ստացած միտում: Վենետիկի հանձնաժողովը «Հունգարիայի Հանրապետության նորմատիվային հայեցակարգի վերաբերյալ» CDL (1995) 073rev կարծիքում նշել է. «Պետությունում հանրային մեղադրանքի համակարգի լիարժեք անկախությունը պետք է հանդիսանա այդ համակարգը կարգավորող հիմնարար սկզբունք: Հասարակությունն այս համակարգին կվստահի, եթե այդ համակարգի անկախությունը երաշխավորված է և պաշտպանվում է օրենքով»:

3. Դատախազության անկախության ճանաչման համար կարևոր է Սահմանադրության կառուցվածքում նրա զբաղեցրած տեղը: Այսպես, Հանձնաժողովը «Դատախազության ծառայության մասին Մոլդովայի օրենքի նախագծի վերաբերյալ» CDL-AD (2008) 019 կարծիքում նշել է՝ «Սահմանադրությամբ դատախազությունը դատական իշխանության մաս է (Սահմանադրության IX գլուխ): Դա այլ պետական մարմիններից դատախազության անկախության համար ունի կարևոր նշանակություն:

[1] Մեջբերված բոլոր եզրակացությունները ստացվել են Վենետիկի հանձնաժողովի պաշտոնական ինտերնետ կայքից:

4. Միևնույն ժամանակ կարևոր է խուսափել դատախազության անկախությունն այլ պետական մարմինների՝ այդ թվում դատարանների անկախությանը սպառնալիք դառնալու հավանականությունից: «Թեև Սահմանադրությունը պետք է ապահովի ինչպես դատախազության համակարգի, այնպես էլ գլխավոր դատախազի անկախությունը, սակայն պետք է ցուցաբերել զգուշություն, որպեսզի մի կողմից հավասարակշռվի կառավարության, պառլամենտի, ոստիկանության կամ հասարակության միջամտությունը, մյուս կողմից՝ գլխավոր դատախազի պատասխանատվությունը պատշաճ կատարելու իր գործառույթը»[1]:

Ալբանիայի Սահմանադրական դատարանի կողմից 2006 թվականի դեկտեմբերի 4-ին թիվ 26/06 գործով կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ գլխավոր դատախազը՝ որպես դատախազության ղեկավար, քաղաքական պատասխանատվություն չունի խորհրդարանի առջև: Դա բխում է պրոֆեսիոնալ կառավարման վրա հիմնված դատախազություն ունենալու անհրաժեշտությունից, որտեղ գլխավոր դատախազը ոչ թե քաղաքական կառավարիչ է, այլ դատախազության պրոֆեսիոնալ ղեկավար: Այս հատկանիշներն ապահովում են դատախազության մասնագիտական անկախությունը: Ո՛չ խորհրդարանը, ո՛չ նրա հետաքննող հանձնաժողովներն իրավասու չեն վերանայել դատախազության կայացրած որոշումները կամ պարտադրել նրան փոխել դրանք: Այս համատեքստում Դատարանը նշել է, որ դատախազության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մեթոդները չեն կարող օգտագործվել որպես կոնկրետ գործերի վերաբերյալ դատախազների կողմից կայացված որոշումները քննելու և գնահատման առարկա դարձնելու գործիք: Խորհրդարանը կարող է ազդել դատախազության վրա միայն իր օրենսդրական լիազորությունների միջոցով[2]:

Չեխիայի Սահմանադրական դատարանի կողմից 2011 թվականի հունիսի 28-ին թիվ Pl. ÚS 17/10 գործով կայացված որոշմամբ

[1] CDL (1995) 073rev

[2] http://codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm

Սահմանադրական դատարանը նշել է, որ և՛ Սահմանադրությունը, և՛ դատախազության մասին օրենքը, ինչպես նաև դատավարության կողմերի իրավահավասարության և պատշաճ դատավարության սկզբունքը պահանջում են դատախազության համակարգում անկախ պաշտոնավարում, որը, հանդես գալով որպես հատուկ և անկախ մարմին sui generis, իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքով սահմանված և բացառապես իրեն վերապահված խնդիրներ: Ինչ վերաբերում է դատախազության լիազորությունների իրականացմանը, ապա անկախության երաշխիքը չի կարող ընկալվել որպես դատական իշխանության երաշխիքների հետ նույնականացում[1]:

Դատախազության տեղի վերաբերյալ ներպետական սահմանադրահիրավական կարգավորումների վերլուծություն.

1991 թվականի սեպտեմբերի 21-ին հռչակելով իր անկախությունը՝ Հայաստանի երրորդ Հանրապետության Գերագույն խորհուրդը հայտարարեց, որ նախկին օրենսդրական և այլ ակտերի գործողությունը երկրի տարածքում կշարունակվի այնքանով, որքանով չեն հակասում անկախության Հռչակագրի իդեալներին: Սկզբունքներին չհակասող իրավական ակտերի թվին դասվեց նաև «Դատախազության մասին» ԽՍՀՄ օրենքը և նորանկախ Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինները, մինչև նոր օրենքի ընդունումը, իրենց գործունեության ընթացքում առաջնորդվում էին հենց այդ օրենքով:

1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածը, ամրագրելով դատախազության կարգավիճակը դատական իշխանությանը վերաբերող գլխում, սահմանում էր դատախազության լիազորությունների շրջանակը:

Դատախազությունը պետության սահմանադրական զարգացմանը համընթաց՝ ժամանակի մարտահրավերներին համահունչ մշտապես ենթարկվել է բարեփոխումների: Այս իմաստով համակարգի վրա զգալի ազդեցություն են ունեցել նաև ՀՀ Սահմանադրության փոփոխություն-

[1] http://codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm

ները, որոնցից իրենց սահմանադրաիրավական նշանակությամբ հատկապես աչքի ընկան 2015 թվականի փոփոխությունները:

Սահմանադրության մեջ դատախազության մասին հիշատակելու ուժով դատախազությունը, ինչպես Նախագահը, օրենսդիր մարմինը, կառավարությունը, դատարանները, հանդիսանում է սահմանադրական ինստիտուտ: Սահմանադրական ինստիտուտներն օժտված են լեգիտիմության ավելի բարձր աստիճանով, նրանց կարգավիճակն ավելի կայուն է և չի կարող փոփոխվել կամ վերացվել առանց Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ նախատեսելու[1]:

Չնայած այն բանին, որ մինչ փոփոխությունները, դատախազությանը վերաբերող նորմերը շարունակում էին զետեղված լինել դատական իշխանության առանձին գլխում, սակայն այս պարագայում առավել քան ակնհայտ էր, որ նմանատիպ սահմանադրական կարգավորումն ակնհայտորեն չէր բխում դատախազության սահմանադրական կարգավիճակից՝ չարտացոլելով պետական իշխանության մարմինների համակարգում ՀՀ դատախազության իրական տեղն ու դերը: Մի կողմից՝ դատախազությունը դատական իշխանությանն աջակցող պետական մարմին է, մյուս կողմից՝ դատախազության գործունեությունը չի սկսվում և չի ավարտվում միայն դատական իշխանությանը աջակցելու շրջանակներում: Դատախազությունը, իրոք, աջակցում է դատական իշխանությանը, բայց և իրականացնում է միայն իրեն հատուկ գործառույթներ և օժտված է այնպիսի լիազորություններով, որոնցից զուրկ է դատական իշխանությունը:

Ի մասնավորի՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխություններն էլ ավելի հստակեցրեցին ՀՀ դատախազության տեղը պետական իշխանության մարմինների համակարգում: 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում սահմանադրորեն ամրագրվեց առան-

[1] **Осипян С.А.** Российский федерализм и конституционно-правовой статус прокуратуры: концептуальные проблемы. Автореф. дисс. … докт. юрид. наук. - М., 2006. - С. 47.

ձին՝ «Դատախազությունը և քննչական մարմինները» վերտառությամբ՝ 8-րդ գլուխը, ինչի արդյունքում առաջին անգամ ՀՀ սահմանադրական զարգացման պատմության մեջ շեշտադրվեց դատախազության տեղը պետական իշխանության մարմինների համակարգում՝ որպես առանձին անկախ սահմանադրական ինստիտուտ: Հստակ սահմանվել է, որ դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, դատախազության մասին օրենքի հիման վրա: Արդյունքում, կարող ենք արձանագրել, որ սահմանադրի կողմից նման իրավական կարգավորման մոտեցմամբ, իր կարգավորումը ստացավ տասնամյակներ գործող խնդրահարույց իրավական կարգավորումը:

Այդուհանդերձ, հարկ է արձանագրել, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում սահմանադրորեն իր տրամաբանական ավարտին չհասցվեց պետական իշխանության մարմինների համակարգում դատախազության տեղի վերաբերյալ իրավակարգավորումը: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Նմանատիպ իրավական կարգավորման սահմանմամբ որևէ կերպ չի հստակեցվում և բացահայտվում վերջինիս տեղը պետական իշխանության մարմինների համակարգում:

Համեմատական-սահմանադրական վերլուծության արդյունքները վկայում են, որ գրեթե մշտապես կարմիր թելով սահմանադրական ամրագրում է ստացել դատախազության՝ իբրև անկախ կամ ինքնուրույն մարմին լինելու մասին պահանջը: Օրինակ՝ Խորվաթիայի Սահմանադրության 121a հոդվածի համաձայն՝ դատախազությունն ինքնուրույն և անկախ իրավաբանական մարմին է: Սերբիայի Սահմանադրության 156-րդ հոդվածում ամրագրված է, որ դատախազությունը անկախ պետական մարմին է: Նման մոտեցում նախատեսված է նաև Մոնտենեգրոյում, Մակեդոնիայում, Բելգիայում, Իսպանիայում, Իտալիայում, Պորտուգալիայում և այլն: Ֆրանսիայի Սահմանադրության 64-րդ հոդվածն ընդհանուր

հղում է կատարում դատական մարմինների անկախությանը, սակայն Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը նշել է, որ այն ամբողջ ծավալով վերաբերելի է նաև դատախազության մագիստրատուրային[1]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 1-ին մասում սահմանադրորեն ամրագրել դատախազության՝ անկախ սահմանադրական մարմին լինելու հանգամանքը: Այս մոտեցմանը համահունչ՝ անհրաժեշտ է համապատասխան իրավական լուծումներ նախատեսել նաև «Դատախազության մասին» օրենքով:

Եզրակացություն

Ամփոփելով հետազոտական աշխատանքների շրջանակներում կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները՝ հանգել ենք հետևյալ եզրակացության: Մասնավորապես.

1.Պետության օրինականության երաշխավորման տեսանկյունից դատախազությունն ունի բացառիկ կարևոր նշանակություն: Դատախազությունն անկախ սահմանադրական ինստիտուտ է՝ միասնական համակարգ, որը պետք է ստեղծվի Սահմանադրության հիման վրա և գործի սահմանադրորեն և օրենսդրորեն ամրագրված անկախության երաշխիքների խստիվ պահպանմամբ:

2. Դատախազների անկախությունն իրենց առաքելությունն իրականացնելու անբաժանելի մասն է: Նման անկախությունն ամրապնդում է դատախազների դիրքն իրավապահ համակարգում և հասարակության մեջ: Սա նաև երաշխիք է, որ արդարադատության համակարգը գործի արդար և արդյունավետ եղանակով, և որ դատական անկախության բոլոր առավելությունները լիովին կենսագործվեն: Ուստի՝ ինչպես դատավորների համար ապահովված անկախության դեպքում, դատախազների անկախությունը բացառիկ իրավունք կամ առավելություն չէ, որ վերապահված է դատախազներին՝ սեփական շահերին ծառայեցնելու նպատակով: Ընդհակառակը՝ այն արդար,

[1] Суд и государство / Под ред. Л.В. Головко, Б. Матьё. - М.: Статут, 2018. - С. 85.

անաչառ և արդյունավետ արդարադատության երաշխիքն է, որը պաշտպանում է թե՛ հանրային և թե՛ առանձին անձանց մասնավոր շահերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Շաքարյան Թ.,** Դատախազության սահմանադրաիրավական հիմքերի իրացման արդի ուղենիշները: «Օրինականություն» թիվ 95, 2016:

2. **Shakaryan T.** Modern guidelines for implementation of the constitutional and legal bases of prosecutor's office, "Legislation" No. 95, 2016.

3. **Бозров В.М.** Правоохранительные органы РФ / Под ред. В.М. Бозрова. - 2-е изд., перераб. и доп. - М.: Юрайт, 2014.

Bozrov V.M. Law enforcement agencies of the Russian Federation / ed. V.M. Bozrov. - 2nd ed., revised and add. - M.: Yurayt, 2014.

4. **Винокуров А.Ю., Винокуров Ю.Е.** Прокурорский надзор: Учебник для вузов / Под общ. ред. А.Ю. Винокурова. - 3-е изд., перераб. и доп. - М.: Юрайт, 2017.

Vinokurov A.Yu., Vinokurov Yu.E. Prosecutor's supervision. Textbook for universities / under the general. ed. A.Yu. Vinokurov. - 3rd ed., revised and add. - M.: Yurayt, 2017.

5. Проблемы общей теории права и государства: учебник / Под общ. ред. В.С. Нерсесянца. - М.: Норма: ИНФРА-М, 2018.

Problems of the general theory of law and state: textbook / ed. V.S. Nersesyants. M.: Norma: INFRA-M, 2018.

6. **Капинус О.С. и др.** Прокурорский надзор. В 2-х т. Том 2. Особенная и специальные части: Учебник для вузов / Под общ. ред. О.С. Капинус. - 4-е изд., перераб. и доп. - М.: Юрайт, 2017.

Kapinus O.S. and others. Procurator's supervision in 2 volumes. Volume 2. Special and special parts. Textbook for universities under the general. ed. O.S. Kapinus. - 4th ed., revised and add. - M.: Yurait, 2017.

7. **Ломовский В.** Какой власти принадлежит прокуратура? // Российская юстиция. - 2017. - №9.

Lomovsky V. To which power does the prosecutor's office belong // Russian Justice. - 2017. №9.

8. Прокурорский надзор: Учебник и практикум для академического бакалавриата / Под ред. А.Ф. Смирнова, А.А. Усачева. - М.: Издательство Юрайт, 2016.

Prosecutor's supervision: textbook and workshop for academic baccalaureate / ed. A.F. Smirnova, A.A. Usacheva. - M.: Yurayt Publishing House, 2016.

9. **Григорьева Н.В.** Прокурорский надзор: Учебное пособие. 6-е изд. - М.: ИЦ РИОР, НИЦ ИНФРА-М, 2016.

Grigoryeva N.V. Prosecutor's supervision. Textbook. 6th ed. - M.: Infra-M, 2016.

10. **Бутаева Е.А., Виницкий Л.В.** Участие прокурора в ходе предварительного следствия. М.: Юрлитинформ, 2013.

Butaeva E.A., Vinitsky L.V. The participation of the prosecutor in the course of the preliminary investigation. M.: Yurlitinform, 2013.

11. **Осипян С.А.** Российский федерализм и конституционно-правовой статус прокуратуры: концептуальные проблемы. Автореф. дисс. … докт. юрид. наук. - М., 2006.

Osipyan S.A. Russian federalism and the constitutional and legal status of the prosecutor's office: conceptual problems. Abstract diss. … doc. legal sciences. M.: 2006.

12. Суд и государство / Под ред. Л.В. Головко, Б. Матьё, - М.: Статут, 2018.

Court and State / Ed. L.V. Golovko, B. Mathieu, - M.: Statute, 2018.

13. http://codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm (մուտք՝ 30.08.2023):

14. http://codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm (մուտք՝ 30.08.2023):

15. https://www.refworld.org/docid/43f5c8694.html(մուտք՝ 31.08.2023):

16. https://rm.coe.int/-8-/168071f92e (մուտք՝ 31.08.2023):

МЕСТО ПРОКУРАТУРЫ В СИСТЕМЕ ОРГАНОВ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ

Аннотация

В статье говорится об изучении и анализе вопроса о месте прокуратуры в системе органов государственной власти. В связи с этим не подлежит сомнению, что в современный период конституционного развития большое значение имеет прояснение места правоохранительных органов государственной власти в системе разделения и баланса властей, что важно не только с точки зрения их институционального становления и развития, но и с точки зрения обеспечения эффективного функционального разделения между ними, что приведет к устойчивому развитию системы.

В исследовании, проведенном в рамках данной научной статьи, автор, анализируя существующие в теоретической литературе подходы относительно места прокуратуры и сравнивая их с рядом правовых позиций, выраженных в международной практике конституционного правосудия, пришел к выводу, что прокуратура не принадлежит к какому-либо звену государственной власти, а является независимым конституционным органом, призванным осуществлять возложенные на него конституцией полномочия.

Наряду с этим, в ходе проведенного исследования автор также рассмотрел отечественные конституционно-правовые нормы, предложив собственные пути преодоления существующих проблем.

Ключевые слова: прокуратура, крыло государственной власти, глава государства, законодательный орган, юстиция, надзорный орган, полномочие.

PLACE OF PROSECUTOR'S OFFICE IN THE SYSTEM OF THE STATE AUTHORITY BODIES

Annotation

The article refers to analysis of the issue of the place of the prosecutor's office in the system of state authorities. In this sense, there is no doubt that in the current period of constitutional development, the clarification of the place of the law-enforcement bodies of the state power in the division and balancing of powers is of great importance, which is important not only from the point of view of their institutional establishment and development, but also from the point of view of ensuring effective functional separation between them: ensuring the sustainable development of an efficient system.

In the study carried out within the framework of this scientific article, the author, observing the existing approaches regarding the place of the prosecutor's office in the theoretical literature and comparing them with a number of legal positions expressed in the international practice of constitutional justice, came to the conclusion that the prosecutor's office is an independent constitutional body, called to exercise the constitutionally assigned powers.

Along with that, with the research done, the author also considered the domestic constitutional and legal regulations, presenting his own solutions in order to overcome the existing problems.

Keywords: Prosecutor's Office, wing of state power, head of state, legislative body, justice, supervisory authority, authority.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 11.09.2024 թ., տրվել է գրախոսության 12.09.2024 թ., ընդունվել է տպագրության 14.09.2024 թ.:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

DOI: 10.59560/18291155-2024.3-115

ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական վարչության փորձագիտական-վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ, Հայ-ռուսական համալսարանի հայցորդ

«ԿԱԼԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԱՆՁ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ

Ամփոփագիր

Սույն հոդվածն իրավակիրառ պրակտիկայում առաջացած այն հիմնախնդրի մասին է, երբ դատարանները քննարկման առարկա են դարձնում անազատության հետ կապված խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունն այն մեղադրյալի վերաբերյալ, որի նկատմամբ նույն մեղադրանքով արդեն իսկ քննարկվել է նման միջնորդություն: Իրավապահ մարմինների գործելաոճն էապես նպաստել է նման դատական պրակտիկայի ձևավորմանը: Սույնով ներկայացվում է նման դատական պրակտիկայի անթույլատրելիությունը, նման իրավիճակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ կալանքից ազատված անձին կրկին կալանավորելու համար ներկայացված պահանջները/երաշխիքները և դրանց՝ ազատության կանխավարկածին համահունչ մեկնաբանությունները:

Հիմնաբառեր. ձերբակալում, կալանք, անձնական ազատություն, իրավունք, միջնորդություն:

Անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալված անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու նպատակով դատարան ներկայացված վարույթն իրականացնող քննիչի միջնորդության քննության ընթացքում եթե դատարանը հանգի հետևության առ այն, որ Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածն ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած, ապա որոշում կկայացնի ներկայացված միջնորդությունը մերժելու մասին:

Իրավակիրառ պրակտիկայում, սակայն, վարույթն իրականացնող քննիչը մեղադրյալի նկատմամբ ոչ թե կիրառում է այլընտրանքային խափանման միջոց, այլ կրկին ձերբակալում է Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, այն է՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու նպատակով, ապա կրկին միջնորդություն է ներկայացնում դատարան՝ վերջինիս նկատմամբ անազատության հետ կապված խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելու համար:

Որոշ դեպքերում նման միջնորդությունները բավարարվում են, քանի որ.

- Դատարաններն Օրենսգրքի 121-րդ հոդվածով նախատեսված՝ կալանքից ազատված անձին կրկին կալանավորելու համար սահմանված նախապայմանի առկայությունը, այն է՝ նոր էական հանգամանքների առկայությունը քննարկվող դեպքում պարտադիր չեն համարում, քանի որ գտնում են, որ մեղադրյալի նկատմամբ առաջին անգամ խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժվել է, վերջինս չի կալանավորվել, ուստիև չի կարող ձեռք բերել կալանքից ազատվածի կարգավիճակ, հետևաբար՝ Օրենսգրքի 121-րդ հոդվածով նախատեսված երաշխիքը տարածելի չէ վերջինիս նկատմամբ:

- Ստուգում են միայն երկրորդ, այն է՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու նպատակով իրականացված ձերբակալման իրավաչափությունը, արձանագրելով, որ պահպանված

են Օրենսգրքով սահմանված նախապայմանները (որոշման դատավարական ձևը, ժամկետները, նպատակը) և միևնույն ժամանակ ներկայացվել է խափանման միջոց կիրառելու միջնորդություն (այսինքն՝ ձերբակալման նպատակն արդարացված է):

- Սահմանադրության 27-րդ հոդվածով հռչակված՝ առանց դատարանի որոշման ոչ ավել քան 72 ժամ ձերբակալված լինելու իմպերատիվ պահանջը մեկնաբանում են բացառապես երկրորդ ձերբակալման տեսակի համատեքստում՝ արձանագրելով, որ անձը ձերբակալվածի կարգավիճակում է գտնվել ընդամենը 24 ժամ, ոչ թե՝ 96: Ավելին՝ դատարանները խափանման միջոցի կիրառման ժամկետի մեջ չեն հաշվում հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման 72 ժամը, ինչը ևս խնդրահարույց է:

- Օրենսգրքի 114-րդ հոդվածի 5-րդ մասը, որը սահմանում է Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված (հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի) հիմքով ձերբակալված անձին ազատ արձակվելուց հետո նույն կասկածով կրկին ձերբակալելու ուղղակի արգելք, մեկնաբանում են առաջին ձերբակալումից հետո անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված լինելու պայմաններում կասկածի (կասկածանքի) բացակայություն, ուստիև այն չեն կապում նույն կասկածով անձին ձերբակալելու հետ, քանի որ երկրորդ ձերբակալումն իրականացվել է ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով (այլ խոսքով՝ ձերբակալվել է մեղադրյալը, ուստի կասկածը վերաճել է մեղադրանքի. չկա կասկած, չկա Օրենսգրքի 114-րդ հոդվածով նախատեսված արգելքը):

Դատական պրակտիկան

Անդրադառնալով խնդրո առարկա հարցին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն

արձանագրել է. «Միաժամանակ քննելով ձերբակալման իրավաչափության հարցը՝ Դատարանն արձանագրում է, որ վերջինիս ձերբակալումն իրականացվել է օրենքով սահմանված կարգով, կրել է իրավաչափ բնույթ: Ինչ վերաբերում է պաշտպանի այն դիրքորոշմանը, որ մեղադրյալին հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալելուց, կալանքի միջնորդություն ներկայացնելուց, դատարանի որոշմամբ այդ միջնորդությունը մերժելուց և մեղադրյալին ազատ արձակելուց հետո նույն հիմքի մատնանշմամբ անձին ձերբակալելու մասին որոշում կայացնելը իրավաչափ չէ, **ապա Դատարանն արձանագրում է, որ նման իրողությունը չի հակասում ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար ձերբակալման ինստիտուտի էությանը**: Նշված կառուցակարգերի կիրառման հնարավորությունը տրված է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ:

Ամփոփելով վերոգրյալը, գնահատման ենթարկելով նաև մեղադրյալին բնութագրող վերաբերելի տվյալները և հաշվի առնելով վերոնշված հանգամանքները՝ Դատարանը գալիս է հետևության, որ քննիչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պատշաճորեն հիմնավորել է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու անհրաժեշտությունը և իրավաչափությունը՝ միջնորդված պայմաններով»:

Սույն որոշման վերանայման արդյունքում Վերաքննիչ քրեական դատարանը, համաձայնվելով ստորադաս դատարանի հետևությունների հետ, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Ինչ վերաբերում է վերանայման բողոքի ձևակերպումներից բխող այն պնդմանը, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի (...) որոշումից հետո մեղադրյալը փաստացի ազատ չի արձակվել, ապա ստորադաս դատարանից ստացված վարույթի նյութերը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորման լույսի ներքո ոչ միայն հիմք չեն տալիս այդ պնդումը հիմնավորված համարելու, այլ նաև հիմնավորում

են, որ սույն դեպքում մեղադրյալի ձերբակալումն իրականցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար ձերբակալելու մասին Քննիչի որոշման հիման վրա, և նշված օրենսգրքի 111-րդ հոդվածի դրույթներով սահմանված էական պայմանների պահպանմամբ, ինչն էության մեջ արձանագրվել է նաև ստորադաս դատարանի կողմից, և Վերաքննիչ դատարանի համար ընդունելի՝ առկա նյութերի վերլուծությունից բխող, տրամաբանված ու բավարար չափով փաստարկված դատողություն է արվել մեղադրյալի ձերբակալման իրավաչափության մասին:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով հատուկ վերանայման բողոքի ձևակերպումներից բխող դատողություններից առ այն, որ մեղադրյալի կալանքի սկիզբը 2023 թվականի սեպտեմբերի 15-ի (ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով ձերբակալման ամսաթիվ՝ հեղ.) փոխարեն պետք է հաշվվեր 2023 թվականի սեպտեմբերի 12-ից (հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման ամսաթիվ՝ հեղ.)՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերը նշվածի պայմաններում այդ մոտեցումը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի դրույթներով սահմանված կարգավորումներից, իսկ ինչ վերաբերում է մեղադրյալի՝ 2023 թվականի սեպտեմբերի 12-ի ժամը 11:25-ից մինչև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման (խափանման միջոց կիրառելու վերաբերյալ առաջին միջնորդության քննության կապակցությամբ կայացված որոշման, որի արդյունքում միջնորդությունը մերժվել է՝ հեղ.) հիմքով ազատ արձակվելը ձերբակալման մեջ գտնված լինելուն, ապա դրա հաշվակցումը կամ ռեաբիլիտացիոն հետևանքների կիրառումը համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածներով սահմանված կարգավորումների տիրույթում է, և դուրս է խափանման

միջոցների կիրառման դատական երաշխիքների տիրույթում լուծման ենթակա հարցերի շրջանակից»:

Ի տարբերություն վերը ներկայացված ծայրահեղական-ֆորմալիստական մոտեցման՝ դատարանները նաև արտահայտել են այլ՝ քրեադատավարական իրավունքի արժեբանությանը համահունչ մոտեցում. օրինակ՝ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը խնդրո առարկա հարցի կապակցությամբ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ «(…) մեկ վարույթի շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109 և 111 հոդվածներով հաջորդաբար (առանց որևէ էական հանգամանքի կամ իրավիճակի փոփոխության) իրականացված ձերբակալումներն անջատ դիտարկելու և միայն վերջին ձերբակալման (ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու) իրավաչափությունը ստուգելու պայմաններում՝ կարող են ստեղծվել ՀՀ սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ձերբակալման առավելագույն ժամկետը շրջանցելու մեխանիզմներ, ինչպես նաև անձի ազատությունը 72 ժամից ավել ժամկետով կամայական սահմանափակելը իրավաչափ դարձնելու ռիսկեր, ինչն անթույլատրելի է և հակասում է մինչդատական վարույթում դատարանների ստանձնած դերին և առհասարակ դատական երաշխիքների էությանը:

Արդյունքում՝ դատարանը գտնում է, որ վերը նկարագրված եղանակով անձին կրկնակի ձերբակալելը ոչ միայն չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109 և 111 հոդվածների տրամաբանությունից, այլև ուղղակի հակասում է ՀՀ Սահմանադրության 27 հոդվածին»:

«Կալանքից ազատված անձին կրկին կալանավորելու» օրենսդրական երաշխիքի մեկնաբանությունը

Օրենսդիրը, սահմանելով կալանքից ազատված անձին կրկին կալանավորելու համար նոր էական հանգամանքների առկայություն,

օգտագործել է «կալանքից ազատված անձ» հասկացությունը՝ թերևս ելնելով այն կանխադրույթից, որ քրեադատավարական նորմերը պետք է մեկնաբանվեն Սահմանադրությանը համահունչ և որ դրանք մեկնաբանելիս ու կիրառելիս պետք է երաշխավորվեն քրեական դատավարության սկզբունքները և ոչ թե «քննչական մարմինների կողմից նման աճպարարության» դիմելու և դատարանների կողմից քննարկվող նորմը նեղ մեկնաբանելու կանխավարկածից, այլապես, մեր գնահատմամբ, Օրենսգրքի 121-րդ հոդվածում կօգտագործեր «այն անձը, ում վերաբերյալ քննարկվել է խափանման միջոց կիրառելու միջնորդություն» արտահայտությունը:

Նման եզրահանգման համար հիմք են ծառայում հետևյալ փաստարկները.

- Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի հիմքով (Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած) անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության մերժումը մեղադրյալի՝ անձնական ազատության սահմանափակումը բացառելու գործուն երաշխիք է, որն Օրենսգրքի 121-րդ հոդվածի կարգավորման առարկայից դուրս գտնվելու դեպքում ամբողջապես կիմաստազրկվի:

- Ազատության կանխավարկածի համատեքստում օրենսդրի կամքի իրացման հնարավորությունը կբացառվի, քանի որ անձնական ազատության իրավունքի սահմանափակումը բացառող օրենսդրական երաշխիքը չի ծառայի իր նպատակին, չի կենսագործվի:

- Բացի այդ, հակառակ մեկնաբանությունը հակասության մեջ է գտնվում Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված՝ առանց դատարանի որոշման խիստ նեղ (72 ժամ) ժամային շրջանակներում անձի անազատության մեջ հայտնվելու սահմանափակման իրավական երաշխիքի հետ: Այդպիսի մեկնաբանումը կստեղծի իրավիճակ, երբ ի հակադրումն՝ առանց դատարանի՝ անազատության մեջ մեղադրյալին

հետագա պահելը թույլատրելու մասին որոշման ոչ ավել քան 72 ժամ անազատության մեջ պահվելու Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված պահանջի, մեղադրյալին հնարավոր կլինի պահել անազատության մեջ (փաստացի ձերբակալվածի կարգավիճակում) 96 ժամ (հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով 72 ժամ և ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով ևս 24 ժամ), ինչն անթույլատրելի է հենց Սահմանադրության 27-րդ հոդվածի ուժով:

Վերոհիշատակյալի պայմաններում փաստվում է, որ Օրենսգրքի 121-րդ հոդվածով նախատեսված երաշխիքը տարածելի է այն անձանց նկատմամբ, ում վերաբերյալ քննարկված խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժվել է Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով, այն է՝ Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած: Նման եզրահանգման գալու համար, ի ապահովումն օրենսդրի կամքի կենսագործման, կարևոր է Օրենսգրքի 121-րդ հոդվածը մեկնաբանել լայն՝ իր գործողության տարածքի մեջ ներառելով նաև «այն անձանց, ում վերաբերյալ քննարկվել է խափանման միջոց կիրառելու միջնորդություն»:

Մեկնաբանության քննադատությունը

Այնուամենայնիվ, ներկայացված մոտեցումը կարող է քննադատվել հետևյալ կերպ: Օրենսգրքի 121-րդ հոդվածում օրենսդիրն օգտագործել է «կալանքից ազատված անձ» հասկացությունը, այդպիսով իսկ սահմանել է նույն մեղադրանքով առանց նոր էական հանգամանքների առկայության անձին կալանավորելու անթույլատրելիության պահանջ՝ ելնելով այն տրամաբանությունից, որ կալանքից ազատված անձը գտնվել է կալանքի տակ, ուստի կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության քննությամբ դատարանն արդեն իսկ անդրադարձել է խափանման միջոց կիրառելու իրավաչափության

պայմաններին և հիմքերին, հետևաբար ապագայում հնարավոր կլինի գնահատել նաև նոր էական հանգամանքների առկայությունը:

Այլ է իրավիճակը Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժելու դեպքում, որտեղ դատարանն անդրադառնում է ձերբակալման իրավաչափությանը և խափանման միջոց կիրառելու համար անհրաժեշտ՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերի հետազոտում և գնահատում տեղի չի ունենում, ուստի՝ հետագայում կալանավորված մեղադրյալի ազատ արձակվելու դեպքում հնարավոր չի լինում գնահատել նոր էական հանգամանքների առկայությունը, քանի որ «հին/նախորդիվ հանգամանքները» չեն ուսումնասիրվել:

Քննադատության հաղթահարումը

Այս քննադատական փաստարկները կարելի է հաղթահարել այն հիմնավորմամբ, որ Օրենսգրքի 114-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված երաշխիքի ուժով հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալված անձի նկատմամբ Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի հիմքով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության մերժման դեպքում նույն անձին (ազատության մեջ գտնվող մեղադրյալին) դատարան ներկայացնելու նպատակով ձերբակալելու և խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու կապակցությամբ հարուցված դատական վարույթում դատարանը պետք է որոշում կայացնի ներկայացված միջնորդությունը մերժելու մասին:

Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարանը պետք է մերժի, եթե 1) հայտնաբերում է սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված որևէ հանգամանք. 2) չի հաստատվում մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը. 3) հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծն

ապահովելու համար միջնորդվող խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը բացակայում է, իսկ առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառման անհրաժեշտության և հնարավորության հարցը ենթակա է լուծման վարույթի համապատասխան հանրային մասնակիցների կողմից՝ իրենց իրավասության սահմաններում. 4) առկա է մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգ, և չի հիմնավորվել այդ վտանգը չեզոքացնելու հնարավորությունը. 5) հանգում է հետևության, որ սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած:

Մեր գնահատմամբ, խնդրո առարկա իրավիճակում հնարավոր կլինի մերժել խափանման միջոց կիրառելու մասին քննիչի միջնորդությունը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի լայն մեկնաբանման պայմաններում, այն է՝ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու համար միջնորդվող խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը բացակայում է, իսկ անհրաժեշտության բացակայությունը պայմանավորված է կալանքից ազատված անձին նույն մեղադրանքով առանց նոր էական հանգամանքների կրկին կալանավորելու արգելքի առկայությամբ՝ ազատության կանխավարկածի և անձնական ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումները բացառող երաշխիքների կենսագործման հաշվառմամբ:

ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հարցի լուծմանն ուղղված անավարտ գործողությունները

Ավելին, կարծես օրենսդրական մակարդակում հարցի լուծման փորձ է արվել 2023 թվականին:

Այսպես՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքէջում 19.04.2023-04.05.2023 ժամանակահատվածում հանրային քննարկման է դրված եղել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու

մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը[1], որով, ի թիվս այլնի, առաջարկվել է՝

«Օրենսգրքի 288-րդ հոդվածում.

1. 2-րդ մասի 5-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

2. լրացնել նոր 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Դատարանի կողմից սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված որոշում կայացնելու դեպքում նույն անձի վերաբերյալ նույն վարույթով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը կրկին կարող է ներկայացվել, եթե վարույթով ի հայտ են եկել կալանքը հիմնավորող նոր հանգամանքներ»:

Ի հիմնավորումն ներկայացված առաջարկի՝ նախագիծն առաջարկած ՀՀ արդարադատության նախարարությունը նշել է.

«- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ «հանգում է հետևության, որ սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած»:

Սահմանադրությամբ, ինչպես նաև քրեադատավարական օրենսդրությամբ ձերբակալումը և կալանքը՝ որպես անձնական ազատության իրավունքից զրկելու հիմքեր, նախատեսված է տարբեր ինստիտուտների տեսքով: Այսինքն, ձերբակալումը և կալանքը որևէ կերպ չեն կարող նույնանալ, որևէ կերպ չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված: Մասնավորապես, անմիջական կասկածի հիմքով անձին ձերբակալելու համար այլ գործիքակազմ, հիմքեր և կարգ է սահմանված, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում՝ այլ:

[1] https://www.e-draft.am/projects/5638/justification

Վերոնշյալ դիրքորոշումն է արտահայտել նաև Սահմանադրական դատարանը իր 2009 թվականի սեպտեմբերի 12-ի ՍԴՈ-827 որոշմամբ՝ արձանագրելով, որ «ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտներն ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից ըստ էության տարբերվող նպատակներ, ունեն կիրառման միմյանցից էապես տարբերվող հիմքեր: Դրանցից յուրաքանչյուրն օրենսդիրն ընտրել է որպես ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասում մատնանշված առանձին նպատակների հասնելու ինքնուրույն դատավարական միջոց, և կիրառվում է տարբեր հիմքերի առկայությամբ: Հետևաբար, դրանցից յուրաքանչյուրը, առանց որևէ փոխպայմանավորվածության, փոխկապակցվածության և հաջորդականության, ինքնուրույնաբար կարող է կիրառվել, երբ առկա են դրանով հետապնդվող նպատակները և դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը:

Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության արդյունքով դատարանը կայացնում է միջնորդությունը մերժելու մասին որոշում, եթե հանգում է հետևության, որ սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած, սույն կարգավորումը չունի որևէ տրամաբանական հիմնավորում, ուղղված չէ քրեական վարույթով նախաքննության համակողմանիությունը և պատշաճությունն ապահովելու պահանջի կատարմանը և չի բխում Օրենսգրքի նպատակից, ուստի նախագծով նախատեսվել են կարգավորումներ, որոնց պայմաններում խափանման միջոցի կիրառումը չի պայմանավորվելու ձերբակալման իրավաչափությամբ»:

Ստացվում է, որ Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ հոդվածի լրացումներն այնքանով, որքանով կնախատեսեին դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում նույն

անձի վերաբերյալ նույն վարույթով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բացառապես կալանքը հիմնավորող նոր հանգամանքների առկայության պայմաններում ներկայացնելու իմպերատիվ պահանջ, կլուծեին ստեղծված խնդիրները:

Փաստորեն, ՀՀ արդարադատության նախարարության կողմից փորձ է արվել լուծելու քննարկման առարկա հարցն օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու ճանապարհով: Սակայն ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ուղարկված նախագծի տեքստում, հիշատակված հատվածները բացակայել են, ուստիև՝ նախագծով ներկայացված օրենսդրական փոփոխությունները չեն իրականացվել[1]:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆ

Օրենսգրքի 121-րդ հոդվածով նախատեսված երաշխիքը տարածելի է այն անձանց նկատմամբ, ում վերաբերյալ քննարկված խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժվել է Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով, այն է՝ Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած: Նման եզրահանգման գալու համար, ի ապահովումն օրենսդրի կամքի կենսագործման, կարևոր է Օրենսգրքի 121-րդ հոդվածը մեկնաբանել լայն՝ իր գործողության սահմանների մեջ ներառելով նաև «այն անձանց, ում վերաբերյալ քննարկվել է խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն»:

[1] Մեր հարցմանն ի պատասխան 2024 թվականի հունիսի 7-ի թիվ /12.1/22500-2024 գրությամբ ՀՀ Արդարադատության նախարարությունից հայտնել են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 288-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունները հանվել են նախագծից հետագա լրամշակման նպատակով և ներկայումս գտնվում են քննարկման փուլում: Փոփոխությունների վերաբերյալ վերջնական դիրքորոշում ձևավորելուց հետո այն կներկայացվի այլ նախագծով:

ТОЛКОВАНИЕ ПОНЯТИЯ “ЛИЦО, ОСВОБОЖДЕННОЕ ИЗ-ПОД СТРАЖИ” И ПРЕЗУМПЦИЯ СВОБОДЫ

Аннотация

Настоящая статья посвящена проблеме, возникшей в правоприменительной практике при рассмотрении судами ходатайства о применении меры пресечения, связанной с лишением свободы, к обвиняемому, в отношении которого такое ходатайство уже рассматривалось по тому же обвинению. Практика правоохранительных органов в значительной степени способствовала формированию такой судебной практики. Приводятся сведения о недопустимости подобной судебной практики, а также закрепленные в Уголовно-процессуальном кодексе РА для подобных ситуаций требования/гарантии, предъявляемые при повторном заключении лица, освобожденного из-под стражи, и их толкование в соответствии с презумпцией свободы.

Ключевые слова: задержание, заключение под стражу, личная свобода, право, ходатайство.

INTERPRETATION OF THE CONCEPT OF “A PERSON RELEASED FROM CUSTODY” AND THE PRESUMPTION OF FREEDOM

Annotation

This article is devoted to the issue in law enforcement practice when the courts consider a petition for the application of a preventive measure related to deprivation of liberty against an accused person, with respect to whom such a petition has already been considered on the same charge. The practice of law enforcement agencies has significantly contributed to the formation of such

judicial practice. This article provides information about the inadmissibility of such judicial practice, as well as the requirements/guarantees prescribed by the Criminal Procedure Code of the Republic of Armenia for such situations, presented during the repeated detention of a person released from custody, and their interpretation in accordance with the presumption of freedom.
Keywords: detention, imprisonment, personal freedom, law, petition.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 28.06.2024 թ., տրվել է գրախոսության 29.06.2024 թ., ընդունվել է տպագրության 09.07.2024 թ.:



DOI: 10.59560/18291155-2024.3-130

ԼԻԱ ԹԵՎՈՍՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, նույն ամբիոնի հայցորդ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր

Սույն հետազոտության շրջանակներում հեղինակն անդրադառնում է ժողովրդավարական հասարակությունում մտավոր սեփականության իրավունքների սահմանափակման համաչափության առանցքային խնդրին: Ուսումնասիրությունը հիմնականում կենտրոնանում է արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ մտավոր սեփականության իրավունքների սահմանափակումների սահմանների թույլատրելիության հիմքերին՝ վեր հանելով սահմանադրական համապատասխան նորմերի բացերը, առաջարկելով փոփոխություն Սահմանադրության 76-րդ հոդվածում:

Հետազոտության գործնական նշանակությունը Սահմանադրության համապատասխան նորմերի օրենսդրական բարեփոխումներին միտված առաջարկներ ներկայացնելն է, որոնք ուղղված են, մի կողմից՝ անհատի մտավոր սեփականության իրավունքների հարգմանը և մյուս կողմից՝ հանրային շահերից բխող արդարացված սահմանափակումներին: Այս ուսումնասիրությունը նպաստում է անհատական իրավունքների և

հասարակության կարիքների հավասարակշռման նորովի մոտեցման ձևավորմանը՝ տարբերակելով այն ոլորտի այլ աշխատանքներից:

Հիմնաբառեր. ստեղծագործելու ազատություն, մտավոր սեփականության իրավունք, սահմանադրաիրավական կարգավորում, իրավունքի սահմանափակում, համաչափություն:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում Հայաստանի Հանրապետությունում պետությունը, ճանաչելով մարդուն որպես բարձրագույն արժեք, մի կողմից վերջինիս հիմնական իրավունքների ու ազատությունների ինչպես հարգումը, այնպես էլ պաշտպանությունը վերապահել է հանրային իշխանությանը՝ որպես անմիջական պարտականության կատարման օբյեկտ, մյուս կողմից՝ նույն հանրային իշխանությունը սահմանափակված է դարձյալ մարդու այդ իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Այս առումով յուրաքանչյուր իրավական պետության համար, այդ թվում՝ ժողովրդավարական հասարակությունում, հետապնդվող նպատակների համաչափության իմաստով առանցքային խնդիր է դառնում մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների սահմանափակումների սահմանների թույլատրելիությունը, դրանց համապատասխանությունը Սահմանադրությամբ սահմանված արժեքային համակարգին:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանների ու սահմանափակումների մասին ժամանակակից քննարկումները հիմնվում են հիմնականում անհատների միջև փոխհարաբերությունների անուղղակի հետևյալ հայեցակարգի վրա[1]. մի դեպքում, մարդու իրավունքների սահմանափակումները համարվում են արդարացված, եթե դրանք ծառայում են ավելի մեծ օգուտի կամ անհրաժեշտ են

[1] Տես **John Finnis**. Natural Law and Natural Rights, Second Edition, Clarendon Law Series Edited by Paul Craig, Oxford University press, https://edisciplinas.usp.br/pluginfile.php/287316/mod_folder/content/0/John%20Finnis%20Natural%20Law%20and%20Natural%20Rights%20Clarendon%20Law%20%202011.pdf էջ 216:

հասարակական կարգը պահպանելու համար, իսկ մյուս դեպքում, յուրաքանչյուրի անհատական իրավունքները չեն դիտարկվում որպես բացարձակ և պետք է հավասարակշռված լինեն այլոց իրավունքներին ու շահերին, ինչպես նաև ամբողջ հասարակության կարիքներին, ինչը և նշանակում է, որ սեփական իրավունքների իրացումը որոշակի սահմանների շրջանակում կարող է սահմանափակել այլոց իրավունքները կամ բարեկեցությունը՝ հասարակության մեջ առաջացնելով խզումներ՝ արդարություն և ներդաշնակություն ապահովելու նպատակով:

Միջազգային իրավական հիմնարար կարգավորումների բովանդակությունից հետևում է, որ մարդու իրավունքների սահմանափակումները պետք է սահմանված լինեն օրենքով, բխեն այլոց իրավունքների և ազատությունների հարգման ու ճանաչման արդարացի պահանջներից՝ հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բավարարելու նպատակով[1]: Այս առումով արդարացի է պրոֆեսոր Վ.Ի. Գոյմանի մոտեցումը, ըստ որի՝ «իրավունքի (ազատության) սահմանափակումն անհրաժեշտ է բնորոշել որպես օրենքով նախատեսված հիմքերով և սահմանված կարգով իրականացվող՝ դրա շրջանակի նեղացում»: Բացի այդ, այլ հեղինակներ իրավացիորեն նշում են նաև այն, որ «իրավունքների սահմանափակումը հնարավոր է միայն այն օրենքի հիման վրա, որը նպաստում է ժողովրդավարական հասարակության ընդհանուր բարեկեցությանը»[2]:

[1] Մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 29-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է որ. «Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պարտավոր է ենթարկվել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են բացառապես մյուսների իրավունքների ու ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգումն ապահովելու և դեմոկրատական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բավարարելու նպատակով»: Գրեթե նույնաբովանդակ դրույթ է ամրագրված նաև ՄԱԿ-ի 1966 թվականի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրում:

[2] Տե՛ս Конституционное право зарубежных стран: Учебник для вузов / Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М.В. Баглая, д.ю.н., проф. Ю.И. Лейбо и д.ю.н., проф. Л.М. Энтина. — М.: Норма, 2004. — 832 էջ, http://krasinskiy.ru/Baglai.pdf

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իրավական և սոցիալական պետություն, Սահմանադրության 11-րդ հոդվածով մասնավորապես ամրագրել է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը՝ միաժամանակ ընդգծելով պետության դերը սոցիալական ու իրավական արդարության գործում:

Ասվածի համատեքստում անհրաժեշտ է նկատել, որ եթե ժամանակակից սոցիալական պետության առաջանային խնդիրներից է գույքի սեփականության իրավունքի՝ որպես հիմնարար իրավունքի պաշտպանությունը, ապա նույնչափ կարևոր է մտավոր սեփականության իրավունքի օրինաչափ և համաչափ սահմանափակումների նշանակությունը: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրությամբ հռչակվում է, որ մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով» (հոդվ. 60, մաս 7), ինչը բնորոշ է ժամանակակից սահմանադրություն ունեցող երկրներին[1], այդուհանդերձ, հարկ է նկատել, որ սահմանադիրը հետապնդել է պետությունում ձևավորվող նոր տնտեսական հարաբերությունների արմատավորման համար կայուն հիմքերի ստեղծման անհրաժեշտություն[2]՝ միևնույն ժամանակ նույնացնելով մտավոր սեփականության իրավունքը ստեղծագործական և մտավոր գործունեության արգասիքի՝ արդյունքի հետ:

[1] Տես **Андреева Г.Н.** Конституционные основы права интеллектуальной собственности в зарубежных странах // Журнал “Право интеллектуальной собственности“, 2017, էջ 16, https://cyberleninka.ru/article/n/konstitutsionnye-osnovy-prava-intellektualnoy-sobstvennosti-v-zarubezhnyh-stranah-statya

[2] Տես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**: Եր., «Իրավունք», 2010, էջ 119:

Սահմանադրությամբ ամրագրված են մարդու սեփականության իրավունքի սահմանափակման հիմքերը: Մասնավորապես, նույն Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանել է, որ. «Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով», ապա նույն հոդվածի 5-րդ կետի կարգավորման բովանդակությունից հետևում է, որ՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ»:

Սահմանադրական հիշյալ դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ անձի իրավունքների և ազատությունների սահմանափակումները կարող են սահմանվել օրենսդրությամբ և բացառապես Սահմանադրությամբ ամրագրված նպատակներին համապատասխան. իրավունքի գերակայությամբ պայմանավորված՝ այդ սահմանափակումներն ունեն որոշակի սահման և կրում են խիստ սահմանված ձև, այլ անձանց իրավունքների, ազատությունների և պետության շահերի պաշտպանության շրջանակում այդ սահմանափակումները գործում են ընդհանուր բարիքն ապահովելու համար և հանդիսանում իրավունքների և ազատությունների հիմնական երաշխավորը:

Հարկ է նկատել, որ նույնաբովանդակ նպատակներ են հետապնդում նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) այն կարգավորումները, որոնք վերաբերում են մարդու սեփականության իրավունքին, այդ թվում՝ մտավոր սեփականության պաշտպանությանն ու սահմանափակմանը: Մասնավորապես նույն Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում է, որ. «(...) Ոչ ոքի չի կարելի զրկել իր ունեցվածքից, բացառությամբ հանրային շահի և օրենքով նախատեսված դեպքերի

ու պայմանների՝ դրանց կորստի համար ժամանակին վճարվող արդարացի փոխհատուցման պայմանով: Գույքի օգտագործումը կարող է կարգավորվել օրենքով այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ընդհանուր շահերի համար: (...) Մտավոր սեփականությունը պետք է պաշտպանված լինի»: Իսկ նույն Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կարգավորումների բովանդակությունից բխում է, որ ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Ինչ վերաբերում է սեփականության և մտավոր սեփականության իրավունքների հարաբերակցության խնդրին, ինչպես նաև այն հանգամանքին, որ Եվրոպական Միության Հիմնարար իրավունքների մասին խարտիայի 17-րդ հոդվածը բովանդակային առումով համընկնում է Եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածի կարգավորումների նշանակությանը, ապա տեղին է նկատել, որ Եվրոպական համայնքների ընկերակցության դատարանի՝ Հաուէրի գործով (ECR [1979] 3727) 1979 թվականի դեկտեմբերի 13-ին կայացված որոշմամբ արտահայտված դիրքորոշման համաձայն Խարտիայի նույն 17-րդ հոդվածով սահմանված երաշխիքները համապատասխանաբար կիրառվում են մտավոր սեփականության նկատմամբ[1]:

Այսպիսով՝ միջազգային իրավական ակտերի համակարգային վերլուծության արդյունքներով պայմանավորված ակներև է դառնում այն, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների շրջանակում օրենսդիրը, մտավոր սեփականության իրավունքը բացառապես նույնացնելով սեփականության իրավունքի հետ, անտեսել է մտավոր սեփականության իրավունքից ծագած նույն սեփականության արդյունքի նկատմամբ անձնական ոչ գույքային իրավունքները, որոնք ի տարբերություն գույքային իրավունքների, «...անօտարելի և անփոխանցելի են և պահպանվում են անժամկետ,...» (ՀՀ

[1] EU Charter of Fundamental Rights, http://fra.europa.eu/en/eu-charter/article/17-right-property

քաղաքացիական օրենսգրքի 1121-րդ հոդվ, մաս 3), ինչը նշանակում է, որ անձի մտավոր սեփականության իրավունքն ամբողջապես ենթարկվում է սահմանափակման միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Բացի այդ, մտավոր սեփականության իրավունքի սահմանափակման հաջորդ հիմքի վերաբերյալ դրույթ նախատեսված է ՀՀ Սահմանադրության «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ» վերտառությամբ 76-րդ հոդվածով, որը բովանդակում է մարդու այն հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք ենթակա են սահմանափակումների արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ, ինչպես նաև նախատեսում է բացառություն հանդիսացող իրավունքներն ու ազատությունները: Նույն հոդվածի կարգավորումների շրջանակում սահմանադիրը սահմանել է, որ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Այսինքն, Սահմանադրության 76-րդ հոդվածով ժամանակավորապես կասեցման կամ լրացուցիչ սահմանափակումների է ենթակա նաև մարդու ստեղծագործության ազատությունը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 43), որն ընկած է մտավոր սեփականության իրավունքի կենսագործման հիմքում, իսկ այդ իրավունքների սահմանափակման ձևը օրենսդիրը վերապահել է գործադիր իշխանության մարմնի որոշմանը[1]:

[1] Տես **Վաղարշյան Ա.**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն): «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017, № 3 (24), էջ 10:

Սահմանադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան այս կամ այն իրավունքի սահմանափակում սահմանելով՝ պետությունն ապահովում է սահմանադրորեն պաշտպանված արժեքների և անհատի շահերի հավասարակշռությունը: Ընդ որում, այդպիսի հավասարակշռության ապահովումը ենթադրում է, մի կողմից՝ իրավունքների և ազատությունների սպառիչ սահմանափակումների առկայություն, մյուս կողմից՝ այդպիսի սահմանափակման նպատակները պետք է լինեն ոչ միայն իրավական, այլև հիմնավորված սոցիալական պաշտպանության տեսակետից և համապատասխանեն արդարության պահանջներին:

Միևնույն ժամանակ, եթե իրավունքների և ազատությունների նման սահմանափակումները իրականացվում են նույնիսկ Սահմանադրությամբ սահմանված նպատակներով, ապա մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները չեն կարող մեկնաբանվել կամ չպետք է հանգեցնեն Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված այլ քաղաքացիական, քաղաքական և այլ իրավունքների շեղմանը[1]:

Այս առումով պետության պոզիտիվ պարտավորությունն է ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափությունը սահմանադրորեն ամրագրված նպատակներին ու պայմաններին համապատասխան, ինչը նշանակում է, որ՝

ա) սահմանադրական նորմերի հիման վրա օրենսդիրը չի կարող սահմանել այնպիսի սահմանափակումներ, որոնք կխախտեն այս կամ այն իրավունքի բուն էությունը՝ հանգեցնելով այդ իրավունքի իրական բովանդակության կորստին.

բ) եթե սահմանադրորեն հաստատված նպատակներին համապատասխան սահմանվում է որոշակի իրավունքի սահմանափակում, ապա դա պետք է երաշխավորի սահմանադրորեն պաշտպանված արժեքների և շահերի հավասարակշռության ապահովում՝ կիրառելով

[1] Տես նաև՝ **Нарутто Светлана Васильевна.** Комментарий к Конституции Российской Федерации. Нормативная литература. - Москва: КНОРУС, 2021, էջ 113:

միայն անհրաժեշտ և այդ նպատակներով պայմանավորված միջոցներ[1]:

Միաժամանակ, Սահմանադրության 81-րդ հոդվածով սահմանված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները մեկնաբանելու մասով միջազգային իրավական պրակտիկան հաշվի առնելու վերաբերյալ դրույթների բովանդակությունից[2] անհրաժեշտ է բխեցնել հետևյալը, որ՝

ա) անձի հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման ու դրանց գործնական իրացման երաշխիքների ապահովման հիմքում պետք է ընկած լինեն նաև միջազգային իրավական մոտեցումները[3],

բ) նույն իրավունքների ու ազատությունների սահմանափակումն անհրաժեշտ է ընկալել առավելապես բացառություն ընդհանուր կանոնից, և ոչ թե հակառակը[4]:

Այս մոտեցման կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանը, իր 2020 թվականի ապրիլի 14-ի ՍԴՈ-1522 որոշմամբ անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, սահմանել է այդ իրավունքի սահմանափակման հիմնական հետևյալ

[1] Տես նաև՝ **Лазарев Л.В.** Комментарий к Конституции Российской Федерации. Предисловие к третьему изданию. - Проспект, 2019, էջ 11:

[2] Սահմանադրության 81-րդ հոդվածը սահմանում է՝ «1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: 2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

[3] Տես **Թաթոյան Ա.,** Անձի իրավունքների ապահովման հիմնախնդիրները վարչական ձերբակալման և բերման ենթարկելու ընթացակարգերում՝ ազատությունից զրկման սահմանադրական հայեցակարգի համատեքստում: ՀՀ Իրավաբանների միություն. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ: Պետություն և իրավունք, Թիվ 3 (73) 2016 թ., https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/petiravunq/2016(3).pdf

[4] Տես նաև՝ **Лебедев В.А.** Конституционные основы ограничений прав и свобод человека и гражданина. № 1 (122) январь 2017, 1 (122):

չափորոշիչները, որ «բոլոր դեպքերում իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը ենթադրում է արդարացի հավասարակշռություն հասարակության գերակա շահերի և մարդու հիմնարար իրավունքների ապահովման անհրաժեշտության միջև»:

Նույն որոշման մեջ անդրադարձ կատարելով սեփականության իրավունքի սահմանափակման հիմնահարցին՝ Սահմանադրական դատարանն ընդգծել է նաև, որ «Դա ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ առկա է իրավաչափ նպատակի և սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն: Նման համադրման արդյունքում որևէ կոնկրետ սեփականության օբյեկտի նկատմամբ Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով իրավունքը կարող է սահմանափակվել կամ դադարել, եթե այն ծառայում է բացառիկ՝ գերակա հանրային շահի բավարարմանը»:

Բացի այդ, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ոլորտի օրենսդրության նորմերի տրամաբանության շրջանակում[1], Սահմանադրական դատարանն իր 2010 թվականի հուլիսի 13-ի ՍԴՈ-903 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ «....սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը կաշկանդում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են. շրջակա միջավայրը, այլ անձանց, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ

[1] Մասնավորապես՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ «Օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (այսուհետ՝ օտարվող սեփականություն)»:

հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ»:

Սակայն, անհրաժեշտ է նաև համաձայնվել այն պնդման հետ, որ գյուտի, արդյունաբերական նմուշի և մոդելի, ապրանքային նշանի, ֆիրմային անվանման և այլնի նկատմամբ իրավունքները հատուկ մտավոր սեփականություն են և դրանց նկատմամբ իրավունքներն էապես տարբերվում են իրերի նկատմամբ սեփականության իրավունքից[1] և, միևնույն ժամանակ, այդ տեսակը, իրերի նկատմամբ սեփականության իրավունքի հետ ընդհանուր ոչինչ չունենալով, գենետիկորեն կապված է մարդու մտածողության, շրջապատող աշխարհի ճանաչման և ստեղծագործողի բանականության հետ:

Հետազոտման առարկա հիմնախնդրի կապակցությամբ անդրադառնալով արտասահմանյան առանձին երկրների իրավակիրառ պրակտիկային՝ անհրաժեշտ է նշել հետևյալ նկատառումները. մասնավորապես՝ Շվեյցարիայի Համադաշնության Սահմանադրության 29-րդ հոդվածը սահմանում է, որ «(...) գույքը երաշխավորված է: Սեփականությունից զրկելը և դրա զրկմանը համարժեք գույքի սահմանափակումը հատուցվում է ամբողջությամբ», ինչը նշանակում է, որ այս կարգավորմամբ պաշտպանվում են սեփականատիրոջ ոչ միայն շարժական և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, այլև՝ ոչ նյութական իրավունքները[2]: Կամ, Ճապոնիայի Սահմանադրության 20-րդ հոդվածը հռչակում է, որ «Սեփականության իրավունքը չպետք է ոտնահարվի: Սեփականության իրավունքները սահմանված են օրենքով և պետք է համապատասխանեն հանրության բարեկեցությանը»: Նույն իրավական կարգավորումներից հետևում է հետևյալը, որ

[1] Մանրամասն տես նաև **Թասալյան Լ.Հ.,** Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները որպես մտավոր սեփականության ոչ ավանդական օբյեկտներ: Մաս 1, Եր., 2020, էջ 7, **Сергеев А.П.** Право интеллектуальной собственности в РФ. - М., 1999, էջ 13 և այլն:

[2] Տես **Rhinow, R.** Grundzüge des Schweizarisches Verfassungsrecht. – Bern, 2003. – S. 1609:

սահմանադրությամբ պաշտպանվող սեփականության շրջանակն ընդգրկում է ոչ միայն նյութական իրավունքները, բնական ռեսուրսների օգտագործման իրավունքները, արտադրության կարևորագույն գործոնների նկատմամբ սեփականության իրավունքները, այլ նաև հեղինակային իրավունքը և արտոնագրային իրավունքները[1]:

Այստեղից պարզ է, որ մտավոր սեփականության իրավունքը, լինելով սեփականության իրավունքի ինքնուրույն և միաժամանակ հատուկ տեսակ, եթե օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված չէ, ապա չի կարող դիտարկվել որպես հետազոտման առարկա օրենքի կարգավորման ենթակա իրավահարաբերության օբյեկտ, չի կարող օտարվել որպես սեփականության իրավունք, այդ թվում՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Դա պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հեղինակային և հարակից իրավունքների պարտադիր գրանցում չի նախատեսվում, ինչը խնդրահարույց է հատկապես այդ իրավունքների պաշտպանության տեսանկյունից[2]: Այսպիսով, ընդհանրացնելով անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածով նախատեսված սեփականության իրավունքի սահմանափակման հիմքերը տարածվում են ինչպես մարդու ստեղծագործելու ազատության, այնպես էլ մարդու մտավոր սեփականության իրավունքի նկատմամբ,

2) մարդու մտավոր սեփականության իրավունքի իրավաչափ

[1] Տես **Андреева Г.Н.** Конституционные основы права интеллектуальной собственности в зарубежных странах. Fahje, A. Wirtschaftsverfassungsrecht in Japan. – Köln; Berlin; München, 2007. – S. 59, file:///C:/Users/Administrador/Downloads/konstitutsionnye-osnovy-prava-intellektualnoy-sobstvennosti-v-zarubezhnyh-stranah-statya%20(2).pdf

[2] Որպես օրինակ կարող ենք դիտարկել նաև համակարգչային ծրագրերը, որոնց ՀՀ օրենսդրությունը չի դիտարկում որպես ինքնուրույն պահպանության ենթակա օբյեկտ և առանձին պահպանության ընթացակարգ որպես այդպիսին նախատեսված չէ: Համակարգչային ծրագրերը կարող են որպես հեղինակային իրավունքի օբյեկտ գրանցվել հասարակական հիմունքներով ստեղծված կազմակերպություններում, որոնք էլ կարող են իրականացնել այդ իրավունքների պաշտպանությունը:

սահմանափակման հիմքերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

3) ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածով նախատեսված արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման բացառություններում, կարծում ենք, մարդու ստեղծագործելու ազատության և մտավոր սեփականության իրավունքը բովանդակող նորմերում առկա է սահմանադրական կարգավորման բաց և նույն հոդվածում լրամշակում կատարելու անհրաժեշտություն այն բովանդակությամբ, որ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն կարող կասեցվել կամ սահմանափակվել նաև Սահմանադրության **43-րդ հոդվածով նշված ստեղծագործության ազատության մասով և 60-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում:**

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ ընդունված 06.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, փոփոխություններով՝ ԱԺ, 22.06.2020:

2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր՝ ընդունված 10.12.1948 թ.:

3. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա՝ ընդունված 04.11.1950 թ.:

4. «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ընդունված 27.11.2006 թ., ՀՀՊՏ 2006.12.20/64(519) Հոդ. 1306, փոփոխություններով, լրացումներով՝ ԱԺ, 04.06.2021, ՀՕ-274-Ն:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2020 թ.-ի ապրիլի 14-ի ՍԴՈ-1522 որոշում:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2010 թ.-ի հուլիսի 13-ի ՍԴՈ-903 որոշում:

7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի:** Եր., «Իրավունք», 2010:

8. **Թաթոյան Ա.**, Անձի իրավունքների ապահովման հիմնախնդիրները վարչական ձերբակալման և բերման ենթարկելու ընթացակարգերում՝ ազատությունից զրկման սահմանադրական հայեցակարգի համատեքստում: ՀՀ Իրավաբանների միություն. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, Պետության և իրավունքի տեսություն, Թիվ 3 (73) 2016 թ., https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/petiravunq/2016(3).pdf

9. **Թասալյան Լ.Հ.**, Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները որպես մտավոր սեփականության ոչ ավանդական օբյեկտներ: Մենագրություն մաս առաջին: Երևան, 2020:

10. **Վաղարշյան Ա.**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն), «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017, № 3 (24):

11. **Андреева Г.Н.** Конституционные основы права интеллектуальной собственности в зарубежных странах // Журнал ''Право интеллектуальной собственности'', 2017, https://cyberleninka.ru/article/n/konstitutsionnye-osnovy-prava-intellektualnoy-sobstvennosti-v-zarubezhnyh-stranah-statya

12. Комментарий к Конституции Российской Федерации (под общ. ред. Л.В. Лазарева). - ООО “Новая правовая культура”, 2009 г., https://eiuam-my.sharepoint.com/:w:/g/personal/nune_jomardyan_eiu_am/EWY0jIsJwMdCpYaGMSKkFY0BC6s7ocm_t0ZEpPxNBwwKsQ?CID=08819c81-e213-0b5d-091c-cbcdd15741af

13. Конституционное право зарубежных стран: Учебник для вузов / Под общ. ред. чл.-корр. РАН, проф. **М.В. Баглая**, д.ю.н., проф. **Ю.И. Лейбо** и д.ю.н., проф. **Л.М. Энтина**. — М.: Норма, 2004, http://krasinskiy.ru/Baglai.pdf

14. **Лебедев В.А.** Конституционные основы ограничений прав и свобод человека и гражданина, № 1 (122) январь 2017.

15. **Нарутто Светлана Васильевна**. Комментарий к Конституции Российской Федерации. Нормативная литература. - Москва: КНОРУС, 2021.

16. EU Charter of Fundamental Rights, http://fra.europa.eu/en/eu-charter/article/17-right-property

17. **Fahje, A.** Wirtschaftsverfassungsrecht in Japan. – Köln; Berlin; München, 2007. – S. 59.

18. **John Finnis**. Natural Law and Natural Rights, Second Edition, Clarendon Law Series Edited by Paul Craig, Oxford University press. 201,

https://edisciplinas.usp.br/pluginfile.php/287316/mod_folder/content/0/John%20Finnis%20Natural%20Law%20and%20Natural%20Rights%20Clarendon%20Law%20%202011.pdf

19. **Rhinow, R.** Grundzüge des Schweizarisches Verfassungsrecht. – Bern, 2003. – S. 1609.

ОГРАНИЧЕНИЕ ПРАВ ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ: АНАЛИЗ КОНСТИТУЦИОННЫХ НОРМ

Аннотация

В рамках данного исследования автор рассматривает ключевой вопрос соразмерности ограничения прав интеллектуальной собственности в демократическом обществе. Исследование посвящено обоснованию допустимости ограничения прав интеллектуальной собственности в условиях чрезвычайного или военного положения, а также направлено на выявление пробелов в соответствующих конституционных нормах, предлагая изменение в статье 76.

Практическая значимость исследования заключается в рекомендациях по законодательному реформированию соответствующих норм Конституции, направленных на соблюдение прав интеллектуальной собственности личности, с одной стороны, и обоснование вытекающих из общественных интересов ограничений, с другой. Данное исследование вносит вклад в разработку нового подхода к балансу между правами личности и общественными потребностями, что и отличает данную статью от других работ в данной области.

Ключевые слова: свобода творчества, право интеллектуальной собственности, конституционное регулирование, ограничение прав, соразмерность.

LIMITATION OF INTELLECTUAL PROPERTY RIGHTS: ANALYSIS OF CONSTITUTIONAL NORMS

Annotation

In the framework of this study, the author addresses the issue of proportionality in the limitation of intellectual property rights within a democratic society. The study focuses on justifying the permissibility of limiting intellectual property rights during states of emergency and martial law, highlighting gaps in the relevant constitutional norms, proposing a change to article 76.

The practical relevance of the study lies in its recommendations for legislative reforms of the relevant constitutional norms, for balancing respect between individual intellectual property rights with reasonable restrictions and derived from public interest. This study contributes to the development of a new approach to balancing individual rights and societal needs, distinguishing it from other works in the field.

Keywords: freedom of creation, intellectual property rights, constitutional regulation, limitation of rights, proportionality.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 19.09.2024 թ., տրվել է գրախոսության 19.09.2024 թ., ընդունվել է տպագրության 23.09.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.3-147

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի
քննչական վարչության
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ

«ՆԱԽՆԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԸ ՈՐՊԵՍ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ SUI GENERIS ՕԲՅԵԿՏ

Ամփոփագիր

Ավանդական բժշկական գիտելիքը ժողովրդի, համայնքի՝ սերնդեսերունդ փոխանցվող ոչ նյութական մշակութային ժառանգություն է: Ավանդական բժշկական գիտելիքն իր մեջ ներառում է ոչ միայն որոշակի առողջական խնդիրների դեպքում կոնկրետ դեղամիջոցների կիրառում, այլև դեղամիջոցների պատրաստման ընթացակարգային հմտություններ: Ավանդական բժշկական գիտելիքն իրավական տեսանկյունից պաշտպանելու համար անհրաժեշտ է նախևառաջ ձևավորել համապատասխան օրենսդրական հիմքեր: Սակայն ավանդական գիտելիքը պաշտպանող օրենսդրությունները դուրս են դասական մտավոր սեփականության իրավունքի ինստիտուտներից, այդ պատճառով հաճախ անվանվում են sui generis՝ «յուրօրինակ», «միակն իր տեսակի մեջ»: Պատճառն այն է, որ նախ՝ հեղինակային իրավունքի օբյեկտ լինելու հիմնական պահանջը՝ հեղինակ (հեղինակների խումբ) ունենալու անհրաժեշտությունն ավանդական գիտելիքների դեպքում բացակայում է: Ինչ վերաբերում է ավանդական գիտելիքը դասական արտոնագրային իրավունքի օբյեկտ համարելուն, ապա ավանդական

գիտելիքի գլխավոր հատկանիշը՝ ավանդականությունը, սերնդեսերունդ փոխանցվելու հանգամանքը հակադրվում է արտոնագրային իրավունքի օբյեկտի «նորույթ» լինելու պայմանին: Այդ է պատճառը, որ հաճախ ավանդական գիտելիքի իրավական պաշտպանությունն իրականացվում է առանձին օրենսդրություն ձևավորելու միջոցով: Բժշկական ավանդական գիտելիքը և դրանում օգտագործվող գենետիկական պաշարները պաշտպանելու այլ եղանակ է դրանց՝ որպես նախնիների իրավունքի /տեղաբնիկ ժողովուրդների իրավունքի/ մասի ճանաչումը, ըստ որի՝ այս ժողովուրդներն ունեն իրենց պատկանող հողերի վրա գոյություն ունեցող ռեսուրսները տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու իրավունք:

Հիմնաբառեր. ավանդական բժշկական գիտելիք, մտավոր սեփականության sui generis օբյեկտ, էթնոֆարմակոլոգիա, կենսահենություն, նախնիների իրավունքներ /տեղաբնիկ ժողովուրդների իրավունքներ/:

1. «Ավանդական գիտելիք»-ի և «գենետիկական պաշարներ»-ի հասկացությունը. Ավանդական գիտելիքները, դրանցում օգտագործվող բաղադրատոմսերը սերնդեսերունդ փոխանցված գիտելիքների և հմտությունների ամբողջություն է, որոնք արժեքավոր դեր ունեն ոչ միայն տարբեր համայնքների պատմության մեջ և կենցաղում, այլև դրանցից շատերը կազմում են համաշխարհային մշակույթի և ժառանգության մաս: 2017 թվականի «Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի հայեցակարգը, անդրադառնալով հայ ավանդական բժշկությանը, նշում է, որ. «ՀՀ-ում առողջապահական բնագավառի գործունեության համար հիմք է համարվում գիտության նվաճումների և ապացուցողական հենքի վրա կառուցված ժամանակակից բժշկությունը, սակայն միևնույն ժամանակ պետությունը արժևորում է ավանդական հայկական ժողովրդական բժշկությունը»: Վերջին տարիներին տեղաբնիկ ժողովուրդները ձգտում են ավանդական գիտելիքների իրավական պաշտպանության

մեխանիզմներ ամրագրել: Մինչև ավանդական գիտելիքի՝ աշխարհում գոյություն ունեցող իրավական պաշտպանության մեխանիզմներին անդրադառնալը հարկ է պարզաբանել «ավանդական գիտելիք»-ի և «գենետիկական պաշարներ»-ի հասկացությունը: ՀՀ օրենսդրությամբ այս հասկացությունները որևէ կերպ չեն ամրագրվում: Այս երկու հասկացություններին միաժամանակ կարելի է հանդիպել այնպիսի միջազգային կառույցի անվանման մեջ, ինչպիսին ՄԱԿ-ի Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (անգլ.՝ World Intellectual Property Organization)՝ **Գենետիկական պաշարների, ավանդական գիտելիքների և ֆոլկլորի հարցերով մտավոր սեփականության միջկառավարական կոմիտեն** է (անգլ.՝ The Intergovernmental Committee on Intellectual Property and Genetic Resources, Traditional Knowledge and Folklore): Նախևառաջ հասկանալու համար, թե Կոմիտեն ինչ պատճառով է իրավական պաշտպանության տակ առել նշված **3 օբյեկտները՝ 1/ գենետիկական պաշարները, 2/ ավանդական գիտելիքները, 3/ ֆոլկլորը**, պետք է անդրադառնալ յուրաքանչյուրի հասկացության պարզաբանմանը:

«Գենետիկական պաշարներ» հասկացությունը բացահայտված է **Կենսաբազմազանության մասին 1992 թվականի կոնվենցիայի 2-րդ հոդվածում,** ըստ որի՝ <u>այն փաստացի կամ պոտենցիալ արժեք ներկայացնող գենետիկական նյութն</u> է: Նույն հոդվածի համաձայն՝ <u>«գենետիկական նյութ» նշանակում է՝ ժառանգականության գործառական միավորներ պարունակող՝ բուսական, կենդանական, մանրէական կամ այլ ծագման ցանկացած նյութ</u>: Գենետիկական պաշարները պետություններից յուրաքանչյուրին բնորոշ ռեսուրսներ են, որոնց նկատմամբ պետություններն ունեն իրավունքներ, և համարվում են դրանց ծագման երկիր:

***«Ավանդական գիտելիքներ»* հասկացության միջազգային իրավական սահմանում դեռևս գոյություն չունի:** «Ավանդական գիտելիք» հասկացության բացակայության պատճառով, տարբեր պետություններում այն ամրագրելու երեք հիմնական իրավական

մոտեցում է ձևավորվել՝ (1) թվարկել ավանդական գիտելիքի օրինակները, (2) առանձնացնել ավանդական գիտելիքի հատկանիշները և (3) խառը մոտեցում: Առաջին մոտեցումը թույլ է տալիս ոչ սպառիչ կերպով թվարկել օրինակները՝ հաշվի առնելով, որ անհնար է մեկ բացառիկ սահմանում ստեղծել: Քանի դեռ չի ուսումնասիրվել ավանդական գիտելիքների ամբողջական բազմազանությունը, նման մոտեցումը թույլ է տալիս ներառել ավանդական գիտելիքի արդեն ուսումնասիրված բոլոր տեսակները և ապահովել նրանց պաշտպանությունը: Երկրորդ մոտեցումն ավանդական գիտելիքին բնորոշ հատկանիշների թվարկումն է: Որպես օրինակ կարելի է նշել հետևյալ ձևակերպումը. «ավանդական գիտելիքները ստեղծվում, պահպանվում և փոխանցվում են սերնդեսերունդ, որոշակի ձևով կապված են դրանք ստեղծող, պահպանող և սերնդեսերունդ փոխանցող բնիկ ժողովուրդների համայնքի կամ հասարակության հետ, կազմում են տվյալ համայնքի կամ հասարակության մշակութային ինքնության անբաժանելի մասը՝ հանդիսանալով կոլեկտիվ սեփականություն: Վերը նշված ձևակերպումը ենթադրում է.

(1) Ավանդականությունը վերաբերում է համայնքի և գիտելիքի կապին: Այս հատկանիշը թույլ է տալիս հաստատել համայնքի ներդրումը գիտելիքի առաջացման գործում և նման գիտելիքի սերնդեսերունդ փոխանցումը:

(2) Ավանդական գիտելիքը պետք է ունենա օբյեկտիվ ձև, որը ողջամիտ պահանջ է: Համայնքի մտավոր գործունեության արդյունքը պետք է դուրս բերվի գիտակցությունից և հասանելի դառնա ուրիշներին: Գիտելիքը կարող է մարմնավորվել ինչպես ստեղծված նյութական կրիչում, այնպես էլ պրակտիկայի (սովորույթների) տեսքով կամ արտահայտվել բանավոր: Այս ամենը համարվում է օբյեկտիվ ձև:

(3) Համայնքին պատկանելը նշանակում է՝ առկա է իրավունքի կրողը՝ բնիկ ժողովուրդը կամ տեղական համայնքը: Վերջիններս պետք է ինչ-որ կերպ տիրապետեն տվյալ գիտելիքին, որը հավաքական ջանքերի արդյունք է: Դա պայմանավորված է նրանով, որ ավանդական

գիտելիքներն առաջանում են մարդկանց խմբերի միջև երկարատև փոխազդեցության ընթացքում, պահպանվում և կատարելագործվում յուրաքանչյուր հաջորդ սերնդի կողմից: Այսինքն՝ ամբողջ համայնքը, նրա բոլոր անդամները՝ նախկին, ներկա և ապագա, ունեն իրավունքներ այդ գիտելիքի նկատմամբ:

(4) Սերնդից սերունդ փոխանցումը տեղի է ունենում համայնքի ներսում:

Երրորդ մոտեցումը նախորդ երկուսի խառնուրդն է, այսինքն՝ օրենսդրությամբ արձանագրվում են և՛ հասկացությունը, և՛ օրինակները:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, ավանդական գիտելիքի հասկացությունն ընգրկում է այն գիտելիքները, հմտությունները, տեխնիկան և կիրառությունները, որոնք համայնքում մշակվում, պահպանվում և փոխանցվում են սերնդեսերունդ և որոնք վերջինիս մշակութային կամ հոգևոր ինքնության անբաժանելի մասն են: Ավանդական գիտելիքը ներառում է այնպիսի ավանդական դրսևորումներ, ինչպիսիք են **նոու-հաու (ընթացակարգային գիտելիքներ)**[1]**, պրակտիկա, հմտություններ, ավանդական մշակութային արտահայտություններ, հեքիաթներ և պոեզիա, երգեր, պարեր, երաժշտություն, գծանկարներ, քանդակներ, գորգի զարդեր, զարդանախշեր, պիեսներ, ծեսեր, նկարներ, արվեստներ, արհեստներ, մոդելներ, անուններ, նշաններ, խորհրդանիշներ, մեկնաբանություններ և կիրառություններ, արարողակարգեր, ծեսեր, ճարտարապետական, ձեռագործ աշխատանքներ, պատմվածքներ,**

[1] Ընթացակարգային գիտելիքն ինչ-որ առաջադրանքի կատարման ժամանակ օգտագործվող գիտելիքն է: Ի տարբերություն նկարագրական գիտելիքի (հայտնի է որպես դեկլարատիվ գիտելիք), որը ներառում է կոնկրետ փաստերի կամ դրույթների իմացություն (օրինակ՝ «ես գիտեմ, որ գարնանը ծառերը ծաղկում են»), ընթացակարգային գիտելիքը ներառում է որևէ բան անելու կարողությունը (օր. «ես գիտեմ, թե ինչպես նորոգել կոտրված իրը»): Մարդը կարիք չունի կարողանալու բանավոր կերպով արտահայտել իր ընթացակարգային գիտելիքները, քանի որ ընթացակարգային գիտելիքները պահանջում են միայն իմանալ, թե ինչպես ճիշտ կատարել գործողությունը կամ կիրառել հմտությունը: Տես **Stanley, J., Williamson, T.** «Knowing How». The Journal of Philosophy, Inc., 2001, Vol. 98, No. 8, pp. 411–444, https://www.jstor.org/stable/2678403?origin=JSTOR-pdf [վերջին այցելությունը կայք՝ 10.05.2024]:

ավանդազրույցներ և այլն, որոնք գոյություն ունեն տնտեսության, գյուղատնտեսության, գիտության, տեխնոլոգիայի, էկոլոգիայի, ավանդական բժշկության, կենսաբազմազանության ոլորտներում: Հայ ժողովրդական բժշկության և կենսաբազմազանության ոլորտներում ավանդական գիտելիքի, բնական և գենետիկական պաշարների օգտագործման համալիր օրինակներ են Մատենադարանում պահվող «Պատմություն ծաղկանց» գիրքը և Սահակ Ծաղկարարի «Բազմավեպը», որոնցում նշվում է, թե հայկական լեռնաշխարհում հանդիպող բույսերը երբ, ինչ ձևով և ինչ ծեսերով պետք է քաղել, որից հետո արդեն կարող էին եփել/պատրաստել դեղամիջոցը: Այս ավանդական գիտելիքները ծառայել են ոչ միայն անհրաժեշտ դեղամիջոցը պատրաստելու համար, այլ մատնացույց անելով բուսատեսակների հավաքման եղանակը՝ նպաստել են դրանց շարունակականության անընդհատությանը որոշակի տարածքում: **Մեկ այլ օրինակ է Մալայզիայի արևադարձային անտառներում աճող կալոֆիլլում (լատ.՝ Calophyllum) անունով բույսի լատեքսից (կաթնահյութ) ստացված միացությունը՝ կալանոլիդը, որն ըստ տեղի ավանդական բժշկության՝ առաջարկվում է ՄԻԱՎ-ի և քաղցկեղի որոշ տեսակների հնարավոր բուժման համար**[1]:

Միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերում չի մեկնաբանվում նաև «***ֆոլկլոր***» հասկացությունը, սակայն այն հասկացվում է միևնույն կերպ: Հրաչյա Աճառյանը «ֆոլկլոր» բառը բացատրում է որպես «1. **ժողովրդական բանահյուսություն, ժողովրդական բանավոր ստեղծագործություն**, 2. **ժողովրդական հավատալիքների, սովորույթների, ծեսերի, երգերի, հեքիաթների, հանելուկների, առածների, ասքերի, օրինեքների, անեծքների, և կենցաղային այլ երևույթների ամբողջություն**, (անգլ. folklore - ժողովրդական իմաստություն)»: **Ինչպես ֆոլկլորին, այնպես էլ ժողովրդական բժշկությանը բնորոշ են 2 հատկանիշ՝ ավանդականությունը և բանավոր փոխանցումը:** Ավանդականությունը

[1] Տես **Filho, V.C., Meyre-Silva, C., Niero, R.** «Chemical and Pharmacological Aspects of the Genus Calophyllum». Chemistry and Biodiversity, 6 (3): 313–327, https://onlinelibrary.wiley.com/doi/10.1002/cbdv.200800082 [վերջին այցելությունը՝ 10.05.2024]:

ենթադրում է, որ տեղեկատվությունը փոխանցվում է հին ժամանակներից և սերնդեսերունդ: Իսկ տեղեկատվության բանավոր փոխանցումը բնավ չի նշանակում, որ այն մինչ օրս բանավոր է փոխանցվում և տարածվում: Պատմության ինչ-որ ժամանակահատվածում սերնդեսերունդ փոխանցված տեղեկատվությունը կարող է հավաքվել, գրի առնվել, սակայն այս հանգամանքը չի նշանակում, որ տեղեկատվությունը հեղինակային ստեղծագործություն կամ աշխատանքի արդյունք է և կորցրել է իր ժողովրդական ծագումը՝ դադարելով լինել այդպիսին: Օրինակ՝ արաբա-մուսուլմանական աշխարհում հայտնի «Սաիդանան» (ֆարմակոգնոզիա[1]) եզակի երևույթ է, որը խոր և բազմակողմանի գիտելիքներ է պարունակում բուսական և կենդանական աշխարհի բուժիչ բնույթի մասին: Ավիցեննան այն բժիշկներից էր, ով ոչ միայն օգտագործել, այլև ձևավորել է դեղագիտությունը՝ իր հայտնի «Բժշկական գիտության կանոնը» լրացնելով Սաիդանայի ավանդական բժշկության դեղատոմսերով[2]: Մեկ այլ օրինակ է չինական ավանդական բժշկությունը, որի դեղամիջոցները հավաքվել են չորս դասական գործերում՝ «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնը», «Բարդ դեպքերի կանոնը», «Մատերիա մեդիկա. գյուղատնտեսության աստծո կանոնը» և «Ցրտահարություն և այլևայլ հիվանդությունների քննախոսությունը»[3]:

Գենետիկական պաշարները, հանդիսանալով գենետիկական ժառանգության տեսակ, բնորոշ են որոշակի տարածքին և գտնվում են պետությունների իշխանության ներքո և վերջիններս, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված հայտնագործությունները, ենթակա են իրավական պաշտպանության, ինչը միտում ունի նպաստելու դրանց

[1] Դեղագիտության այն բաժինը, որն ուսումնասիրում է բուսական և կենդանական ծագման դեղահումքը: Տես **Գաբրիելյան Է.Ս., Սեդրակյան Ա.Վ.**, Դեղաբանական ու դեղագիտական տերմինների ռուսերեն-հայերեն-անգլերեն բացատրական բառարան: Երևան, «ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն», 2010, էջ 84:

[2] Տես **Андрей Иванов, Нурали Латыпов.** Авиценна. Канон биохакинга. - М.: Изд. “АСТ”, 2018. - С. 396:

[3] Տես Չինական ավանդական բժշկության հիմնական հասկացությունների հանրագիտարան: Հատոր 1: Թարգմ. Ա. Աթաբեկյան: Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2022, էջ 6:

պահպանությանն ու կայուն և օրինական շահագործմանը ինչպես տվյալ պետության, այնպես էլ դրանք ներմուծող պետությունների կողմից: Այս հասկացություններին զուգահեռ կիրառություն է ստացել **«կենսահեներություն»** (անգլ.՝ biopiracy) հասկացությունը, որը ստեղծել է կանադացի բնապահպան Պատրիկ Ռոյ Մունին: Կենսահեներությունը կենսաբազմազանության, այդ թվում՝ գենետիկական պաշարների և տեղաբնիկ ժողովուրդների ավանդական գիտելիքների ապօրինի յուրացումն է: Այսինքն՝ տերմինը, որն արդեն որոշ պետություններ (Բրազիլիա, Պերու, Հնդկաստան) իմպլեմենտացրել են օրենսդրություններում, հավասարապես վերաբերելի է թե՛ գենետիկական պաշարներին, թե՛ ավանդական գիտելիքներին, որոնց մաս է նաև ավանդական բժշկությունը: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրակացնել, որ Գենետիկական պաշարների, ավանդական գիտելիքների և ֆոլկլորի հարցերով մտավոր սեփականության միջկառավարական կոմիտեի կողմից պաշտպանվող նշված **3 օբյեկտներին միավորում են հետևյալ պայմանները. օբյեկտներից յուրաքանչյուրը սերնդեսերունդ փոխանցված ժառանգության տեսակ է, չունի կոնկրետ սեփականատեր անհատ կամ հեղինակ, պատկանում է որոշակի համայնքին, ժողովրդին կամ պետությանը, փոխանցումը տեղի է ունենում ժառանգաբար և հիմնականում բանավոր:**

2. Ավանդական գիտելիքը Հայաստանում. պատմական ակնարկ: Հայկական ժողովրդական բժշկությունը գրեթե երբևէ հանդես չի եկել ինքնուրույն, այն մշտապես կապված է եղել հայկական լեռնաշխարհի բնական և գենետիկական պաշարների օգտագործման հետ: Այս մասին հիշատակումները թվագրվում են դեռևս հին աշխարհին: Հին հույն պատմիչ Քսենոփոնն իր «Անաբասիս» աշխատության մեջ նշում է. «Հնագույն ժամանակներում քաջ հայտնի էին հանքանյութերի հիմքով այնպիսի դեղամիջոցներ, ինչպիսիք են հայկական կավը (Armenian Bole, Bolus Armenia), հայկական քարը (Pietra Armenia), օձաքարը (Lapis

ophites), հայկական սիլիտրան և սոդան, ինչպես նաև սնդիկի, երկաթի, ցինկի և կապարի միացությունները, որոնք բոլորն էլ արտահանվում էին հարևան երկրներ»[1]: «Անաբասիս»-ում Քսենոփոնը խոսում է նաև հայկական բուրումնավետ գինիների, հրաշալի գարեջրի, քունջութի, նուշի ձեթերի և բևեկնի խեժի, անուշահոտ օծանելիքների մասին, որոնք օգտագործվում էին որպես դեղամիջոցներ և սննդանյութեր, որոնց պատրաստման գաղտնիքը հայտնի էր միայն հայերին[2]: Բացի այդ՝ հռոմեացի պատմիչ Կոռնելիոս Տակիտոսը (մ.թ.հ. 55/57-125թթ.) իր «Տարեգրություններ»-ում հիշատակում է հայ գյուղացիների կողմից վերքերը բուժելու համար օգտագործվող դեղամիջոցները և նշում հետևյալ պատմական դրվագը. «Երբ հռոմեացիների դրդումով Վրաց արքայազն Փարսամը (մ.թ.հ. Ա դար) ներխուժեց Հայաստան, այստեղ հանդիպեց հայերի և նրանց դաշնակից պարթևների լուրջ դիմադրությանը, և հարկադրական փախուստից առաջ իր հղի կնոջը՝ Զենոբիային դաշույնով վիրավորեց ու նետեց Արաքս գետը: Սակայն գեղջուկները փրկեցին կնոջը, հատուկ տնական սպեղանիներով դարմանեցին նրա վերքերը, ապա տեղափոխեցին Արտաշատ մայրաքաղաք»: Իսկ ըստ Հերոդոտի և Պլինիոս Ավագի վկայությունների՝ Հայաստանում՝ Արաքսի ափերին և Կապադովկիայում աճում էին թմրեցնող հատկություններ ունեցող բույսեր, որոնք տեղացիներն օգտագործում էին որպես դեղամիջոց: Այլ տեղեկությունների համաձայն՝ Տիգրան Մեծի դաշնակից Միհրդատ Պոնտացին Հայաստանի մի քանի տասնյակ բույսերից էր պատրաստում իր հռչակավոր հակաթույնը[3]:

Ավելի ուշ Թեոդորոս Սալահունու մարտիրոսագրության մեջ նշվում է, որ Հայաստանում աղբյուրները և մատուռների,

[1] Տես **Բագրատ Եպիսկոպոս Գալստանյան**, Հայաստանի առողջապահական համակարգը: Պատմական, սոցիալական, բարոյագիտական և աստվածաբանական հայացքը. անցյալը, ներկան և հեռանկարը: Երևան, «Հայաստան» հրատ., 2021, էջ 7:

[2] Տես **Ստելլա Վարդանյան**, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Երևան, «Քննասէր» հրատ., 2000, էջ 30:

[3] Տես **Ստելլա Վարդանյան**, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Երևան, «Քննասէր» հրատ., 2000, էջ 30-31:

վանքերի և քարանձավների ջրավազանները[1] ծառայել են որպես հիվանդությունների, մասնավորապես բորոտության ու այլ մաշկային հիվանդությունների բուժման միջոց: Բնական և գենետիկական պաշարների օգտագործումը հայ ավանդական բժշկության մեջ այսքանով չի սահմանափակվում: Մանուկ Աբեղյանը, անդրադառնալով Հայաստանում ծառերի պաշտամունքի հարցին, նշում է. «Ծառերը առողջություն են պարգևում, մի քանիսը բուժում են բոլոր ցավերը, ուրիշները միայն որոշ հիվանդություններ, հատկապես տենդը: … Նման ծառերից առնված խեժը նաև քսում են հիվանդի մաշկին, իսկ ծառերի փտած փայտը որպես դեղ են օգտագործում»: Ստելլա Վարդանյանը նշում է, որ «Սոսու (Platanus orientalis) տերևները և, հատկապես կեղևը, ունեին զուտ բուժական հատկություն՝ մաշկը մաքրում էին զանազան հիվանդություններից, նույնիսկ՝ բորոտությունից» [2]:

Ավելին, միջնադարյան հանրահայտ հայ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու ամենահայտնի աշխատանքում՝ «Անգիտաց անպետ»-ում հեղինակն առաջարկում է տարբեր աղբյուրներից հավաքագրված մոտ 1400 դեղամիջոց, որոնցից 1000-ն ունեն բուսական, 250-ը՝ կենդանական և 150-ը՝ հանքային ծագում[3]: Իսկ ուշ միջնադարի հայ բժիշկ Բունիաթ Սեբաստացին գրել է 50 գլուխներից բաղկացած «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանը, ընդ որում՝ բժշկարանի 15 գլուխները նվիրված են նյարդային համակարգի ախտահարումներին և դրանց բուժման մեթոդներին[4]: Ինչպես տեսնում ենք, հայ ավանդական բժշկության մեջ

[1] Նման դեր են ունեցել Վասպուրականի Ալյուր գյուղի մոտակայքում գտնվող Կարիվանի մատուռի, Վայոց Ձորի Փոկաս հայրապետի մատուռի, Մոկսի Սուրբ Ամենափրկիչ վանքի, Նարեկացու վանքի, Վայոց Ձորի Ջրովանքի քարանձավի ջրավազանները, Վայոց Ձորի Ջերմուկի աղբյուրները:

[2] Տես **Բագրատ Եպիսկոպոս Գալստանյան**, Հայաստանի առողջապահական համակարգը: Պատմական, սոցիալական, բարոյագիտական և աստվածաբանական հայացքը. անցյալը, ներկան և հեռանկարը: Երևան, «Հայաստան» հրատ., 2021, էջ 12-13:

[3] Տես **Ամիրդովլաթ Ամասիացի**, Անգիտաց անպետ. միջնադարի հայ հռչակավոր բժշկարան: Երկրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, «Լուսաբաց» հրատ., 2020, էջ 5:

[4] Տես **Բունիաթ Սեբաստացի**, Գիրք Բժշկութեան: Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 20:

գենետիկական պաշարներից օգտագործվել են ոչ միայն բուսական ծագման, այլև կենդանական ծագման անատոմիական մասեր: Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ստելլա Վարդանյանը նշում է, որ Հին Հայաստանում որպես արյունահոսությունների դեմ դեղամիջոց, մաշկի խնամքի, կոսմետիկ միջոց է օգտագործվել նաև հայկական որդան կարմիրը[1], ինչի մասին նշում են Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, իսկ հետագայում նաև՝ մի շարք արաբ հեղինակներ: Իսկ բժիշկ, բուսաբույժ Արմեն սարկավագ Սահակյանը նշում է, որ որդանն օգտագործվել է նույնիսկ որպես շաքարային դիաբետի դեմ դեղամիջոց[2]: Այսօր էլ մասնագետները շարունակում են հայկական մատյանները ուսումնասիրելու, ապաճածկագրելու միջոցով վերականգնել հայ ավանդական բժշկության այն ծավալը, որը գոյություն է ունեցել վաղ անցյալում և որի մի մասը, ցավոք, չի պահպանվել: Մատենադարանի միջնադարյան բժշկագիտության լաբորատորիայում (ՀՀ արտոնագիր թիվ 1722, Սերտիֆիկատ № 021717) գաղտնագրված բաղադրատոմսով և թորման հատուկ եղանակով պատրաստվում է «Արքայական բալասանը», որն օգտագործվել է հայկական միջնադարյան բժշկությունում[3]:

3. Ավանդական գիտելիքը՝ որպես մտավոր սեփականության օբյեկտ և համաշխարհային ժառանգություն: Համայնքին պատկանող /համայնքի բնակության տարածքում գտնվող/ գենետիկական

[1] Որդան կարմիր կամ Արարատյան որդան կարմիր (լատ.՝ Porphyrophora hamelii), միջատ, որից հնում հայերը պատրաստում էին նույնանուն կամ «արքայական կարմիրը» ներկը: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:

[2] Տե՛ս Հայաստանի առեղծվածները. արքայական գույնի գաղտնիքը, https://www.youtube.com/watch?v=MHm_meRzkVI 4:39-5:14 վրկ., 6:42-7:05 վրկ., 22:25-22:52 վրկ., [վերջին այցելությունը՝ 10.05.2024]: Այսօր էլ Մատենադարանում ավագ գիտաշխատող, բժիշկ, բուսաբույժ Արմեն սարկավագ Սահակյանն իր օգնականների հետ արարատյան որդանից պատրաստում են դեղամիջոցներ, բալասաններ, բուժիչ թեյեր՝ փորձելով վերականգնել որդան կարմիրի արդյունահանման տեխնոլոգիան:

[3] Այժմ բալասանը պահվում և հասունացվում է Վայոց ձորի «Ճգնավոր» քարայր-մենաստանում, կաղնե տակառների մեջ: Բալասանի պատրաստումը տևում է 3 տարի, այն պատրաստվում է հայկական ալոճենու պտուղների թորվածքից, 54 բուժիչ և անուշաբույր բույսերից:

ռեսուրսների օգտագործումը հաճախ ուղղակիորեն հանգեցնում է ավանդական գիտելիքի ստեղծմանը: Պետությունների/համայնքների կողմից ավանդական գիտելիքների օգտագործումը խթանելու, դրա հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելու նպատակով նախևառաջ անհրաժեշտ է ունենալ համապատասխան օրենսդրական հիմքեր: Այս նպատակներին կարելի է հասնել ինչպես միջազգային մտավոր սեփականության պաշտպանության համակարգի շրջանակներում, այնպես էլ յուրաքանչյուր պետության կողմից ձևավորված ներպետական օրենսդրության շրջանակներում: Ավանդական գիտելիքը պաշտպանող օրենսդրությունները դուրս են դասական մտավոր սեփականության իրավունքի ինստիտուտներից, այդ պատճառով հաճախ անվանվում են **sui generis՝ «յուրօրինակ», «միակն իր տեսակի մեջ»**: Պատճառն այն է, որ նախ հեղինակային իրավունքի օբյեկտ լինելու հիմնական պահանջը՝ հեղինակ (հեղինակների խումբ) ունենալու անհրաժեշտությունն ավանդական գիտելիքների դեպքում բացակայում է[1]: Անհնար է առանձնացնել կոնկրետ անձի կամ անձանց խմբի, որոնց ավանդական գիտելիքի հեղինակ կարելի է համարել: Գուցե ինչ-որ ժամանակահատվածում ավանդական տվյալ գիտելիքը ստեղծած անհատ կամ անհատներ եղել են, սակայն վերջիններիս վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, բացի այդ՝ տվյալ ավանդական գիտելիքի օգտագործման ընթացքում վերջինիս վրա փոփոխությունները կատարվում են համայնքի անդամների մի քանի սերունդների կողմից, ուստի միանշանակ չէ նաև տվյալ պահին գոյություն ունեցող ավանդական գիտելիքի հեղինակ համարել սկզբնական անհայտ հեղինակին: Ելնելով համայնքում ավանդական գիտելիքների առաջացման առանձնահատկություններից՝ ավանդական գիտելիքի իրական հեղինակ կարող է համարվել միայն համայնքն ինքը:

[1] Նույնիսկ ՀՀ օրենսդրության մեջ առկա է ուղղակի իրավական արգելք ավանդական գիտելիքի հատկանիշներ ունեցող ժողովրդական բանահյուսության և արվեստի ստեղծագործությունների մասով: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի ա կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1114-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հեղինակային իրավունքի օբյեկտներ չեն ժողովրդական բանահյուսության և արվեստի ստեղծագործությունները:

Ինչ վերաբերում է ավանդական գիտելիքը դասական արտոնագրային իրավունքի օբյեկտ համարելուն, ապա ավանդական գիտելիքի գլխավոր հատկանիշը՝ ավանդականությունը, սերնդեսերունդ փոխանցվելու հանգամանքը հակադրվում է արտոնագրային իրավունքի օբյեկտի «նորույթ/նորություն» լինելու պայմանին:

Վերը նշված պատճառները հաշվի առնելով՝ մտավոր սեփականության իրավունքի վերաբերյալ օրենսդրությունները կարգավորվում են երկու եղանակով. 1/ ավանդական գիտելիքի, գենետիկական պաշարների, ֆոլկլորի պաշտպանության մասին նորմերը սահմանվում են որպես բացառություններ միևնույն իրավական ակտում, ինչ դասական օբյեկտները, 2/ ձևավորվում է առանձին իրավական ակտ բացառապես ավանդական գիտելիքի, գենետիկական պաշարների, ֆոլկլորի՝ որպես մտավոր սեփականության օբյեկտ պաշտպանելու նպատակով: Տվյալ պահին վերոնշյալ եղանակներից որևէ մեկը Հայաստանի Հանրապետությունում գործարկված չէ:

Ներպետական օրենսդրությունները, ունենալով պետության տարածքում գործողության սահմանափակում, չեն կարող տարածվել այլ պետությունների վրա, այդ իսկ պատճառով միջազգային իրավական մեխանիզմները հաճախ ավելի նախընտրելի են:

Օրինակ՝ միջազգային պաշտպանական մեխանիզմը, որը կիրարկել է Չինաստանը, ժողովրդական բժշկության՝ որպես համաշխարհային ժառանգության մասի գրանցումն է: 2010 թվականի նոյեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ն գրանցել է «Ավանդական չինական բժշկության ասեղնաբուժությունն ու մոքսիմուլյացիան» որպես մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության մաս[1]:

Հնդկաստանը ցուցաբերել է այլ մոտեցում՝ ստեղծելով ավանդական բժշկության տվյալների շտեմարանի որոնման համակարգ (որտեղ հնդկական ավանդական բժշկության 4 ճյուղերին պատկանող տվյալներ են. այուրվեդա, ունանի, սիդխա, յոգա), որն արտոնագրի հայտերի ուսումնասիրման ժամանակ կարող է օգտագործվել որպես գոյություն

[1] Տես **Frédéric Obringer**. La médecine chinoise et la tentation du patrimoine. Perspectives chinoises, Armand Colin, 2011, p. 14:

ունեցող ավանդական գիտելիքների և հմտությունների ապացույց: Այս տվյալների բազան ստեղծվել է քրքումի հայտնի գործից հետո: 1995 թվականի մարտի 28-ին Միսիսիպիի համալսարանի բժշկական կենտրոնը ձեռք էր բերել քրքումի արտոնագիր (174363) վերքերի խնամքի և արագ բուժում իրականացնելու համար, քանի որ քրքումն ըստ իրականացված հետազոտությունների՝ տրոպիկական վերքերի բուժման կենսաբանական միջոց է, ունի բակտերիոստատիկ և մանրէասպան ազդեցություն[1]: Արտոնագիրը վիճարկվել էր 1997 թվականին Հնդկաստանի գիտական և արդյունաբերական հետազոտությունների խորհրդի կողմից՝ հիմնավորելով, որ քրքումի այդ հատկությունները հայտնի են անհիշելի ժամանակներից հնդկական սանսկրիտներում, մասնավորապես՝ Այուրվեդայում: ԱՄՆ-ի արտոնագրային գերատեսչությունը չեղյալ է համարել այս արտոնագիրը 1997 թվականին: Միևնույն կերպ a posteriori չեղյալ են հայտարարվել Այուրվեդայում որպես հակասնկային միջոց կիրառվող նիմ (լատ.՝ Azadirachta indica) անունով բույսի և շաքարային դիաբետի դեմ կիրառվող ջամբոլա (լատ.՝ Syzygium cumini) անունով հատապտղի արտոնագրերը[2]: Վերը նկարագրված գործից հետո սկսեցին ակտիվորեն քննարկվել նաև «կենդանի օրգանիզմների արտոնագրաունակության» հարցերը (ֆրանս.՝ brevetabilité du vivant, անգլ.՝ patentability of living organisms), այսինքն՝ ոչ միայն բույսի կամ կենդանու՝ բժշկական ավանդական գիտելիքում օգտագործելու արտոնագիր, այլև հենց բույսը կամ կենդանին, դրա մի մասը կամ մի քանի գենը ստանալու և օգտագործելու արտոնագիր:

Ավանդական բժշկական գիտելիքների իրավական պաշտպանության հատուկ ձև են **պայմանագրերը**: Նման պայմանագրերը կնքվում են համայնքի հետ, որը ավանդական բժշկական գիտելիքները կամ գենետիկական պաշարները՝ որպես մտավոր սեփականություն տրամադրելով և հասանելի դարձնելով պայմանագրի մյուս կողմին, նախապես տալիս է տեղեկացված համաձայնություն այդ

[1] Տես https://patents.google.com/patent/US5401504 [վերջին այցելությունը՝ 10.05.2024]:

[2] Տես https://www.wipo.int/export/sites/www/tk/en/documents/pdf/background_briefs-f-n6-web.pdf [վերջին այցելությունը՝ 10.05.2024]:

գիտելիքների և պաշարների օգտագործման և օգուտների բաշխման համար: **Օգուտի բաշխման պայմանագիր**[1] /ընդհանուր օգուտի որոշակի տոկոսը տրամադրվում էր Սան կոչվող ժողովրդին/ կնքվել է **Կալահարի անապատի Սան կոչվող ժողովրդի (հարավաֆրիկյան բուշմեններ) և Հարավաֆրիկյան Հանրապետության գիտական և արդյունաբերական հետազոտությունների խորհրդի հետ, որը դեղագործական ընկերությունների հետ համագործակցում է սննդային հավելումների մշակման ուղղությամբ:** Պայմանագրի առարկան **հուդիա կակտուսանման բույսն** (լատ.՝ Hoodia Gordonii)[2] էր, որը հայտնի է ախորժակը ճնշող հատկությամբ /նիհարելու նպատակով/: Օգուտի բաշխման պայմանագրերը սկսեցին շրջանառվել այն բանից հետո, երբ 2001-2002 թվականների ընթացքում Hoodia-ի միջազգային շուկան պայթեց՝ հարյուրավոր դիետիկ ապրանքներ գովազդվեցին ինտերնետում և հայտնվեցին դեղատներում: Արտադրանքի մեծ մասը կասկածելի ծագման էր, պարունակում էր չպարզված քանակությամբ չորացրած Հուդիա, գովազդներում պնդումներ էին անում արտադրանքի և Սան ժողովուրդների կապի մասին: Վայրի Հուդիայի անօրինական բերքահավաքը լայն տարածում գտավ: Մյուս բույսը, որի օգտագործման համար փորձ կատարվեց օգուտի բաշխման պայմանագիր կնքել, աֆրիկյան կարտոֆիլն էր (Hypoxis rooperi/ hemerocallidea), ինչը չհաջողվեց, քանի որ հնարավոր չեղավ ապացուցել աֆրիկյան կարտոֆիլի բուժական նպատակով օգտագործման[3] պրակտիկայի

[1] Տես https://www.wipo.int/export/sites/www/tk/en/documents/pdf/background_briefs-f-n6-web.pdf [վերջին այցելությունը՝ 10.05.2024]:

[2] Hoodia-ն հյութեղ բույս է, որը հանդիպում է հարավային Աֆրիկայի տարածաշրջանում: Ցողունների երկայնքով առկա են փոքր փշերի շարքեր, որոնք կրում են մարմնագույն ծաղիկներ: Ծաղիկներից քայքայվող մսի ուժեղ հոտ է գալիս, այնպես որ նրանք ձգում են ճանճերին: Ձվադրելով ծաղիկների ներսում՝ նրանք փոշոտում են դրանք: Հարավային Աֆրիկայում կա այս սուկուլենտների / հյութալի, մսոտ տերևներով (հալվե, ագավաներ) կամ ցողուններով (կակտուսներ, որոշ իշակաթնուկներ) բազմամյա բույսեր/, այսպես կոչված, լեշ-ծաղիկների կամ ստապելիադների ուշագրավ բազմազանություն:

[3] Կիրառվում է տուբերկուլյոզի, քաղցկեղի, շագանակագեղձի հիպերտրոֆիայի, միզուղիների վարակների, ամորձիների ուռուցքների, սրտխփոցի, դեպրեսիայի և ռևմատոիդ արթրիտի բուժման համար, ՄԻԱՎ-ով տառապող հիվանդների իմունային համակարգը ամրապնդելու համար: Տես https://pza.sanbi.org/hypoxis-hemerocallidea [վերջին այցելությունը՝ 10.05.2024]:

պատկանելիությունը միայն Սան կոչվող ժողովրդին[1]:

Բժշկական ավանդական գիտելիքը և դրանում օգտագործվող գենետիկական պաշարները պաշտպանելու մեկ այլ եղանակ է դրանց՝ որպես նախնիների իրավունքի մասի ճանաչումը: Նախնիների իրավունքը տեղաբնիկ ժողովուրդների՝ իրենց պատկանող հողերի վրա գոյություն ունեցող ռեսուրսները տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու իրավունքն է: Նախնիների իրավունքի հասկացությունն առաջին անգամ քննարկվել է Lax Kw'alaams Indian Band v. Canada գործում: Lax Kw'alaams ցեղի անդամները պատմականորեն ապրել են և այսօր էլ շարունակում են ապրել Բրիտանական Կոլումբիայի (նահանգ Կանադայում) հյուսիս-արևմտյան ափին: Մինչ եվրոպացիների հետ առևտրական հարաբերությունների հաստատումը ձկնորսությունը նրանց գոյատևման աղբյուրն էր և մշակույթի անբաժանելի մասը: Ձկնամթերքը նրանց կողմից հիմնականում փոխանակվում էր հարազատների միջև խնջույքների ժամանակ: Սակայն ձկնատեսակներից մեկը՝ էուլախոնը (կամ «մոմաձուկը»)[2] հավաքվում էր, ճարպն արդյունահանվում վաճառքի համար: Lax Kw'alaams Indian Band v. Canada գործում[3] Lax Kw'alaams համայնքը դիմել էր իր ավանդական ջրերում բոլոր ձկնատեսակների ձկնորսության և վաճառքի իրավունքի ճանաչման համար: Կանադայի Գերագույն դատարանի 2011 թվականի որոշման համաձայն՝ «էուլախոնի յուղի վաճառքը Lax Kw'alaams-ի ցեղի մշակույթի հիմնարար տարրն է: Հետևաբար այն հանդիսանում է **նախնիների (տեղաբնիկների, աբորիգենների) իրավունք**, որն ամրագրվում է **Կանադայի 1982 թվականի Սահմանադրության ակտի 35-րդ հոդվածով**: Այնուամենայնիվ, նախնիների իրավունքը չի կարող լայն մեկնաբանվել և էուլախոնի ձկնորսության իրավունքը տարածել Խաղաղ օվկիանոսի

[1] Տես **Mukuka, G.S**. Indigenous Knowledge Systems and Intellectual Property Laws in South Africa. Էջ 94:

[2] «Մոմաձուկ» անվանումը ծագել է նրանից, որ ձվադրման ժամանակ ձուկն այնքան յուղոտ է, որ մարմնի ընդհանուր քաշի 15%-ը յուղ է: Չորացնելու դեպքում այն կարելի է այրել որպես մոմ:

[3] Տես https://jurisprudence.reseaudialog.ca/en/case/lax-kwalaams-indian-band-v-canada-attorney-general/ [վերջին այցելությունը՝ 10.05.2024]:

հյուսիս-արևմտյան ափի բոլոր ձկնատեսակների վրա: Էուլախոնից բացի այլ ձկների առևտուրը չափազանց քիչ էր և չէր կրում պարբերական բնույթ, ինչպիսի պայմաններում բոլոր ձկնատեսակների որսորդությունը և վաճառքը որպես նախնիների իրավունք չի կարող ճանաչվել և թույլատրվել»: Այսպիսով Գերագույն դատարանը մերժեց ճանաչել նախնիների տարածքում ձկների առևտրի ընդլայնված իրավունքը, սակայն հաշվի առնելով, որ մոմածկան առևտուրը եղել է և մնում է տվյալ ցեղի անդամների մշակույթի մի մասը, վերջինիս դատարանը ճանաչել է որպես նախնիների իրավունք: **Իսկ R v Van der Peet**[1] **որոշմամբ** Կանադայի Գերագույն դատարանը մշակել է **«տարբերակիչ մշակույթի թեստ»**՝ որոշելու, թե ինչպես կարելի է սահմանել նախնիների իրավունքը, որը պաշտպանված է 1982 թվականի Սահմանադրության ակտի 35(1) կետով: Թեստն ունի հետևյալ կետերը՝ 1/ Դատարանները նախնիների իրավունքը քննարկելիս պետք է հաշվի առնեն բնիկ ժողովուրդների տեսակետը, 2/ պետք է հստակորեն պարզեն հայցի էությունը, որը ներկայացվում է՝ որոշելով, թե արդյոք հայցվորը ապացուցել է նախնիների իրավունքի առկայությունը, 3/ որպեսզի սովորույթը կամ ավանդույթը ցեղում գոյություն ունեցող պրակտիկա համարվի, պետք է կենտրոնական նշանակություն ունենա տվյալ հասարակության համար, 4/ այն սովորույթները և ավանդույթները, որոնք կազմում են նախնիների իրավունքները, պետք է շարունակական եղած լինեն և գոյություն ունեցած լինեն մինչև տվյալ ցեղի՝ արտաքին աշխարհի հետ շփումը:

Ի տարբերություն «նախնիների իրավունք»-ի, որի հասկացությունը ձևավորվել է նախադեպային իրավունքով, «բնիկ ժողովուրդների իրավունքներ» հասկացությունն ունի նորմատիվ իրավական հիմք: Այն սկզբնապես ամրագրվել է 2007 թվականի սեպտեմբերի 13-ին ընդունված՝ ՄԱԿ-ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների հռչակագրով»[2]: Հռչակագրի 24-րդ հոդվածը սահմանում է նաև բնիկ ժողովուրդների ավանդական բժշկություն ունենալու իրավունքը: Մասնավորապես՝ Հռչակագրի 24-

[1] Տես https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/fr/item/1407/index.do?site_preference=normal [վերջին այցելությունը՝ 10.05.2024]:

[2] Տես https://www.un.org/esa/socdev/unpfii/documents/DRIPS_fr.pdf [վերջին այցելությունը՝ 10.05.2024]:

րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն օգտվել իրենց ավանդական բժշկությունից և պահպանել իրենց բուժական գործելակերպը, ներառյալ հիմնական բուժիչ բույսերի, կենդանիների և օգտակար հանածոների պահպանումը»: Հռչակագիրը սահմանում է նաև ավանդական գիտելիքի նկատմամբ իրավունքը: Մասնավորապես՝ Հռչակագրի 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հետևյալը. «Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն պահպանել, վերահսկել, պաշտպանել և զարգացնել իրենց մշակութային ժառանգությունը, ավանդական գիտելիքները և մշակութային արտահայտման ավանդական ձևերը, ինչպես նաև իրենց գիտական գիտելիքների, տեխնոլոգիաների և մշակույթի դրսևորումները, ներառյալ մարդկային և գենետիկական ռեսուրսները, սերմերը, դեղամիջոցները, գիտելիքները, կենդանական և բուսական աշխարհի վերաբերյալ գիտելիքները, բանավոր ավանդույթները, գրական ստեղծագործությունները, գծանկարները, սպորտային և ավանդական խաղերը և տեսողական և կատարողական արվեստը: Նրանք նաև իրավունք ունեն պահպանել, վերահսկել, պաշտպանել և զարգացնել իրենց մտավոր սեփականությունը նման մշակութային ժառանգության, ավանդական գիտելիքների և ավանդական մշակութային դրսևորումներում»: Չնայած հռչակագիրը չունի իրավաբանորեն պարտադիր ուժ, սակայն այն բնիկ ժողովուրդների իրավունքների զարգացմանն ուղղված փաստաթուղթ է: Բնիկ ժողովուրդների իրավունքները հանդիպում են նաև ՄԱԿ-ի այլ փաստաթղթերում, այդ թվում՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 169 կոնվենցիայում և Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայում (հոդված 8j):

2017 թվականին ՀՀ-ում ներկայացվեց **«Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը (Պ-1177-24.02.2017-ՄԻ-010/0)**[1]**,** որը, սակայն, մինչ օրս չի ընդունվել: Վերջինիս 24-րդ հոդվածը սահմանում է, որ «Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն դեղագործական

[1] Տես https://www.gov.am/files/docs/2085.pdf [վերջին այցելությունը՝ 10.05.2024], http://parliament.am/draft_history.php?do=showgoveval&ID=8606 [վերջին այցելությունը՝ 10.05.2024]:

ձեռնարկների և ավանդական բժշկական փորձերի, ներառյալ՝ դեղաբույսերի պաշտպանության, կենդանիների և կյանքի համար կարևոր հանածոների իրավունքի»: Իսկ 31-րդ հոդվածը սահմանում է. «Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն պահպանել, վերահսկել, պաշտպանել և զարգացնել իրենց մշակութային ժառանգությունը, ավանդական գիտությունը և իրենց ավանդական մշակութային ձևերը, ինչպես նաև՝ նրանց դրսևորումները, գիտությունները, տեխնիկան և մշակույթը, ներառյալ՝ մարդկային և գենետիկ ռեսուրսները, ցանքատարածքները, դեղագործական ձեռնարկները, գիտելիքները սեփական բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ, իրենց բանավոր ավանդույթները, գրականությունը, իրենց իմացություններն իրենց սպորտի և ավանդական խաղերի ասպարեզում, նկարչությունը և մանրակերտները, իրենց տեսողական արվեստները և թատերարվեստը: Համագործակցելով Բնիկ ժողովուրդների հետ՝ Պետությունները ձեռնարկում են արդունավետ միջոցներ, որպեսզի ճանաչվեն այդ իրավունքները և պաշտպանվեն իրականացման համար»:

Այսպիսով, նախնիների իրավունքը, որը միջազգային իրավունքում ձևավորվում է սկզբնականում որպես նախադեպային իրավունք, այնուհետև պետության կողմից որոշվում որդեգրել որպես ներպետական օրենսդրության մաս, բժշկական ավանդական գիտելիքը և դրանում կիրառվող գենետիկական պաշարները պաշտպանելու եղանակ է, որն առավել կիրառելի է հենց բնության մասը կազմող գենետիկական պաշարների և ավանդական գիտելիքի նկատմամբ: «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ առաջին քայլը կարվի բնիկ ժողովուրդների իրավունքների/նախնիների իրավունքի ճանաչման ոլորտում և ևս մեկ իրավական պաշտպանության մեխանիզմ կգործարկվի պաշտպանելու ՀՀ-ում ավանդական բժշկական գիտելիքը և գենետիկական պաշարները, որոնք դրա մաս են կազմում և պաշտպանվում են միայն այն ժամանակ, երբ հայտնվում են հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող բույսերի/կենդանիների ցանկում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Stanley, J., Williamson, T.** "Knowing How". The Journal of Philosophy, Inc., 2001, Vol. 98, No. 8, https://www.jstor.org/stable/2678403?origin=JSTOR-pdf

2. **Filho, V.C., Meyre-Silva, C., Niero, R.** "Chemical and Pharmacological Aspects of the Genus Calophyllum", Chemistry and Biodiversity, 6 (3): 313–327, https://onlinelibrary.wiley.com/doi/10.1002/cbdv.200800082

3. **Գաբրիելյան Է.Ս., Սեդրակյան Ա.Վ.**, Դեղաբանական ու դեղագիտական տերմինների ռուսերեն-հայերեն-անգլերեն բացատրական բառարան: Երևան, «ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն», 2010:

4. **Андрей Иванов, Нурали Латыпов,** Авиценна. Канон биохакинга. – М.: изд. "АСТ", 2018.

5. Չինական ավանդական բժշկության հիմնական հասկացությունների հանրագիտարան: Հատոր 1: Թարգմ. Ա. Աթաբեկյան: Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2022:

6. **Բագրատ Եպիսկոպոս Գալստանյան**, Հայաստանի առողջապահական համակարգը: Պատմական, սոցիալական, բարոյագիտական և աստվածաբանական հայացքը. անցյալը, ներկան և հեռանկարը: Երևան, «Հայաստան» հրատ., 2021:

7. **Ստելլա Վարդանյան**, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Երևան, «Քննասէր» հրատ., 2000:

8. **Ամիրդովլաթ Ամասիացի**, Անգիտաց անպետ: Միջնադարի հայ հռչակավոր բժշկարան: Երկրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, «Լուսաբաց» հրատ., 2020:

9. **Բունիաթ Սեբաստացի**, Գիրք Բժշկութեան: Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1987:

10. **Frédéric Obringer**. La médecine chinoise et la tentation du patrimoine. Perspectives chinoises, Armand Colin, 2011.

11. **Mukuka, G.S.** Indigenous Knowledge Systems and Intellectual Property Laws in South Africa.

12. https://jurisprudence.reseaudialog.ca/en/case/lax-kwalaams-indian-band-v-canada-attorney-general/

ПОНЯТИЕ “ПРАВА ПРЕДКОВ” И ТРАДИЦИОННЫЕ МЕДИЦИНСКИЕ ЗНАНИЯ КАК SUI GENERIS ОБЪЕКТ ПРАВА ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ

Аннотация

Традиционные медицинские знания – это нематериальное культурное наследие народа, сообщества, передаваемое из поколения в поколение. Традиционные медицинские знания включают не только использование конкретных лекарств при конкретных проблемах со здоровьем, но и процедурные навыки изготовления лекарств. Чтобы защитить традиционные медицинские знания с правовой точки зрения, в первую очередь необходимо сформировать соответствующие правовые основы. Однако законодательство, защищающее традиционные знания, находится за пределами классических институтов права интеллектуальной собственности, поэтому их часто называют sui generis - „уникальными”, „единственными в своем роде”. Причина в том, что в случае традиционных знаний отсутствует основное требование к объекту авторского права, необходимость наличия автора (группы авторов). Что касается рассмотрения традиционных знаний как объекта классического патентного права, то условию о новизне объекта патентного права противоречит тот факт, что основная характеристика традиционных знаний - традиционность - передается из поколения в поколение. Именно поэтому правовая охрана традиционных знаний часто осуществляется путем разработки отдельного законодательства. Другим способом защиты традиционных медицинских знаний и используемых в них генетических ресурсов является признание их частью прав предков/прав коренных народов, согласно которым эти

народы имеют право владеть, пользоваться и распоряжаться ресурсами, существующими на их землях.

Ключевые слова: традиционные медицинские знания, объект интеллектуальной собственности sui generis, этнофармакология, биотраст, наследственные права/права коренных народов.

THE CONCEPT OF "ANCESTRAL RIGHTS" AND TRADITIONAL MEDICAL KNOWLEDGE AS A SUI GENERIS OBJECT OF INTELLECTUAL PROPERTY RIGHTS

Annotation

Traditional medical knowledge is an intangible cultural heritage of a people, a community, transmitted from generation to generation. Traditional medical knowledge includes not only the use of specific medicines for specific health problems, but also the procedural skills of making medicines. In order to protect traditional medical knowledge from a legal point of view, it is first necessary to form appropriate legal bases. However, legislations protecting traditional knowledge are outside the classical intellectual property law institutions, so they are often called sui generis, "unique", "one of a kind". The reason is that the main requirement to be an object of copyright, the need to have an author (a group of authors) is absent in the case of traditional knowledge. As for considering traditional knowledge as an object of classical patent law, the fact that the main characteristic of traditional knowledge - traditionality - is passed down from generation to generation is opposed to the condition of the object of patent law being "novelty". That is the reason why legal protection of traditional knowledge is often carried out by formulating separate legislation. Another way to protect traditional medical knowledge and the genetic resources used in it is to recognize it as part of the rights of ancestors/the rights of indigenous peoples, according to which these peoples have the right to possess, use and manage the resources existing on their lands.

Keywords: traditional medical knowledge, sui generis object of intellectual property, ethnopharmacology, biotrust, ancestral rights/indigenous peoples' rights.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 12.06.2024 թ., տրվել է գրախոսության 21.06.2024 թ., ընդունվել է տպագրության 01.07.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.3-170

ՄԱՐՏԻՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի Աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության առաջատար մասնագետ, Հայ-ռուսական համալսարանի իրավագիտության մագիստրոս

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամփոփագիր

Սույն աշխատանքում քննարկվում են դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկելու և միաժամանակ հայցադիմումը կրկին ներկայացնելու դատավարական ընթացակարգերը:

Վերոնշյալ ինստիտուտներն ուսումնասիրվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի շրջանակներում: Սույն աշխատանքով փորձ է արվել վեր հանել վերոգրյալ ինստիտուտների միաժամանակյա կիրառման հետևանքով առաջացող խնդիրները և դատարաններում ստեղծվող իրավիճակները: Հետազոտության նպատակն ստեղծվող իրավիճակների համար որոշակի լուծումներ գտնելն է և անհրաժեշտության դեպքում՝ օրենսդրական փոփոխությունների առաջարկ անելը: Սույն աշխատանքի շրջանակներում փորձելու ենք պատասխանել՝ արդյոք անձը կարող է վերադարձված հայցադիմումը կրկին ներկայացնել շտկված տարբերակով և միաժամանակ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկել վերադաս դատական ատյան:

Հիմնաբառեր. հայցադիմումը վերադարձնելը, հայցադիմումը կրկին ներկայացնելը, վերադարձի մասին որոշումը բողոքարկելը, ՀՀ վարչական դատարան:

Դատական պրակտիկայում հանդիպում է մի իրավիճակ, երբ հայցի հարուցման փուլում անձը բողոքարկում է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը, այնուհետև, միաժամանակ, վերացնելով հայցադիմումում արձանագրված թերությունները, այն կրկին ներկայացնում է վարչական դատարան:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Նույն օրենսգրքի 77-րդ հոդվածը նախատեսում է հայցադիմումը ստանալուց հետո վարչական դատարանի կողմից հնարավոր կայացվելիք որոշումները, դրանք են՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին, հայցադիմումը վերադարձնելու մասին, հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, հայցադիմումը վերահասցեագրելու մասին որոշումները:

Հայցադիմում ներկայացնելու համար սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում նույն օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնում է՝ նշելով արձանագրված թերությունների մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածը սահմանում է վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը, որի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկվելու և վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է վարույթ ընդունված սկզբնական ներկայացման օրը:

Ըստ նույն հոդվածի 5-րդ մասի՝ հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, վարչական դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում արձանագրում ենք, որ օրենսդիրը դատարան դիմող սուբյեկտի համար սահմանել է հնարավորություն՝ վարչական դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու պարագայում՝ այն ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելուց հետո, կրկին ներկայացնել դատարան: Միաժամանակ օրենսդիրը հնարավորություն է տվել հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ վերաքննիչ բողոք ներկայացնել:

Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասում հստակ սահմանել է, որ հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, վարչական դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը: Սույն հոդվածի շրջանակներում առանձնակի ուշադրության է արժանի օրենսդրի կողմից օգտագործված «սխալ» բառը: Համաձայն «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի»՝ **սխալ**[1] նշանակում է՝ անճշտություն գործողությունների մեջ, լավ չհաշված՝ անհաջող քայլ, իր մեջ սխալ՝ անճշտություն պարունակող, ոչ ուղիղ, ոչ ճիշտ, իրականությանը անհամապատասխան, սխալ՝ անճիշտ կերպով, ոչ ճիշտ կերպով:

[1] «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»: Հրաչյա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1980, (տպագիր՝ հատոր 4, էջ 307, էլեկտրոնային՝ http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&pageNumber=2241

Ըստ Հրաչյա Աճառյանի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի»՝ **բողոք**[1] բառը ներկայացվում է որպես՝ տրտունջ, դժգոհության և անհամաձայնության արտահայտություն:

Օրենսդրի նման ձևակերպման տրամաբանությունից կարող ենք ենթադրել, որ հայցադիմումը վերադարձնելու պարագայում դրանում արձանագրված խախտումների հետ համաձայն չլինելու պարագայում հայցվորը կարող է ներկայացնել վերաքննիչ բողոք, մինչդեռ հայցադիմումում առկա սխալները վերացնելուց հետո հայցադիմումը կրկին ներկայացնելու կառուցակարգի տրամաբանությունը, կարծում ենք, կայանում է նրանում, որ հայցվորը դատարանի կողմից մատնանշված խախտումներին համաձայն լինելու պարագայում է վերացնում դրանք և կրկին ներկայացնում հայցադիմումը, քանզի հակառակ պարագայում պետք է կիրառվեր վերոգրյալ բողոքարկման ինստիտուտը:

Թեև արձանագրում ենք նաև, որ վերաքննիչ բողոք ներկայացնելը և միաժամանակ հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելը և կրկին դատարան ներկայացնելը կարող է լինել նաև հայցվորի սեփական իրավունքների պաշտպանության իր մարտավարությունը, մասնավորապես՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման հետ համաձայն չլինելու պայմաններում անձը կարող է վերացնել դատարանի կողմից մատնանշված սխալները, որպեսզի հնարավորինս կարճ ժամկետում այն վարույթ ընդունվի, սակայն, համաձայն չլինելով ենթադրյալ սխալների հետ, տվյալ որոշումը բողոքարկի վերադասության կարգով: Չնայած այն հանգամանքին, որ օրենքում չկա սահմանափակում՝ կամ առկա սխալները վերացնելու, կամ վերաքննիչ բողոք ներկայացնելու վերաբերյալ, այնուամենայնիվ գտնում ենք, որ միաժամանակյա կիրառումը պրակտիկայում առաջացնում է խնդիրներ:

Այսպես՝ համաձայն Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները հաստատելու մասին

[1] «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»: Հրաչյա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1980, (տպագիր՝ հատոր 1, էջ 336, էլեկտրոնային՝ http://www.nayiri.com/imaged-DictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=բողոք

թիվ 23-Լ որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի 16-րդ ենթակետի՝ այն դեպքերում, երբ բողոքարկվում է այնպիսի դատական ակտ, որի քննությունը վերադասության կարգով խոչընդոտում է գործի հիմնական քննությանը, ապա հիմնական գործը քննող դատարանում գործից առանձնացվում են բողոքարկվող մասի վերաբերյալ փաստաթղթերի պատճենները (եթե անհրաժեշտ է գործն ամբողջությամբ, ապա գործում առկա բոլոր փաստաթղթերի պատճենները)՝ կազմելով գործի հավելված:

Վերոգրյալ կարգավորման մեջ տեսնում ենք, որ հավելված է կազմվում այն պարագայում, եթե բողոքարկվում է այնպիսի դատական ակտ, որի քննությունը վերադասության կարգով խոչընդոտում է գործի հիմնական քննությանը և միայն այդ ժամանակ հիմնական գործը քննող դատարանում գործից առանձնացվում են բողոքարկվող մասի վերաբերյալ փաստաթղթերի պատճենները՝ կազմելով գործի հավելված: Սույն կարգավորման համատեքստում ցանկանում ենք անդրադառնալ ՀՀ վարչական դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու մասին և հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումներին: Նշված միջանկյալ որոշումների պարագայում հաղթահարված չի համարվում նույնիսկ հայցադիմումի ընդունելության փուլը, հետևապես խոսք չի կարող գնալ գործի հիմնական քննության մասին, ուստի նման պայմաններում, համաձայն ձևավորված պրակտիկայի, դատարանները վերաքննիչ դատարան են ուղարկում հենց վարչական գործը, ոչ թե հավելվածը, ուստի պատկերացնենք մի իրավիճակ, երբ հայցվորի կողմից բողոքարկվել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը, որը դատարանն ուղարկել է վերաքննիչ դատարան՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով, և նույն ժամանակ՝ վարչական գործի բացակայության պայմաններում, հայցադիմումն արդեն ուղղված տարբերակով ներկայացվում է կրկին:

Միաժամանակ գտնում ենք, որ որոշումը բողոքարկելը և հայցադիմումը միաժամանակ կրկին ներկայացնելը արժեզրկում են դատարանների որոշումները և ստեղծում խնդրահարույց իրավիճակ: Բախվում ենք մի իրավիճակի, երբ անձը բողոքարկում է դատարանի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը՝ կասկածի տակ դնելով դատարանի

կայացրած ակտի իրավաչափությունը, մյուս կողմից հայցադիմումն ուղղված տարբերակով կրկին ներկայացնում է դատարան՝ արժեզրկելով և կարևորություն չտալով նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտին:

Հատկանշական է այն հանգամանքը, երբ գործի քննության ընթացքում վերաքննիչ դատարանը բավարարի կամ մերժի վերաքննիչ բողոքը, դրանով հայցվորի ոչ մի իրավունք չի վերականգնվում:

Գտնում ենք, որ նման պայմաններում անտեսվում են օրենսդրությամբ, սույն աշխատանքին վերաբերելի մասով, վարչադատավարական կառուցակարգերով, անձի համար արդյունավետ դատական պաշտպանության միջոցներ նախատեսելու նպատակները՝ օրինականության հաստատումը, խախտված իրավունքների վերականգնման հնարավորության ստեղծումը, իր իրավունքներին միջամտող ակտերի (գործողությունների, անգործության) բողոքարկման հնարավորությունը:

Մասնավորապես՝ անձի կողմից, միաժամանակ հայցադիմումը կրկին ներկայացնելով և հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելով, արժեզրկվում է անձի՝ դատարան դիմելու իրավունքը՝ որպես իրավական պետության անհրաժեշտ տարր, քանզի մի կողմից անձը հայտնում է անհամաձայնություն արդարադատություն իրականացնող մարմնի կայացրած որոշման վերաբերյալ և բողոքարկում է այն, մյուս կողմից կոնկլյուդենտ գործողությամբ համաձայնվում է այդ նույն որոշմամբ մատնանշված հանգամանքների հետ և կրկին է ներկայացնում հայցադիմումը:

Գտնում ենք, որ նշված իրողությունները խնդրահարույց են ոչ միայն դատարան դիմող անձի վարքագծի գնահատման տեսանկյունից, որպիսի հանգամանքները մատնանշվեցին վերը, այլ նաև արդարադատություն իրականացնող մարմնի կողմից իր գործառույթներն իրականացնելու դիտանկյունից:

Մասնավորապես՝ ստացվում է, որ բողոքարկված դատական ակտը վերանայող, դրա օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգող մարմինը վերանայում է մի դատական ակտ, որի դեմ վերաքննիչ բողոք

ներկայացրած անձը մինչև իր անհամաձայնության հիմնավոր լինել-չլինելու հարցի պարզումն արդեն իսկ համաձայնվել է այդ դատական ակտով մատնանշված հանգամանքների հետ և որոշակի գործողությամբ, այն է՝ հայցադիմումը կրկին ներկայացնելով, հաստատել իր այդ համաձայնությունը: **Նման պայմաններում արդյո՞ք հայցադիմումը կրկին ներկայացնելը վերաքննիչ դատարանի կողմից չպետք է գնահատվի որպես վերաքննիչ բողոքից հրաժարման գործողություն:**

Մյուս կողմից, եթե դիտենք խնդիրը բողոքարկված դատական ակտը կայացրած և կրկին ներկայացված հայցադիմումը ստացած դատարանի տեսանկյունից, ապա, մի կողմ թողնելով նույնիսկ այն խնդիրը, որ վարչական գործը տվյալ պարագայում դատարանին անհասանելի է և ուղարկված վերադաս դատարան դատական ակտի պատշաճ վերանայումն ապահովելու համար, ստացվում է մի իրավիճակ, որ մատնանշված սխալներն ուղղված լինելու պարագայում պետք է հայց հարուցվի մի հայցադիմումի հիման վրա, որում բովանդակող որոշ տարրերի առկայության/բացակայության հարցի հետ կապված դատարան դիմող սուբյեկտն ինքն ունի անհամաձայնություն:

Նշվածի համատեքստում, հարկ ենք համարում նկատել, որ թեպետ «իրավունքի չարաշահում» հասկացության սահմանման շուրջ չկա միատեսակ մոտեցում, սակայն Գոռ Թորոսյանը և Սարգիս Թորոսյանն իրենց «Իրավունքի չարաշահում» աշխատության մեջ նշել են.

> *«Որոշ հեղինակներ իրավունքի չարաշահման բնութագրման համար օգտագործում են իրավունքի ոգի հասկացությունը: Նրանց կարծիքով, եթե անձն իր սուբյեկտիվ իրավունքն իրացնելիս չի խախտում իրավունքի տառը, սակայն խախտում է իրավունքի ոգին, դրա սոցիալական նշանակությունը, այդ դեպքում առկա է իրավունքի չարաշահում»[1]:*

[1] Տես **Малиновский А.А.** Злоупотребление субъективным правом (теоретико-правовое исследование). Москва, 2007, - С. 22: **Թորոսյան Գ., Թորոսյան Ս.,** Իրավունքի չարաշահում: Եր., «Հայրապետ» հրատ., 2019, 368 էջ, էջ 16:

Օ.Ն. Բարմինան «Իրավունքի չարաշահման մասին» իր հոդվածում արտահայտել է այն դիրքորոշումը, որ իրավունքի չարաշահումն իրենից ներկայացնում է հասարակական հարաբերություններում իրավական բնույթի նեգատիվ երևույթ, որի շրջանակներում սուբյեկտը, իրացնելով իր իրավունքները, կոնֆլիկտի մեջ է մտնում իրավական ավելի բարձր իդեալների և արժեքների հետ[1]:

Կարծում ենք, որ դատարան դիմող սուբյեկտի քննարկման առարկա վարքագիծը որոշակիորեն նույնանում է իրավունքի չարաշահման վերաբերյալ վերը արտահայտված դիրքորոշումների հետ, քանզի անձը, իրացնելով իր բողոքարկման իրավունքը և միաժամանակ կրկին ներկայացնելով հայցադիմումը, իր գործողություններով, նույնիսկ այդպիսի նպատակ չունենալով, առաջացնում է դատարանների անհիմն ծանրաբեռնման խնդիր, որը մուլտիպլիկատիվ առումով ազդում է նաև այն անձանց իրավունքների պաշտպանության որակի (ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունք) վրա, որոնք զերծ են մնում օրենսդրության տեսանկյունից թույլատրվող, սակայն իրականում իրավունքի չարաշահում հանդիսացող նման գործելաոճից: Այլ կերպ, անձն օրենքի տառի տեսանկյունից իրացնում է իր իրավունքները, սակայն այդ իրավունքների **միաժամանակյա** իրացումը վերջինիս համար որևէ իրական հետևանք չի առաջացնում, սակայն հանրային շահի տեսանկյունից ստեղծում է իրական վտանգ ողջամիտ ժամկետում գործի քննության և զուգահեռաբար նաև այլ անձանց «մատուցվող» արդարադատության որակի վրա:

Վերոգրյալի համատեքստում կարծում ենք, որ սույն աշխատանքի շրջանակներում վեր հանված խնդիրը պարունակում է իրավունքի չարաշահման վտանգ: Միաժամանակ, աշխատանքի նպատակն է քննարկվող խնդրի առկայության արձանագրումը, իսկ արդեն սույն աշխատանքի շրջանակներում արձանագրված խնդրի՝ իրավունքի չարաշահում հանդիսանալ-չհանդիսանալու, խնդրի որակման և դրա իրավական հետևանքների հստակեցումը, մեր գնահատմամբ, հանդիսանում է առանձին հետազոտության առարկա:

[1] https://cyberleninka.ru/article/n/o-zloupotreblenii-pravom.pdf

Եզրահանգում

Վերոգրյալ վերլուծությունների լույսի ներքո գտնում ենք, որ նման իրավիճակներից, ինչպես նաև դատարաններում ստեղծվող խառնաշփոթից խուսափելու համար անհրաժեշտ են օրենքով սահմանված գործիքակազմեր՝ թույլ չտալու դատարանների անհարկի ծանրաբեռնումը, ինչպես նաև արդարադատության որակի ու ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի նկատմամբ նմանատիպ միջամտությունը:

Չնայած այն հանգամանքին, որ օրենքը չի նախատեսում սահմանափակում վերոգրյալ գործողություններից երկուսը միասին կատարելու հնարավորության համար, այնուամենայնիվ կարծում ենք, որ անհրաժեշտ է օրենքով հնարավորություն տալ իրացնելու դրանցից մեկը, որպեսզի, նույնիսկ իրավունքների պաշտպանության մարտավարության տեսանկյունից, անձը սկզբնական փուլից ընտրի իրավունքների պաշտպանության իր նախընտրած ճանապարհը:

Մեր խորին համոզմամբ՝ նույնիսկ մինչև օրենսդրական փոփոխություններ կատարելը, պրակտիկայում առկա ներկայացված իրավական խնդիրը պետք է կարգավորվի: Գտնում ենք, որ օրենքով նման կարգավորման բացակայության պայմաններում դրանք պետք է հաղթահարվեն դատարանների կողմից, որոնք պետք է, նույնիսկ օրենքով նման սահմանափակման բացակայության պայմաններում, արգելեն նման գործելաոճը՝ անընդունելի համարելով էապես իրար հակասող երկու ինստիտուտների միաժամանակյա կիրառումը:

Կարծում ենք, որ որպես լուծում կարող է ծառայել նաև կրկին ներկայացված հայցադիմումի վերաբերյալ վերաքննիչ ատյանին իրազեկելու ընթացակարգի և այդ հիմքով բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ իրավակարգավորման նախատեսումը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 2013 թ. դեկտեմբերի 5-ին, ուժի մեջ է մտել 2014 թ. հունվարի 7-ին:

2. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները հաստատելու մասին թիվ 23-Լ որոշում:

3. **Թորոսյան Գ., Թորոսյան Ս.,** Իրավունքի չարաշահում: Եր., «Հայրապետ» հրատ., 2019, 368 էջ:

4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հրաչյա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1980:

5. **Бармина О.Н.** О злоупотреблении правом, https://cyberleninka.ru/article/n/o-zloupotreblenii-pravom.pdf

ПРОБЛЕМЫ ОБЖАЛОВАНИЯ РЕШЕНИЯ О ВОЗВРАТЕ ИСКА И ОДНОВРЕМЕННОЙ ПОВТОРНОЙ ПОДАЧИ ИСКА

Аннотация

В настоящей работе рассматриваются процессуальные процедуры обжалования решения суда о возврате искового заявления и одновременной повторной подачи искового заявления.

Вышеуказанные институты были изучены в рамках Административно-процессуального кодекса РА. В рамках данной работы была предпринята попытка выявить проблемы, возникающие в результате одновременного применения вышеуказанных институтов, и ситуации, возникающие в судах. Цель исследования - найти определенные решения в создающихся ситуациях и при необходимости предложить законодательные изменения.

В рамках этой работы мы попытаемся ответить на вопрос, может ли лицо повторно подать возвращенный иск в исправленном виде и одновременно обжаловать решение о возврате иска в вышестоящую судебную инстанцию.

Ключевые слова: возвращение искового заявления, повторная подача искового заявления, обжалование решения о возвращении, Административный суд РА.

THE PROBLEMS OF APPEALING THE DECISION TO RETURN THE CLAIM AND SIMULTANEOUSLY RE-FILING THE CLAIM

Annotation

This article examines the procedures for appealing the decision of returning the statement of claim against the court and simultaneously re-filing the statement of claim.

The above-mentioned institutions were studied within the framework of the Administrative Procedure Code of the Republic of Armenia. Within the framework of this work, it was attempted to identify problems arising from the simultaneous application of the above-mentioned institutions and situations arising in the courts. The purpose of the study is to find specific solutions to emerging situations and, if necessary, propose legislative amendments. As part of this study, we will try to answer whether a person can re-file a returned claim in a corrected form and at the same time appeal the decision of returning the claim to a higher court.

Keywords: returning of the statement of claim, re-filling of the statement of claim, appealing of the decision to return the claim, Administrative Court of the Republic of Armenia.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 08.08.2024 թ., տրվել է գրախոսության 03.09.2024 թ., ընդունվել է տպագրության 11.09.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.3-181

ՀՐԱՆՏ ՍԱՐԿԻՍՈՎ

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի նախագահի օգնական,
Հայ-ռուսական համալսարան,
Իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի դասախոս,
3-րդ կուրսի ասպիրանտ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել, քննարկել և ներկայացնել Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարման համակարգում Ազգային անվտանգության ռազմավարության ընդունման, ինչպես նաև Ազգային անվտանգության խորհրդի ստեղծման պատմական էվոլյուցիան: Սույն հոդվածում օգտագործվում են հետազոտության համեմատական, վերլուծության և սինթեզի մեթոդները: Հետազոտության առարկան Միացյալ Թագավորության Ազգային անվտանգության ռազմավարության և Ազգային անվտանգության խորհրդի ստեղծումն է:

Հիմնաբառեր. ազգային անվտանգություն, Ազգային անվտանգության ռազմավարություն, Ազգային անվտանգության խորհուրդ, Միացյալ Թագավորություն:

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության (այսուհետ՝ ***Միացյալ Թագավորություն կամ ՄԹ***) կողմից Ազգային անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ***ՄԹ ԱԱԽ***) ինստիտուցիոնալիզացիան նորագույն պատմություն ունի:

Ժամանակակից համաշխարհային անվտանգության սպառնալիքները Միացյալ Թագավորության ազգային անվտանգության կառավարման վրա լրջագույն ազդեցություններ ունեցան, որոնք փոփոխությունների հանգեցրին պետական կառավարման համակարգում:

Միացյալ Թագավորության Ազգային անվտանգության խորհուրդը (անգլ.՝ National Security Council)[1] որպես ազգային անվտանգության կառավարման կենտրոնական ինստիտուտ առաջացել է այնպես, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգներում (այսուհետ՝ ***ԱՄՆ***):

2010 թվականի մայիսի 6-ին Միացյալ Թագավորությունում կայացել էին Գլխավոր ընտրություններ (անգլ.՝ General election 2010)[2], որի արդյունքով կառավարող Լեյբորիստական կուսակցությունը՝ վարչապետ Գորդոն Բրաունի գլխավորությամբ, պարտություն կրեց, իսկ ընդդիմության առաջնորդ Դեյվիդ Քեմերոնը (Պահպանողական կուսակցություն) և Լիբերալ դեմոկրատական կուսակցության առաջնորդ Նիք Կլեյգը հիմնեցին Քոն-Լիբը (անգլ.՝ Con-Lib) կոալիցիոն կառավարությունը[3]: 2010 թվականի մայիսի 11-ին Պահպանողական կուսակցության առաջնորդ Դեյվիդ Քեմերոնը, Նորին Մեծություն Թագուհի Եղիսաբեթ Բ-ի անունից, ձևավորեց Կառավարությունը և ստանձնեց Վարչապետի պաշտոնը[4]:

[1] https://www.gov.uk/government/groups/national-security-council [20.06.2024 թ.]:

[2] Key Issues for the New Parliament 2010 House of Commons Library Research // UK, London, Palace of Westminster, page 130, p. 8 (This briefing was prepared by House of Commons Library researchers for Members of the new Parliament in 2010. It includes analysis of a range of subjects - from the public finances to parliamentary reform and from the UK's energy mix to its strategic defence options), https://www.parliament.uk/contentassets/7a8f0b0f918e488584d001d8da6e0e61/full-doc.pdf [20.06.2024 թ.]:

[3] https://www.britannica.com/place/United-Kingdom/Conservative-Liberal-Democrat-coalition-rule-2010-15 [20.06.2024 թ.]:

[4] Prime Minister David Cameron's speech outside 10 Downing Street as Prime Minister (A transcript of the Prime Minister's speech at Downing Street on 11 May 2010), https://www.gov.uk/government/speeches/david-camerons-speech-outside-10-downing-street-as-prime-minister [20.06.2024 թ.]:

Քոն-Լիբ կոալիցիոն Կառավարության հենց առաջին որոշումներից մեկն էլ լինում է Ազգային անվտանգության հարցերով խորհրդականի հաստիքի ստեղծումն ու նշանակումը:

> *«(2010 թվականի մայիսի 12-ին) Արտաքին գործերի և Համագործակցության մշտական փոխքարտուղար սըր Փիթեր Ռիքեթսին Վարչապետը նշանակել է ազգային անվտանգության հարցերով իր խորհրդական՝ նոր պաշտոն, որը հիմնվում է Նախարարների Կաբինետում:*
>
> *Սըր Փիթերը պետք է ձևավորի Ազգային անվտանգության խորհրդի նոր կառուցվածք և համակարգի և իրագործի Կառավարության միջազգային անվտանգության օրակարգը»*[1]*:*

ՄԹ ԱԱԽ-ն ստեղծվել է 2010 թվականի Ազգային անվտանգության ռազմավարությամբ (անգլ.՝ National Security Strategy, 2010)[2]: Այս ակտը սահմանեց այն իրավական հիմքերը, որոնք անհրաժեշտ էին Միացյալ Թագավորությունում Ազգային անվտանգության խորհրդի ստեղծման և նրա գործունեության համար: Ազգային անվտանգության խորհրդի ստեղծումը ազգային անվտանգության լայն բարեփոխումների մի մասն էր, որի նպատակն էր ուժեղացնել երկրում ազգային անվտանգության համակարգումն ու կառավարումը: Այս փաստաթղթի ընդունման ողջ նպատակը բացահայտվում է փաստաթղթում հրապարակված խորագրում՝ **«Ուժեղ Բրիտանիան անորոշության դարաշրջանում. Ազգային անվտանգության ռազմավարություն» (A Strong Britain in an Age of Uncertainty: The National Security Strategy):** Ինչպես տեսնում ենք, այս կարևոր փաստաթղթի ընդունման խորագիրն իսկ արդեն բացահայտում է, թե որքան կարևոր տեղ է հատկացվում ու վերապահվում Ազգային անվտանգության խորհրդին:

[1] The Prime Minister is establishing a National Security Council (NSC), which will oversee all aspects of Britain's security, https://www.gov.uk/government/news/establishment-of-a-national-security-council [20.06.2024 թ.]:

[2] A Strong Britain in an Age of Uncertainty: The National Security Strategy, https://assets.publishing.service.gov.uk/media/5a74cb2de5274a3cb286738d/national-security-strategy.pdf [20.06.2024 թ.]:

2010 թվականին Միացյալ Թագավորության Կառավարությունը հրապարակում է *«Անվտանգության և պաշտպանության ռազմավարական ակնարկ. Մեծ Բրիտանիայի անվտանգության ապահովումն անկայունության դարաշրջանում»*[1] փաստաթուղթը, որի 1.4. կետով արձանագրվել է հետևյալը.

> *«Ազգային անվտանգության ռազմավարությունը սահմանում է երկու հստակ նպատակ. Միացյալ Թագավորությունը հիմնական բոլոր ռիսկերից անվտանգ և ճկուն պահպանել (i)՝ պաշտպանելով մեր քաղաքացիներին, տնտեսությունը, ենթակառուցվածքները, տարածքը և ապրելակերպը, որոնք կարող են ուղղակիորեն ազդել մեզ վրա, և (ii) ձևավորել կայուն աշխարհ՝ նվազեցնելով Միացյալ Թագավորության կամ մեր շահերի վրա ազդող ռիսկերի հավանականությունը՝ օգտագործելով մեր ուժի և ազդեցության միջոցները գլոբալ միջավայր ձևավորելու և պոտենցիալ աղբյուրի ռիսկերի դեմ պայքարելու համար: Այն նաև հստակ առաջնահերթություն է սահմանում այն պոտենցիալ սպառնալիքներին, որոնց մենք հանդիպում ենք Ազգային անվտանգության ռիսկերի գնահատման ժամանակ»*[2]:

Ինչպես տեսնում ենք, 2010 թվականի հոկտեմբերին ՄԹ Խորհրդարանի Ներկայացուցիչների պալատում վարչապետ Դեյվիդ Քեմերոնը Խորհրդարանին ներկայացրեց «Ազգային անվտանգության ռազմավարությունը» (այսուհետ՝ ***Ռազմավարություն***): Ռազմավարության առաջին հատվածում ազդարարվում է հետևյալը.

> *«Կոալիցիոն Կառավարությունն ազգային անվտանգությանը տվել է ամենաբարձր առաջնահերթությունը: Կառավարության առաջին գործողություններից էր Վարչապետի նախագահությամբ Ազգային անվտանգության*

[1] https://assets.publishing.service.gov.uk/media/5a78da21ed915d0422065d95/strategic-defence-security-review.pdf [20.06.2024 թ.]:

[2] https://assets.publishing.service.gov.uk/media/5a78da21ed915d0422065d95/strategic-defence-security-review.pdf [20.06.2024 թ.]:

խորհրդի ստեղծումը՝ համախմբելով բոլոր շահագրգիռ բարձրաստիճան նախարարներին»[1]:

Փաստորեն, ի տարբերություն ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի, որը ստեղծվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Սառը պատերազմի համատեքստում աշխարհաքաղաքական հիմնախնդիրների լուծման նպատակով, Ազգային անվտանգության խորհուրդը Միացյալ Թագավորությունում ստեղծվել է բոլորովին վերջերս՝ ահաբեկչության, կիբերհարձակման, քիմիական, միջուկային կամ կենսաբանական զենքի կիրառման ոչ ստանդարտ հարձակումներից, ինչպես նաև մեծածավալ վթարներից և/կամ բնական աղետներից Պետությունը պաշտպանելու նպատակով:

Այն, որ ՄԹ ԱԱԽ-ն հիմնադրվել է 2010 թվականին, չի նշանակում, որ ՄԹ-ում չի եղել այն պետական ինստիտուտը, որն իրականացրել է Ազգային անվտանգության խորհրդի գործառույթներին համարժեք գործողություններ: Այսպես,

*«Կայսերական պաշտպանության հանձնաժողովը **(անգլ.՝ The Committee of Imperial Defence)**[2] հիմնադրվել է վարչապետ Արթուր Ջեյմս Բալֆուրի կողմից՝ պատերազմի հարցերով պետքարտուղարի և Ծովակալության առաջին լորդի հորդորով: Փոխարինել է Կաբինետի պաշտպանության հանձնաժողովին, որը 1895 թվականին հիմնադրվել էր լորդ Սոլսբերիի կողմից: 1902 թվականին հին կոմիտեն ձախողվել էր, (իսկ) նոր մարմինը, ըստ Բալֆուրի՝ «շատ ավելի հավակնոտ էր»[3]:*

Դեռևս հեռավոր 1902 թվականին, երբ ԱՄՆ-ում դեռ նոր-նոր էին ձևակերպում, թե ինչ է իրենից ենթադրում **«ազգային անվտանգություն»**

[1] https://assets.publishing.service.gov.uk/media/5a74cb2de5274a3cb286738d/national-security-strategy.pdf [20.06.2024 թ.]:

[2] https://discovery.nationalarchives.gov.uk/details/r/C3851 [20.06.2024 թ.]:

[3] **Sneh Mahajan.** (1982) The defence of India and the end of Isolation. A study in the foreign policy of the conservative government, 1900–1905. The Journal of Imperial and Commonwealth History 10:2, 168-193, https://utpjournals.press/doi/citedby/10.3138/cjh.7.3.253?role=tab [20.06.2024 թ.]:

եզրը, Միացյալ Թագավորությունում արդեն իսկ ձևավորվել էր Ազգային անվտանգության խորհրդի նախատիպը՝ Կայսերական պաշտպանության հանձնաժողովը: Սակայն կարևոր է արձանագրել, որ Կայսերական պաշտպանության հանձնաժողովը եկել էր փոխարինելու Նորին Մեծության Կաբինետի Պաշտպանության հանձնաժողովին, որն էլ հիմնադրվել էր դեռևս 19-րդ դարում:

Ուսումնասիրելով Կայսերական պաշտպանության հանձնաժողովի, Կաբինետի պաշտպանության հանձնաժողովի և Ազգային անվտանգության խորհրդի լիազորությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ վերջիններիս լիազորությունների մեջ, մեծ հաշվով, առանցքային տարբերություններ չեն նկատվել:

Այսպես, Կայսերական պաշտպանության հանձնաժողովում, սովորաբար, ստեղծվում էին ժամանակավոր ենթահանձնաժողովներ՝ կոնկրետ խնդիրներ հետաքննելու և անհրաժեշտ զեկույցներ ներկայացնելու համար: 1909 թվականին Կայսերական պաշտպանության հանձնաժողովում **օտարերկրյա լրտեսության** վերաբերյալ զեկույցը հանգեցրեց *Անվտանգության ծառայության* (անգլ.՝ The Security Service or MI5) *և Գաղտնի հետախուզական ծառայության* (անգլ.՝ The Secret Intelligence Service, SIS or MI6) հիմնադրմանը, որոնք սկզբնական շրջանում (հիմնադրվել է 1909 թվականի հոկտեմբերին) հանդես էին գալիս որպես մեկ միասնական ծառայություն՝ Գաղտնի ծառայության Բյուրո (անգլ.՝ The Secret Service Bureau)[1]:

Միացյալ Թագավորության Վարչապետ Դեյվիդ Քեմերոնը Ներկայացուցիչների պալատում Ռազմավարության ներկայացման իր ելույթում, ի թիվս այլնի, նշեց.

> *«(…) Առաջին փոփոխությունն այն էր, որպեսզի մենք համոզվենք, որ Կառավարությունը ճիշտ որոշումներ է կայացնում: Հենց այդ նպատակով էլ նոր Կառավարության աշխատանքի առաջին իսկ օրը ստեղծեցինք Ազգային անվտանգության խորհուրդ, նշանակեցինք ազգային*

[1] The establishment of the Secret Service Bureau, https://www.mi5.gov.uk/the-establishment-of-the-secret-service-bureau [20.06.2024 թ.]:

անվտանգության խորհրդական: Ազգային անվտանգության խորհուրդը միավորում է առանցքային նախարարներին, ռազմական ու հետախուզության ղեկավարներին: Այն հավաքվում է շաբաթական մեկ անգամ և Ուայթհոլում առաջ է բերում փոփոխությունների մշակույթ՝ սրտեղծելով հզոր կառույց հենց կառավարության սրտում՝ համոզվելու, որ մեր սահմանափակ ռեսուրսները կօգտագործվեն լավագույն արդյունքի համար: Այն արդեն նշանակալի ազդեցություն է թողել՝ հստակ ուղղություն տալով Աֆղանստանում մեր հսկայական ազգային հանձնառությանը»[1]:

Վարչապետ Քեմերոնն Ազգային անվտանգության խորհրդի ստեղծման համար որպես առաջին հիմնավորում նշում է, որ Պետությունը պետք է հստակ իմանա, ավելին՝ **պետք է համոզված լինի,** որ Կաբինետը, հատկապես անվտանգության բնագավառում, ճիշտ որոշումներ է կայացնում: Այդ համոզմունքին հասնելու համար էլ ստեղծել են մի մարմին, որը պետք է միավորեր Կաբինետի առանցքային անդամներին՝ ռազմական, անվտանգության և արտաքին հարաբերությունների համար պատասխանատու պաշտոնատար անձանց:

Միացյալ Թագավորության Ազգային անվտանգության խորհուրդն ունի հետևյալ կազմը.

«Վարչապետ (նախագահ), վարչապետի տեղակալ, Լանքասթերի դքսության կանցլեր և Նախարարների Կաբինետում Պետական քարտուղար (նախագահի տեղակալ), Գանձապետարանի Կանցլեր, Արտաքին գործերի, Համագործակցության և զարգացման հարցերով պետական քարտուղար, Ներքին գործերի պետական քարտուղար, Պաշտպանության պետական քարտուղար, Գիտության, նորարարության և տեխնոլոգիաների հարցերով պետական քարտուղար, Գլխավոր դատախազ, Պետական նախարար

[1] https://assets.publishing.service.gov.uk/media/5a74cb2de5274a3cb286738d/national-security-strategy.pdf [20.06.2024 թ.]:

(անվտանգության նախարար), Պետական նախարար (Զարգացման և Աֆրիկայի նախարար)»[1]:

Ինչպես տեսնում ենք, ՄԹ ԱԱԽ-ն, ինչպես և Ազգային անվտանգության այլ խորհուրդներ, կազմված է Կառավարության առանցքային անդամներից, սակայն սույն պարագան մի փոքր այլ է: Միացյալ Թագավորության Նախարարների Կաբինետի անդամ կարող է լինել բացառապես Խորհրդարանի որևէ պալատի անդամը, ուստի մենք չենք կարող պնդել, որ ՄԹ ԱԱԽ-ն բացառապես Գործադիր իշխանության ներկայացուցիչներից է կազմված:

ՄԹ ԱԱԽ-ն ունի մի քանի ենթախորհուրդ, որոնք ներառում են տարբեր կազմեր: Այդպիսի ենթախորհուրդներից են՝ միջուկային անվտանգությանը, Եվրոպայի հարցերինը, տնտեսական անվտանգությանը, կրթության և տեխնոլոգիաների Ազգային խորհուրդը և այլն: Որպես կանոն, այս ենթախորհուրդները նախագահում է Վարչապետը, սակայն կան նաև այնպիսիք, որոնք նախագահում է վարչապետի տեղակալը. կայունության, տնտեսական անվտանգության հարցերով ենթախորհուրդ եւ այլն:

«Ազգային անվտանգության խորհուրդը վերահսկելու է ազգային անվտանգության ռազմավարության պատշաճ մշակումը, որն առաջին անգամն է այս երկրի պատմության մեջ»[2]:

«Ազգային անվտանգության խորհուրդը պատասխանատու է Ազգային անվտանգության ռազմավարության հավաքական մշակման և դրա վրա հիմնված պաշտպանության ու անվտանգության ռազմավարության վերանայման համար: Այս աշխատանքը պատմական է. ոչ մի Կառավարություն նախկինում չի

[1] List of Cabinet Committees and their membership, https://www.gov.uk/government/publications/the-cabinet-committees-system-and-list-of-cabinet-committees/list-of-cabinet-committees-and-their-membership#national-security-council [20.06.2024 թ.]:

[2] https://assets.publishing.service.gov.uk/media/5a74cb2de5274a3cb286738d/national-security-strategy.pdf [20.06.2024 թ.]:

իրականացրել իր անվտանգության ու պաշտպանական բոլոր հնարավորությունների մանրամասն վերանայում»[1]*:*

Փաստորեն, Ռազմավարության տեքստում ուղիղ արձանագրվել է ՄԹ ԱԱԽ լիազորություններից առաջինն ու ըստ էության կարևորագույններից մեկը՝ Ազգային անվտանգության ռազմավարության մշակման աշխատանքները: Հաշվի առնելով այն, որ Ազգային անվտանգության խորհուրդն իր ներկայիս բնույթով հիմնադրվել էր 2010 թվականին, ապա սույն արձանագրությունը՝ որպես առաջնային լիազորություն, խիստ կարևոր է:

Ռազմավարությունը Ազգային անվտանգության խորհրդի վրա ուղիղ պարտականություններ է դնում, որոնք բնորոշ են անվտանգության խորհուրդների բնույթին: Ազգային անվտանգության խորհուրդն, ի թիվս այլնի, պատասխանատու է ռազմավարության **համակարգային մշակման** աշխատանքների համար: Այսինքն, ՄԹ ԱԱԽ-ն, Ռազմավարության մշակման աշխատանքների ընթացքում պետք է համակարգի պետական ողջ ապարատի աշխատանքները՝ ստանալու համակարգային ու ընդգրկուն փաստաթուղթ: Հաջորդիվ, ՄԹ ԱԱԽ պարտականությունները ընդլայնվում են՝ ընդհուպ ***պաշտպանության և անվտանգության ռազմավարությունների վերանայում:*** Ազգային անվտանգության խորհուրդը ոչ միայն մշակում է անհրաժեշտ ռազմավարությունները, այլև պատասխանատու է վերջիններիս վերանայման աշխատանքների համար:

Ամբողջացնելով աշխատանքում տեղ գտած մտքերն ու օրենսդրական բազաների վերլուծությունները՝ կարող ենք արձանագրել հետևյալը.

Միացյալ Թագավորության Ազգային անվտանգության խորհուրդն ազգային անվտանգության համակարգման և ռազմավարական որոշումների մշակման հարցում առանցքային ինստիտուտ է: Վերջինս իրականացնում է կարևորագույն գործառույթներ:

[1] https://assets.publishing.service.gov.uk/media/5a74cb2de5274a3cb286738d/national-security-strategy.pdf [20.06.2024 թ.]:

Պետությունների Ազգային անվտանգության խորհուրդներն ընդհանրապես ունեն գրեթե նույնական նպատակներ, սակայն միևնույն ժամանակ առկա են կազմի, կառուցվածքի, պատմական զարգացման և լիազորությունների առանցքային տարբերություններ: Ազգային անվտանգության խորհուրդներն ազգային անվտանգության ապահովման և ռազմավարությունների մշակման գործընթացում ունեն կարևորագույն տեղ ու դեր, որոնք արտացոլում են յուրաքանչյուր պետության յուրահատուկ պահանջմունքներն ու առաջնահերթությունները:

Եզրակացություն

Ըստ այդմ, Միացյալ Թագավորության Ազգային անվտանգության խորհրդի կազմի, կառուցվածքի ու լիազորությունների մասով կարող ենք արձանագրել հետևյալը.

1. **Նպատակն ու մանդատը:** Ազգային անվտանգության խորհուրդը նպատակ ունի մշակել ազգային անվտանգության ապահովումն ու պետության շահերի պաշտպանության ռազմավարությունը: ՄԹ ԱԱԽ-ն հանդիսանում է ազգային անվտանգության բնագավառում քաղաքականության մշակման և որոշումների կայացման համակարգման պետական բարձրագույն ինստիտուտը:
2. **Կառուցվածքը:** Ազգային անվտանգության խորհրդի կազմը ներառում է Գործադիր իշխանության բարձրաստիճան պաշտոնատար անձանց, որոնք պատասխանատու են անվտանգության, արտաքին հարաբերությունների և ֆինանսատնտեսական քաղաքականության մշակման ու իրացման համար: Միացյալ Թագավորության ԱԱԽ-ն ներառում է՝ Վարչապետ, Վարչապետի տեղակալ, Արտաքին գործերի, Համագործակցության և Զարգացման պետական քարտուղար, Պաշտպանության պետական քարտուղար և Կառավարության առանցքային այլ պաշտոնատար անձինք:
3. **Համակարգման բնագավառը:** Միացյալ Թագավորության Ազգային անվտանգության խորհուրդը կարևորագույն դերակատարում ունի անվտանգության բնագավառի տարաբնույթ նախարարությունների, ինստիտուտների և գործակալությունների աշխատանքների

համակարգման համատեքստում: Վերջինս նպաստում է ազգային անվտանգության խնդիրների լուծման համակարգված և կոնսենսուսային որոշումների կայացմանը:

4. Ստեղծման պատմությունը: Միացյալ Թագավորությունում Ազգային անվտանգության խորհուրդը, արդի իմաստով, ստեղծվել է 2010 թվականին՝ որպես ազգային անվտանգության բնագավառում իրականացվող խորը և համապարփակ բարեփոխումների մաս: Ազգային անվտանգության բնագավառը համակարգող մարմին, սակայն, Միացյալ Թագավորությունում հիմնադրվել էր դեռևս 1902 թվականին՝ Կայսերական պաշտպանության հանձնաժողովը:

5. Լիազորություններն ու գործառույթները: Միացյալ Թագավորության Ազգային անվտանգության խորհուրդն ունի համեմատաբար նեղ լիազորություններ ու իրավասություններ: ՄԹ ԱԱԽ հիմնական դերակատարումը ոչ թե ռազմավարական որոշումների նախագծերի մշակումն է, այլ ազգային անվտանգությանը վերաբերող խնդիրների վերլուծությունն ու դրանց համակարգումը: Միացյալ Թագավորությունում ազգային անվտանգության ու արտաքին հարաբերությունների վերաբերյալ խնդիրների լուծումը թողնված է Բարձրագույն Գործադիր իշխանության իրավասությանը: ՄԹ ԱԱԽ-ն Կաբինետի բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար իրականացնում է վերլուծական և տեղեկատվական օժանդակություն: Միացյալ Թագավորության ԱԱԽ-ում որոշումները կայացվում են կոլեգիալության սկզբունքի հիման վրա՝ Կաբինետի անդամների համատեղ համաձայնության արդյունքում՝ ազգային անվտանգությանը վերաբերող հարցերի համահավասար քննարկման ընթացքում:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. https://www.gov.uk/government/groups/national-security-council [20.06.2024 թ.]:

2. Key Issues for the New Parliament 2010 House of Commons Library Research. UK, London, Palace of Westminster, page 130, p. 8 (This briefing was prepared by House of Commons Library researchers for Members of the new Parliament in 2010. It includes analysis of a range of subjects - from the public finances to parliamentary reform and from the UK's energy mix to its strategic defence options), https://www.parliament.uk/contentassets/7a8f0b0f918e488584d001d8da6e0e61/full-doc.pdf [20.06.2024 թ.]:

3. https://www.britannica.com/place/United-Kingdom/Conservative-Liberal-Democrat-coalition-rule-2010-15 [20.06.2024 թ.]:

4. Prime Minister David Cameron's speech outside 10 Downing Street as Prime Minister (A transcript of the Prime Minister's speech at Downing Street on 11 May 2010), https://www.gov.uk/government/speeches/david-camerons-speech-outside-10-downing-street-as-prime-minister [20.06.2024 թ.]:

5. The Prime Minister is establishing a National Security Council (NSC), which will oversee all aspects of Britain's security, https://www.gov.uk/government/news/establishment-of-a-national-security-council [20.06.2024 թ.]:

6. A Strong Britain in an Age of Uncertainty: The National Security Strategy, https://assets.publishing.service.gov.uk/media/5a74cb2de5274a3cb286738d/national-security-strategy.pdf [20.06.2024 թ.]:

7. **Sneh Mahajan.** (1982) The defence of India and the end of Isolation. A study in the foreign policy of the conservative government, 1900–1905. The Journal of Imperial and Commonwealth History 10:2, 168-193, https://utpjournals.press/doi/citedby/10.3138/cjh.7.3.253?role=tab [20.06.2024 թ.]:

8. https://discovery.nationalarchives.gov.uk/details/r/C3851 [20.06.2024 թ.]:

9. The establishment of the Secret Service Bureau, https://www.mi5.gov.uk/the-establishment-of-the-secret-service-bureau [20.06.2024 թ.]:

10. List of Cabinet Committees and their membership, https://www.gov.uk/government/publications/the-cabinet-committees-system-and-list-of-cabinet-committees/list-of-cabinet-committees-and-their-membership#national-security-council [20.06.2024 թ.]:

ИСТОРИЧЕСКАЯ ПРЕДПОСЫЛКА СОЗДАНИЯ СОВЕТА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ И РАЗВИТИЯ ИНСТИТУТА В СОЕДИНЕННОМ КОРОЛЕВСТВЕ ВЕЛИКОБРИТАНИИ И СЕВЕРНОЙ ИРЛАНДИИ

Аннотация

Цель статьи – изучить, обсудить и представить историческую эволюцию принятия Стратегии национальной безопасности и создания Совета национальной безопасности в системе управления Соединенного Королевства Великобритании и Северной Ирландии. В данной статье использованы сравнительный, аналитический и синтезирующий методы исследования. Предметом исследования является создание Стратегии национальной безопасности и Совета национальной безопасности Соединенного Королевства.

Ключевые слова: Национальная безопасность, Стратегия национальной безопасности, Совет национальной безопасности, Соединенное Королевство.

HISTORICAL BACKGROUND OF THE ESTABLISHMENT OF THE NATIONAL SECURITY COUNCIL AND DEVELOPMENT OF THE INSTITUTE IN THE UNITED KINGDOM OF GREAT BRITAIN AND NORTHERN IRELAND

Annotation

The purpose of the article is to study, discuss and present the historical evolution of the adoption of the National Security Strategy and the establishment of the National Security Council in the Government system of the United Kingdom of Great Britain and Northern Ireland. This article uses comparative, analysis and synthesis methods of research. The subject of the research is the creation of the United Kingdom's National Security Strategy and National Security Council.

Keywords: National Security, National Security Strategy, National Security Council, United Kingdom.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 15.06.2024 թ., տրվել է գրախոսության 20.06.2024 թ., ընդունվել է տպագրության 01.07.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.3-195

ԱՆԱՀԻՏ ՉԱԽՈՅԱՆ
ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ծառայության կազմակերպման վարչության ավագ հրահանգիչ,
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ամփոփագիր

«Փրկարարական ծառայողի սոցիալական երաշխիքների իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում փրկարարական ծառայողների սոցիալական երաշխիքների իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Փրկարար ծառայության անձնակազմն իրենից ներկայացնում է հատուկ մասնագիտական խումբ, որի հիմնական նպատակը բնակչությանը տարբեր տեսակի սպառնալիքներից պաշտպանելն է: Այս առումով առանձնահատուկ նշանակություն են ստանում սոցիալապես նշանակալի գործառույթներ և խնդիրներ կատարող փրկարարական ծառայողների նկատմամբ պետության կողմից երաշխիքների և արտոնությունների տրամադրման և ապահովման խնդիրները:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված և ժամանակակից հասարակության մեջ առկա սոցիալական երաշխիքների համապարփակ վերլուծության անհրաժեշտությամբ, ինչը թույլ կտա սոցիալական

երաշխիքների իրականացման խնդիրների ու մեխանիզմների բացահայտման արդյունքում մշակել համակարգի բարելավման նոր մոտեցումներ:

Հոդվածում քննարկվում են սոցիալական երաշխիքների ծագումնաբանությունը և պատմական զարգացումը, առանձնացվում են հատուկ կատեգորիայի անձանց, մասնավորապես՝ փրկարարական ծառայողների համար օրենսդրությամբ ամրագրված և տրամադրվող սոցիալական երաշխիքները և դրանց տրամադրման առանձնահատկություններն ու հիմնախնդիրները:

Հիմնաբառեր. Սահմանադրություն, սոցիալական երաշխիք, փրկարարական ծառայող, իրավունք, պետություն:

1. Սոցիալական երաշխիքների ծագման պատմական ակնարկ: «Սոցիալական երաշխիք» հասկացության սահմանումները

Սոցիալական երաշխիքները և աշխատողների իրավունքների պաշտպանությունն ունեն երկար և բարդ պատմություն, ինչը կապված է սոցիալական շարժումների զարգացման, օրենսդրության և տնտեսական փոփոխությունների հետ:

Սոցիալական երաշխիքը (անգլերեն՝ social guarantee) նյութական և իրավական միջոցների ամբողջություն է, որն ապահովում է տվյալ հասարակության անդամների սահմանադրական սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական իրավունքների իրականացումը[1]:

Սոցիալական երաշխիքը միջոցների, մեթոդների և պայմանների ամբողջություն է, որով ապահովվում են անհրաժեշտ կենսապայմաններ հասարակության անդամների սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական իրավունքների ոլորտում: Վերջինս որոշակի անձանց շրջանակի համար պետության կողմից կազմակերպվող օգնության ձև է, որը տրամադրվում է օրենքով սահմանված իրավիճակներում որոշակի

[1] Տե՛ս Социологический энциклопедический словарь. На русском, английском, немецком, французском и чешском языках // Редактор-координатор - академик РАН Г. В. Осипов. - М.: Издательская группа ИНФРА М — НОРМА, 1998. — 488 с. - С. 50:

իրավական փաստերի առկայության դեպքում՝ քաղաքացիների սոցիալական դրությունը հավասարեցնելու նպատակով:

Դեռևս հին քաղաքակրթություններում, ինչպիսին է օրինակ Հռոմեական կայսրությունը, գոյություն ունեին սոցիալական աջակցության ձևեր, թեև դրանք սահմանափակ էին: Օգնությունը հիմնականում տրամադրվում էր վետերաններին և աղքատներին՝ աջակցության տեսքով:

18-19-րդ դարերում, արդյունաբերության և քաղաքների զարգացումն ու աճը հանգեցրեցին աշխատանքային պայմանների վատթարացմանը, ինչն էլ հիմք հանդիսացավ սոցիալական խնդիրների առաջացման համար: Այս իրավիճակը հանգեցրեց առաջին սոցիալական բարեփոխումների և աշխատավորների իրավունքների շարժումների ստեղծմանը:

Հատկանշական է նշել, որ առաջին սոցիալական բարեփոխումները ծնունդ են առել Մեծ Բրիտանիայում 1834 թվականին ընդունված՝ «Աղքատների մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքով: Սույն օրենքով սկսեց համակարգվել աղքատներին օգնություն տրամադրելու մշակույթը: Նշված ակտը առաջինն էր, որ ընդգծեց կառավարության դերի կարևորությունն աղքատներին աջակցելու հարցում[1]:

19-րդ դարի վերջին սկսեցին ի հայտ գալ սոցիալական ապահովագրության և կենսաթոշակների առաջին ձևերը: 1889 թվականին Գերմանիան դարձավ աշխարհում առաջին պետությունը, որն ընդունեց ծերության սոցիալական ապահովագրության ծրագիրը, որը մշակվել էր Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկի կողմից: Գաղափարն առաջին անգամ առաջ քաշվեց Բիսմարկի հրամանով 1881 թվականին Գերմանիայի կայսր Ուիլյամ Առաջինի կողմից՝ գերմանական խորհրդարանին ուղղված բեկումնային նամակում:

Գերմանական համակարգը տրամադրում էր նաև կենսաթոշակային և հաշմանդամության նպաստներ, որոնց մասնակցությունը պարտադիր

[1] Տես Poor Law reform, https://www.parliament.uk/about/living-heritage/transformingsociety/livinglearning/19thcentury/overview/poorlaw/#:~:text=The%20Poor%20Law%20Amendment%20Act,all%20the%20commission's%20main%20recommendations (03.09.2024):

էր. վճարումները վերցվում էին աշխատողներից, գործատուից և կառավարությունից[1]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արևմտյան երկրների մեծ մասն սկսեց մշակել սոցիալական պաշտպանության ինտեգրված մոտեցում, որը հանգեցրեց սոցիալական պետության ստեղծմանը:

Աստիճանաբար տարբեր երկրներում սկսեցին ներդրվել սոցիալական ապահովագրության համակարգեր՝

- առողջության ապահովագրություն,
- կենսաթոշակներ,
- սոցիալական երաշխիքների այլ համակարգեր:

1935 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներն ընդունեց «Սոցիալական ապահովության մասին» օրենքը, իսկ Մեծ Բրիտանիան ստեղծեց Առողջապահության ազգային ծառայությունը 1948 թվականին: Նույն թվականին ընդունվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը սահմանեց սոցիալական ապահովության իրավունքը:

20-րդ դարի վերջին տասնամյակներին և 21-րդ դարի սկզբին սոցիալական երաշխիքները շարունակեցին զարգանալ և հարմարվել նոր պայմաններին: Սոցիալական պաշտպանության համակարգերում աշխատողների նոր խմբերի, օրինակ՝ շտապ օգնության աշխատողների ընդգրկումն ավելի տարածված դարձավ:

Միջազգային կազմակերպությունները, ինչպիսին է օրինակ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ), մշակել են սոցիալական երաշխիքների վերաբերյալ տարբեր չափորոշիչներ և առաջարկություններ, որոնք հիմք են հանդիսանում ազգային օրենքների և ծրագրերի համար:

Վերջին տարիներին ուշադրություն է դարձվել սոցիալական ծրագրերի ընդգրկմանը և աշխատանքային պայմանների բարելավմանը, ներառյալ վտանգավոր մասնագիտությունների աշխատողների համար ավելի լավ սոցիալական պաշտպանվածության ապահովումը:

[1] Տես Social Security History, https://www.ssa.gov/history/ottob.html#:~:text=Germany%20became%20the%20first%20nation,letter%20to%20the%20German%20Parliament (03.09.2024):

Առաջին արձագանքողների և վտանգավոր աշխատանք կատարող այլ աշխատողների սոցիալական պաշտպանությունը շարունակում է զարգանալ՝ ի պատասխան օրենսդրության, տնտեսության և հասարակության փոփոխությունների: Այս առումով տեղին է ընդգծել Ա.Գ. Վաղարշյանի մոտեցումը, համաձայն որի՝ մարդու իրավունքների երաշխիքները պայմաններ, կառուցակարգեր, եղանակներ ու միջոցներ են՝ ուղղված իրավունքների և ազատությունների կենսագործմանը, դրանց պահպանությանը և պատշաճ պաշտպանությանը: Առանց երաշխիքների մարդու իրավունքները կմնան բարի ցանկություն, պատվիրան և չեն կարող կատարել իրենց հասարակական առաքելությունը: Այդ երաշխիքների համակարգում կարևոր տեղ են գրավում իրավականները: Դրանք Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված մարդու իրավունքներն են, դրանց իրականացման կարգը, պահպանության և պաշտպանության իրավական միջոցները, կառուցակարգերը[1]:

2. Փրկարարական ծառայողների սոցիալական երաշխիքների իրականացման իրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում փրկարարական ծառայողների սոցիալական երաշխիքները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: ՀՀ Սահմանադրության 3-րդ գլխով սահմանվում են տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները:

[1] Տես **Վաղարշյան Ա.Գ.,** Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն): Էջ 1:

Սահմանադրական հիմնադրույթները և պահանջները սոցիալական պրակտիկայում կենսագործելու բազմափուլ ճանապարհի առաջին օղակն են: Հիմնական օրենքի դրույթների հետագա զարգացումը կատարվում է այլ նորմատիվ փաստաթղթերի միջոցով: Սահմանադրությունն ինքնին առանց այլ օրենքների ընդունակ չէ լուծելու իրավական կարգավորման խնդիրները: Սահմանադրական շատ դրույթների գործողությունը նպատակին է ծառայում ընթացիկ օրենսդրության հետ համալիր, փոխկապակցված[1]:

Ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տվել բացահայտել, որ փրկարարական ծառայողների կարգավիճակը սոցիալական երաշխիքների մասով ունի բազմաթիվ բացեր, ինչը հանգեցնում է ծառայության գրավչության և կադրերի համալրվածության պակասի, որի հետևանքով ցածրանում է բնակչությանը մատուցվող ծառայության որակը:

Սոցիալ-տնտեսական խթաններն ուղղակիորեն ազդում են աշխատողների կատարողականի վրա:

Փրկարարական ծառայողների ներկայիս տնտեսական իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս սոցիալական երաշխիքների որոշակի արժեզրկում՝ միասնական և համակարգային մոտեցման բացակայության պատճառով, որի համար հիմք են հանդիսանում սոցիալ-տնտեսական երաշխիքների տրամադրման ոչ բավարար զարգացվածությունը, կազմակերպչական և բավարար իրավական մեխանիզմների բացակայությունը, անբավարար ֆինանսավորումը, երաշխիքների տրամադրման երկար սպասումները: Այս բոլոր փաստերն ի հայտ են բերում մի շարք հակասություններ հայտարարված սոցիալական երաշխիքների և գործնականում դրանց իրականացման միջև:

Հարկ է նշել, որ միևնույն ժամանակ, հենց կառավարությունն ու պետական կառույցներն են փրկարարական ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին հոչակված սոցիալ-տնտեսական իրավունքների ապահովման երաշխավորը:

[1] Տես **Վաղարշյան Ա.Գ.,** Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն): Էջ 6:

ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության առջև դրված խնդիրների որակյալ կատարումը կախված է անձնակազմի առավելագույն ջանքերից և նրանց ներուժի օգտագործումից, ինչը հնարավոր է միայն սոցիալական և տնտեսական երաշխիքների արդյունավետ օգտագործման պարագայում:

Տարբեր երկրներ իրենց ներպետական օրենսդրությանը համապատասխան ունեն փրկարարների սոցիալական պաշտպանության իրենց ձևերը և մեխանիզմները: Հայաստանի Հանրապետությունում կարող ենք առանձնացնել հետևյալները.

- Աշխատավարձ. «Փրկարար ծառայության մասին» օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ փրկարարական ծառայության յուրաքանչյուր ծառայող ունի ծառայության համար համարժեք վարձատրության իրավունք: Փրկարարական ծառայության ծառայողի վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով, որը սահմանում է հիմնական աշխատավարձից բացի որոշ կատեգորիայի անձանց համար, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներ կատարելու, բարձրլեռնային վայրերում, արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու, զինվորական, քրեակատարողական և փրկարար ծառայության, առանձնակի ռիսկայնության, ինչպես նաև հատուկ մասնագիտացման առանձնահատկություններով պայմանավորված հավելյալ վճար:

Որպես հավելյալ վճար փրկարարական ծառայողների համար օրենսդրությամբ ամրագրված սոցիալական երաշխիքներից են, օրինակ, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի թիվ 712-Ն որոշմամբ սահմանված՝ փրկարար ծառայությունում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրումը:

2023 թվականի մայիսի 1-ից «Փրկարար ծառայության մասին» օրենքում համապատասխան փոփոխությունների և լրացումների արդյունքում փրկարարական ծառայողների համար ներդրվեց ատեստավորման համակարգը, որի նպատակն է ստուգել զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ու հաշվարկել հավելավճար: Հարկ է նշել, որ չնայած տևական ժամանակ է, ինչ նշված համակարգը օրենսդրությամբ ներդրվել է, սակայն կազմակերպչական, ֆինանսավորման և մի շարք այլ խնդիրների պատճառով դեռևս ամբողջությամբ չի ծառայում իր նպատակին:

- Կենսաթոշակ. Բազմաթիվ երկրներում կան հատուկ կենսաթոշակային ծրագրեր փրկարարների համար, որոնք նրանց կենսաթոշակ են տրամադրում որոշակի տարիքը լրանալուց հետո կամ հաշմանդամության թոշակի անցնելու դեպքում: Հայաստանի Հանրապետությունում փրկարարական ծառայողների կենսաթոշակային ապահովումը կարգավորվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով, որի 17-րդ հոդվածի համաձայն Փրկարար ծառայության ծառայողներն ունեն զինվորական կենսաթոշակի իրավունք: Այս առումով հարկ է նշել, որ այո, չնայած փրկարարական ծառայողներն ստանում են զինվորական կենսաթոշակ, սակայն այս հարցը մնում է թիրախային, քանի որ ՀՀ օրենսդրությամբ փրկարարական ծառայողը զինծառայող չէ, միաժամանակ զինծառայողների սոցիալական երաշխիքները փրկարարական ծառայողների վրա տարածվում են ոչ ամբողջ ծավալով:

- Առողջության ապահովագրություն. Առաջին արձագանքողների բժշկական օգնության և սպասարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 64-րդ հոդվածով, համաձայն որի՝ զինծառայողները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական ռազմաբժշկական հաստատություններում, կամ այլ

բժշկական հաստատություններում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Այս սոցիալական երաշխիքը, սակայն, չի տարածվում նախկին ծառայող հանդիսացող փրկարարական ծառայողների ընտանիքի անդամների վրա:

- Սոցիալական նպաստներ. դրանք կարող են լինել ճանապարհորդական նպաստներ, զեղչեր տարբեր ծառայությունների և ապրանքների վրա, ինչպես նաև օգնություն բնակարան ձեռք բերելու հարցում:

- Ուսուցում և զարգացում. Փրկարարները կարող են օգտվել մասնագիտացված դասընթացներից և զարգացումներից՝ օգնելու նրանց մնալ իրենց ոլորտում պրոֆեսիոնալ:

- Հոգեբանական աջակցություն. հաշվի առնելով սթրեսային և էմոցիոնալ պահանջկոտ աշխատանքային միջավայրը, կարող են տրամադրվել հոգեբանական օգնություն և աջակցության ծառայություններ:

Այս երաշխիքներն օգնում են ապահովել արտակարգ իրավիճակների արձագանքման աշխատակիցների անվտանգությունն ու աջակցությունը բարձր ռիսկային, դժվարին միջավայրում, որտեղ նրանք աշխատում են:

Խոսելով փրկարարական ծառայողների մասին՝ անհրաժեշտ է ընդգծել, որ մասնագիտական առաջադրանքներ կատարելիս վերջիններս մշտապես վտանգի տակ են դնում իրենց կյանքն ու առողջությունը:

Այս առումով ռիսկին միտված մասնագիտությունների աշխատակիցները պետք է վստահ լինեն պետության կողմից իրենց սոցիալ-տնտեսական իրավիճակի իրական երաշխավորված աջակցության հարցում:

Հատկանշական է, որ դեռևս 2019 թվականին ՀՀ վարչապետը ԱԻՆ աշխատակցի օրվան նվիրված միջոցառման ընթացքում ունեցած ելույթում փաստեց, որ կառավարության օրակարգում արտակարգ իրավիճակներին արդյունավետ հակազդելու, արտակարգ իրավիճակները արդյունավետ կառավարելու հարցը պետք է

լինի մշտական ուշադրության կենտրոնում և կառավարությունն առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի արտակարգ իրավիճակների աշխատողների սոցիալական պաշտպանվածության և երաշխիքների խնդրին:[1]

Հայաստանի Հանրապետության բնակչության անվտանգ կյանքի ապահովման գործում ահռելի է ՀՀ ՆԳՆ ՓԾ արդյունավետ և որակյալ աշխատանքի պայմանների ապահովումը, ինչի հիմքում ընկած է փրկարարական ծառայողների սոցիալ-տնտեսական երաշխիքների վերլուծության խնդիրը:

Խոսելով սոցիալական երաշխիքների մասին՝ պետք է ընդգծել «տրամադրման հաճախականության» չափանիշի կարևորությունը՝ հատուկ շեշտադրելով ժամանակին տրամադրման սկզբունքը, որը ենթադրում է երաշխիքների իրականացման հնարավորություն այն ժամանակահատվածում, որը չի արժեզրկում այդ երաշխիքների սոցիալական և նյութական նշանակությունը: Դրան համապատասխանելու անհրաժեշտությունը բխում է փրկարար ծառայության ստորաբաժանումների գործունեության վերլուծությունից:

3. Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ «Փրկարար ծառայության մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորությունների իրականացման ընթացքում փրկարարական ծառայողները, ծառայության առանձնահատկություններով պայմանավորված, իրականացնում են կյանքի ու առողջության համար

[1] Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել ԱԻՆ աշխատողների սոցիալական երաշխիքների խնդրին. Փաշինյան https://armenpress.am/hy/article/986838 (28.08.2024 թ.):

վտանգավոր ծառայություն (մասնավորապես, 2019–2022 թթ. ընթացքում դեպքի, պատահարի վայրում աշխատանքներ իրականացնելիս զոհվել է 2, տուժել՝ 44 փրկարարական ծառայող)[1]:

Վերլուծելով փրկարարական ծառայությունը կարգավորող իրավանորմերը՝ կարելի է փաստել, որ փրկարարական ծառայությունը ռիսկային ծառայություն է, կազմակերպվում է կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում (պետք է նկատի ունենալ բուն փրկարարական գործունեությունը), ուստի ծառայության կարգավիճակը սոցիալական երաշխիքների մասով առնվազն պետք է հավասար դիտարկվի մյուս ուժային կառույցների հետ համեմատ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21):
https://www.concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra

2. «Փրկարար ծառայության մասին» օրենք,
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190366

3. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=195590

4. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենք,
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194990

5. ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի՝ «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, պետական պահպանության, արտաքին հետախուզության, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների

[1] ՀՀ ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (վարչություն) կողմից տրամադրված վիճակագրություն:

տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=195151

6. **Վաղարշյան Ա.Գ.,** Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն):

7. Социологический энциклопедический словарь. На русском, английском, немецком, французском и чешском языках // Редактор-координатор — академик РАН Г. В. Осипов. — М.: Издательская группа ИНФРА М — НОРМА, 1998. — 488 с.

8. Social Security History, https://www.ssa.gov/history/ottob.html#:~:text=Germany%20became%20the%20first%20nation,letter%20to%20the%20German%20Parliament (03.09.2024):

9. Poor Law reform, https://www.parliament.uk/about/living-heritage/transformingsociety/livinglearning/19thcentury/overview/poorlaw/#:~:text=The%20Poor%20Law%20Amendment%20Act,all%20the%20commission's%20main%20recommendations (03.09.2024):

10. Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել ԱԻՆ աշխատողների սոցիալական երաշխիքների խնդրին. Փաշինյան https://armenpress.am/hy/article/986838 (28.08.2024 թ.):

11. ՀՀ ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (վարչություն) կողմից տրամադրված վիճակագրություն:

ОСНОВНЫЕ ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНЫХ ГАРАНТИЙ СПАСАТЕЛЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Аннотация

Для успешной реализации задач, поставленных перед спасательной службой МВД РА, необходимо сформировать комплексную систему правовых гарантий и материального стимулирования, которая сможет вовлечь в работу высокопрофессиональных, работоспособных и добросовестных специалистов спасательной службы.

Сотрудники спасательной службы – это особая профессиональная группа, основной целью которой является защита населения от различных угроз. В связи с этим особое значение приобретают проблемы предоставления и обеспечения государством гарантий и льгот спасателям, выполняющим социально значимые функции и задачи.

Актуальность данной статьи определяется всесторонним анализом социальных гарантий, установленных законодательством Республики Армения и существующих в современном обществе, выявлением проблем и механизмов их реализации, с целью разработки предложений и практических рекомендаций по совершенствованию системы.

В статье рассматривается генеалогия и историческое развитие социальных гарантий, освещаются социальные гарантии, установленные и предусмотренные законодательством для особой категории лиц, в частности спасателей, а также особенности и проблемы их обеспечения.

Ключевые слова: конституция, социальное обеспечение, спасатель, закон, государство.

LEGAL FUNDAMENTAL ISSUES OF SOCIAL GUARANTEES OF THE RESCUE SERVANT IN THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

In order to successfully implement the tasks set before the Rescue Service of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, it is necessary to form an integrated system of legal guarantees and material incentives, which can attract highly professional, efficient and conscientious specialists to the rescue service.

Rescue service personnel are a special professional group whose main goal is to protect the population from various threats. In this regard, the problems of providing guarantees and privileges by the state to the rescue workers performing socially significant functions and tasks are of particular importance.

The relevance of this article is determined by the comprehensive analysis of social guarantees established by the legislation of the Republic of Armenia and existing in modern society, identifying the problems and mechanisms of their implementation in order to develop suggestions and practical recommendations for improving the system.

The article discusses the genealogy and historical development of social guarantees, highlights the social guarantees established and provided by legislation for a special category of persons, particularly rescue workers, and the features and problems of their provision.

Keywords: constitution, social guarantee, rescue servant, law, state.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 14.06.2024 թ., տրվել է գրախոսության 16.06.2024 թ., ընդունվել է տպագրության 26.06.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.3-209

ՇՈՂԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության
ծառայության կազմակերպման
վարչության հրահանգիչ,
Հայ-ռուսական համալսարանի
քաղաքագիտության ամբիոնի հայցորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ամփոփագիր

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական անվտանգությունը դարձել է յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Տեխնոլոգիական առաջընթացը, կիբեռսպառնալիքների աճը և թվային տեղեկատվության լայն տարածումը պահանջում են երկրներից ակտիվ միջոցներ ձեռնարկել իրենց տեղեկատվական ռեսուրսները պաշտպանելու համար: Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ), ինչպես և շատ այլ պետություններ, առերեսվում են տեղեկատվական անվտանգության ոլորտում լուրջ մարտահրավերների հետ: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում պետական մարմինների դերը, քանի որ հենց նրանք են պատասխանատու քաղաքականության մշակման, ռազմավարությունների ձևավորման և տեղեկատվության պաշտպանության գործնական միջոցառումների իրականացման համար:

Պետական մարմինները հանդես են գալիս ոչ միայն որպես օրենքների և կարգավորումների մշակողներ ու իրականացնողներ, այլև հիմնական

համակարգման կենտրոններ, որոնք պատասխանատու են տարբեր սուբյեկտների՝ մասնավոր հատվածից մինչև միջազգային գործընկերներ, փոխգործակցության համար: Նրանք ապահովում են անվտանգության պահանջների կատարման մոնիտորինգը և վերահսկումը, արձագանքում են միջադեպերին և նպաստում ընդհանուր իրազեկվածության և տեղեկատվության պաշտպանության հմտությունների բարձրացմանը:

Սույն հոդվածում կներկայացվեն պետական մարմինների հիմնական գործառույթները տեղեկատվական անվտանգության ոլորտում, դրանց ազդեցությունը ազգային անվտանգության ապահովման վրա և դերը ժամանակակից սպառնալիքներին դիմակայելու հարցում:

Հիմնաբառեր. տեղեկատվական անվտանգություն, պետական մարմիններ, ազգային անվտանգություն, սպառնալիքներ, մարտահրավերներ, գործառույթներ, կիբեռանվտանգություն:

1. Պետության դերը տեղեկատվական անվտանգության գործընթացում

Յուրաքանչյուր հասարակության բնականոն գոյության և զարգացման անհրաժեշտ պայմանն է արտաքին և ներքին սպառնալիքներից պաշտպանված լինելը, արտաքին ճնշումների փորձերին դիմակայելու ունակությունը, նման փորձերը հետ մղելու և առաջացող սպառնալիքները չեզոքացնելու ունակությունը, ինչպես նաև այնպիսի ներքին և արտաքին պայմաններ ապահովելը, որոնք երաշխավորում են հասարակության և նրա քաղաքացիների կայուն և բազմակողմանի առաջընթացը: Այս վիճակը բնութագրելու համար օգտագործվում է «ազգային անվտանգություն» հասկացությունը[1]:

ՀՀ ազգային անվտանգությունը կենսական ազգային շահերի պաշտպանվածության վիճակն է ներքին և արտաքին սպառնալիքներից, որի պայմաններում ապահովվում են անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը,

[1] **Вострецова Е.В.** Основы информационной безопасности // Учебное пособие. - Екатеринбург: Издательство Уральского университета, 2019. - С. 208.

ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը, ՀՀ կայուն սոցիալ-տնտեսական զարգացումը[1]: Ազգային անվտանգությունը ներառում է երկրի պաշտպանությունը և բոլոր այն տեսակի անվտանգության հարցերը, որոնք սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ, առաջին հերթին՝ պետական, հասարակական, տեղեկատվական, էկոլոգիական, տնտեսական, տրանսպորտային, էներգետիկ անվտանգությունը և անձի անվտանգությունը[2]:

Ուստի, «ազգային անվտանգություն» հասկացության բովանդակության մեջ կարելի է առանձնացնել տարբեր կառուցվածքային տարրեր (կոմպոնենտներ), որոնցից մեկը տեղեկատվական անվտանգությունն է:

Քանի որ երկրի ինֆորմատիզացման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման պայմաններում տեղեկատվական ռեսուրսները ձևավորվում են գործունեության բոլոր ոլորտներում, առաջին հերթին՝ քաղաքական, ռազմական, տնտեսական, գիտատեխնիկական ոլորտներում, տեղեկատվական անվտանգությունը պետք է դիտարկել որպես ազգային անվտանգության համալիր ցուցանիշ:

Սրանով է պայմանավորված ժամանակակից պայմաններում տեղեկատվական անվտանգության առաջատար դերերից մեկը երկրի ազգային անվտանգության համակարգում:

Տեղեկատվական անվտանգությունն ապահովվում է ազգային անվտանգության ապահովման շրջանակներում: Ազգային անվտանգությունը ձեռք է բերվում անվտանգության ապահովման ոլորտում միասնական պետական քաղաքականություն վարելու, անձի, հասարակության և պետության կենսական շահերին սպառնացող

[1] Ազգային անվտանգության մասին ՀՀ օրենք (ընդունվել է 2001 թվականի դեկտեմբերի 28-ին):

[2] ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն,
https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

վտանգներին համապատասխան տնտեսական, քաղաքական և այլ բնույթի միջոցառումների համակարգի միջոցով[1]:

Պետությունն առանցքային դեր է կատարում տեղեկատվական անվտանգության քաղաքականության ձևավորման, տեղեկատվական միջավայրի պաշտպանությանն ուղղված օրենսդրական միջոցառումների մշակման և իրականացման գործում: Այն ներառում է օրենքների մշակում, որոնք կարգավորում են անձնական տվյալների, տեղեկատվական ռեսուրսների, ազգային և մշակութային արժեքների պաշտպանությունը, ինչպես նաև տեղեկատվական սպառնալիքները կանխելու ռազմավարությունների և քաղաքականության ստեղծումը: Պետական քաղաքականությունը պետք է լինի ճկուն և հարմարվող՝ ժամանակին արձագանքելու տեխնոլոգիական ոլորտում փոփոխություններին և նոր սպառնալիքներին, որոնք ի հայտ են գալիս այդ փոփոխությունների արդյունքում:

Տեղեկատվական անվտանգության ոլորտում օրենսդրությունը պետք է հաշվի առնի ինչպես ներքին, այնպես էլ միջազգային ասպեկտները, քանի որ կիբեռսպառնալիքները հաճախ չեն սահմանափակվում մեկ երկրի սահմաններով: Պետությունը պետք է ակտիվ մասնակցություն ունենա միջազգային համաձայնագրերին և նախաձեռնություններին, որոնք ուղղված են կիբեռհանցագործությունների դեմ պայքարին և գլոբալ տեղեկատվական համակարգերի անվտանգությանը[2]:

ՀՀ-ն, իր ազգային անվտանգության ռազմավարության մեջ ընդգրկելով տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության կարևորագույն մարտահրավերները, նշել է մի շարք խնդիրներ, որոնք կարգավորում են պահանջում: Նշվում է, որ տեղեկատվական և կիբեռանվտանգության ոլորտը կարգավորող համապարփակ պետական քաղաքականությունը դեռևս անկատար է, ինչը բացասաբար է անդրադառնում երկրի ընդհանուր անվտանգության վրա:

[1] **Вострецова Е.В.** Основы информационной безопасности: Учебное пособие. – Екатеринбург: Издательство Уральского университета, 2019. - С. 208.

[2] **Чеботарева А.А.** Информационное право: Учебное пособие. - Москва, 2014. - С. 160.

Ռազմավարությունը նաև ընդգծում է կենսական նշանակության տեղեկատվական ենթակառուցվածքների պաշտպանության ապահովման նպատակով համապատասխան օրենսդրության բացակայությունը, ինչը լուրջ սպառնալիք է ներկայացնում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի համար:

Բացի այդ, համարվում է, որ համակարգչային պատահարների արձագանքման կառույցների ինստիտուցիոնալ կարողությունները դեռևս բավարար մակարդակի վրա չեն գտնվում, ինչը խոչընդոտում է արդյունավետ և օպերատիվ արձագանքմանը հնարավոր կիբեռհարձակումներին:

Վերջապես, նշվում է, որ առկա է կիբեռանվտանգության ոլորտը համակարգող կենտրոնացված կառույցի բացակայություն, ինչը խոչընդոտում է արդյունավետ և համատեղ աշխատանքին տվյալ ոլորտում ներգրավված տարբեր պետական մարմինների միջև:

ՀՀ-ն ստանձնել է պատասխանատվություն՝ այս կարևորագույն խնդիրների լուծման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու և այդ մարտահրավերների հաղթահարմանն ուղղված քաղաքականության մշակման ու կիրառման գործում[1]:

Պետական մարմինները պատասխանատու են այս ոլորտում արդյունավետ քաղաքականության ձևավորման և իրականացման, կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների պաշտպանության, կիբեռ միջադեպերին արագ արձագանքելու և միջազգային համագործակցության համար: Մշտապես փոփոխվող սպառնալիքների և տեխնոլոգիական առաջընթացի միջավայրում պետությունները պետք է պատրաստ լինեն ձևափոխել իրենց մոտեցումները և կիրառել նորարարական լուծումներ՝ ապահովելու տեղեկատվական տարածքի հուսալի պաշտպանությունը:

[1] ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն,
https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

2. ՀՀ պետական մարմինների դերը և խնդիրները տեղեկատվական անվտանգության ապահովման գործընթացում

ՀՀ-ն տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներում ներգրավված երկիր է և լիիրավ մասնակից բազմաթիվ քաղաքական, սոցիալական և տնտեսական իրադարձությունների՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային մակարդակներում: Այս առումով ՀՀ շահերը միջազգային անվտանգության հարցերում օբյեկտիվորեն հատվում են այլ պետությունների շահերի հետ, ներառյալ՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը, միջազգային ահաբեկչության դեմ պայքարը, տարածաշրջանային հակամարտությունների կարգավորումը, սուր բնապահպանական խնդիրների լուծումը և միջազգային համագործակցության այլ ոլորտներ: Մեր երկրի ազգային շահերը վերոնշյալ ոլորտներում, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության ոլորտում, որը ներառում է հասարակական և պետական գործունեության բոլոր ոլորտների և մակարդակների տեղեկատվական բաղադրիչները, սահմանում են նրա տեղեկատվական անվտանգության էությունը: Հայաստանը, գտնվելով բարդ աշխարհաքաղաքական տարածաշրջանում, ներգրավված է ակտիվ տեղեկատվական գործընթացներում: Որպեսզի ոչ միայն նվազեցվի տեղեկատվության ոլորտում ազգային շահերին սպառնացող վտանգների բացասական ազդեցությունը, այլև նախաձեռնողականություն դրսևորվի ազգային և պետական նպատակների ապահով և անվտանգ իրականացման գործընթացում, անհրաժեշտ է չափազանց գրագետ և զգույշ ներկայություն ունենալ թե՛ ներքին, թե՛ արտաքին տեղեկատվական դաշտում[1]:

Պետական մարմինները, որպես ազգային անվտանգության երաշխավորներ, կենտրոնական դեր են խաղում ներքին ու արտաքին սպառնալիքներից տեղեկատվության պաշտպանության ապահովման գործընթացում:

[1] **Аветисян П. С., Тадевосян М. Р.** Основные приоритеты развития кибербезопасности Армении в контексте медиаобразования // Регион и мир. 2023, № 1, https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2023_1_18_22.pdf

ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգի կազմակերպական հիմքերը ներառում են մի շարք պետական ու հասարակական մարմիններ: Այս համակարգի հիմնական բաղադրիչներն են՝ ՀՀ Նախագահը, Ազգային ժողովը, Կառավարությունը, Ազգային անվտանգության խորհուրդը, ինչպես նաև միջգերատեսչական հանձնաժողովները: Դրանց կողքին նաև կարևոր դեր են խաղում տեղական ինքնակառավարման մարմինները, դատական իշխանության մարմինները, հասարակական միավորումները և քաղաքացիները, ովքեր, համապատասխան ՀՀ օրենսդրությանը, մասնակցում են տեղեկատվական անվտանգության ապահովմանը:

Նախագահը, իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում, նպաստում է տեղեկատվական անվտանգության ապահովման մարմինների արդյունավետ գործունեությանը: Կառավարությունն ապահովում է գործադիր իշխանության մարմինների գործունեությունը տեղեկատվական անվտանգության ոլորտում և նախատեսում է միջոցներ պետական ծրագրերի իրականացման համար:

Ազգային անվտանգության խորհուրդն իրականացնում է տեղեկատվական անվտանգության սպառնալիքների վերհանում և գնահատում՝ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ: Խորհուրդն առաջարկություններ է մշակում տեղեկատվական անվտանգության ապահովման, ինչպես նաև գործող հայեցակարգի ճշգրտման ուղղությամբ:

Գործադիր իշխանության մարմիններն ապահովում են օրենսդրական ակտերի պահանջների կատարումը տեղեկատվական անվտանգության ոլորտում՝ համագործակցելով ոլորտի այլ սուբյեկտների հետ, և Կառավարությանը ներկայացնում են համակարգի կատարելագործման առաջարկություններ:

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում ապահովում են օրենսդրական պահանջների կատարումը և համագործակցում քաղաքացիների ու հասարակական կազմակերպությունների հետ՝ տեղեկատվական անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելիս[1]:

[1] «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի կարգադրություն (ՆԿ-97-Ն 26.06.2009 թ.):

2011 թվականից ՀՀ տեղեկատվական անվտանգության տեխնիկական բաղադրիչի համակարգողը Ազգային անվտանգության ծառայությունն է[1]: Բովանդակային հատվածով տեղեկատվական անվտանգության գործառույթները բաշխված են մի շարք կառույցների միջև, բազմաթիվ գործառույթներ իրականացնում են ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ ներքին գործերի նախարարությունը և այլն: Համակարգող դեր ունի ՀՀ Նախագահի աշխատակազմի հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնը:

Սակայն ՀՀ-ն ունի նաև տեղեկատվական անվտանգության անվերահսկելի հատվածներ: Մի շարք բնագավառներ տեղեկատվական անվտանգության առումով դուրս են մնում ընդհանուր և մասնավոր վերահսկումից: Հայաստանում գոյություն չունի ազգային կիբեռանվտանգության պատասխանատու մարմին: Ազգային անվտանգության ծառայության կողմից վերահսկվում է միայն պետական ցանցը, այն էլ՝ ոչ ամբողջությամբ: Այսպես, Կառավարությանը կից մի շարք մարմինների կայքերը չեն վերահսկվում[2]:

Հայաստանում մի շարք կրիտիկական ենթակառուցվածքներ գտնվում են անվերահսկելի վիճակում, քանի որ դրանք դուրս են պետության անմիջական վերահսկողությունից: Կենսական կարևոր հանգույցներ, լինելով մասնավոր կամ օտարերկրյա կազմակերպությունների վերահսկողության ներքո, չեն ենթարկվում օրենսդրությամբ սահմանված տեղեկատվական անվտանգության հստակ պահանջներին: Օրենքով ամրագրված չեն մեխանիզմներ, որոնք թույլ կտային որևէ պետական կամ անկախ մարմնի իրականացնել աուդիտ և բացահայտել համակարգային խոցելիությունները, որոնք կարող են նպաստել կիբեռհարձակումներին:

[1] Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում լիազոր և ազգային համակարգող մարմին նշանակելու մասին ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 3-ի N 185-Ա որոշում:

[2] **Մարտիրոսյան Ս.Վ.**, Հայաստանի տեղեկատվական անվտանգությունը և կրիտիկական ենթակառուցվածքները: «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (73), 2017թ., http://noravank.am/upload/pdf/Samvel_Martirosyan_21_DAR_03_2017.pdf

Օրինակ, եթե Մեծամորի ատոմակայանը գտնվում է պետական վերահսկողության տակ և այստեղ գործում են տեղեկատվական անվտանգության որոշակի չափանիշներ, ապա մնացած էներգահամակարգը գործնականում ազատ է այս կարգավորումներից: Այդպես, առանց պետական վերահսկողության և տեղեկատվական անվտանգության չափանիշների են մնացել մի շարք կարևոր ենթակառուցվածքներ, այդ թվում՝

- էլեկտրաէներգետիկայի համակարգը,
- գազամատակարարումը,
- ջրամատակարարումն ու կոյուղու համակարգը,
- հեռահաղորդակցությունը[1]:

Կիբեռանվտանգության տեսանկյունից չվերահսկվող հատված-ները կարող են դառնալ ավելի խոցելի տարբեր վտանգների նկատմամբ, մասնավորապես՝ հանդիսանալ թիրախ հաքերների և կիբեռհանցագործների համար:

Նշված իրավիճակում պետությունը պետք է ունենա ավելի հստակ մոտեցումներ տեղեկատվական անվտանգության և կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության հարցերում:

3. Եզրակացություն

Պետական մարմիններն առանցքային դեր են կատարում տեղեկատվական անվտանգության ապահովման գործընթացի բոլոր մակարդակներում՝ կարգավորող դաշտի մշակումից մինչև միջադեպերին արագ արձագանքելը: Նրանց գործունեությունն ուղղված է անվտանգ տեղեկատվական միջավայրի ստեղծմանը, որը պետության և հասարակության կայուն զարգացման բանալին է: Այս ոլորտում պետական մարմինների արդյունավետությունը մեծապես կախված է նոր մարտահրավերներին դիմակայելու և տեղեկատվական անվտանգության ապահովման գործում ներգրավված տարբեր սուբյեկտների հետ փոխգործակցություն ապահովելու նրանց կարողությունից:

[1] Տես՝ նույն տեղում:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Ազգային անվտանգության մասին ՀՀ օրենք (ընդունվել է 2001 թվականի դեկտեմբերի 28-ին):

2. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

3. ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի կարգադրություն (ՆԿ-97-Ն 26.06.2009 թ.):

4. **Մարտիրոսյան Ս.Վ.**, Հայաստանի տեղեկատվական անվտանգությունը և կրիտիկական ենթակառուցվածքները: «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (73), 2017 թ., http://noravank.am/upload/pdf/Samvel_Martirosyan_21_DAR_03_2017.pdf

5. Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում լիազոր և ազգային համակարգող մարմին նշանակելու մասին ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 3-ի N 185-Ա որոշում:

6. **Вострецова Е.В.** Основы информационной безопасности // Учебное пособие. – Екатеринбург: Издательство Уральского университета, 2019. - 208 с.

7. **Аветисян П.С., Тадевосян М.Р.** Основные приоритеты развития кибербезопасности Армении в контексте медиаобразования // Регион и мир. 2023, № 1; https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2023_1_18_22.pdf

8. **Чеботарева А.А.** Информационное право // Учебное пособие. - Москва, 2014. - 160 с.

ГОСУДАРСТВЕННЫЕ ОРГАНЫ В ПРОЦЕССЕ ОБЕСПЕЧЕНИЯ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Аннотация

В современном мире информационная безопасность стала одной из важнейших составляющих национальной безопасности каждого государства. Технологический прогресс, рост киберугроз и повсеместное распространение цифровой информации требуют от стран принятия превентивных мер по защите своих информационных ресурсов. Республика Армения, как и многие другие государства, сталкивается с серьезными вызовами в сфере информационной безопасности. В этом контексте роль государственных органов имеет особое значение, поскольку они несут ответственность за разработку политики, формулирование стратегии и реализацию практических мер по защите информации.

Государственные органы являются не только разработчиками и исполнителями нормативно-правовых актов, но и основными координационными центрами, отвечающими за взаимодействие различных субъектов, от частного сектора до международных партнеров. Они обеспечивают мониторинг и контроль соблюдения требований безопасности, реагируют на инциденты, повышают общую осведомленность и навыки защиты информации.

В данной статье будут представлены основные функции государственных органов в сфере информационной безопасности, их влияние на обеспечение национальной безопасности и их роль в противодействии современным угрозам.

Ключевые слова: информационная безопасность, государственные органы, национальная безопасность, угрозы, вызовы, функции, кибербезопасность.

STATE BODIES IN THE PROCESS OF ENSURING INFORMATION SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

In the modern world, information security has become one of the most important components of the national security of every state. Technological progress, the growth of cyber threats and the widespread distribution of digital information require countries to take proactive measures to protect their information resources. The Republic of Armenia, like many other states, faces serious challenges in the field of information security. In this context, the role of state bodies is of particular importance, as they are responsible for policy development, strategy formulation and implementation of practical information protection measures.

State bodies are not only the developers and implementers of laws and regulations, but also the main coordination centers responsible for the interaction of various entities, from the private sector to international partners. They provide monitoring and control of compliance with security requirements, respond to incidents, and promote general awareness and information protection skills.

This article will present the main functions of state bodies in the field of information security, their impact on ensuring national security and their role in countering modern threats.

Keywords: information security, state bodies, national security, threats, challenges, functions, cyber security.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 02.09.2024 թ., տրվել է գրախոսության 02.09.2024 թ., ընդունվել է տպագրության 08.09.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.3-221

ԱՆԱՀԻՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ (ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ) ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ամփոփագիր

Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում է ժամանակակից իրավագիտության խնդրահարույց հարցերից մեկը՝ դատական նախադեպը մայրցամաքային իրավական համակարգում, նրա տեսական ու կիրառական նշանակությունը: Հոդվածում հիմնավորվում է այն տեսակետը, որ ժամանակակից մայրցամաքային իրավական համակարգի երկրներում (այդ թվում՝ Հայաստանում) աստիճանաբար իր դիրքն է ամրապնդում դատական նախադեպը (բարձրագույն դատական ատյանների իրավական դիրքորոշումները) իրավունքի աղբյուրների համակարգում: Այդ նախադեպերը հիմնականում լինում են իրավամեկնողական որոշումներ կամ դիրքորոշումներ:

Հիմնաբառեր. դատական որոշում, իրավամեկնողական նախադեպ, դատական նախադեպ, պրակտիկա, իրավական համակարգ, իրավունքի աղբյուրներ:

Հիմնական բովանդակությունը

Ի տարբերություն անգլո-ամերիկյան իրավական համակարգում կիրառվող նախադեպի իրավունքի Stare Decisis[1] ավանդական տեսության՝ մայրցամաքային իրավական համակարգում կիրառվում է նախադեպային իրավունքի jurisprudence constante «այլընտրանքային» տեսությունը: Եթե առաջինի դեպքում նախադեպ կիրառելու համար հիմք է նախկինում ընդունված մեկ որոշումը, ապա երկրորդ դեպքում՝ որոշումների հավաքական ամբողջությունը: **Նախադեպային իրավունքն** այս համակարգում բխում է նախկինում ընդունված որոշումների հավաքական ամբողջությունից և ոչ թե մեկ վճռից: Դատական պրակտիկան վերածվում է իրավունքի աղբյուրի, եթե այն ծավալվում և ձեռք է բերում հաստատականություն, շարունակականություն և ի վերջ վերածվում գերիշխող նախադեպերի ամբողջության: Դատարանները դրանց վերաբերվում են որպես իրավունքի «փափուկ» աղբյուրի: Այլ կերպ ասած, դատական ավանդույթը վերածվում է դատական նորմի ոչ թե մեկ վճռի, այլ նախկինում ընդունված վճիռների որակական և քանակական ամբողջության ազդեցության տակ:

Երկրորդ կարևոր տարբերությունն այն է, որ եթե Stare Decisis տեսության նախադեպերը պարտադրող են (Binding Precedence), ապա jurispriudence constante տեսության նախադեպերը՝ համոզիչ (persuasive precedence)[2]: Որևէ իրավական խնդիր լուծելիս նախկինում ընդունված որոշումները, ըստ այս տեսության, օգտագործվում են փաստարկներն ավելի համոզիչ և հիմնավոր դարձնելու նպատակով[3]: Նախկինում ընդունված որոշումները հաշվի են առնվում, եթե դատական պրակտիկայում դրանք ձեռք են բերում անհրաժեշտ կայունություն և շարունակականություն: Որքան շատ է նախկինում ընդունած որոշումների քանակը, կայունությունը և միատեսակությունը, այնքան

[1] Տես Stare Decisis - «Թող որոշումը մնա անփոփոխ», «Նախադեպի իրավունք» տեսության լատիներեն անվանումը:

[2] Տես, «համոզիչ» բառն այստեղ օգտագործվում է եզրույթի բառացի թարգմանությամբ: Ընդունված է նաև օգտագործել «ազդող նախադեպ» արտահայտությունը:

[3] Տես **Рене Давид.** Основные правовые системы современности. - М., 1998. - С. 14-15:

ավելի ազդող և համոզիչ նախադեպային նշանակություն է ձեռք բերում դրանց ազդեցության տան ընդունված նոր որոշումը:

Այն հանգամանքը, որ Մայրցամաքային իրավական համակարգում պարտադրող նախադեպն իրավունքի անկախ աղբյուր չի համարվում, պայմանավորված է ռոմանագերմանական իրավունքի զարգացման մի շարք առանձնահատուկ օբյեկտիվ գործոններով և պատմական զարգացումներով:

Նախ և առաջ դա պայմանավորված է ռոմանագերմանական իրավական համակարգի զարգացման էվոլյուցիայով: Դեռ միջին դարերից նախադեպային իրավունքը խորթ է եղել Ռոմանագերմանական իրավական համակարգին: Ռոմանա-գերմանական համակարգում՝ սկսած 13-րդ դարից և հինգ դար շարունակ, իրավունքը զարգանում էր համալսարանականների և տեսաբանների կողմից՝ ի տարբերություն Անգլիայի, որտեղ իրավունքը զարգանում էր դատարաններում՝ դատավորների ու փաստաբանների կողմից: «Համալսարանականները» տեսաբաններ էին, այլ ոչ թե պրակտիկներ: Իրավական համակարգը կառուցելու, գործընթացը դատավորներին ի սկզբանե ապավինելու փոխարեն, ինչպես դա տեղի ունեցավ Անգլիայում, Ռոմանագերմանական համակարգում համալսարանականներն ընդունեցին արդեն պատրաստի Հռոմեական իրավունքի մոդելը, որը կոդիֆիկացված և համակարգված մոդել էր: Լինելով տեսաբաններ՝ համալսարանականները ձգտում էին կատարելության: Նրանց համար ավելի կարևոր էր ոչ թե դատարանում վեճի լուծումը, այլ արդարադատությունը: Նրանք գտնում էին, որ իրավական փորձը պետք է բխի տեսությունից և օրենսդրից, և դատավորն օրենսդրի գործառույթներ չպետք է ունենա: Այս ամենի զարգացումն ի վերջո հանգեցրեց Ֆրանսիական կոդիֆիկացիայի, որն ընդունվեց իրավունքի որպես առաջնային աղբյուր՝ ի տարբերություն դատական որոշումների:

Երկրորդ պատճառն իշխանությունների բաժանման տեսությունն էր: Այս տեսությունը 1789 թվականի Ֆրանսիական հեղափոխության հեղափոխական ծրագրի կարևորագույն կետերից մեկն էր: Մոնտեսքյոն

իշխանության տարանջատման տեսությունն առաջարկում էր ասիմետրիկ կերպով՝ առաջարկելով տարանջատել դատական իշխանությունը գործադիրից, նա միաժամանակ չէր առաջարկում տարանջատել օրինակ գործադիրն օրենսդրից: Այս տեսության հիմնական նպատակն էր օրենքը դատավորից «պաշտպանված» դարձնելը, որը ոչ թե համամարդկային գաղափար էր, այլ բխում էր մեկ երկրի քաղաքական հիմնախնդիրներից: Արդյունքում հեղափոխությունից հետո ռեֆորմիստների իրականացրած ամենաառաջին քայլերից մեկն այն էր, որ դատավորներին արգելվեց իրականացնել «օրինաստեղծ» գործառույթներ, այսինքն՝ վճիռներ կայացնելիս մեկնաբանել օրենքները և սահմանել նորմեր: Ըստ Մոնտեսքյոյի՝ դատավորի գործառույթը զուտ օրենքը փաստերի առնչությամբ կիրառելն էր, կամ, ինչպես պատկերավոր արտահայտվել է Մոնտեսքյոն, դատավորն այն «բերանն է, որն արտասանում է օրենքի տառը»: Արդյունքում մերժվեց մի կարևոր գաղափար, որն է դատավճռի՝ իր սահմաններից դուրս ազդեցություն ունենալու գաղափարը, այսինքն՝ նախադեպային իրավունքը: Այս ամենի արդյունքում նվազեց դատավորի դերը հասարակությունում, և հետհեղափոխական Ֆրանսիայում դատավորը հավասարեցվեց քաղաքացիական ծառայողի կարգավիճակին[1]:

Ֆրանսիական հեղափոխության արձագանքները տարածվեցին ամբողջ Եվրոպայում: Ազգերը, որոնք ոգեշնչված էին Ֆրանսիական հեղափոխությամբ և մեծ տեսաբանների գաղափարներով, ընդօրինակեցին Ֆրանսիական հեղափոխության հեղափոխական ծրագիրը՝ այդ թվում նաև իշխանության տարանջատման տեսությունը, որի կետերից մեկը, ցավոք, մեկնաբանության ինստիտուտի մերժումն էր: Իսկ այս կարևոր գաղափարի մերժումը ոչ թե պայմանավորված էր Եվրոպական ընտանիքում իրավունքի բնականոն զարգացման պահանջով, այլ, ինչպես նշվեց՝ Ֆրանսիայի քաղաքական հիմնախնդիրներով: 19-րդ դարի Եվրոպայում իշխանության տարանջատման սկզբունքը, ի տարբերություն ԱՄՆ-ի, ենթադրում էր,

[1] Տես **Ռենե Դավիթ,** նշվ. աշխ., էջ 212-213:

որ «դատարանների դերը պետք է լինի նրանց առջև բերված վեճերի լուծումը և ոչ թե օրենքներ և նորմեր ստեղծելը»[1]:

Հետհեղափոխական Ֆրանսիայում մեկնաբանության ինստիտուտի մերժումն օրենսդրին դրեց հսկայական բեռի տակ: Օրենսդրից պահանջվում էր տրամադրել նորմերի մի այնպիսի ամբողջական համակարգ, որը հնարավորություն կտար օրենքը կիրառել ցանկացած գործի հանգամանքների և փաստերի նկատմամբ: Ցանկացած իրավաբան գիտի, որ նման խնդիրն օրենսդրի հնարավորություններից վեր է: Թեև նախկին դատավճռին հղում կատարելը հավասարազոր էր հանցանքի, դատավորները սակայն պարբերաբար ուշադրություն էին դարձնում նախկինում ընդունված վճիռներին և ձգտում նոր ընդունած վճիռները համապատասխանեցնել նախկինում ընդունված վճիռներին: Սակայն նրանք երբեք հղում չէին կատարում նախկին վճիռներին, քանի որ դա կհակասեր իշխանությունների բաժանման սկզբունքին: Նման գործելակերպն աստիճանաբար հանգեցրեց դեֆորմացված իրավունքի կիրառմանը, որտեղ նման գործերի շարունակականությունը ձեռք բերեց ոչ թե պարտադրող, այլ համոզիչ նախադեպ (persuasive precedent), «որին դատարանը կարող է հետևել կամ մերժել, բայց դատարանը պարտավոր է հարգել և լրջորեն ուշադրություն դարձնել»:

Վերը նշված սահմանումը բերված է Արևմուտքում լայնորեն կիրառվող իրավաբանական բացատրական բառարանից[2]: Կարևոր է նշել, որ Հայաստանում վերջերս հրատարակված իրավաբանական բացատրական բառարանում persuasive precedence տերմինը բացատրվում է հետևյալ կերպ.

«ազդող նախադեպը որպես դատական որոշման նախադեպ, որին դատավորը պարտավոր չէ հետևել, սակայն որը կարևոր է դատավճիռ կայացնելիս՝ ի տարբերության պարտադրող նախադեպի» – binding precedence[3]:

---

[1] Տես **David, R.** Le droit francais//Les systemes de droit contemporains. T.1. 1960:

[2] Տես **Բրայան Ա. Գարներ,** Black's Law Dixctionary: 7-րդ հրատարակություն, էջ 1195:

[3] Տես **Փիտեր Քոլին,** Իրավաբանական բացատրական բառարան: Անգլերեն-հայերեն-անգլերեն, էջ 198:

Ռոմանագերմանական իրավական ավանդույթի էվոլյուցիայի և Ֆրանսիական հեղափոխության ազդեցությամբ իշխանությունների տարանջատման տեսությունից դուրս մղվեց պարտադրող նախադեպի սկզբունքը, սակայն ժամանակի ընթացքում անհրաժեշտ բացը լրացվեց «փափուկ» նախադեպի իրավունքի jurisprudence Constante տեսությամբ: Դա պայմանավորված էր այն բնական անհրաժեշտությամբ, որն Արևմուտքում կոչվում է «Ճեղքերը լցնելու» (gap filling) տեսություն, այսինքն օրենսդիրը չի կարող կատարյալ օրենսդրական դաշտ ապահովել, քանի որ միշտ մեկ քայլ ետ է մնում կյանքի արագընթաց զարգացումներից և այստեղ կարևոր է դատավորի դերը օրենքի բացերը լրացնելու մեջ: «Jurisprudence Constante» տեսությամբ դատավորին վերադարձվեց մեկնաբանելու ինստիտուտը, դատավճռի՝ իր շրջանակներից դուրս ազդեցություն տարածելու գաղափարը, սակայն պայմանավորված արդեն ոչ թե նախկինում ընդունված մեկ վճռի, այլ վճիռների հավաքական ազդեցությամբ:

«Jurisprudence Constante» տեսությունը ճիշտ ընկալելու համար նախ կարևոր է ճիշտ վերծանել այս արտահայտությունը և գտնել դրան համարժեք հայերեն արտահայտությունը կամ եզրույթը: Միջազգային իրավունքում ընդունված է իրավական եզրույթը մեկնաբանել երեք սկզբունքների հիման վրա. 1)բառի առօրյա գործածության սովորական իմաստի շրջանակներում, 2) սակայն հաշվի առնելով բառի բովանդակությունը, որով օգտագործվել է տվյալ եզրույթը, 3) ինչպես նաև փաստաթղթի կամ, մեր դեպքում, բնագավառի հիմնական առարկան ու նպատակը[1]:

Բլեքսի բացատրական բառարանում, որի վրա հղում կատարվեց վերևում, Jurisprudence եզրույթի բացատրությունը տրված է հետևյալ կերպ.

«դատական նախադեպեր, որոնք ընդունվում են հավաքական իմաստով»[2]:

[1] Միջազգային պայմանագրերի վերաբերյալ Վիեննայի կոնվենցիա, հոդվ. 31-33:

[2] Տես **Black's Law Dictionary,** 7-րդ հրատարակություն, էջ 858:

Իսկ նույն բառարանում Jurisprudence Constante արտահայտության բացատրությունը հետևյալն է.

«Քաղաքացիական իրավունքի համակարգում մի տեսություն է, ըստ որի դատարանը պետք է մեծ կշիռ տա այն իրավական նորմին, որն ընդունվել է և կիրառվել մեծ շարք կազմող գործերում, ինչպես նաև չպետք է փոփոխի կամ նորոգի իր սեփական որոշումները, քանի դեռ ցույց չի տալիս ակնհայտ սխալի առկայություն, ինչպես նաև, որ տվյալ նորմը կիրառելու շարունակությունը կհանգեցնի անարդարության»:

Քաղաքացիական իրավունքի դատարանները պարտադրված չեն Ընդհանուր իրավունքի stare decisis տեսությամբ: Սակայն դրանք ընդունում են jurisprudence constante տեսությունը, որը նման է stare decisis-ին մեկ բացառությամբ, որ jurisprudence constante տեսությունը չի պահանջում խստորեն հետևել այն իրավական սկզբունքին, որը մեկ անգամ արդեն կիրառվել է անցյալում:

Վերը նշվածի հիման վրա առաջարկվում է օգտագործել «հավաքական հաստատուն նախադեպ» արտահայտությունը՝ որպես նշված եզրույթի հայերեն համարժեք՝ հաշվի առնելով ոչ միայն նշված արտահայտության բառացի թարգմանությունը, այլև վերը նշված բացատրությունները և այս արտահայտության «հիմնական միտքն ու առարկան» Քաղաքացիական իրավունքի (Մայրցամաքային) համակարգում կիրառելիս:

Հաշվի առնելով, որ «ազդող նախադեպի» պայմաններում նախադեպի համար իրավունքի աղբյուր է ծառայում ոչ թե նախկինում ընդունված մեկ որոշումը, այլ որոշումների ամբողջությունը, ստացվում է, որ ներկայիս նախադեպի ստեղծման գործընթացը կախված է նախկինում ընդունված որոշումների ամբողջությունից (path dependence):[1] Այլ կերպ ասած՝ տվյալ պահին և տվյալ իրավական խնդրի վերաբերյալ դատարանի դրական կամ բացասական որոշում ընդունելու հավանականությունը կախված է նախկինում տվյալ իրավական հարցի վերաբերյալ ընդունված դատական որոշումների ամբողջությունից: Այսինքն, նախկինում ընդունած որոշումների ամբողջությունն ուղիղ համեմատական ազդում է ներկայումս ընդունվող դատավճռի հնարավոր ելքի վրա:

[1] Տես բացատրությունը, www.en.wikipedia.org/wiki/Path dependence

Հաշվի առնելով, որ նախկին վճիռների հավաքական ամբողջությունը ներգործում է ապագայում նման գործերով դրական կամ բացասական վճիռ ստանալու հավանականության վրա, կարելի է ենթադրել, որ դատարան ներկայացրած ցանկացած գործ կունենա հետևյալ երեք զարգացումներից մեկը. առաջին հայցը կընդունվի և կկայացվի դրական որոշում նախկինում ընդունված մեծ թվով որոշումների հավաքական ազդեցության տակ՝ հանգեցնելով «դրական» նախադեպի զարգացմանը, երկրորդ՝ գործը կմերժվի բավականին մեծ թվով նախկինում ընդունված բացասական որոշումների հավաքական ազդեցության տակ՝ հանգեցնելով գերակշռելիորեն «բացասական» նախադեպերի հաստատմանը: Եվ վերջապես, եթե դատական որոշումների միջև բացակայում է անհրաժեշտ միատարրություն, ապա «հավաքական նախադեպը» «կկիսվի» տվյալ իրավական հարցի վերաբերյալ և նախադեպերն այլևս ազդեցություն չեն թողնի ապագա դատական որոշումների վրա: Այսինքն, դատական ավանդույթը կմնա անփոփոխ:

Սակայն կարևոր է նաև մեկ այլ գործոն՝ տվյալ իրավական խնդրի վերաբերյալ ներկայումս կամ բոլորովին վերջերս ընդունված դատական որոշումների հոսքը: Եթե ներկայումս ընդունված որոշումների հոսքը, որը պարունակում է դատական նորմ, ավելի մեծ է, քան նախկինում ընդունված որոշումների ամբողջությունը, (դատական ավանդույթ), ապա ավելի հավանական է, որ դատարանը կընդունի այնպիսի որոշում, որտեղ տվյալ իրավական հարցը մեկնաբանվում է այնպես, ինչպես ներկայումս, այսինքն, իրավական ավանդույթը դառնում է իրավական նոր նորմ[1]:

Կարևոր է նաև երրորդ գործոնը՝ ինստիտուցիոնալ շեմը: Այսինքն՝ բաժանման գիծը, որից դեպի ներկա իրավական ավանդույթը դառնում է իրավական նորույթ, դատարանները սկսում են տվյալ իրավական հարցի վերաբերյալ կայացնել դրական որոշումներ՝ ի տարբերություն նախկին պրակտիկայի, երբ տվյալ իրավական հարցի

[1] Մանրամասն տե՛ս **Рене Давид, Камилла Жоффре-Спинози**. Основные правовые системы современности. - М.: „Международные отношения”, 2009, - С. 110-111:

վերաբերյալ դատարանները կայացնում էին բացասական որոշումներ: Ինստիտուցիոնալ շեմը «շոշափելի» չէ, սակայն դա սահմանում է դատական համակարգը տվյալ իրավական հարցին նորովի լուծում տալու համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ *«ազդող նախադեպի»* երկրներում այդ դերը սովորաբար ստանձնում է Գերագույն կամ վճռաբեկ դատարանը: Ռոմանագերմանական իրավունքի համակարգում *jurisprudence constante* ռեժիմի պայմաններում կիրառվող նախադեպի մոդելը հարմար է մի այնպիսի համակարգի համար, որտեղ նախադեպը զարգանում է միատարր (ունիտար) դատական համակարգում կամ այնպիսի համակարգում, որտեղ նախադեպերի ազդեցությունը դուրս է գալիս դատական համակարգի մեկ մարմնի կամ իրավասության շրջանակներից և տարածվում համակարգի բոլոր մարմինների վրա: Այսինքն նախադեպի այս տեսությունը կիրառելի է այնպիսի իրավական համակարգում, որտեղ գործում է գերագույն դատարան և որի նախկին որոշումները դառնում են «համոզիչ», եթե դրանք բավարար չափով միատեսակ են, սակայն միևնույն ժամանակ հնարավորություն է տրվում հեռանալ նման որոշումներից ներքին ցնցումների առկայության դեպքում:

Նշվածը հաստատվում է իրականությամբ: Ռոմանագերմանական իրավունքի համակարգում, որպես կանոն, դատական մեկնաբանության իրավունքը վերագրված է գերագույն դատարաններին: Նմանապես, ինստիտուցիոնալ շեմը նույնպես որոշվում է գերագույն դատարանների կողմից: Այս առումով հաճախ գերագույն դատարանները դառնում են օրենսդրի մրցակիցը[1]:

Տեսնենք, թե ազդող նախադեպի սկզբունքն ինչպես է կիրառվում Եվրոպական մի շարք երկրներում:

Նախադեպի իրավունքը Ֆրանսիայի օրենսդրությամբ արգելվում է՝ սակայն զուտ տեսականորեն: Ինչպես նշվեց վերևում, սա պայմանավորված է պատմական զարգացումներով:

Ֆրանսիայի Քաղաքացիական օրենսգրքի 5-րդ հոդվածն արգելում է

[1] Տես **David, R.** Les grands systemes de droit contemporains. p., 1964.

դատավորներին «...որոշումներ ընդունել ընդհանուր կամ կարգավորող նորմեր ստեղծելու միջոցով»: Ակնհայտ է, որ նման նորմերի տակ հասկացվում են նախադեպային նորմերը: Դատավճիռ կայացնելիս պահանջվում է հղում կատարել միայն օրենսդրական դրույթներին:

Նշված հոդվածը պաշտպանված է նաև Քաղաքացիական օրենսգրքի 1351-րդ հոդվածով, որը նման է Արդարադատության միջազգային դատարանի Կանոնակարգի 59-րդ հոդվածին, ըստ որի՝ դատական որոշումը պարտադիր է միայն տվյալ գործով կողմերի համար: Ավելին, նշված դրույթները պաշտպանված են նաև Քաղաքացիական օրենսգրքի 455-րդ հոդվածով, ըստ որի՝ դատական որոշումը պետք է համառոտ նկարագրի կողմերի փաստարկներն ու պնդումները և դատավճիռը պետք է լինի «պատճառաբանված»: Գործնականում, վերջին արտահայտությունը նշանակում է, որ եթե որոշումը հիմնված է բացառապես նախադեպի վրա, ապա նման դատավճիռը կհամարվի «չպատճառաբանված», այսինքն՝ ակնհայտ անհիմն:

Նման սահմանափակումները պայմանավորված են իշխանությունների բաժանման սկզբունքով, որի մասին խոսվեց վերևում: Այդուհանդերձ, հետազոտողները գտնում են, որ Ֆրանսիայի դատավորը երկու նկարագիր ունի, պաշտոնականը, ըստ որի օրենսգիրքը կիրառելիս նրանք օժտված են պասիվ, մեխանիկական գործառույթներով, և ոչ պաշտոնականը, ըստ որի դատավորն ակտիվորեն ստեղծում և մեկնաբանում է իրավական նորմեր:

Եթե ընդհանրացնենք, ապա անհրաժեշտ է ընդգծել, որ դատական նախադեպը ռոմանագերմանական իրավական համակարգի իրավակարգավորումների ոլորտում ունի շեշտադրված իրավամեկնողական բնույթ, այսինքն դատարանն իր իրավական դիրքորոշումներում մեկնաբանում է իրավական նորմերի բովանդակությունը, այլ ոչ թե ընդունում է «նոր նորմ»: Սակայն իրավամեկնողական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն պրակտիկայում իրավական նորմի ճիշտ կիրառումն ապահովելու համար:

Եզրակացություն

Դատական նախադեպը մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգում հիմնականում կրում է իրավամեկնողական բնույթ և զգալի դրական նշանակություն ունի իրավակարգավորումների ոլորտում և դատական միասնական պրակտիկայի ձևավորման խնդրում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Рене Давид.** Основные правовые системы современности. - М., 1998.
2. **David, R.** Le droit francais//Les systems de droit contemporains. T. 1. 1960.
3. **Բրայան Ա. Գարներ,** Black's Law Dictionary. 4-8d h8at., 15 1195.
4. **Рене Давид, Камилла Жоффре-Спинози.** Основные правовые системы современности. - М.: Международные отношения, 2009, 450с.

МЕСТО И РОЛЬ ПРЕЦЕДЕНТНОГО ПРАВА В КОНТИНЕНТАЛЬНОЙ (РОМАНО-ГЕРМАНСКОЙ) ПРАВОВОЙ СИСТЕМЕ

Аннотация

В этой статье подробно рассматривается один из проблемных вопросов современной юриспруденции - судебный прецедент в континентальной правовой системе, его теоретическое и прикладное значение.

В статье обосновывается точка зрения о том, что в странах современной континентальной правовой системы (в том числе в Армении) судебный прецедент (правовые позиции высших судов) постепенно укрепляет свои позиции в системе источников права. Эти прецеденты в основном представлены в форме правовых интерпретационных решений или позиций.

Ключевые слова: судебное решение, правовой-интерпретационный прецедент, судебный прецедент, практика, правовая система, источники права.

THE PLACE AND ROLE OF PRECEDENT LAW ON THE CONTINENT (ROMANO-GERMANIC) LEGAL SYSTEM

Annotation

In this article, one of the problematic issues of modern jurisprudence - judicial precedent in the continental legal system, its theoretical and practical significance is thoroughly discussed. The article substantiates the point of view that in the countries of the modern continental legal system (including Armenia) the judicial precedent (the legal positions of the highest courts) is gradually strengthening its position in the system of sources of law. These precedents are primarily in the form of legal interpretive decisions or positions.

Keywords: court decision, legal-interpretative precedent, judicial precedent, practice, legal system, sources of law.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 14.06.2024 թ., տրվել է գրախոսության 15.06.2024 թ., ընդունվել է տպագրության 25.06.2024 թ.:

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 101-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 90-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՆԱԵՎ ՆՇՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 21 մայիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող) Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Դ. Հարությունյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Դավիթ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հաշվի առնելով նաև նշված դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին, ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի՝ «*Դատական սանկցիաները և դրանց կիրառման ընդհանուր կարգը*» վերտառությամբ 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է.

«1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված հիմքերով դատարանն իրավունք ունի վարչական դատավարությանը մասնակցող անձանց, ներկայացուցիչների և դատական նիստին ներկա այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները.

(…)

2) դատական նիստերի դահլիճից հեռացում.»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը շարադրվել է նոր խմբագրությամբ 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-120-Ն օրենքով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 10-ին, ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Սահմանադրական օրենքի՝ *«Բարձրագույն դատական խորհրդի նիստերը»* վերտառությամբ 90-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է.

«6. Որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի,

երբ դրանք Բարձրագույն դատական խորհրդի անդամի կամ վարույթի մասնակցի միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանված որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը լրացվել և փոփոխվել է 2020 թվականի մարտի 25-ին ընդունված ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքով:

Գործի քննության առիթը Դ. Հարությունյանի՝ 2024 թվականի հունվարի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով վիճարկվող և վերջիններիս հետ փոխկապակցված այլ օրինադրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Գործի համառոտ նախապատմությունը

Արդարադատության նախարարի մամուլի քարտուղարը 2023 թվականի ապրիլի 14-ին Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողին է ներկայացրել թիվ Ն//9734-2023 զեկուցագիրը՝ զանգվածային լրատվության միջոցի հրապարակման առիթով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Դավիթ Հարությունյանի (այսուհետ նաև՝ Դատավոր) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի ուսումնասիրություն իրականացնելու անհրաժեշտությունը դիտարկելու վերաբերյալ:

Արդարադատության նախարարի (պարտականությունները կատարողի)՝ 2023 թվականի ապրիլի 20-ի N 31-Ա որոշմամբ Դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողը 2023 թվականի մայիսի 24-ին N 42-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացրել Բարձրագույն դատական խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ նշելով, որ կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսացել Դատավորի կողմից Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 6 և 8-րդ կետերով նախատեսված՝ դատավորի վարքագծի կանոնների առերևույթ խախտումը, իսկ

կարգապահական վարույթ հարուցելու առիթ՝ զանգվածային լրատվության միջոցի համապատասխան հրապարակումը:

Արդարադատության նախարարը 2023 թվականի հունիսի 19-ին Խորհրդին ներկայացրել է միջնորդություն՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործով դատական նիստը դռնփակ անցկացնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(…) Դատավորի կողմից թույլ տրված կարգապահական խախտումների բնույթն այնպիսին է, որ ուղղակիորեն վերաբերում է Դատավորի կողմից կատարված հրապարակային խոսքով դատական իշխանության հեղինակազրկմանը, որպես դատարան հանդես եկող Բարձրագույն դատական խորհրդի անկախությունը և իր կողմից կայացվող որոշումների օրինականությունը կասկածի տակ դնելուն: Այնինչ, Խորհրդի՝ Սահմանադրությամբ ամրագրված դատարանների և դատավորների անկախությունը ապահովելու գործառույթը ենթադրում է Խորհրդին վերապահված լիազորությունների շրջանակներում դատարանների և դատավորների անկախության երաշխավորմանը խոչընդոտող, դատական իշխանությունը հեղինակազրկող ցանկացած գործողության կանխում: Նշվածի հաշվառմամբ գտնում ենք, որ Դատավորի՝ նշված խոսքի տարածումը դատական կարգով գործի հրապարակային քննության շրջանակներում լրացուցիչ բացասական ազդեցություն կարող է ունենալ դատական իշխանության հեղինակության, անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության պահպանման համատեքստում և դատական նիստի դռնփակ անցկացումը բխում է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությունից»:

2023 թվականի հունիսի 19-ին հրավիրված դատական նիստին Խորհուրդը որոշել է բավարարել ներկայացված միջնորդությունը (հիմք՝ թիվ ԲԴԽ-57-Ո-Կ-16 գործով 2023 թվականի հունիսի 19-ի դատական նիստի արձանագրություն):

Խորհուրդն իր՝ 2023 թվականի հուլիսի 3-ի թիվ ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշմամբ կարևոր է համարել անդրադառնալ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Լիազոր մարմնի միջնորդության քննությունը դռնփակ անցկացնելու մասին որոշում կայացնելու անհրաժեշտությանը և արձանագրել, որ կարգապահական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 6 և 8-րդ կետերով սահմանված դատավորի վարքագծի կանոնների՝ Դատավորի

կողմից թույլ տրված խախտումները պարունակում են դատական իշխանությանը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող հրապարակային հայտարարություններ, ինչը, Խորհրդի դիտարկմամբ, հիմք է հանդիսացել դատական նիստի դռնփակ անցկացման համար: Խորհուրդը, մասնավորապես, նշել է. «(…) հաշվի առնելով Խորհրդի՝ Սահմանադրությամբ ամրագրված դատարանների և դատավորների անկախությունն ապահովելու գործառույթը Դատավորի կողմից վերոնշյալ փաստերի վերաբերյալ խոսքի տարածումը դատական կարգով գործի հրապարակային քննության շրջանակներում լրացուցիչ բացասական ազդեցություն կարող է ունենալ դատական իշխանության հեղինակության, հանրության վստահության պահպանման համատեքստում, ինչով և պայմանավորված Խորհուրդը, հիմք ընդունելով արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությունը, որոշում է կայացրել դատական նիստը դռնփակ անցկացնելու մասին:

(…)

(…) հաշվի առնելով նկարագրված իրողությունները, այդ թվում՝ դատական իշխանության հեղինակազրկման վտանգը, դատավորի պաշտոնի արժանապատվության պահպանման անհրաժեշտությունը և դատական իշխանության անկախության ու անաչառության հանդեպ հանրության վստահությունը պահպանելու նկատառումներից ելնելով, միաժամանակ կարևորելով հրապարակայնության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունը, Խորհուրդը սահմանված ժամկետում սույն որոշումը ամբողջ ծավալով հրապարակում է Դատական իշխանության պաշտոնական կայքում»:

Խորհուրդը 2023 թվականի հունիսի 26-ին հրավիրված դատական նիստի ընթացքում Դատավորի նկատմամբ կիրառել է «դատական նիստերի դահլիճից հեռացում» սանկցիան՝ շարունակելով գործի քննությունն առանց Դատավորի և նրա ներկայացուցիչների մասնակցության (հիմք՝ թիվ ԲԴԽ-57-Ո-Կ-16 գործով 2023 թվականի հունիսի 26-ի դատական նիստի արձանագրություն):

2023 թվականի հուլիսի 3-ի դատական նիստում հրապարակվել է Խորհրդի՝ թիվ ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշման եզրափակիչ մասը, որով Խորհուրդը որոշել է.

«1. Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Լևոն Բալյանի միջնորդությունը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Դավիթ Հարությունյանին կարգապահական պատասխանատվության

ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Դավիթ Հարությունյանի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնել:

(...)»:

2. Դիմողի դիրքորոշումները

Դ. Հարությունյանը (այսուհետ՝ Դիմող), մասնավորապես, նշում է. «Բարձրագույն դատական խորհրդի կողմից կայացված Որոշմամբ [Բարձրագույն դատական խորհրդի՝ «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Դավիթ Հարությունյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» 2023 թվականի հուլիսի 3-ին ընդունած թիվ ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշում] դիմողի նկատմամբ կիրառված Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, 90-րդ հոդվածի 6-րդ մասը (արդարադատության շահերի պաշտպանության նպատակով դռնփակ դատական նիստ), 50-րդ հոդվածի 2-րդ մասը և դրա հետ փոխկապակցված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը (դատական նիստերի դահլիճից դատավորի հեռացում), ակնհայտ միջամտություն են գործում դիմողի՝ Սահմանադրության 61-րդ ու 63-րդ հոդվածով, ինչպես նաև 31-րդ հոդվածի 1-ին մասով ու 49-րդ հոդվածով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության ու արդար դատաքննության, մասնավոր ընտանեկան կյանքի ու բարի համբավի, ինչպես նաև հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքների նկատմամբ»:

Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության հարցի առնչությամբ Դիմողը գտնում է, որ արդարադատության շահերի պաշտպանությունը չի հանդիսանում դատական նիստի հրապարակայնությունը սահմանափակելու և դռնփակ դատաքննություն իրականացնելու ինքնուրույն հիմք, եթե առկա չէ մարդու իրավունքների պաշտպանության հարակից անհրաժեշտություն: Դիմողը, մասնավորապես, նշում է. «(...) **ողջամտորեն հնարավոր չէ պատկերացնել իրավիճակ, թե առկա են անձինք, ովքեր կրում են արդարադատության շահերը, հետևաբար գործի քննության հրապարակայնությունը կարելի է սահմանափակել զուտ արդարադատության շահերի պաշտպանության նպատակով:**

(…)

(…) արդարադատության շահը կամ դրա պաշտպանությունը չի կարող մեկնաբանվել բառացի կամ նեղ իմաստով և դրա տակ հասկանալ սոսկ արդարադատությանը վերաբերող ցանկացած նեղ հարց, ինչպիսին են օրինաստեղծ գործունեությունը, օրենսդրական փոփոխությունները, դատարանի կողմից կայացվող հրապարակային որոշումները կամ դրանց օրինականությունը: Նման գործընթացները (…) չեն կարող իրականացվել դռնփակ՝ արդարադատության շահի պաշտպանության բառացի մեկնաբանման համատեքստում:

(…)

(…) Օրենքների՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը և/կամ օրենսդրական բացը և/կամ օրենքի որոշակիությունը, այնքանով որքանով հնարավորություն է տրվում բացառապես արդարադատության շահի պաշտպանության նպատակով միջամտել արդար դատաքննության էական կոմպոնենտներից մեկի՝ օրենքով նախատեսված գործի հրապարակայնության սկզբունքի նկատմամբ, հակասահմանադրական է. հակասում են Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքներին»:

Դիմողը բարձրացնում է նաև այն հարցը, թե բացառապես արդարադատության շահի պաշտպանության նպատակով գործի դռնփակ քննությունն արդյո՞ք համահունչ է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենքով սահմանված չեն արդարադատության շահերի պաշտպանության նպատակով դռնփակ դատաքննություն իրականացնելու կոնկրետ թույլատրելի դեպքեր:

Կարգապահական վարույթի շրջանակում դատավորի նկատմամբ «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի կիրառման հարցի առնչությամբ Դիմողը, մասնավորապես, գտնում է. «(…) հատկապես գործի քննության հենց սկզբնական փուլում, երբ հատկապես դատավորը կարգապահական վարույթի սկզբնական փուլում, դեռևս չի ներկայացրել նյութեր և/կամ չի թույլատրվել ներկայացնել նյութեր, ապացույցներ, չի տվել բացատրություններ, չի ունեցել պաշտպանական ելույթ, ներկա չեն գտնվել փաստաբաններ, ներկայացուցիչներ, չի ապահովվել ներկայացուցիչների մասնակցությունը նաև հետագայում, և նրա նկատմամբ կիրառվում է դատական

նիստերից դահլիճից հեռացում սանկցիա, ապա նորմը կամ դրա նման մեկնաբանությունը իրավակիրառ պրակտիկայում հակասում է կողմերի հավասարության, մրցակցության, պաշտպանության, արդար դատաքննության Սահմանադրական իրավունքին»:

Դիմողը նշում է նաև. «(...) թեև մինչև դատական նիստի ավարտը՝ դատական սանկցիա կիրառելուց հետո, ժամանել են փաստաբաններ և նրանց մուտք արգելվել է խորհրդի նախագահի կողմից ու միաժամանակ բարձրաձայն ափսոսանք հայտնելով շարունակել է նիստը, սակայն նշվածը ինքնին ենթակա է գնահատման ու վիճարկման այլ ընթացակարգերով և սահմանադրական դատարանի առջև գործողությունների կամ որոշման օրինականության կամ իրավաչափության հարց չի բարձրացվում, այլև Սահմանադրական դատարանի առջև սույն դիմումով բարձրացվում է դրույթի իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը կամ օրենսդրական բացը, որը կիրառվել է ոլորտի իրավակիրառի՝ կարգապահական վարույթների գործերով իրավակիրառ պրակտիկայի միակ ձևավորողը բարձրագույն դատական խորհրդի կողմից»:

Դիմողը նշում է. «(...) դատական սանկցիայի կիրառման հետևանքով չի ապահովվել կողմի լսված լինելու իրավունքը, կողմը չի օգտվել նաև համապատասխան փուլում կարգապահական վարույթի, մեղադրանքի վերաբերյալ բացատրություններ տալու, ապացույցների հետազոտմանը մասնակցելու, եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքից, ինչի արդյունքում դադարեցվել են նրա լիազորությունները:

(...) եթե դիմողը չհեռացվեր դատական նիստերի դահլիճից, ընդ որում՝ անորոշ ժամանակով, ապահովվեր նրա գոնե լսված լինելու իրավունքը թե սանկցիայի և թե վարույթի վերաբերյալ ընդհանրապես, և նման մեկնաբանմամբ ու գործողություններով չսահմանափակվեր նրա իրավունքները վերոնշյալ իրավադրույթների կիրառմամբ, ապա կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորի նկատմամբ արդար դատաքննության ու բարի համբավի, ինչպես նաև հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքների նկատմամբ նման միջամտություն չէր կարող տեղի ունենալ»:

Ըստ Դիմողի՝ «(...) Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը, և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և/կամ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը և/կամ օրենսդրական բացը, մասնավորապես նաև այնքանով որքանով չեն նախատեսում կարգապահական վարույթով գործի քննության ընթացքում

դատավորի նկատմամբ դատական նիստերի դահլիճից հեռացում դատական սանկցիայի կիրառման բացառություն կամ ընձեռում են դրա հնարավորությունը, և/կամ այնքանով որքանով չեն նախատեսում սանկցիայի կիրառման տևողություն և/կամ այնքանով որքանով չեն նախատեսում դատական նիստի շարունակության անհնարինություն առանց փաստաբանի մասնակցության հակասահմանադրական են, հակասում են Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքներին»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող), մասնավորապես, գտնում է, որ Օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով և 90-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված արդարադատության շահերի պաշտպանության նպատակով դատական նիստի դռնփակ անցկացումը համապատասխանում է համաչափության սկզբունքին, իսկ դրանով ենթադրվող իրավունքների սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ:

Ըստ Պատասխանողի՝ «Դիմողն ըստ էության նորմի իր նկատմամբ ոչ իրավաչափ կիրառելու հարցն է բարձրացնում, առ այն, որ դատական նիստը դռնփակ կարգով անցկացնելու հիմքերը բավարար չեն եղել կամ բացակայել են, որպիսի հանգամանքը չի կարող նորմի սահմանադրականության հարց առաջացնել»:

Պատասխանողի դիտարկմամբ՝ վիճարկվող նորմերը կոչված են երաշխավորելու արդյունավետ դատաքննության իրականացումը. «Քննարկվող դեպքում սահմանված են որոշակի ընթացակարգեր (դռնփակ դատական նիստ, դատական նիստերի դահլիճից հեռացում) դատական գործի արդյունավետ քննության ապահովման նպատակով, որոնք միտված են և աջակցում են արդարադատության իրականացմանը, մասնավորապես դատական նիստի ընթացքում գործի արդյունավետ քննության իրականացմանը: Նշված ընթացակարգերը հնարավորություն են տալիս նաև կանխել իրավունքի հնարավոր չարաշահումները: Նշված ընթացակարգերը չեն սահմանափակում անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքը, այլ աջակցում են արդարադատության շահի պաշտպանությանը»:

Օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ Պատասխանողը գտնում է, որ «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական

սանկցիայի՝ վարույթի որոշ մասնակիցների նկատմամբ կիրառման անհնարինությունն ուղղված է գործի քննության ընթացքում ներկայացուցչի կամ պաշտպանի մասնակցության համար բավարար երաշխիքներ ապահովելուն, «(...) ինչը հնարավորություն է տալիս դատական նիստերի դահլիճից հեռացված անձին՝ լիարժեք իրացնել իր դատական պաշտպանության իրավունքը:

(...)

Անհրաժեշտ է նշել, որ բոլոր դեպքերում գործի քննության շարունակման անհնարինության կամ հնարավորության հարցը գնահատողական բնույթ է կրում և դատարանը պայմանավորված գործի հանգամանքներով կարող է նման որոշում կայացնել, հետևապես այնքանով որքանով նորմը չի սահմանում իմպերատիվ կարգավորում գործի քննությունը դադարեցնելու, դա չի կարող մեկնաբանվել, որ դատարանը զրկված է նման որոշում կայացնելուց: Հետևաբար ներկա կարգավորումների պայմաններում դատարանը կարող է ընդհատել գործի քննությունը, եթե բավարար հիմքեր են առկա:

Իմպերատիվ սահմանելու դեպքում, որ բոլոր դեպքերում ներկայացուցչի բացակայության պայմաններում գործի քննությունը պետք է ընդհատվի, վտանգ է առաջանում իրավունքի չարաշահման, ինչը կհանգեցնի գործերի քննության արհեստական ձգձգումների»:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթների առնչությամբ Դիմողի կողմից բարձրացված օրենսդրական բացի կամ հակասահմանադրական մեկնաբանման խնդիր առկա չէ, և Դիմողի պնդումներն ըստ էության անհիմն են:

Պատասխանողը խնդրում է սույն գործով ընդունել որոշում վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթների՝ հաշվի առնելով նաև դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները, սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրումներին.

- արդյոք Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանության պայմաններում, որի համաձայն՝ որպես դատարան հանդես գալու դեպքում Խորհրդի նիստերը կարող են անցկացվել դռնփակ՝

արդարադատության շահերի պաշտպանության նպատակով, նաև այն դեպքում, երբ դռնփակության համար հիմք հանդիսացող փաստերը կարգապահական վարույթի քննության պահին արդեն իսկ հանրայնացվել են, ապահովվո՞ւմ է անձի՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի իրացման հնարավորությունը՝ գործի հրապարակային քննության իրավունքի երաշխավորման համատեքստում,

- արդյոք Օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանության պայմաններում, որի համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի շրջանակում «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան կարող է կիրառվել՝ առանց երաշխավորելու նշված սանկցիայի կիրառումից հետո դատավորի ներկայացուցչի մասնակցության հնարավորությունը, համահո՞ւնչ է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի և Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Ժողովրդավարական հասարակությունում արդարադատության իրականացման հիմնարար սկզբունքներից է գործի հրապարակային քննությունը, որը Սահմանադրի կողմից Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդար դատաքննության իրավունքի բնորոշիչ բաղադրատարր է: Դատական գործի հրապարակայնությունը սահմանադրական իրավունքում ներկայանում է երկակի՝ որպես սկզբունք և որպես մարդու անհատական իրավունք: Որպես *սկզբունք*՝ այն, մի կողմից, հանդիսանում է դատարանների գործունեության հիմնաքար, արդարադատության ապահովման կենսական երաշխիք և իրավական պետության ու ժողովրդավարության կայացման առաջնային գրավական, մյուս կողմից՝ ենթադրում է հասարակության՝ դատական նիստերին մասնակցություն՝ ունենալով արդարադատության իրականացմանը հաղորդակցվելու, վերջինիս նկատմամբ հասարակական վերահսկողության հնարավորությունը, որն ուղղակիորեն բխում է ժողովրդավարության հրամայականից: Որպես *մարդու անհատական իրավունք*՝ այն, հանդիսանալով մարդու արդար դատաքննության իրավունքի էական բաղադրատարր, ենթադրում է անձի՝ իր նկատմամբ իրականացվող դատական վարույթի բաց և հրապարակային անցկացման իրավունքը:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքի իմաստավորման համատեքստում անդրադառնալով հրապարակայնության սկզբունքի իրավական նշանակությանը, ընդգծել է, որ այն պաշտպանում է դատավարության կողմերին հասարակական վերահսկողությունից զուրկ դատաքննության իրականացումից՝ ապահովելով (թե՛ վերադաս, թե՛ ստորադաս) դատարանների նկատմամբ հասարակական վստահությունը և, ըստ էության, ուղղված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակների կենսագործմանը *(Gautrin and Others v. France, 38/1997/822/1025–1028, 20.05.1998, § 42, Pretto and Others v. Italy, Application no.* 7984/77*, 08.12.1983, § 21):* Հրապարակայնության սկզբունքը ներառում է երկու կարևոր ասպեկտներ՝ դատական գործի հրապարակային քննությունը և գործով կայացված ակտի՝ դռնբաց նիստում հրապարակումը *(Tierce and Others v. San Marino, Applications nos. 24954/94, 24971/94 and 24972/94, 25.07.2000, § 93, Sutter v. Switzerland, Application no.* 8209/78*, 22.02.1984, § 27):*

Վերոնշյալի առնչությամբ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 2-ի ՍԴՈ-1467 որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «(…) Դատական քննության հրապարակայնության սկզբունքը ժողովրդավարական հասարակությունում արդարադատության իրականացման հիմնարար սկզբունքներից է, որի դերն ու նշանակությունն այն է, որ այս սկզբունքը լուրջ երաշխիք է դատարանի օրինական գործունեության ապահովման համար, հասարակության և զանգվածային լրատվամիջոցների ներկայությունը դատական գործի քննությանը զսպիչ գործոն է դատարանի համար»:

Սահմանադրական դատարանը, 2012 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-1020 որոշմամբ անդրադառնալով արդար դատաքննության իրավունքի իրացման երաշխիքներին և, մասնավորապես, հրապարակայնության սկզբունքին, նշել է. «(…) այդ իրավունքի իրացման նվազագույն և կարևոր երաշխիքներն են՝ **հրապարակային դատաքննությունը** (մասնավորապես՝ գործը քննող դատարանի, քննության առարկա գործի, քննության վայրի, ժամանակի, դատաքննության կարգի և այլնի մասին հրապարակային տեղեկությունները), ինչպես նաև **դատական ակտի պարտադիր հրապարակումը**:

(…)

(…) դատավարության հրապարակայնությունն առաջին հերթին նշանակում է հասարակական վերահսկողության իրականացման հնարավորություն դատավարության և դատարանի ընդունած ակտերի նկատմամբ»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատաքննության հրապարակայնությունն արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր է, որը կոչված է ապահովելու

- անձի՝ իր նկատմամբ կամ իր մասնակցությամբ իրականացվող դատաքննության՝ բաց, թափանցիկ և հասարակական վերահսկողությանը հասանելի լինելու իրավունքի կենսագործումը,

- արդարադատության նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների «մուտքը» դատարան,

- դատարանների՝ հանրության առջև հաշվետվողականությունը,

- դատավարության մասնակիցների և հանրության՝ դատարանի և դատավորի անկախության ու անաչառության նկատմամբ վստահության ամրապնդումը:

Այնուամենայնիվ, արդարադատության հրապարակայնության սկզբունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակումների՝ ելնելով հանրային շահերից և մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական նպատակներից: Ներպետական և միջազգային իրավական համակարգերում որոշակիացվել են այն իրավաչափ նպատակները, որոնց պաշտպանության համար հրապարակայնությունը կարող է սահմանափակվել, մասնավորապես՝ դատական գործերի դռնփակ քննությամբ: Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է. «2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով»:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով ևս ամրագրված են այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական նիստը կարող է անցկացվել դռնփակ. «(…) Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ

նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

Այսպիսով, հրապարակայնության սկզբունքը կարող է սահմանափակվել միայն **խիստ անհրաժեշտ** և **հատուկ հանգամանքների** առկայության պարագայում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **դատական վարույթի կամ դրա մի մասի դռնփակ անցկացումը Սահմանադրությամբ և օրենքով սահմանված նպատակների պաշտպանության դատավարական միջոց է, որով իրավակիրառին հնարավորություն է ընձեռվում կանխարգելել սահմանադրահիրավական պաշտպանության ներքո գտնվող շահերի հնարավոր թիրախավորումը, ինչը յուրաքանչյուր դեպքում պետք է լինի հնարավորինս իրական և կանխատեսելի:**

Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452 որոշմամբ արձանագրել է. «1) հրապարակայնության սկզբունքը թե՛ Սահմանադրության, թե՛ միջազգային իրավական ակտերի, թե՛ դատավարական օրենսդրության շրջանակներում դատավարական իրավունքների իրացման կարևորագույն և անխախտելի սկզբունք է (…),

(…)

3) հրապարակայնության սկզբունքը կարող է սահմանափակվել միայն Սահմանադրությամբ հստակ նախատեսված հանգամանքների առկայության դեպքում, իսկ սահմանափակումն օրենքով նախատեսված կարգին համապատասխան իրացվելու պայմաններում ևս չի կարող խոսք լինել հրապարակայնության սկզբունքի խախտման մասին»:

Դատական վարույթի կամ դրա մի մասի դռնփակ անցկացմամբ հրապարակայնության սկզբունքի սահմանափակման նպատակները, մի դեպքում, հետապնդում են ***մասնավոր շահերի*** պաշտպանություն՝ պայմանավորված վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ, մյուս դեպքում՝ ուղղված են ***հանրային շահերի*** պաշտպանությանը՝ պայմանավորված արդարադատության շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ:

Թեև հանրային և մասնավոր շահերը փոխպայմանավորված և փոխլրացնող են, և բոլոր դեպքերում մասնավոր շահերի պաշտպանության նպատակով դատական վարույթի կամ դրա մի մասի դռնփակ անցկացումը բխում է նաև հանրային շահերից՝ դրանով որևէ կերպ չի վիճարկվում հանրային շահերի ինքնաբավ բնույթը: **Հանրային շահերի, այդ թվում՝ արդարադատության շահի վերջնական շահառուն հանրությունն է, իսկ հանրային շահի հետապնդման պատասխանատուն՝ հանրային իշխանությունը, որին Սահմանադիրն օժտել է հանրային շահերի ապահովման և պաշտպանության սահմանադրական բացառիկ առաքելությամբ:** Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով թվարկված հանրային շահերը, այդ թվում՝ արդարադատության շահը, ունեն պետաիրավական հույժ կարևորություն, և այն դեպքերում, երբ դատական գործի դռնբաց քննությունը կարող է հանգեցնել վերջիններիս որևէ մեկի վտանգման, դատական վարույթը կամ դրա մի մասը պետք է անցկացվի դռնփակ:

Դատական նիստի դռնփակ անցկացմամբ հրապարակայնության սկզբունքի սահմանափակման համար Սահմանադրի կողմից նախատեսված կառուցակարգային պահանջների համաձայն՝ դատական վարույթը կամ դրա մի մասը կարող է անցկացվել դռնփակ **(1) *միայն դատարանի որոշմամբ*** և **(2) *օրենքով սահմանված դեպքերում և կարգով*:**

Սահմանադիրը, նախատեսելով խնդրո առարկա ինստիտուտի հիմնաքարային դրույթները, վերջիններիս օրենսդրական կոնկրետացումը/մանրամասնումը պատվիրակել է օրենսդրին, որն էլ նախատեսել է համապատասխան օրենսդրական կառուցակարգեր՝ հաշվի առնելով դատական գործերի առանձին տեսակներին բնորոշ նյութահիրավական և վարութային առանձնահատկությունները: Այսպես՝ Սահմանադրական օրենքի՝ Դիմողի կողմից վիճարկվող 90-րդ հոդվածի 6-րդ մասը վերոնշյալ սահմանադրական ընթացակարգային պահանջներին զուգահեռ՝ նախատեսում է, որ Խորհրդի կողմից դատական նիստը կարող է անցկացվել դռնփակ՝ *միայն Խորհրդի անդամի կամ վարույթի մասնակցի միջնորդությամբ*, ինչը պայմանավորված է Խորհրդի՝ որպես կոլեգիալ դատական մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակով: Նշվածի համատեքստում հարկ է արձանագրել, որ Դիմողի կողմից վիճարկվող դրույթները միմյանց հետ հարաբերվում են որպես ընդհանուր և հատուկ նորմեր. Սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, արտացոլված լինելով «Դատարանների կազմակերպման և

գործունեության սկզբունքները» վերտառությամբ 2-րդ գլխի ներքո, բովանդակում է դռնփակ դատական նիստ անցկացնելու օրենսդրական հիմքերը, որոնք վերաբերելի են, առհասարակ, բոլոր տեսակների դատական վարույթներին՝ անկախ ճյուղային պատկանելությունից: Իսկ Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասն ամրագրում է, մասնավորապես, Խորհրդի կողմից որպես դատարան հանդես գալիս անցկացվող դատական նիստերի դռնփակության հիմքերը՝ 11-րդ հոդվածում սահմանված չափանիշներով: Երկու օրինադրույթներն էլ բխում են Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասից և դրա օրենսդրական արտացոլումն են:

Այդուհանդերձ, անկախ դատական գործերի առանձին տեսակներին բնորոշ նյութահրավական և վարութային առանձնահատկություններից՝ հրապարակայնության սկզբունքի այնպիսի ինտենսիվ սահմանափակումը, ինչպիսին է դատական նիստի դռնփակ անցկացումը, պետք է համապատասխանի իրավաչափության ներքոնշյալ չափանիշներին.

1. Պետք է պայմանավորված լինի սահմանադրահիրավական պաշտպանության ներքո գտնվող շահերի երաշխավորման նպատակով: Դատական նիստի դռնփակ անցկացումը պետք է իրապես հետապնդի Սահմանադրությամբ և օրենքով պաշտպանության տակ առնված շահերի երաշխավորման նպատակ: Դատական նիստի դռնփակ անցկացմամբ հրապարակայնության սկզբունքի սահմանափակման բոլոր դեպքերը՝ պայմանավորված (թելադրված) օրենքով նախատեսված պաշտպանության ենթակա շահերից զատ այլ դրդապատճառներով, ոչ իրավաչափ են և հակասում են խնդրո առարկա դրույթի սահմանադրահիրավական նշանակությանը: Դատական նիստը դռնփակ անցկացնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պետք է առաջնորդվի բացառապես Սահմանադրությամբ նախատեսված իրավաչափ նպատակներով՝ վեր մնալով դատական իշխանության անկախությունն ու անաչառությունը կասկածի տակ դնող, դատական իշխանության հեղինակությունը թիրախավորող և վերջինիս նկատմամբ հանրության վստահությունը խարխլող ու արդարադատության իրականացումը խոչընդոտող տարաբնույթ ազդակներից ու գործոններից: **Դատական նիստի դռնփակ լինելը չպետք է քողարկող միջոց հանդիսանա «ստվերային արդարադատության» իրականացման համար:**

Հրապարակայնության սկզբունքի ցանկացած սահմանափակում, որն իրապես չի հետապնդում Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով թվարկված որևէ շահի պաշտպանության նպատակ, հանգեցնում

է դատական վարույթի հրապարակայնության սկզբունքի խախտման:

2. Պետք է կիրառվի որպես Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ շահի պաշտպանության վերջին հնարավոր միջոց, երբ գործի հրապարակային քննությունն անդառնալի վնաս կհասցնի սահմանադրաիրավական պաշտպանության ներքո գտնվող խնդրո առարկա շահին:

3. Պետք է լինի արդյունավետ՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով թվարկված որևէ շահի պաշտպանության առումով: Եթե դատական վարույթի դռնփակ անցկացումը չի կարող ապահովել թվարկված շահերի ապահովումը կամ պաշտպանությունը, ապա դրա կիրառման հետևանքով հրապարակայնության սկզբունքի սահմանափակումն ըստ էության իմաստազրկվում է: Որպեսզի դատական վարույթի կամ դրա մի մասի դռնփակ անցկացումը հանդիսանա արդյունավետ միջոց նախանշված նպատակների և շահերի պաշտպանության համար, անհրաժեշտ է, որ ենթադրյալ սպառնալիք պարունակող փաստական հանգամանքների հրապարակայնացումը դատական վարույթի ընթացքում, որոնց առկայությամբ է պայմանավորվում դատական գործերի դռնփակ քննության անհրաժեշտությունը, թելադրված լինի հրապարակայնության սահմանափակման միջոցով պաշտպանվող շահերին սպառնացող վտանգի՝ *իրական, ոչ վերացական և կանխատեսելի* բնույթից:

Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերհանել արդարադատության շահերի պաշտպանության նպատակով դատական քննության դռնփակ անցկացման սահմանադրաիրավական առանձնահատկությունները:

«*Արդարադատության շահ*» հասկացությունը բազմաշերտ և բազմաբնույթ է. արդարադատության շահեր պարունակող հասարակական հարաբերությունների կոնկրետ, սպառիչ շրջանակը կանխատեսելը և բացարձակ հստակությամբ որոշակիացնելը գործնականում անհնար է: Համապատասխանաբար՝ գործի քննության ընթացքում կարող են ի հայտ գալ այնպիսի հանգամանքներ, որոնք այս կամ այն կերպ կարող են հանգեցնել արդարադատության շահի վտանգմանը, և յուրաքանչյուր դեպքում ենթադրյալ վտանգի աղբյուրն ու արդարադատության շահերի թիրախավորման դրսևորումները կարող են լինել բազմապիսի և բազմաբնույթ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ այդպիսի հանգամանքների շրջանակի սպառիչ որոշակիացումը հանրային շահերի ձևավորման և իմաստավորման հարափոփոխ գործընթացի համատեքստում թեպետ

նպատակահարմար է, սակայն օրենսդրական քաղաքականության տեսանկյունից՝ անհնար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդարադատության շահերի պաշտպանության նպատակով դատական նիստի դռնփակ անցկացման համար հիմք հանդիսացող հանգամանքները յուրաքանչյուր դեպքում *ենթակա են գնահատման/որակման դատարանի կողմից,* ինչն իրավակիրառին հնարավորություն է ընձեռում համապատասխան իրավաչափ հակազդեցություն դրսևորել արդարադատության շահերը թիրախավորող հանգամանքների նկատմամբ՝ սահմանադրաիրավական նպատակների պաշտպանության նկատառումով:

Հետևաբար՝ վերոնշյալի համատեքստում անդրադառնալով Դիմողի այն հարցադրմանը, ըստ որի՝ արդյո՞ք բացառապես արդարադատության շահի պաշտպանության նպատակով գործի դռնփակ քննությամբ հրապարակայնության սկզբունքի սահմանափակումը համապատասխանում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին այն պարագայում, երբ օրենքով սահմանված չեն արդարադատության շահերի պաշտպանության նպատակով դռնփակ դատաքննության իրականացման կոնկրետ թույլատրելի դեպքեր, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն հարցի առնչությամբ իրավական որոշակիության խնդիր չի ծագում:

Այդուհանդերձ, վերոնշյալը որևէ կերպ *չի նշանակում, որ օրենսդիրը դատարանին վերապահել է բացարձակ հայեցողություն «արդարադատության շահ» հասկացության մեկնաբանման առումով*: Արդարադատության շահի պաշտպանության նպատակով հրապարակայնության սկզբունքի սահմանափակմամբ դատական նիստի դռնփակ անցկացումը յուրաքանչյուր դեպքում պետք է թելադրված լինի դատարանի վարույթում քննվող կոնկրետ գործով արդարադատության արդյունավետ և անխոչընդոտ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու անհրաժեշտությամբ**:** Այդ համատեքստում դատարանը պետք է վերհանի, իր գնահատմամբ, արդարադատության շահը վտանգող հանգամանքներն ու պատշաճ պատճառաբանությամբ հիմնավորի՝ ***դռնփակ քննության առիթ հանդիսացած հանգամանքներն արդյոք սպառնո՞ւմ են գործի քննության արդյունավետությանը կամ դրա անխոչընդոտ ընթացքին,*** և նման վտանգի առկայությամբ դատական վարույթի հրապարակայնության սահմանափակումն ***արդյոք կարո՞ղ է ապահովել այդ շահի պաշտպանությունը:***

Դատարանի կողմից նշված հանգամանքների և արդարադատության շահին սպառնացող հնարավոր վտանգի միջև առկա պատճառահետևանքային կապի վերհանումը և դատական վարույթի հրապարակայնության սահմանափակման առնչությամբ որոշման պատճառաբանությունները, իհարկե, կոնկրետ դատարանի կողմից պատճառաբանությունների խորության և ծավալի որոշակիացման հարցում հայեցողության պահպանմամբ, առանցքային նշանակություն ունեն դատական վարույթի դռնփակ անցկացմամբ հրապարակայնության սկզբունքի սահմանափակման սահմանադրաչափության ապահովման համար՝ հաշվի առնելով, որ դատական վարույթի հրապարակայնության ապահովումը սահմանադրական ընդհանուր կանոն է, որից բացառությունները յուրաքանչյուր կոնկրետ գործով և դեպքում պետք է ունենան համոզիչ հիմնավորում:

Սույն գործի հանգամանքների լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ արդարադատության շահի պաշտպանության նպատակով դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու վերաբերյալ որոշմամբ դատարանը պետք է վերհանի այն հանգամանքները, որոնք պարունակում են արդարադատության շահի վտանգման սպառնալիք: *Արդարադատության շահի դեմ վտանգի չեզոքացումը չպետք է լինի ժամանակավրեպ և առարկայազուրկ*. արդարադատության շահի նկատմամբ վտանգ պարունակող հանգամանքներն ու դրանցով պատճառվող վնասը պետք է լինեն իրական:

Վերոնշյալի համատեքստում անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Խորհրդի կողմից կարգապահական վարույթի դռնփակ քննությամբ հրապարակայնության սկզբունքի սահմանափակումը հիմնվել է Խորհրդի այն դիրքորոշման վրա, որի համաձայն՝ դատավորի կողմից հարցազրույցում արտահայտված՝ Խորհրդի գործունեությունը քննադատող կարծիքի կրկնությունը դռնբաց դատական նիստում, կարող է թիրախավորել դատական իշխանության հեղինակությունն ու այդպիսով՝ վնասել արդարադատության շահերը: Այնինչ, դատական իշխանության հեղինակությունը թիրախավորելու հանգամանքից զերծ, կոնկրետ կարգապահական վարույթով արդարադատության իրականացման արդյունավետության և դրա ընթացքը խոչընդոտելու որևէ հանգամանք չի վկայակոչվել: Ավելին, Դիմողի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել և հաջորդաբար Բարձրագույն

դատական խորհրդում իրականացվել է հենց իր կողմից թույլ տրված արտահայտություններով դատավորի վարքագծի կանոնների խախտումների առնչությամբ, որի վերաբերյալ դատական վարույթի հրապարակայնության սահմանափակման որոշման հիմքում Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով «արդարադատության շահի» պաշտպանության նպատակի համար չի ներկայացվել ո՛չ ապացույցների ձեռքբերման, հետազոտման և դրանց ամբողջականությունը և անխախտելիությունը պաշտպանելու, ո՛չ էլ ինքնին վարույթի ընթացքը խոչընդոտելու վտանգ պարունակող այլ հանգամանք: Արձանագրվածով հանդերձ, Սահմանադրական դատարանը նկատում է նաև, որ Դատավորի կողմից կատարված արտահայտությունները, որոնք հիմք էին հանդիսացել կարգապահական վարույթ հարուցելու համար, արդեն իսկ հանրայնացվել էին՝ տարածվելով զանգվածային լրատվության միջոցներով, և հանրությանը հայտնի էին դարձել նախքան կարգապահական վարույթի հարուցումը: Այսինքն՝ արդարադատության շահերի պաշտպանության նպատակով կարգապահական վարույթը դռնփակ դատական նիստում իրականացնելու մասին որոշման կայացման պահին նման արտահայտությունները, որոնց իրավաչափության գնահատականը վերապահված է Բարձրագույն դատական խորհրդի իրավասությանը, կարգապահական վարույթի հրապարակայնության սահմանափակման վերաբերյալ որոշման մեջ այլ հիմնավորման բացակայության պայմաններում արդեն իսկ ունեցել էին իրենցով դատական իշխանության հեղինակության նկատմամբ Բարձրագույն դատական խորհրդի գնահատականով վնասելու ազդեցությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Խորհրդի կողմից Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի վիճարկվող 6-րդ մասին տրված մեկնաբանությունը չի համապատասխանում նշված նորմի սահմանադրաիրավական նշանակությանն ու բովանդակությանը և այդպիսով չի ապահովում Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ դատական վարույթի հրապարակայնության սահմանափակման պահանջները՝ հանգեցնելով Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գործի հրապարակային քննության իրավունքի խախտման:

Ողջ վերոշարադրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ «արդարադատության շահ» ձևա-

կերպումը վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդում քննվող կոնկրետ կարգապահական գործով արդարադատության արդյունավետ և անխոչընդոտ իրականացմանը:

5.2. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձի՝ իր նկատմամբ իրականացվող վարույթին մասնակցելու իրավունքը համապատասխան հիմքերի առկայության պարագայում կարող է սահմանափակվել, և հաշվի առնելով սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակները՝ նշված իրավունքի սահմանափակմանը կանդրադառնա «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի կիրառման համատեքստում:

Դատական սանկցիան դատական վարույթում գործի արդյունավետ քննությունը խոչընդոտող և/կամ դատական իշխանությունն արատավորող վարքագծի դրսևորման առթիվ դատավարության մասնակիցների, նրանց ներկայացուցիչների և դատական նիստին ներկա այլ անձանց նկատմամբ դատարանի կողմից օրենքով նախատեսված հիմքերով և կարգով կիրառվող դատավարական միջամտության միջոց է: Յուրաքանչյուր դեպքում դատական սանկցիան հանդես է գալիս որպես վարույթի մասնակցի հակաիրավական վարքագծի առնչությամբ ցուցաբերվող դատավարական հակազդեցության միջոց:

Դատական սանկցիաների կիրառումը, միտված լինելով Սահմանադրությամբ և օրենքներով նախանշված իրավաչափ շահերի պաշտպանությանը, գտնվում է դատարանի ողջամիտ հայեցողության շրջանակներում: Այնուամենայնիվ, դատարանի սույն հայեցողությունը կաշկանդված է կողմերի դատավարական իրավունքների, ի մասնավորումն նաև՝ լսված լինելու իրավունքի երաշխավորման հրամայականով, հատկապես, երբ խոսքը վերաբերում է «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի կիրառմանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է համապատասխան հիմքերի առկայության պարագայում դատական վարույթում կիրառման ենթակա դատական սանկցիաների տեսակներն ու դրանց կիրառման ընդհանուր կարգը, իսկ Սահմանադրական օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը դատական սանկցիաների կիրառման առանձնահատկությունների շրջանակներում սահմանում է «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի նկատմամբ անձեռնմխելիությամբ օժտված դատավարության մասնակիցների շրջանակը:

Վարույթի մասնակցի հակաիրավական վարքագիծը կարող է դրսևորվել ինչպես դատավարական նորմերի խախտմամբ, այնպես

էլ դատավարական իրավունքների չարաշահմամբ: Օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ *կողմերը պետք է բարեխղճորեն օգտվեն իրենց դատավարական իրավունքներից և բարեխղճորեն կատարեն իրենց դատավարական պարտականությունները:* Նշվածը հավասարապես վերաբերելի է վարույթի բոլոր մասնակիցներին. նրանց կողմից դատավարական նորմերի խախտումների և իրավունքների չարաշահման դրսևորումները կարող են հիմք հանդիսանալ դատական սանկցիաների կիրառման համար:

Քննարկվող դատավարական ինստիտուտի ընդհանուր տրամաբանության համաձայն՝ դատական սանկցիաները պետք է կիրառվեն միայն անհրաժեշտության դեպքում: Նշվածի մասին է վկայում նաև Սահմանադրական օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ *դատավորը պարտավոր է իր վարքագծով կանխել և նվազագույնի հասցնել դատական սանկցիա կիրառելու անհրաժեշտությունն ու դեպքերը*: Դատարանը դատական սանկցիա կիրառելիս պետք է առաջնորդվի բացառապես դրա սահմանադրաիրավական նշանակությամբ ու դատավարական անհրաժեշտությամբ:

Դատական սանկցիայի կիրառումը կոնկրետ հանգամանքներում պետք է կանխատեսելի լինի վարույթի մասնակցի համար: Այսպես՝ Օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասով և Սահմանադրական օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ մինչ դատական սանկցիայի կիրառումը դատավորը պետք է հասկանալի ձևով նախազգուշացնի դատական սանկցիա կիրառելու դատարանի իրավասության մասին, ինչպես նաև պարզաբանի այն կիրառելու հիմքերը և հետևանքները, ինչը վարույթի մասնակցի համար ապահովում է իր կողմից դրսևորվող հակաիրավական վարքագծի բացասական հետևանքների կանխատեսելիությունը:

Ելնելով անձի դատավարական իրավունքների երաշխավորման նկատառումներից՝ Օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող անձի նկատմամբ դատական սանկցիա կիրառելիս դատարանն անհրաժեշտության դեպքում նրան պետք է տրամադրի արտահայտվելու հնարավորություն, ինչը, սակայն, բացարձակ բնույթ չի կրում և անհրաժեշտության դեպքում նույնպես կարող է սահմանափակվել: Նշված դրույթի համաձայն՝ տուգանք կիրառելիս կամ վարչական դատավարությանը մասնակցող անձին դատական նիստերի դահլիճից հեռացնելիս արտահայտվելու հնարավորություն չտրամադրելը պետք է հիմնավորվի դատարանի կողմից:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ **դատական սանկցիայի կիրառումն ինքնին, ինչպես նաև սանկցիայի կիրառումից առաջ արտահայտվելու հնարավորության սահմանափակումը յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնավորված և պատճառաբանված լինեն դատարանի կողմից, ինչն իրավունքի սահմանափակման իրավաչափության կանխորոշիչ նախապայման է:**

Օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե անձն ընդունում է իր արարքի հակաիրավականությունը և հայցում դատարանի ներողամտությունը, ապա վերջինիս նկատմամբ դատական սանկցիա կարող է չկիրառվել, իսկ 5-րդ մասին համապատասխան՝ եթե դատարանի կողմից անձին տրամադրված արտահայտվելու իրավունքը չարաշահվում է՝ դատական սանկցիայի կիրառման հիմք հանդիսացող արարքը շարունակելու կամ նոր արարք կատարելու նպատակով, ապա դատարանն իրավասու է կիրառել առավել խիստ դատական սանկցիա: Այսպես՝ նկատողությանն ինտենսիվության առումով հաջորդում է «դատական նիստերի դահլիճից հեռացում» սանկցիան, որը ենթադրում է արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների սահմանափակում, ուստի՝ պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ սանկցիայի գործադրմամբ անհնար է հասնել հետապնդվող իրավաչափ նպատակին: Այս պարագայում դատարանն իրավասու է սահմանափակել անձի՝ վարույթին մասնակցելու իրավունքը՝ նրա նկատմամբ կիրառելով ավելի խիստ սանկցիա՝ «դատական նիստերի դահլիճից հեռացում»:

Վերոնշյալի համատեքստում **Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան, հանդիսանալով անձի՝ դատավարական իրավունքների սահմանափակման ինտենսիվ միջոց, պետք է կիրառվի միայն առանձնահատուկ դեպքերում, երբ ավելի մեղմ դատական սանկցիայի գործադրմամբ անհնար է արդյունավետ կերպով հակազդել վարույթի մասնակցի ոչ իրավաչափ վարքագծին. խնդրո առարկա նորմի հակառակ ընկալման պարագայում կխեղաթյուրվի դատական սանկցիայի դատավարական առաքելությունը:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «դատական նիստերի դահլիճից հեռացում» սանկցիայի կիրառումը չպետք է հանգեցնի կողմերի մրցակցության, ըստ այդմ՝ նաև շահերի ներկայացվածության սկզբունքների լիակատար արգելափակման: Դատարանը պետք է գործադրի բոլոր հնարավոր և անհրաժեշտ ջանքերը՝ դահլիճից հեռացվող կողմի շահերի բավարար

ներկայացվածությունն ու պաշտպանվածությունն ապահովելու համար (օրինակ՝ կողմի ներկայացուցչին հրավիրելով կամ անհրաժեշտության դեպքում, երբ առանց կողմի ներկայացվածության անհնար է շարունակել դատաքննությունը, դատական նիստը հետաձգելով), իսկ դրա անհնարինության կամ գործադրված միջոցառումների ապարդյուն լինելու դեպքում՝ նոր միայն շարունակի գործի քննությունը՝ շահագրգիռ կողմի բացակայությամբ:

Դատարանի կողմից վարույթի մասնակցի ոչ իրավաչափ վարքագծի առնչությամբ համարժեք հակազդեցության միջոցի կիրառումը հույժ կարևոր է՝ խնդրո առարկա նորմերի նպատակային իրացումն ապահովելու անհրաժեշտության առումով:

Դատավարական նորմերը, և հատկապես՝ իրավունքների սահմանափակում նախատեսող դրույթները, դատարանների կողմից չպետք է ընկալվեն և մեկնաբանվեն մեկուսի, այլ պետք է ենթարկվեն համակարգային մեկնաբանման՝ սահմանադրահիրավական, ընդհանուր դատավարական և ճյուղային դատավարական օրենսդրության հիմնարար և գերակա սկզբունքների իմաստավորման լույսի ներքո՝ այն գիտակցմամբ, որ դատավարական բոլոր նորմերը, այդ թվում՝ հարկադրանքի բնույթ կրող միջոցները, ի սկզբանե բխում են այդ սկզբունքներից և ուղղված են դրանց պատշաճ կենսագործմանը: Հետևաբար՝ դատավարական նորմերի՝ այդ սկզբունքներին հակասող մեկնաբանումն ու կիրառումը հավակնում են հակասահմանադրական որակման:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալը հավասարապես վերաբերելի է նաև դատավորների կարգապահական վարույթներին, որոնք առանձնանում են ոչ միայն սուբյեկտային կազմի և գործունեության ոլորտի յուրահատկություններով, այլև հանրային շահի բարձր գործակցով: Խորհրդի սահմանադրահիրավական առաքելության կիզակետը դատարանների և դատավորների անկախության երաշխավորումն է: Խորհուրդը Սահմանադրությամբ օժտված է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորների լիազորությունները դադարեցնելու սահմանադրահիրավական բացառիկ մենաշնորհով, որի շրջանակներում հանդես է գալիս որպես դատարան:

Այդ համատեքստում, ***Խորհուրդը յուրաքանչյուր դեպքում պետք է կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի նկատմամբ ցուցաբերի վերջինիս բարձր կարգավիճակին համարժեք***

վերաբերմունք: Խորհրդի սահմանադրաիրավական առաքելությունը պետք է իր պատշաճ կենսագործումը գտնի դատավորի անկախության և հեղինակության ապահովման, մասնագիտական արժանապատվության և արդարադատության շահերի գերակայության գիտակցման համատեքստում: Համապատասխանաբար՝ ***կարգապահական վարույթում կողմի կարգավիճակում հանդես եկող դատավորը նույնպես պետք է առաջնորդվի իր մասնագիտական կարգավիճակի բարձր հեղինակությամբ՝ դրսևորելով իր սահմանադրաիրավական առաքելության ոգուն համահունչ վարքագիծ և ընդգծված հարգանք արդարադատության և այն իրականացնելու իրավասությամբ օժտված ատյանների նկատմամբ:*** Նշվածը վերաբերելի է կարգապահական վարույթի ցանկացած փուլի և դատավարական ցանկացած գործողության իրականացմանը:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը վերջնարդյունքում կարող է հանգեցնել իրավունքներին այնպիսի ինտենսիվ միջամտության, ինչպիսին է դատավորի լիազորությունների դադարեցումը, ինչն առնչվում է ինչպես կոնկրետ անձի, այնպես էլ ողջ դատական իշխանության շահերին՝ *ընդգծելով Խորհրդի կողմից շահերի պատշաճ հավասարակշռման անհրաժեշտությունը:*

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի շրջանակներում, հաշվի առնելով խնդրո առարկա իրավահարաբերությունների կարևորությունը, ինչպես նաև դրանց նկատմամբ հանրային արձագանքի զգայունությունը, Խորհրդի կողմից դատական սանկցիաների կիրառումը պետք է տեղ գտնի բացառապես ծայրահեղ անհրաժեշտության պարագայում՝ դատական վարույթներին առաջադրվող սահմանադրաիրավական և դատավարական սկզբունքների խստիվ պահպանմամբ: Դատավորի նկատմամբ «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան Խորհրդի կողմից պետք է մեկնաբանվի և կիրառվի իրավունքների սահմանափակման սահմանադրաիրավական չափանիշների խստիվ պահպանմամբ, ինչպես նաև պետք է գործադրվեն բոլոր հնարավոր ջանքերը դատավորի դատավարական իրավունքների պաշտպանության համար՝ կողմերի հավասարության և դատավորի լսված լինելու իրավունքի ապահովման համատեքստում: Հաշվի առնելով «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի կիրառմամբ դատավորի համար առաջացող բացասական հետևանքների ինտենսիվությունը՝ Խորհրդի կողմից պետք է գործարկվեն համարժեք դատավարական լծակներ՝ կողմի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ արդար դատաքննության սահմանադրական իրավունքի երաշխավորումը պահանջում է, որ յուրաքանչյուր դեպքում՝ «դատական նիստերի դահլիճից հեռացում» սանկցիայի կիրառման հարցին զուգահեռ, Խորհուրդը միջոցներ ձեռնարկի դատավորի լսված լինելու իրավունքն ապահովելու համար՝ երաշխավորելով դատավորի ներկայացուցչի մասնակցությունը կարգապահական վարույթին, և նույնիսկ նման հնարավորության բացակայության պայմաններում առնվազն ապահովի, որ կողմի դիրքորոշումները, եթե հնարավոր չէ նրա մասնակցությունը վարույթին, ներկայացվեն առնվազն գրավոր կերպով:

Այսպես՝ «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան կիրառելիս Խորհուրդը՝

1. պետք է նկատի ունենա իր սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկություններն ու, առավելապես, իր կողմից կայացվող որոշումների անբողոքարկելիությունը (տվյալ պահին գործող իրավակարգավորումների պայմաններում),

2. պետք է հաշվի առնի խնդրո առարկա սանկցիայի գործադրման հետևանքային ազդեցությունն այն պարագայում, երբ այն գործադրվում է դատական նիստի հրապարակայնության այնպիսի ինտենսիվ սահմանափակման պայմաններում, ինչպիսին է դռնփակ դատաքննության իրականացումը,

3. հաշվի առնելով կիրառվող միջոցի հետևանքային ազդեցությունը՝ պետք է ցուցաբերի ընդգծված զգուշավորություն կողմի լսված լինելու իրավունքի կենսագործման համար ողջամիտ հնարավորություն ապահովելու համար:

Վերոնշյալ սկզբունքները Սահմանադրական դատարանը սույն գործի անհատական հանգամանքների նկատմամբ տեղայնացնելու շրջանակում արձանագրում է, որ «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան Խորհրդի կողմից Դատավորի նկատմամբ կիրառվել է վերջինիս ներկայացուցիչների բացակայության պայմաններում, և Դատավորի՝ դատական նիստերի դահլիճից հեռացվելուց շուրջ 20 րոպե անց սույն գործի դատաքննությունն ավարտվել է: Այսինքն՝ Խորհրդի կողմից իրականացված վարույթում իր դատական լիազորությունների գործադրման և որոշումների իրավաչափության նկատմամբ հարգանքով հանդերձ, Սահմանադրական դատարանը նկատում է, որ Դիմողի կողմից իր լսված լինելու իրավունքի իրացման առնչությամբ Խորհրդի կողմից կիրառված սանկցիայի ազդեցությամբ դատական նիստերի

դահլիճում վարույթին մասնակցելու անհնարինության պայմաններում Դիմողն ի վիճակի չի եղել ներկայացնել իր դիրքորոշումները նույնիսկ գրավոր կերպով՝ առանց նիստին անձամբ կամ իր ներկայացուցիչների միջոցով մասնակցելու՝ իր հեռացման և դատաքննության ավարտի՝ իր կողմից գրավոր դիրքորոշումներ ներկայացնելու համար ոչ ողջամիտ, եթե ոչ անհնարինությունը սահմանագծող, սեղմ ժամկետի պատճառով:

Ամբողջացնելով սույն սահմանադրաիրավական վեճի պատկերը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթի նմանօրինակ մեկնաբանման և կիրառման հետևանքով ոչ իրավաչափ կերպով սահմանափակվել է Դատավորի՝ շահերի ներկայացվածության երաշխավորման իրավունքը, ինչպես նաև սահմանափակվել է Դատավորի լսված լինելու իրավունքը, ինչի վկայությունն է խնդրո առարկա սանկցիայի կիրառման հետևանքով առաջացած՝ նրա կողմից իր դիրքորոշումը, առնվազն եզրափակիչ խոսքի միջոցով ներկայացնելու անհնարինությունը: Այս համատեքստում Սահմանադրական դատարանը շեշտադրում է, որ խնդրո առարկա դատական սանկցիայի կիրառումը բոլոր դեպքերում չպետք է հանգեցնի անձի լսված լինելու իրավունքի չեզոքացման:

Ողջ վերոշարադրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի շրջանակներում «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան կարող է կիրառվել այն պայմաններում, երբ Խորհուրդը կգործադրի բոլոր հնարավոր և անհրաժեշտ ջանքերը՝ դահլիճից հեռացվող դատավորի լսված լինելու իրավունքն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ «արդարադատության շահ» ձևակերպումը վերաբերում է Բարձրագույն

դատական խորհրդում քննվող կոնկրետ կարգապահական գործով արդարադատության արդյունավետ և անխոչընդոտ իրականացմանը:

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի շրջանակներում «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան կարող է կիրառվել այն պայմաններում, երբ Բարձրագույն դատական խորհուրդը կգործադրի բոլոր հնարավոր և անհրաժեշտ ջանքերը՝ դահլիճից հեռացվող դատավորի լսված լինելու իրավունքն ապահովելու համար:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասը և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը Դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման մեջ նշված մեկնաբանություններից տարբերվող մեկնաբանություններով:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

21 մայիսի 2024 թվականի
ՍԴՈ-1729

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ (ՏՐՄԱՆ), ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 4 հունիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար Գ. Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի հուլիսի 31-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառու-

թյան և մարման կանոնների մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի ապրիլի 12-ի N 483-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի հուլիսի 31-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության և մարման կանոնների մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի ապրիլի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության և մարման կանոնների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի հուլիսի 31-ին Մոսկվայում՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի օգտագործման պրակտիկան ընդլայնելու և դրանց կայուն շրջանառությունն ապահովելու նպատակով:

Համաձայնագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև (այսուհետ՝ անդամ պետություններ):

Համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է և ընդգրկվում է Միության իրավունքի կազմում:

2. Համաձայնագիրը կարգավորում է Միության շրջանակներում պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության և

մարման հետ կապված իրավահարաբերությունները և սահմանում է պահեստային վկայագրերին ներկայացվող պահանջները:

Միության շրջանակներում պահեստային վկայագրերի թողարկումը (տրամադրումը), շրջանառությունը և մարումն իրականացվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով Համաձայնագրի դրույթները:

Գյուղատնտեսական արտադրանքի այն տեսակները, որոնց առնչությամբ թողարկվում (տրվում) են պահեստային վկայագրերը, սահմանվում են անդամ պետության օրենսդրությամբ:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. ճանաչել այլ անդամ պետություններում թողարկված (տրված), պահեստային վկայագրերի ռեեստրներում ներառված և Համաձայնագրի պահանջներին համապատասխանող պահեստային վկայագրերը (հոդված 2, կետ 5),

3.2. ապահովել, որ որպես պահման համար որոշակի քանակի և որակի գյուղատնտեսական արտադրանքի ընդունման հաստատում՝ պահեստի կողմից թողարկվի (տրվի) պահեստային վկայագիր՝ ձևակերպված ռուսերենով և հայերենով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում (հոդված 3, կետ 1),

3.3. ապահովել, որ պահեստային վկայագիրը պարունակի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված պարտադիր տեղեկությունները (վավերապայմանները) (հոդված 3, կետ 2),

3.4. ապահովել, որ թողարկված (տրված) պահեստային վկայագրի մասին տեղեկությունները գրանցվեն պահեստային վկայագրերի ռեեստրում, իսկ պահեստային վկայագրի մասով իրավունքների փոխանցման դեպքում՝ ապահովել, որ պահեստային վկայագրերի ռեեստրում կատարվի համապատասխան գրառում (հոդված 4, կետեր 1, 2),

3.5. ՀՀ օրենսդրությամբ սահմանել պահեստային վկայագրերի ռեեստրի ձևավորման և վարման կարգը՝ հաշվի առնելով Համաձայնագրի 4-րդ հոդվածի դրույթները (հոդված 4, կետ 4),

3.6. երաշխավորել, որ պահեստային վկայագրերի ռեեստրում պարունակվող պահեստային վկայագիրը գրավ դնելու մասին

տեղեկությունների առկայության դեպքում պահեստային վկայագիր տիրապետողը պահեստից չի կարող վերցնել գյուղատնտեսական արտադրանքը՝ մինչև գրավով ապահովված պարտավորությունների մարումը (հոդված 6, կետ 2),

3.7. ՀՀ օրենսդրությամբ սահմանել պահատվության հանրային պայմանագրի տիպային ձևը՝ հաշվի առնելով դրանում Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկությունների ներառումը (հոդված 7),

3.8. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Ինտերնետ» տեղեկատվական հեռահաղորդակցական ցանցում Համաձայնագրի 8-րդ հոդվածում սահմանված տեղեկությունների տեղադրումը (հոդված 8),

3.9. ապահովել պահեստների կողմից պահեստային վկայագրերի մասով պարտավորությունների կատարման իրականացումը ՀՀ օրենսդրությանը համապատասխան և նախատեսել կազմակերպա-իրավական միջոցառումների համալիր, որոնք ուղղված են պահեստների կողմից թողարկված (տրված) պահեստային վկայագրերի մասով պարտավորությունները՝ դրանց կողմից չկատարվելուց պահեստային վկայագրերը տիրապետողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, այդ թվում՝ ՀՀ պահեստային վկայագրերի մասով պարտավորությունների կատարման երաշխավորման ֆոնդի (ֆոնդերի) ձևավորման կամ պահեստային վկայագրերը տիրապետողների առջև պահեստների քաղաքացիաիրավական պատասխանատվության ապահովագրման միջոցով (հոդված 9, կետ 1),

3.10. ՀՀ օրենսդրությանը համապատասխան ՀՀ տարածքում ապահովել հսկողություն՝ պահեստների կողմից պահեստային վկայագրերի թողարկման (տրման) և մարման կանոնների, գյուղատնտեսական արտադրանքի պահման կանոնների, անվտանգության պահանջների և գյուղատնտեսական արտադրանքի քանակական ու որակական հաշվառումը վարելու պահանջների պահպանման նկատմամբ (հոդված 9, կետ 3),

3.11. ապահովել այն գյուղատնտեսական արտադրանքի որակի փորձաքննության անցկացումը, որի համար Հայաստանի Հանրապետությունում թողարկվում (տրվում) են պահեստային վկայագրերը (հոդված 9, կետ 4)։

4. Համաձայնագրով սահմանվում է, որ Համաձայնագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում

են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթներին համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2023 թվականի հուլիսի 31-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության և մարման կանոնների մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

4 հունիսի 2024 թվականի
ՍԴՈ-1730

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ (ՏՐՄԱՆ), ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1730 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի հուլիսի 31-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության և մարման կանոնների մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1730 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի հուլիսի 31-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության և մարման կանոնների մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1730 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան

որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1730 որոշմամբ 2023 թվականի հուլիսի 31-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային

վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության և մարման կանոնների մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում,

երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա

միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել

է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված

փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«04» հունիսի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԺՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ՝ ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 4 հունիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար Գ. Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի դեկտեմբերի 6-ին Ժնևում ստորագրված «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագիրը փոփոխող արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի ապրիլի 4-ի N 476-Ա որոշմամբ հավանություն է տվել «2005 թվականի դեկտեմբերի 6-ին Ժնևում ստորագրված «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագիրը փոփոխող արձանագրության վավերացման մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի ապրիլի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագիրը փոփոխող արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2005 թվականի դեկտեմբերի 6-ին՝ Ժնևում՝ ստեղծված արտակարգ իրավիճակների վերացման նպատակով զարգացող և նվազ զարգացած երկրների համար թանկարժեք դեղորայքի հասանելիությունն ապահովելու նպատակով:

2. Համաձայն դիմումին կից ներկայացված Արձանագրության վավերացման նպատակահարմարության վերաբերյալ հիմնավորման՝ Արձանագրությունը լրացրել է «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) համաձայնագիրը (ԹՐԻՓՍ համաձայնագիր) նոր՝ 31 bis հոդվածով և հավելվածով:

31 bis հոդվածի և ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածի դրույթների կիրառումն իրավունք է տալիս դեղամիջոցների ոչ բավարար արտադրական հզորություն ունեցող ԱՀԿ անդամ երկրներին արտակարգ իրավիճակների դեպքում դիմել ԱՀԿ այլ անդամի՝ իր երկրին անհրաժեշտ քանակությամբ դեղորայք ապահովելու համար:

Արձանագրությունը նախատեսում է նաև հարկադիր լիցենզիայի հիման վրա արտադրված դեղորայքի արտահանման մեխանիզմ, որի

առավելությունը տեղական արտադրողների կողմից արտոնագրված թանկարժեք դեղամիջոցի արտադրության իրականացումն է դրա կարիքն ունեցող երկրի համար:

ԱՀԿ Գլխավոր խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Արձանագրությանն անդամ երկրների կողմից միանալու վերջնաժամկետ է սահմանված 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. 2024 թվականի փետրվարի 26-ի դրությամբ Արձանագրությանը միացել է 111 պետություն:

4. Արձանագրությամբ արգելվում են Արձանագրության որևէ դրույթի առնչությամբ վերապահումները՝ առանց մյուս Անդամների համաձայնության:

5. Համաձայն Արձանագրության 1-ին պարբերության՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Արձանագրության 4-րդ պարբերության համաձայն՝ Արձանագրությունն ուժի մեջ մտնելու պահից ԹՐԻՓՍ համաձայնագիրը փոփոխել Արձանագրության հավելվածում սահմանված կարգով՝ **31**-րդ հոդվածից հետո ավելացնելով **31bis** հոդվածը և **73**-րդ հոդվածից հետո ավելացնելով **ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածը**:

Հիշյալ հավելվածն իր հերթին ունի **առդիր**, որով սահմանվում է դեղագործության ոլորտում արտադրական կարողությունների գնահատման կարգը, որի համաձայն՝ համարվում է, որ առավել թույլ զարգացած անդամ երկրները դեղագործության ոլորտում ունեն ոչ բավարար արտադրական կարողություններ կամ բացարձակապես չունեն այդպիսի կարողություններ, իսկ մյուս իրավասու Ներմուծող անդամների դեպքում տվյալ արտադրանքի համար արտադրական կարողությունների անբավարար լինելը կամ դրանց բացակայությունը կարող է սահմանվել հետևյալ եղանակներից որևէ մեկով. տվյալ անդամը սահմանել է, որ դեղագործության ոլորտում բացարձակապես չունի որևէ արտադրական կարողություն, կամ եթե անդամն այդ ոլորտում ունի որոշակի արտադրական կարողություն, ապա այն ուսումնասիրել է այդ կարողությունը և պարզել է, որ բացի արտոնագրատիրոջը պատկանող կամ նրա կողմից վերահսկվող կարողությունից՝ այն ներկայումս բավարար չէ իր կարիքները բավարարելու համար: Երբ սահմանվում է, որ այդ

կարողությունը դարձել է բավարար անդամի կարիքները բավարարելու համար, համակարգն այլևս չի կիրառվում:

6. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը, ի հավելումն ԹՐԻՓՍ համաձայնագրով ստանձնած պարտավորությունների, ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

1) չվիճարկել ԹՐԻՓՍ համաձայնագրի 31bis հոդվածի և ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածի դրույթներին համապատասխան ձեռնարկված միջոցները՝ ՍԱԳՀ 1994-ի (Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագիր) XXIII հոդվածի 1-ին պարբերության «բ» և «գ» ենթապարբերություններին համապատասխան (հոդված 31bis, պարբերություն 4),

2) ԹՐԻՓՍ համաձայնագրի 31bis հոդվածում և ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածում սահմանված համակարգի (համակարգ) շրջանակներում ներմուծվող արտադրանքի՝ դրա ներմուծման հիմքում ընկած հանրային առողջապահության նպատակներով օգտագործումն ապահովելու համար, որպես իրավասու Ներմուծող անդամ՝ Հայաստանի Հանրապետության հնարավորության սահմաններում, Հայաստանի Հանրապետության վարչական կարողություններին և առևտրի շեղման ռիսկին համաչափորեն ձեռնարկել ողջամիտ միջոցներ այն արտադրանքի վերաարտահանումը կանխելու համար, որը համակարգի շրջանակներում փաստացի ներմուծվել է Հայաստանի Հանրապետության տարածք (ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելված, պարբերություն 3),

3) ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների հասանելիությունն այն արտադրանքի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը կամ Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառքը կանխելու համար, որոնք արտադրվել են համակարգի շրջանակներում և ուղարկվել են Հայաստանի Հանրապետության շուկա ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածի դրույթների խախտմամբ՝ օգտագործելով այն միջոցները, որոնք ԹՐԻՓՍ համաձայնագրով պահանջվում է, որ արդեն իսկ հասանելի լինեն (ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելված, պարբերություն 4),

4) ընդունել, որ ցանկալի է խրախուսել դեղագործական ոլորտում տեխնոլոգիաների փոխանցումը և կարողությունների զարգացումն այն խնդիրը վերացնելու համար, որին բախվում են դեղագործության ոլորտում ոչ բավարար կամ բացարձակապես որևէ կարողություն չունեցող

անդամները, և համագործակցել ԹՐԻՓՍ համաձայնագրի 66.2-րդ հոդվածով, «ԹՐԻՓՍ համաձայնագրի և հանրային առողջապահության մասին» հռչակագրի 7-րդ պարբերությամբ ամրագրված առաջադրանքը կատարելիս, ինչպես նաև ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհրդի ցանկացած այլ վերաբերելի առաջադրանք կատարելիս դեղագործության ոլորտում տեխնոլոգիաների փոխանցմանը և կարողությունների զարգացմանը հատուկ ուշադրություն դարձնելու հարցում (ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելված, պարբերություն 6):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2005 թվականի դեկտեմբերի 6-ին Ժնևում ստորագրված «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագիրը փոփոխող արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

4 հունիսի 2024 թվականի
ՍԴՈ-1731

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԺՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ՝ ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1731 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2005 թվականի դեկտեմբերի 6-ին Ժնևում ստորագրված «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագիրը փոփոխող արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1731 որոշմամբ որոշել է, որ 2005 թվականի դեկտեմբերի 6-ին Ժնևում ստորագրված «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագիրը փոփոխող արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1731 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանու-

թյունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1731 որոշմամբ 2005 թվականի դեկտեմբերի 6-ին Ժնևում ստորագրված «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագիրը փոփոխող արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ

համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620,

ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան: Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական

օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում

նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«04» հունիսի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԴԱՇԻՆՔԻ (ՄԱԴ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 4 հունիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հ. Վարդանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի նոյեմբերի 16-ին Երևանում ստորագրված «Միջազգային արևային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի ապրիլի 4-ի N 472-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրված

«Միջազգային արևային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի ապրիլի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Միջազգային արևային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի նոյեմբերի 16-ին Երևանում:

2. Համաձայնագրի նպատակներն են՝ Միջազգային արևային դաշինքի (ՄԱԴ) ստեղծումը և վերջինիս միջոցով, Համաձայնագրի կողմերի կարիքներին համապատասխան, արևային էներգիայի ընդլայնման հիմնական ընդհանուր մարտահրավերներին միասնաբար դիմակայումը:

3. Համաձայնագիրը կազմված է նախաբանից և տասնչորս հոդվածից:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

4.1. համակարգված գործողություններ իրականացնել կամավոր հիմունքներով մեկնարկած Ծրագրերի և գործունեության միջոցով, որոնք ուղղված են, ի թիվս այլնի, արևային ֆինանսների, արևային տեխնոլոգիաների, նորարարությունների, ուսումնասիրությունների և զարգացման, ինչպես նաև կարողությունների զարգացման պահանջարկի ավելի լավ ներդաշնակեցմանն ու համախմբմանը (հոդված 2, կետ 1),

4.2. Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պարտավորության իրականացման նպատակով սերտորեն համա-

գործակցել և ձգտել փոխշահավետ հարաբերություններ հաստատել համապատասխան կազմակերպությունների, պետական և մասնավոր շահագրգիռ կողմերի և ոչ անդամ պետությունների հետ (հոդված 2, կետ 2),

4.3. այն արևային հավելվածների համար, որոնց հետ կապված՝ ՄԱԴ-ի շրջանակներում կոլեկտիվ գործողությունների արդյունքում առկա է օգուտ ստանալու ակնկալիք, ինչպես նաև հիմնվելով արևային հավելվածների ընդհանուր վերլուծական քարտեզագրման վրա՝ տրամադրել և թարմացնել համապատասխան տեղեկություններ իր կարիքների և նպատակների, այդ նպատակներին հասնելու համար ձեռնարկված կամ ձեռնարկվելիք ներպետական միջոցառումների ու նախաձեռնությունների, արժեշղթայի և տարածման գործընթացում առկա խոչընդոտների վերաբերյալ (հոդված 2, կետ 3),

4.4. ՄԱԴ-ի համար նշանակել ազգային համակարգող մարմին, որը, ի թիվս այլնի, կփոխգործակցի ՄԱԴ-ի անդամ երկրների ազգային համակարգող մարմինների, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտների բացահայտման, Ծրագրերի հետ կապված առաջարկներ մշակելու և Քարտուղարությանը ՄԱԴ-ի նպատակների իրականացման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու համար (հոդված 2, կետ 4),

4.5. համակարգված ձևով և Քարտուղարության աջակցությամբ իրականացնել ՄԱԴ-ի ծրագրում ներառվող գործողությունները, նախագծերը և աշխատանքները՝ Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներում նկարագրված նպատակն ու հիմնարար սկզբունքներն իրականացնելու համար (հոդված 3, կետ 1),

4.6. Համաձայնագրի իրականացման և դրա նպատակին հասնելու համար ձեռնարկվելիք համակարգված գործողությունների վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով Համաձայնագրի այլ Անդամների հետ ստեղծել Ժողով, որտեղ ներկայացված կլինի Համաձայնագրի յուրաքանչյուր Անդամ (հոդված 4, կետ 1),

4.7. Համաձայնագրի մյուս կողմերի հետ ստեղծել Քարտուղարություն՝ Համաձայնագրի շրջանակներում նրանց կոլեկտիվ աշխատանքին աջակցելու համար (հոդված 5, կետ 1),

4.8. Հատուկ Ծրագրին մասնակցելու դեպքում հատուկ Ծրագրին մասնակցող մյուս պետությունների հետ միասին և Քարտուղարության օժանդակությամբ ու աջակցությամբ գնահատել և մոբիլիզացնել

հատուկ Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները՝ բացառությամբ ընդհանուր բյուջեի շրջանակներում նախատեսված վարչական ծախսերի (հոդված 6, կետ 4),

4.9. Հայաստանի Հանրապետության տարածքում ՄԱԴ-ի Քարտուղարությանը տրամադրել այնպիսի անձեռնմխելիություն և արտոնություններ, որոնք անհրաժեշտ են նրա գործառույթներն ու ծրագրերն ինքնուրույն իրականացնելու համար՝ իր տարածքի օրենքներին համապատասխան և անհրաժեշտության դեպքում առանձին Համաձայնագրի համաձայն (հոդված 10, կետ 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի նոյեմբերի 16-ին Երևանում ստորագրված «Միջազգային արևային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

4 հունիսի 2024 թվականի
ՍԴՈ-1732

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԴԱՇԻՆՔԻ (ՄԱԴ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1732 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի նոյեմբերի 16-ին Երևանում ստորագրված «Միջազգային արևային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1732 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի նոյեմբերի 16-ին Երևանում ստորագրված «Միջազգային արևային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1732 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմա-

նադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1732 որոշմամբ 2023 թվականի նոյեմբերի 16-ին Երևանում ստորագրված «Միջազգային արևային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագրով ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ

որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ

իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով

է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է

էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«04» հունիսի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԹՈՒՆԻՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՆԻՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՎԻԶԱՅԻ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 4 հունիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Արտաքին գործերի նախարարի տեղակալ Վ. Կոստանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի դեկտեմբերի 5-ին Թունիսում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Թունիսի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար վիզայի պահանջի վերացման մասին» համաձայնագրով

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի 12 ապրիլի N 484-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի դեկտեմբերի 5-ին Թունիսում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Թունիսի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար վիզայի պահանջի վերացման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի ապրիլի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Քննության առարկա համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի դեկտեմբերի 5-ին: Այն նպատակ է հետապնդում դյուրացնել երկու պետությունների՝ դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց ուղևորությունների ընթացակարգերը:

Համաձայնագիրը կազմված է նախաբանից և 9 հոդվածից:

Համաձայնագրի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Կողմերի միջև Համաձայնագրի կատարման վերաբերյալ ցանկացած վեճ լուծվում է դիվանագիտական ուղիներով՝ բարեկամական կարգավորման միջոցով»:

Ըստ Համաձայնագրի 8-րդ հոդվածի՝ «(…) Համաձայնագրում փոփոխություններ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, որոնք կատարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով»:

Համաձայնագրի 9-րդ հոդվածի համաձայն, այն «(…) ուժի մեջ է մտնում վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից 60 (վաթսուն) օր հետո, որով Կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով տեղեկացնում է մյուս Կողմին Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներքին իրավական ընթացակարգերն ավարտված լինելու մասին»:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

1) Թունիսի Հանրապետության՝ վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող քաղաքացիներին ազատել Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու նպատակով վիզա ձեռք բերելու պարտականությունից՝ տարանցման կամ առաջին մուտքի օրվանից 180 (հարյուր ութսուն) օրվա ընթացքում 90 (իննսուն) օրը չգերազանցող ժամկետով Հայաստանի Հանրապետությունում մնալու համար (հոդված 1, մաս 1),

2) ապահովել Թունիսի Հանրապետության՝ վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող քաղաքացիների մուտք գործելը Հայաստանի Հանրապետության տարածք՝ միջազգային երթևեկության համար նախատեսված ցանկացած սահմանային անցակետով (հոդված 1, մաս 2),

3) ապահովել, որ Թունիսի Հանրապետության՝ վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող այն քաղաքացիները, որոնք հավատարմագրված են Հայաստանի Հանրապետության տարածքում դիվանագիտական կամ հյուպատոսական գործառույթներ իրականացնելու համար, ինչպես նաև նրանց հետ համատեղ բնակվող՝ վերջիններիս ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուց հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում, անցնեն հաշվառման անհրաժեշտ ընթացակարգերը (հոդված 2),

4) որպես ընդունող Կողմ՝ Թունիսի Հանրապետության վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող այն քաղաքացիներին, որոնք նպատակ ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մնալու 90 (իննսուն) օրը գերազանցող ժամկետով, տալ մուտքի վիզա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդված 3),

5) երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող այն քաղաքացիները, որոնք մուտք են գործում Թունիսի Հանրապետության տարածք Համաձայնագրին համապատասխան, Թունիսի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում կենթարկվեն այդ պետության ներպետական օրենսդրությանը (հոդված 5, մաս 1),

6) Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց առնվազն 30 (երեսուն) օր առաջ դիվանագիտական ուղիներով Թունիսի Հանրապետության հետ փոխանակել Հայաստանի Հանրապետության վավեր դիվանագիտական անձնագրերի նմուշները (հոդված 6, մաս 1),

7) նոր դիվանագիտական անձնագրեր տրամադրելու կամ գործող անձնագրերում փոփոխություններ կատարելու դեպքում նոր անձնագրերը կամ դրանց փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 30 (երեսուն) օր առաջ դիվանագիտական ուղիներով տեղեկացնել Թունիսի Հանրապետությանը՝ տրամադրելով նոր կամ փոփոխված անձնագրերի նմուշները (հոդված 6, մաս 2):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված նպատակին՝ հնարավորություն ընձեռելով առավել զարգացնելու և ամրապնդելու երկու պետությունների միջև արդեն իսկ առկա բարեկամական հարաբերությունները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2023 թվականի դեկտեմբերի 5-ին Թունիսում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Թունիսի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար վիզայի պահանջի վերացման մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա.ԴԻԼԱՆՅԱՆ**

4 հունիսի 2024 թվականի
ՍԴՈ-1733

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԹՈՒՆԻՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՆԻՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՎԻԶԱՅԻ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1733 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի դեկտեմբերի 5-ին Թունիսում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Թունիսի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար վիզայի պահանջի վերացման մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1733 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի դեկտեմբերի 5-ին Թունիսում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Թունիսի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար վիզայի պահանջի վերացման մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1733 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի

կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1733 որոշմամբ 2023 թվականի դեկ-

տեմբերի 5-ին Թունիսում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Թունիսի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար վիզայի պահանջի վերացման մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում,

երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա

միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը

ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«04» հունիսի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ (CMR)՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԵՌՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 4 հունիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գ. Սանոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիայի (CMR)՝ էլեկտրոնային բեռնագրի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի ապրիլի 18-ի N 539-Ա որոշմամբ հավանություն է տվել «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային

փոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիայի (CMR)՝ էլեկտրոնային բեռնագրի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի ապրիլի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Տ .**

1. Քննության առարկա «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիայի (CMR)՝ էլեկտրոնային բեռնագրի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2008 թվականի փետրվարի 20-ին՝ տվյալների էլեկտրոնային գրանցման և մշակման համար օգտագործվող ընթացակարգերով բեռնագրի կամընտիր կազմման գործընթացը դյուրացնելու նպատակով:

«Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է 2006 թվականի հունիսի 9-ին՝ վավերացնելով այն 2006 թվականի մարտի 23-ին՝ Ազգային ժողովի Ն-267-3 որոշմամբ (ՍԴՈ-594, 26.08.2005 թ.):

Արձանագրությամբ նախատեսված բեռնագրերի էլեկտրոնային կառավարումը հնարավորություն կտա նվազեցնելու տրանսպորտային ծառայությունների ծախսերը, արդիականացնելու ապրանքատրանսպորտային ծառայությունները, դյուրացնելու տեղեկատվության հասանելիությունը, բարձրացնելու բեռնափոխադրումների ծառայությունների թափանցիկությունը, բարելավելու դրանց կառավարումն ու հսկողությունը՝ խթանելով տնտեսական մրցունակությունը:

Արձանագրությունը կազմված է նախաբանից և 16 հոդվածներից:

Արձանագրության՝ «Վեճը» վերտառությամբ 11-րդ հոդվածով սահմանվում է. «Սույն արձանագրության մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու կամ ավելի կողմերի միջև ծագած ցանկացած վեճ, որը կողմերը չեն կարողանում կարգավորել բանակցությունների կամ այլ միջոցներով, տվյալ կողմերից որևէ մեկի խնդրանքով կարգավորման համար կարող է փոխանցվել Արդարադատության միջազգային դատարան»:

Արձանագրության 12-րդ հոդվածի համաձայն՝ «Ցանկացած պետություն կարող է արձանագրությունը ստորագրելիս, վավերացնելիս կամ դրան միանալիս Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով հայտարարել, որ չի համարում, որ սույն արձանագրության 11-րդ հոդվածն իր համար պարտադիր ուժ ունի»: Վերապահում անելու նպատակահարմարության դեպքում Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է ներկայացնել նաև վերապահման տեքստի նախագիծ:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

1) Արձանագրության դրույթներին համապատասխանող էլեկտրոնային բեռնագիրը համարել Կոնվենցիայում նշված բեռնագրին հավասարազոր, որն ունի նույն ապացուցողական արժեքը և առաջացնում է նույն ազդեցությունը, ինչ այդ բեռնագիրը (հոդված 2, պարբերություն 2),

2) որպես փոխադրման պայմանագրի կողմ՝ ապահովել, որ էլեկտրոնային բեռնագրի իսկությունը հաստատվի հուսալի էլեկտրոնային ստորագրության միջոցով, որն ապահովում է էլեկտրոնային բեռնագրի հետ դրա կապը (հոդված 3, պարբերություն 1),

3) երաշխավորել էլեկտրոնային բեռնագրում պարունակվող տվյալների ցանկացած կողմին հասանելիությունը, որն ունի դրա իրավունքը (հոդված 3, պարբերություն 3),

4) երաշխավորել, որ էլեկտրոնային բեռնագիր տրամադրելու համար կիրառվող ընթացակարգով կապահովվի դրա վերջնական տարբերակն առաջին անգամ գեներացնելու պահից դրանում պարունակվող տվյալների ամբողջականությունը (հոդված 4, պարբերություն 2),

5) երաշխավորել, որ էլեկտրոնային բեռնագրում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու համար կիրառվող ընթացակարգով կապահովվի էլեկտրոնային բեռնագրում կատարված ցանկացած լրացման կամ փոփոխության հայտնաբերելի լինելը և կպահպանվեն դրանում ի սկզբանե պարունակված տվյալները (հոդված 4, պարբերություն 3, մաս 2),

6) որպես փոխադրման պայմանագրի կատարմամբ շահագրգռված կողմ՝ Արձանագրության և Կոնվենցիայի պահանջները կատարելու նպատակով համաձայնություն ձեռք բերել ընթացակարգերի և դրանց իրականացման վերաբերյալ, մասնավորապես՝ Արձանագրության 5-րդ հոդվածի 1-ին պարբերությունում շարադրված ընթացակարգերի

առնչությամբ, ինչպես նաև ապահովել, որ վերոհիշյալ ընթացակարգերը նշվեն էլեկտրոնային բեռնագրում և հասանելի լինեն ստուգման համար (հոդված 5),

7) որպես փոխադրող կողմ՝ ապահովել, որ ուղարկողի պահանջով նրան հանձնվի բեռների անդորրագիրը և բոլոր այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են առաքումը նույնականացնելու և Արձանագրության մեջ նշված էլեկտրոնային բեռնագրին հասանելիություն ստանալու համար (հոդված 6, պարբերություն 1):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված նպատակին, իսկ Արձանագրությանը միանալը կնպաստի բեռնափոխադրումների ծառայությունների թվայնացմանը, ինչը, իր հերթին, բխում է Հայաստանի Հանրապետության թվայնացման 2021-2025 թվականների ռազմավարությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիայի (CMR)՝ էլեկտրոնային բեռնագրի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

4 հունիսի 2024 թվականի
ՍԴՈ-1734

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ««ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ (CMR)՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԵՌՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1734 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով ««Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիայի (CMR)՝ էլեկտրոնային բեռնագրի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1734 որոշմամբ որոշել է, որ «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիայի (CMR)՝ էլեկտրոնային բեռնագրի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1734 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը

որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1734 որոշմամբ «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիայի (CMR)՝ էլեկտրոնային բեռնագրի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է

թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ

իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես

եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել

դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«04» հունիսի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՍՈՉԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ, ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 4 հունիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռ. Գևորգյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Ծառայությունների ազատ առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի ապրիլի 4-ի N 456-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Ծառայությունների ազատ առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի ապրիլի 8-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Ծառայությունների ազատ առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի հունիսի 8-ին Սոչի քաղաքում՝ ծառայությունների փոխադարձ առևտրի ընդլայնման և դրա ազատականացման մակարդակի բարձրացման, ինչպես նաև մի Կողմի անձանց կողմից մյուս Կողմերի տարածքներում ներդրումների իրականացման համար պայմաններ ստեղծելու նպատակով:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո: Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

2. Համաձայնագիրն ունի հավելվածներ. Հավելված Ա. «Առավել բարենպաստության ռեժիմից՝ 14-րդ, 19-րդ և 24-րդ հոդվածների մասով բացառումների ցանկ», Հավելված Բ. ««Ծառայությունների անդրսահմանային առևտուր» II գլխին համապատասխան պարտավորությունների ցանկը», Հավելված Գ. ««Հիմնադրում և գործունեություն» III գլխին վերաբերող բացառումների ցանկ», Հավելված Դ. ««Ծառայությունների մատուցման, հիմնադրման և գործունեության ու ներդրումների իրականացման համար ֆիզիկական անձանց ժամանակավոր ներկայության

առանձնահատկություններ» IV գլխին համապատասխան՝ պարտավորությունների ցանկ», որոնք, ըստ էության, սահմանվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Համաձայնագիրն ունի Կողմերի համար ընդհանուր երկու հավելված՝ Հավելված Ե. «Ֆինանսական ծառայությունների առևտուրը», Հավելված Զ. «Հեռահաղորդակցության ծառայությունների ոլորտում կարգավորման առանձնահատկությունները»:

3. Համաձայն Համաձայնագրի 5-րդ հոդվածի՝ Համաձայնագրում ոչնչով որևէ Կողմից չի պահանջվում տրամադրել այնպիսի գաղտնի տեղեկատվություն, որի բացահայտումը կարող էր խոչընդոտել նրա կողմից իր ազգային օրենսդրության կիրառումը կամ այլ կերպ հակասել հանրային շահերին կամ վնաս հասցնել առանձին իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի օրինական առևտրային շահերին: Ֆինանսական ծառայությունների ոլորտում գաղտնի տեղեկատվության բացահայտումը կարգավորվում է Համաձայնագրի Ե հավելվածով:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

4.1. Հայաստանի Հանրապետության այն միջոցների համար, որոնք ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության վրա ազդում են գործունեության այն ոլորտներում և տեսակներում, որոնց մասով ստանձնվել են պարտավորություններ կամ չկան բացառումներ՝ Համաձայնագրի Բ, Գ և Դ հավելվածներում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերին համապատասխան՝ ապահովել, որ ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության վրա ազդող ցանկացած միջոց կիրառվի ողջամիտ, օբյեկտիվ և անկողմնակալ կերպով (հոդված 2, կետ 2, ենթակետ «ա»),

4.2. Հայաստանի Հանրապետության այն միջոցների համար, որոնք ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության վրա ազդում են գործունեության այն ոլորտներում և տեսակներում, որոնց մասով ստանձնվել են պարտավորություններ կամ չկան բացառումներ՝ Համաձայնագրի Բ, Գ և Դ հավելվածներում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերին համապատասխան՝ ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության համար թույլտվություն պահանջվելու դեպքում՝ ապահովել Հայաստանի

Հանրապետության իրավասու մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան ձևակերպված համարվող դիմումի ներկայացումից հետո ողջամիտ ժամանակահատվածում դիմումատուին տեղեկացումը դիմումի վերաբերյալ որոշման մասին, ինչպես նաև ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները դիմումատուի հարցման հիման վրա դիմումի ուսումնասիրության ընթացքի մասին տեղեկատվությունը տրամադրեն ողջամիտ ժամկետներում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ժամկետից ոչ ուշ (հոդված 2, կետ 2, ենթակետ «բ»),

4.3. Հայաստանի Հանրապետության այն միջոցների համար, որոնք ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության վրա ազդում են գործունեության այն ոլորտներում և տեսակներում, որոնց մասով ստանձնվել են պարտավորություններ կամ չկան բացառումներ՝ Համաձայնագրի Բ, Գ և Դ հավելվածներում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերին համապատասխան՝ չկիրառել լիցենզային կամ որակավորման պահանջներ, որոնցով չեղյալ են համարվում կամ կրճատվում են Համաձայնագրի Բ և Գ հավելվածներում ներառված պայմանների համաձայն ներկայացված օգուտներն այնպիսի եղանակով, որը չի հիմնվում այնպիսի օբյեկտիվ և թափանցիկ չափորոշիչների վրա, ինչպիսիք են ծառայությունը մատակարարելու կոմպետենտությունը և կարողությունը, լիցենզավորման ընթացակարգերի դեպքում ինքնին չի եղել ծառայության մատակարարման սահմանափակում, չի եղել ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է ծառայության որակի ապահովման համար, սակայն այն դեպքում, երբ անհատական ցանկերին համապատասխան Համաձայնագրի Բ և Գ հավելվածներում ներառվել են պարտավորություններ (բացակայում են բացառումներ) մասնագիտական ծառայությունների մասով, ապա Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացնել ընթացակարգեր ցանկացած այլ Կողմի մասնագետների կոմպետենտությունն ստուգելու համար (հոդված 2, կետ 2, ենթակետ «գ»),

4.4. ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության վրա ազդող միջոցների առնչությամբ լիցենզավորման ընթացակարգեր և պահանջներ (թույլատրական ընթացակարգեր) կիրառելու դեպքում ապահովել 2-րդ հոդվածի 3-րդ կետի 3.1-ին մասով նախատեսված գործողությունների կատարումը (հոդված 2, կետ 3, մաս 3.1),

4.5. ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության վրա ազդող միջոցների առնչությամբ պահպանել կամ գործնականորեն հնարավորինս արագ ստեղծել դատական, արբիտրաժային կամ վարչական մարմիններ կամ ընթացակարգեր, որոնք ծառայությունների մատակարարի կամ այն անձի հարցման դեպքում, որի շահերը շոշափվում են, կապահովեն ծառայությունների առևտրին, հիմնադրմանը և գործունեությանն առնչվող վարչական որոշումների անհապաղ ուսումնասիրությունն ու հիմնավորված լինելու դեպքում դրանց պատշաճ շտկումը, իսկ նշված ընթացակարգերը նման վարչական որոշումներ ընդունելու համար լիազորված Հայաստանի Հանրապետության մարմնից անկախ չլինելու դեպքում ապահովել նշված հարցերի օբյեկտիվ և անկողմնակալ ուսումնասիրությունն այդպիսի ընթացակարգերի շրջանակներում (հոդված 2, կետ 3, մաս 3.2),

4.6. ծառայությունների մատակարարների թույլտվությունների, լիցենզավորման կամ սերտիֆիկացման, ինչպես նաև հիմնադրման և գործունեության հետ կապված Հայաստանի Հանրապետության համապատասխան ստանդարտների կամ չափորոշիչների կատարման համար պատշաճ կերպով ուսումնասիրել մյուս Կողմի ցանկացած հարցում ստացած կրթության կամ ձեռք բերած փորձի ճանաչման մասին, մյուս Կողմի տրամադրած լիցենզիաների (թույլտվությունների) կամ սերտիֆիկատների պահանջներին համապատասխանության մասին (հոդված 3, կետ 1),

4.7. համաձայնության կամ պայմանավորվածության հիման վրա երրորդ Կողմի տարածքում ստացած կրթությունը կամ ձեռք բերած փորձը, պահանջներին համապատասխանությունը կամ ստացած լիցենզիաները (թույլտվությունները) կամ սերտիֆիկատները ճանաչելու դեպքում ցանկացած այլ Կողմի տրամադրել այդ համաձայնությանը կամ պայմանավորվածությանը վերջինիս կողմից միանալու վերաբերյալ բանակցություններ վարելու հնարավորություն կամ համադրելի համաձայնություններ կամ պայմանավորվածություններ կնքելու վերաբերյալ բանակցություններ վարելու հնարավորություն, իսկ միակողմանի կարգով ճանաչումն իրականացնելու դեպքում ցանկացած այլ Կողմի տրամադրել համապատասխան հնարավորություն՝ ցույց տալու, որ վերջինիս տարածքում ստացած կրթությունը, ձեռք բերած փորձը, լիցենզիաները (թույլտվությունները) և սերտիֆիկատները պետք է ճանաչվեն Կողմերի օրենսդրությանը համապատասխան (հոդված 3, կետ 2),

4.8. ճանաչումը տրամադրել այնպես, որ դա չդառնա ծառայությունների մատակարարների թույլտվությունների, նրանց լիցենզավորման կամ սերտիֆիկացման ստանդարտների կամ չափորոշիչների կիրառման հարցում Կողմերի միջև խտրականության միջոց կամ ծառայությունների առևտրի, ինչպես նաև հիմնադրման և գործունեության համար թաքնված սահմանափակում (հոդված 3, կետ 3),

4.9. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերը և միջազգային համաձայնագրերը, որոնց մասնակիցն է Հայաստանի Հանրապետությունը, և որոնք շոշափում են կամ կարող են շոշափել Համաձայնագրում ներառված հարցեր, հրապարակվեն պաշտոնական աղբյուրում և (կամ) Հայաստանի Հանրապետության կողմից սահմանվող ինտերնետ կայքում այնպես, որ յուրաքանչյուր անձ, որի իրավունքները և (կամ) պարտավորությունները կարող են շոշափվել Հայաստանի Հանրապետության այդ օրենսդրական ակտերով և միջազգային համաձայնագրերով, ունենա դրանց հետ ծանոթանալու հնարավորություն (հոդված 4, կետ 1),

4.10. Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում նշված օրենսդրական ակտերը հրապարակել անհապաղ, այն անձանց իրավական որոշակիությունը և հիմնավորված ակնկալիքներն ապահովող ժամկետում, որոնց իրավունքները և (կամ) պարտավորությունները կարող են շոշափվել այդ օրենսդրությամբ, սակայն ցանկացած դեպքում՝ ոչ ուշ, քան դրա ուժի մեջ մտնելու (գործողության մեջ դնելու) օրը, իսկ այդ հրապարակումը գործնականում անիրագործելի լինելու դեպքում Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում նշված օրենսդրական ակտերը հանրայնացնել այլ կերպ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով (հոդված 4, կետ 2),

4.11. ապահովել Համաձայնագրում ընդգրկված հարցերի վերաբերյալ գործող և (կամ) պլանավորվող օրենսդրական ակտին առնչվող՝ ցանկացած անձի գրավոր հարցումներին պատասխանների տրամադրումը, և հարցումներին տրվող պատասխաններն այդ շահագրգիռ անձին տրամադրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ գրավոր հարցումն ստանալու օրվանից հետո 30 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում, իսկ բացառիկ դեպքերում շահագրգիռ անձին ծանուցել սահմանված ժամկետը երկարաձգելու մասին (հոդված 4, կետ 3),

4.12. ապահովել, որ ծառայության ցանկացած մենաշնորհային մատակարար ծառայության մենաշնորհային մատակարարման և (կամ)

համապատասխան շուկայում այլ մենաշնորհային գործունեության իրականացման դեպքում չգործի այնպիսի եղանակով, որն անհամատեղելի է Համաձայնագրի II, III, IV գլուխների համաձայն Հայաստանի Հանրապետության պարտավորությունների հետ (հոդված 6, կետ 1),

4.13. այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում ծառայության մենաշնորհային մատակարար հանդիսացող իրավաբանական անձն իր մենաշնորհային իրավունքների ոլորտից դուրս ուղղակիորեն կամ իր կողմից վերահսկվող իրավաբանական անձի միջոցով մրցակցում է մյուս Կողմերի անձանց հետ, ապա ապահովել, որ Հայաստանի Հանրապետության այդ իրավաբանական անձը չչարաշահի իր մենաշնորհային դիրքը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործելով Հայաստանի Հանրապետության՝ Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների հետ անհամատեղելի կերպով (հոդված 6, կետ 2),

4.14. Հայաստանի Հանրապետության տարածքում այնպիսի անձանց պահպանելու դեպքում, որոնց կապիտալում Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է կամ որոնց Հայաստանի Հանրապետությունը վերահսկում է, ապահովել, որ նշված անձինք իրենց գործունեությունն իրականացնեն առևտրային նկատառումների հիման վրա՝ ներառյալ ծառայության կամ ապրանքի գինը, որակը, հասանելիությունը, դրանց իրացվելիությունը, փոխադրման պայմանները և գնման, վաճառքի կամ մատակարարման այլ պայմաններ, և Համաձայնագրով կարգավորվող հարաբերություններում հանդես գան այդ հարաբերությունների այլ մասնակիցների հետ հավասարության սկզբունքի հիման վրա, այդ հարաբերությունների այլ մասնակիցների հետ խտրականության բացառման սկզբունքի հիման վրա՝ կախված նրանց քաղաքացիությունից, գրանցման (հիմնադրման) վայրից, կազմակերպաիրավական ձևից կամ սեփականության ձևից (հոդված 7, կետ 1, ենթակետ «ա»),

4.15. Հայաստանի Հանրապետության տարածքում այնպիսի անձանց պահպանելու դեպքում, որոնց կապիտալում Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է կամ որոնց Հայաստանի Հանրապետությունը վերահսկում է, ապահովել, որ նշված անձինք չստանան իրավունքներ, առանձնաշնորհումներ կամ պարտականություններ բացառապես իրենց կապիտալում Հայաստանի Հանրապետության մասնակցության կամ իրենց նկատմամբ Հայաստանի Հանրապետության ունեցած

վերահսկողության հիման վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձանց գործունեությունը, որոնց կապիտալում պետությունը մասնակցում է կամ որոնց պետությունը վերահսկում է, ուղղված է սոցիալական քաղաքականության խնդիրների լուծմանը, ինչպես նաև բացառությամբ այն դեպքերի, որոնք նշված են Համաձայնագրի Բ և Գ հավելվածներում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերում (հոդված 7, կետ 1, ենթակետ «բ»),

4.16. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության բոլոր մարմինները պետական իշխանության կամ տեղական ինքնակառավարման ցանկացած մակարդակով լինեն անկախ, չվերահսկվեն որևէ անձի կողմից և հաշվետու չլինեն որևէ անձի, որը տնտեսական գործունեություն է իրականացնում տնտեսության այնպիսի ոլորտում, որի կարգավորումը համապատասխան մարմնի իրավասության մեջ է մտնում, ինչպես նաև ապահովել, որ Հայաստանի Հանրապետության միջոցները, այդ թվում՝ Համաձայնագրի 7-րդ հոդվածի 3-րդ կետում նշված մարմնի որոշումները, նրա կողմից սահմանվող և կիրառվող կանոններն ու ընթացակարգերը լինեն անկողմնակալ և օբյեկտիվ տնտեսական գործունեություն իրականացնող բոլոր անձանց նկատմամբ (հոդված 7, կետ 3),

4.17. Համաձայնագրում ոչինչ չմեկնաբանել որպես խոչընդոտ որևէ Կողմի համար՝ ցանկացած այնպիսի գործողություն նախաձեռնելու հարցում, որն այդ Կողմն անհրաժեշտ է համարում երկրի պաշտպանության կամ պետության անվտանգության բնագավառում իր կարևորագույն շահերի պաշտպանության համար, և որը առնչվում է այն ծառայությունների կամ ապրանքների մատակարարմանը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացվում են զինված ուժերի մատակարարման համար, առնչվում է միջուկային կամ ջերմամիջուկային ռազմամթերքին կամ այն նյութերին, որոնցից դրանք ստացվել են, նախաձեռնվել են պատերազմի ժամանակ կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակներում (հոդված 10, կետ 1),

4.18. Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան սահմանած ցանկացած սահմանափակման և դրա ցանկացած փոփոխության մասին անհապաղ ծանուցել մյուս Կողմերին և ԱՊՀ Գործադիր կոմիտեին՝ այդ

սահմանափակումների սահմանման/փոփոխման օրվանից 15 օրացուցային օրվանից ոչ ուշ (հոդված 11, կետ 4),

4.19. բացառությամբ Համաձայնագրի 11-րդ հոդվածում նախատեսված հանգամանքների՝ չկիրառել սահմանափակումներ ընթացիկ

գործարքների գծով միջազգային փոխանցումների և վճարումների համար, որոնք առնչվում են Հայաստանի Հանրապետության պարտավորությունների անհատական ցանկերին (հոդված 12, կետ 1),

4.20. Համաձայնագրի II գլխում ընդգրկված ցանկացած միջոցի մասով Համաձայնագրի ցանկացած այլ Կողմի ծառայությունների և ծառայությունների մատակարարների համար տրամադրել այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է Համաձայնագրի մասնակից չհանդիսացող ցանկացած պետության համանման ծառայությունների և ծառայությունների մատակարարների համար՝ բացառությամբ այն միջոցների, որոնք նախատեսված են Համաձայնագրի Ա հավելվածում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկով (հոդված 14, կետ 1),

4.21. Համաձայնագրի Բ հավելվածում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերով նախատեսված ոլորտներում և դրանց մեջ սահմանված պայմաններին ու սահմանափակումներին համապատասխան՝ ծառայությունների անդրսահմանային առևտրի վրա ազդող ցանկացած միջոցի առնչությամբ ցանկացած մյուս Կողմի ծառայությունների մատակարարների և ծառայությունների համար տրամադրել այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է իր սեփական համանման ծառայությունների և ծառայությունների մատակարարների համար (հոդված 15, կետ 1),

4.22. Համաձայնագրի Բ հավելվածում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերով նախատեսված ոլորտներում և դրանց մեջ սահմանված պայմաններին ու սահմանափակումներին համապատասխան և ծառայությունների անդրսահմանային առևտրի մասով մյուս Կողմի ծառայությունների և (կամ) ծառայությունների մատակարարների նկատմամբ չկիրառել և չսահմանել Համաձայնագրի 16-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա», «բ», «գ» և «դ» կետերում նշված սահմանափակումները (հոդված 16, պարբերություն 1),

4.23. Համաձայնագրի III գլխի դրույթները կիրառել Համաձայնագրի 18-րդ հոդվածում սահմանված միջոցների նկատմամբ (հոդված 18),

4.24. Համաձայնագրի III գլխում ընդգրկված ցանկացած միջոցի հետ կապված՝ ցանկացած այլ Կողմի անձանց հիմնադրման և գործունեության համար անհապաղ և անվերապահորեն տրամադրել այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը Հայաստանի

Հանրապետությունը տրամադրում է Համաձայնագրի մասնակից չհանդիսացող ցանկացած պետության անձանց՝ բացառությամբ այն միջոցների, որոնք նախատեսված են Համաձայնագրի Ա հավելվածում՝ Հայաստանի Հանրապետության անհատական ցանկով (հոդված 19, կետ 1),

4.25. հիմնադրման և (կամ) գործունեության համար ցանկացած այլ Կողմի անձանց տրամադրել այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է իր անձանց իր տարածքում՝ հաշվի առնելով Համաձայնագրի Գ հավելվածում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերով նախատեսված սահմանափակումներն ու պայմանները (հոդված 20, կետ 1),

4.26. հաշվի առնելով Համաձայնագրի Գ հավելվածում Հայաստանի Հանրապետության համար անհատական ցանկով նախատեսված սահմանափակումներն ու պայմանները՝ հիմնադրման և (կամ) գործունեության համար ցանկացած այլ Կողմի անձանց նկատմամբ չկիրառել և չսահմանել Համաձայնագրի 21-րդ հոդվածի 1-ին կետում նշված սահմանափակումները (հոդված 21, կետ 1),

4.27. չպահանջել ցանկացած այլ Կողմի անձանց մասնակցությամբ իրավաբանական անձանց, մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների ստեղծման ժամանակ վավերացնել (լեգալիզացնել) կամ ապոստիլով հաստատել Հայաստանի Հանրապետության պետական իշխանության գրանցող մարմին ներկայացվող փաստաթղթերը (հոդված 22),

4.28. Համաձայնագրի IV գլուխը կիրառել ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման նպատակներով մեկ Կողմի ֆիզիկական անձանց կատեգորիաների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ժամանակավոր մուտքի և գտնվելու վրա ազդող միջոցների նկատմամբ, որոնք նշված են Համաձայնագրի Դ հավելվածում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերում, ինչպես նաև Համաձայնագրի IV գլխի դրույթները չկիրառել Հայաստանի Հանրապետության տարածքում սուբսիդիաների և պետական ու մունիցիպալ օժանդակության այլ ձևերի նկատմամբ (հոդված 23, կետեր 1 և 2),

4.29. Համաձայնագրի IV գլխում ընդգրկված ցանկացած միջոցի մասով Համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետում նշված ֆիզիկական անձանց կատեգորիաներին տրամադրել այնպիսի ռեժիմ, որը պակաս

բարենպաստ չէ այն ռեժիմից, որը Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է Համաձայնագրի մասնակից չհանդիսացող ցանկացած պետության ֆիզիկական անձանց համանման կատեգորիաներին (հոդված 24, կետ 1),

4.30. Համաձայնագրի 24-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան տրամադրվող ռեժիմը չտարածել այն առավելությունների վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է կամ հետագայում կտրամադրի տնտեսական ինտեգրման, ծառայությունների ազատ առևտրի և համանման այլ պայմանավորվածությունների մասին Հայաստանի Հանրապետության համաձայնագրերին համապատասխան, եթե դրանք համապատասխանում են ԾԱԳՀ-ի V հոդվածի չափորոշիչներին և պայմաններին կամ կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրերի կամ հարկման հարցերով այլ պայմանավորվածությունների հիման վրա (հոդված 24, կետ 4),

4.31. Համաձայնագրի IV գլխում ընդգրկված ցանկացած միջոցի մասով՝ Համաձայնագրի Դ հավելվածում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերով նախատեսված ոլորտներում և դրանց մեջ սահմանված պայմաններին ու սահմանափակումներին համապատասխան՝ Համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ մյուս Կողմերի ֆիզիկական անձանց կատեգորիաներին տրամադրել այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է իր սեփական ֆիզիկական անձանց համանման կատեգորիաներին (հոդված 25, կետ 1),

4.32. Համաձայնագրի Դ հավելվածում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերում նախատեսված ոլորտներում, և դրանցում նախատեսված պայմաններին և սահմանափակումներին համապատասխան, Համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ մյուս Կողմերի ֆիզիկական անձանց կատեգորիաների նկատմամբ չկիրառել և չսահմանել մյուս Կողմի այն ֆիզիկական անձանց ընդհանուր թվի սահմանափակումներ, որոնք կարող են զբաղվածություն ունենալ կոնկրետ ոլորտում (համապատասխան ոլորտում իրականացնել ծառայության մատակարարում) և տնտեսական նպատակահարմարության հաստատման պահանջ (հոդված 26),

4.33. Համաձայնագրի V գլուխը կիրառել Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մի Կողմի ներդրողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված ներդրումների

նկատմամբ, սակայն չկիրառել սուբսիդիաների տրամադրման կամ Կողմի պետական և մունիցիպալ աջակցության այլ ձևերի նկատմամբ (հոդված 28),

4.34. մյուս Կողմի ներդրողների համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ստեղծել բարենպաստ պայմաններ Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումների իրականացման համար, ինչպես նաև մյուս Կողմի ներդրողների ներդրումների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրամադրել լիարժեք անվտանգություն և պաշտպանություն Հայաստանի Հանրապետության տարածքում (հոդված 29),

4.35. մյուս Կողմի ներդրողների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումների համար տրամադրել այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է իր սեփական ներդրողների ներդրումների համար (հոդված 30, կետ 1),

4.36. մյուս Կողմի ներդրողների ներդրումների համար Հայաստանի Հանրապետության տարածքում տրամադրել այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է ցանկացած երրորդ պետության ներդրողների ներդրումների համար (հոդված 31, կետ 1),

4.37. մյուս Կողմի ներդրողների ներդրումների համար պատերազմական գործողությունների, զինված բախման, քաղաքացիական անկարգությունների, քաղաքացիական հուզումների, հեղափոխության, ազգային արտակարգ դրության, խռովության, ապստամբության կամ նմանատիպ այլ իրավիճակների հետևանքով Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ներդրողների ներդրումներին պատճառված վնասի փոխհատուցման համար Հայաստանի Հանրապետության կողմից ընդունվող կամ պահպանվող միջոցների առնչությամբ տրամադրել այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է իր սեփական ներդրողների ներդրումների համար կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների ներդրումների համար (հոդված 32),

4.38. մեկ Կողմի ներդրողների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացրած ներդրումները ուղղակիորեն կամ անուղղակիորեն չենթարկել էքսպրոպրիացիայի, ազգայնացման կամ նմանատիպ ազդեցություն ունեցող միջոցների, որոնք խոչընդոտում են այդ ներդրողի կողմից իր ներդրումների օգտագործումը, տիրապետումը

կամ տնօրինումը (այսուհետ՝ էքսպրոպրիացիա), բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջոցներն իրականացվում են հանրային շահերից ելնելով, մասնավորապես՝ Համաձայնագրի 9-րդ հոդվածի շրջանակներում, առաջին Կողմի օրենսդրությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան. ընդ որում, ապահովել, որ նշված ընթացակարգը պաշտոնապես հրապարակված լինի կամ այլ կերպ հասանելի լինի հանրության կողմից ծանոթանալու համար մինչև էքսպրոպրիացիան իրականացնելու ամսաթիվը, ոչ խտրական հիմունքներով և ժամանակին կատարվող, համարժեք և արդյունավետ փոխհատուցման վճարմամբ՝ Համաձայնագրի 33-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան (հոդված 33, կետ 1),

4.39. ապահովել, որ Համաձայնագրի 33-րդ հոդվածի 1-ին կետում նշված փոխհատուցումը համարժեք լինի էքսպրոպրիացիայի ենթարկվող ներդրումների շուկայական արժեքին, որը հաշվարկվում է այն ամսաթվի դրությամբ գործող գներով, երբ հրապարակայնորեն հայտնի է դարձել փաստացի կամ առաջիկա էքսպրոպրիացիայի մասին. էքսպրոպրիացիայի ամսաթվից մինչև վճարման ամսաթիվը փոխհատուցման մակարդակը ենթակա է տոկոսների հաշվեգրման՝ շուկայական հիմունքով սահմանվող առևտրային դրույքաչափով, ինչպես նաև ապահովել, որ փոխհատուցումն առանց ուշացման վճարվի այն արժույթով, որով ի սկզբանե իրականացվել են ներդրումները և երաշխավորել ներդրողի այդ փոխհատուցումն իր ընտրությամբ ազատ օգտագործվող ցանկացած արժույթով փոխարինելու իրավունք (հոդված 33, կետ 4),

4.40. թույլ տալ Համաձայնագրի 33-րդ հոդվածի 1-ին կետում նշված փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության տարածքից ազատ փոխանցումը մյուս Կողմի ներդրողի կողմից՝ հաշվի առնելով Համաձայնագրի 12-րդ հոդվածի դրույթները (հոդված 33, կետ 5),

4.41. Կողմի կամ նրա կողմից լիազորված մարմնի՝ այդ Կողմի ներդրողին ապահովագրության պայմանագրով սահմանված երաշխիքի հիման վրա կամ այլ ձևով Հայաստանի Հանրապետության և ներդրողի միջև պայմանագրով նախատեսված ոչ առևտրային ռիսկերից երաշխիքների, ոչ առևտրային ռիսկերից վնասի փոխհատուցման վճարում կատարելու դեպքում, որոնք տրամադրել է ներդրումների համար, ճանաչել այդ ներդրման հետ կապված ներդրողի պահանջի կամ իրավունքի փոխանցումն առաջին Կողմին կամ դրա կողմից լիազորված մարմնին՝ սուբրոգացիայի կարգով (հոդված 34, կետ 1),

4.42. բացառությամբ Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված դեպքերի՝ մյուս Կողմի ներդրողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան նրանց կողմից հարկային և այլ պարտավորությունների կատարման պայմանով, երաշխավորել նրանց ներդրումների հետ կապված վճարումների, այդ թվում՝ Համաձայնագրի 35-րդ հոդվածի 1-ին կետում նշվածների ազատ փոխանցումն արտասահման (հոդված 35, կետ 1),

4.43. ապահովել, որ Համաձայնագրի 35-րդ հոդվածի 1-ին կետում նշված վճարումների փոխանցումն իրականացվի առանց անհիմն ուշացման, ազատ օգտագործվող արժույթով՝ փոխանցման ամսաթվի դրությամբ կիրառվող փոխարժեքով՝ այն Հայաստանի Հանրապետության արժութային օրենսդրությանը համապատասխան, եթե ներդրումներն իրականացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում (հոդված 35, կետ 2),

4.44. Համաձայնագիրն ուժի մտնելուց հետո 30 օրվա ընթացքում ավանդապահին տեղեկացնել Համաձայնագրի 36-րդ հոդվածի 3-րդ կետում նշված լիազորված մարմինների մասին, իսկ լիազորված մարմինների փոփոխության դեպքում անհապաղ այդ մասին ծանուցել Համաձայնագրի ավանդապահին (հոդված 36, կետ 4),

4.45. իրականացնել Համաձայնագրի դրույթների իրագործման մոնիթորինգ և յուրաքանչյուր տարի ԱՊՀ Գործադիր կոմիտեին տրամադրել համապատասխան տեղեկատվությունը՝ դրա ամփոփման և Անկախ Պետությունների Համագործակցության կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստին հետագա ուսումնասիրության համար (հոդված 43),

4.46. Համաձայնագրի Ե հավելվածը կիրառել Կողմերի այն միջոցների նկատմամբ, որոնք վերաբերում են ֆինանսական ծառայությունների առևտրի առանձնահատկություններին. վերոհիշյալ հավելվածի դրույթները չկիրառել մատակարարվող ծառայությունների և այն գործունեության նկատմամբ, որն իրականացվում է պետական իշխանության գործառույթների կատարման համար ոչ առևտրային հիմունքներով և ոչ մրցակցության պայմաններով, ինչպես նաև՝ սուբսիդիաների տրամադրման նկատմամբ (Հավելված Ե, առաջին և երկրորդ պարբերություններ),

4.47. Համաձայնագրի Բ և Գ հավելվածներում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկում Հայաստանի Հանրապետության նշած ֆինանսական ծառայությունների համար ապահովել, որ ֆի-

նանսական ծառայությունների առևտրի վրա ազդող բոլոր միջոցները կիրառվեն ողջամիտ, օբյեկտիվ և անկողմնակալ կերպով (Հավելված Ե, կետ 1),

4.48. ֆինանսական ծառայությունների մատակարարման համար թույլտվություն պահանջվելու դեպքում ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և կարգավորման կանոններին համապատասխան ձևակերպված համարվող դիմումը ներկայացնելուց հետո ողջամիտ ժամանակահատվածում դիմումատուին տեղեկացնեն դիմումի վերաբերյալ որոշման մասին և դիմումատուի հարցման հիման վրա հայտի ուսումնասիրության ընթացքի մասին տեղեկատվությունը տրամադրեն առանց անհարկի ուշացման (Հավելված Ե, կետ 2),

4.49. նախքան Ե հավելվածի 3-րդ կետին համապատասխան մշակված կանոններն ուժի մեջ մտնելը՝ Համաձայնագրի Բ հավելվածում Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերում նշված ֆինանսական ծառայությունների ոլորտների համար չկիրառել լիցենզային կամ որակավորման այնպիսի պահանջներ և տեխնիկական ստանդարտներ, որոնցով չեղյալ են համարվում կամ կրճատվում են այն օգուտները, որոնք տրամադրվում են Համաձայնագրի Բ հավելվածում՝ Հայաստանի Հանրապետության անհատական ցանկերում նշված պայմանների համաձայն (Հավելված Ե, կետ 4, պարբերություն 1),

4.50. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվող՝ լիցենզային կամ որակավորման պահանջները և տեխնիկական ստանդարտները համապատասխանեն Համաձայնագրի Ե հավելվածի 5-րդ կետի 1-3-րդ ենթակետերում նշված չափորոշիչներին (Հավելված Ե, կետ 4, պարբերություն 2),

4.51. ֆինանսական ծառայությունների մատակարարների հիմնադրման և (կամ) գործունեության նկատմամբ լիցենզավորում կիրառելու դեպքում ապահովել Ե հավելվածի 5-րդ կետով սահմանված դրույթների կատարումը (Հավելված Ե, կետ 5),

4.52. մշակել Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում գործունեության կարգավորման, հսկողության և վերահսկողության ոլորտում լիազորված մարմինների փոխգործակցության մեխանիզմներ, այդ թվում՝ բանկային ոլորտում, ապահովագրական ոլորտում և արժեթղթերի շուկայում ծառայությունների ոլորտում (Հավելված Ե, կետ 9),

4.53. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, որը վերաբերում է կամ կարող է վերաբերել Համաձայնագրի Ե հավելվածում ընդգրկված հարցերին, հրապարակվի պաշտոնական աղբյուրում, իսկ հնարավորության դեպքում՝ համացանցում հատուկ առանձնացված կայքում այնպես, որ յուրաքանչյուր անձ, որի իրավունքները և (կամ) պարտավորությունները կարող են շոշափվել Հայաստանի Հանրապետության այդ օրենսդրությամբ, ունենա դրա հետ ծանոթանալու հնարավորություն, ինչպես նաև ապահովել, որ այդ օրենսդրությունը հրապարակվի իրավական որոշակիության և այն անձանց հիմնավորված ակնկալիքներն ապահովող ժամկետում, որոնց իրավունքները և (կամ) պարտավորությունները կարող են շոշափվել Հայաստանի Հանրապետության այդ օրենսդրությամբ, սակայն ցանկացած դեպքում՝ մինչև այն ուժի մեջ մտնելու (գործողության մեջ դրվելու) օրը (Հավելված Ե, կետ 10, պարբերություններ 1 և 2),

4.54. ապահովել Համաձայնագրի Ե հավելվածում ընդգրկված հարցերի վերաբերյալ ցանկացած անձի գրավոր այն հարցումներին պատասխանների տրամադրումը, որոնք առնչվում են գործող և (կամ) նախատեսվող օրենսդրությանը, ինչպես նաև ապահովել, որ հարցումներին տրվող պատասխաններն այդպիսի շահագրգիռ անձին տրամադրվեն ոչ ուշ, քան գրավոր հարցումն ստանալու օրվանից 30 օրացուցային օր հետո (Հավելված Ե, կետ 10, պարբերություն 3),

4.55. միջոցներ ձեռնարկել՝ թույլ չտալու համար, որ հիմնական մատակարար հանդիսացող մատակարարները՝ առանձին կամ միասին, կարողանան նախաձեռնել մրցակցությունը խախտող գործողություններ (Հավելված Զ, կետ 1, ենթակետ 1.1),

4.56. ապահովել, որ հիմնական մատակարարին միացումն ապահովվի Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և տեխնիկական նորմերին համապատասխան՝ ցանցի ցանկացած կետում, որտեղ դա տեխնիկապես իրագործելի է, և այդ միացումը ապահովել Համաձայնագրի Զ հավելվածի 2-րդ կետի, 2.1-ին ենթակետում շարադրված պայմաններով (Հավելված Զ, կետ 2, ենթակետ 2.1),

4.57. ապահովել, որ լիցենզավորման ընթացքում թափանցիկ լինեն լիցենզիան ստանալու բոլոր չափորոշիչները և լիցենզիայի վերաբերյալ հարցման մասին որոշումն ընդունելու ժամկետները և անհատական լիցենզիաների տրամադրման պայմանները, ինչպես նաև ապահովել, որ լիցենզիայի տրամադրումը մերժելու պատճառների մասին տեղեկացվի լիցենզիայի հարցումը ներկայացրած անձին՝ վերջինիս խնդրանքով (Հավելված Զ, կետ 4),

4.58. ապահովել, որ կարգավորող մարմինը գործի բազային հեռահաղորդակցության ծառայությունների մատակարարներից անկախ և հաշվետու չլինի նրանց և երաշխավորել, որ մարմնի որոշումները և ընթացակարգերը տվյալ շուկայի բոլոր մասնակիցների նկատմամբ օբյեկտիվ բնույթ կկրեն (Հավելված Զ, կետ 5):

5. Համաձայնագրի 36-րդ հոդվածով սահմանվում է Կողմի և մյուս Կողմի ներդրողի միջև վեճերի լուծման կարգը, համաձայն որի՝ յուրաքանչյուր Կողմ արբիտրաժային վճիռը ճանաչում է որպես վերջնական ու պարտադիր ուժ ունեցող և պարտավորվում է ապահովել դրա կատարումն իր տարածքում իր օրենսդրությանը համապատասխան, եթե միայն առկա չեն Համաձայնագրի 36-րդ հոդվածի 16-րդ կետում սահմանված դեպքերը, իսկ Համաձայնագրի 40-րդ հոդվածով սահմանվում է, որ Կողմերի միջև Համաձայնագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը լուծվում են խորհրդակցությունների և 20 բանակցությունների անցկացման միջոցով կամ «Ազատ առևտրի գոտու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագրի 19-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգերի միջոցով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Ծառայությունների ազատ առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

4 հունիսի 2024 թվականի
ՍԴՈ-1735

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՍՈՉԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ, ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1735 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Ծառայությունների ազատ առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1735 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Ծառայությունների ազատ առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1735 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունիսի 4-ի ՍԴՈ-1735 որոշմամբ 2023 թվականի հունիսի 8-ին Սոչիում ստորագրված «Ծառայությունների ազատ առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» համաձայնագրով ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում

ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանու-

թյունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական

տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային

փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«04» հունիսի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 401-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 4 հունիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Հայկ Մամիջանյանի ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Ս. Պողոսյանի, Ա. Նավասարդյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայկ Մամիջանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2021 թվականի հուլիսի 27-ին և ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:

Օրենսգրքի՝ «Բացառիկ վերանայման վարույթները և բացառիկ վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակը» վերտառությամբ 401-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Բացառիկ վերանայման ենթակա են՝

1) օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատարանի որոշումը.

2) մինչդատական ակտերի վիճարկման վարույթի շրջանակներում կայացված և օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտը, որով հաստատվում է քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու իրավաչափությունը, քրեական հետապնդումը նորոգելու անիրավաչափությունը կամ վարույթը կարճելու իրավաչափությունը.

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դատական ակտերի վերանայման արդյունքով վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած որոշումը»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը որևէ փոփոխության և լրացման չի ենթարկվել:

Գործի քննության առիթը Հայկ Մամիջանյանի 2024 թվականի հունվարի 31-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով Օրենսգրքի վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Գործի դատավարական նախապատմությունը

2023 թվականի մարտի 14-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Հայկ Մամիջանյանի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ այնքանով, որքանով չեն նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին

խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

Սահմանադրական դատարանը 2023 թվականի մայիսի 30-ի ՍԴԱՈ-52 աշխատակարգային որոշմամբ որոշել է. ««Հայկ Մամիջանյանի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ այնքանով, որքանով չեն նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, կարճել»:

Սահմանադրական դատարանը, 2023 թվականի մայիսի 30-ի ՍԴՈ-1690 որոշմամբ, վիճարկվող դրույթի՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի (այդ թվում՝ վերջինիս իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության) սահմանադրականությունը գնահատելով Սահմանադրության 40-րդ հոդվածին և 61-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության առումով, որոշել է.

«1. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումն օրենքով սահմանված կարգով ենթակա է բողոքարկման դատարան:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ»:

Դիմողը՝ թիվ ԵԴ/0753/11/21 գործով Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը

վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման դեմ ներկայացրել է բացառիկ վերանայման բողոք:

Վճռաբեկ դատարանը 2023 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ Հայկ Մամիջանյանի ներկայացուցչի կողմից ներկայացված բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով բացառիկ վերանայման վարույթի հարուցումը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանը 2023 թվականի մայիսի 30-ին թիվ ՍԴՈ-1690 որոշմամբ արձանագրել է, որ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է այդ որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ: Սակայն, հիմք ընդունելով 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասը, որում սպառիչ նախատեսված են բացառիկ վերանայման ենթակա դատական ակտերը, որոնց թվում խափանման միջոցի վերաբերյալ կայացրած ակտը ներառված չէ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացուցիչ Ս. Պողոսյանի բողոքի հիման վրա բացառիկ վերանայման վարույթի հարուցումը ենթակա է մերժման, քանի որ բողոքը բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ բացառիկ վերանայման»:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը նշում է, որ Օրենսգրքի՝ «Բացառիկ վերանայումը» վերտառությամբ 49-րդ գլխում, մասնավորապես՝ 401-րդ հոդվածի 1-ին մասում, նոր հանգամանքներով վարույթը սահմանվել է որպես բացառիկ վերանայման վարույթի տարատեսակ: Ընդ որում, Օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասում, ի թիվս այլնի, նոր հանգամանքով բողոք բերելու հիմք է նախատեսված այն դեպքը, երբ Սահմանադրական դատարանը տվյալ վարույթով դատարանի կիրառած նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն իր մեկնաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ: Միաժամանակ, Օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասում սպառիչ նախատեսված են բացառիկ վերանայման ենթակա դատական ակտերը, որոնց թվում խափանման միջոց կիրառելու

վերաբերյալ կայացված դատական ակտերը նշված չեն: Այսինքն՝ ստացվում է, որ խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատական ակտով դիմողի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանն այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված խափանման միջոցի վերաբերյալ վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա չէ վերանայման:

Դիմողը գտնում է, որ անկախ որևէ հանգամանքից և առանց որևէ բացառության կամ վերապահման, նոր հանգամանքի հիմքով վերանայման ենթակա պետք է լինեն բոլոր այն վերջնական դատական ակտերը, որոնցով Դիմողի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթը Սահմանադրական դատարանը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, ինչպես նաև, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն Դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Դիմողի գնահատմամբ՝ այն դեպքերում, երբ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումը պարունակում է նշում՝ կոնկրետ գործով կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայման ենթակա լինելու մասին, այդպիսի վերջնական դատական ակտերը, անկախ իրենց բնույթից, տեսակից կամ այլ հատկանիշներից, առանց որևէ բացառության անվերապահորեն ենթակա են վերանայման:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, քանի որ նախ՝ դատարանների կողմից Սահմանադրությանը հակասող նորմի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ նորմատիվ իրավական դրույթի կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները նոր հանգամանքի հիմքով դատական բողոքարկման միջոցով վերականգնելու լիարժեք հնարավորություն չի ընձեռում՝ սահմանափակելով դատարանի մատչելիության իրավունքը, և երկրորդ՝ անարդյունավետ է դարձնում Սահմանադրական դատարանում անձանց

իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը, քանի որ անհատական դիմումի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կայացրած համապատասխան որոշումները մնում են անկատար, քանի որ չեն վերանայվում տվյալ անհատական դիմումը ներկայացնող անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը, այդ թվում՝ խափանման միջոցի վերաբերյալ, և չեն վերականգնվում դրանցով խախտված հիմնական իրավունքները և ազատությունները:

Դիմողը վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության 75-րդ հոդվածին հակասությունը հիմնավորում է նրանով, որ վիճարկվող դրույթով սահմանված է այնպիսի կառուցակարգ, որը ոչ միայն արդյունավետ չէ դատական պաշտպանության իրավունքի իրականացման համար, այլ նաև խոչընդոտում է նոր հանգամանքի հիմքով որոշակի դատական ակտերի վերանայմանը՝ արժեզրկելով նաև սահմանադրական արդարադատության միջոցով անձի խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտը, քանի որ վիճարկվող դրույթով սահմանված է Սահմանադրական դատարանի որոշման արդյունքում նոր հանգամանքի հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի կառուցակարգ, որը լիարժեք հնարավորություն չի տալիս անձին Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու իր խախտված իրավունքը:

Միաժամանակ, Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը հակասում է նաև Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասին և 80-րդ հոդվածին, այնքանով, որքանով, որ վիճարկվող դրույթը չի համապատասխանում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասին, ինչպես նաև, որ դրանով սահմանված կառուցակարգի հետևանքով խախտվում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի բուն էությունը:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող) գտնում է, որ հիմնարար խախտման, նոր կամ նոր երևան եկած հանգամանքներից զատ, օրենսդիրը մասնավորեցրել է այն բոլոր հնարավոր դատական ակտերի շրջանակը, որոնք, չնայած ստացել են վերջնականություն, սակայն, որպես անձանց սահմանադրական իրավունքների երաշխիք, կարող են վերանայվել բացառիկության կարգով:

Պատասխանողի պնդմամբ՝ վիճարկվող դրույթը, ոչ թե բացառում է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի բացառիկ վերանայումը, այլ նշում է այն դատական ակտերի տեսակը, որոնք ենթարկվում են բացառիկ վերանայման: Հակառակ պարագայում, եթե դիտարկվի այնպես, որ վիճարկվող դրույթով բացառվում է նոր հանգամանքի հիմքով բացառիկ վարույթի հարուցումը, ապա Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և/կամ Օրենսգրքի 403-րդ հոդվածի 4-րդ մասը կդառնա ինքնանպատակ:

Պատասխանողի գնահատմամբ՝ Օրենսգրքի 403-րդ հոդվածում նշված բոլոր հիմքերի բնույթից ակնհայտ է, որ օրենսդիրը սահմանել է նոր հանգամանքներով բողոք բերելու առանձնահատուկ հիմքերը, և այդ հիմքերի բնույթից և բովանդակությունից հետևում է, որ այն չի սահմանափակվում որոշակի դատական ակտերի տեսակով, այլ դրանք առանձին սահմանված հիմքեր են:

Պատասխանողը պնդում է, որ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառիկ վերանայման ենթակա ակտերի շրջանակի նախատեսումը չի սահմանափակում այն դատական ակտերի բացառիկ վերանայումը, որոնցում դատարանի կիրառած նորմատիվ իրավական ակտի դրույթը Սահմանադրական դատարանն իր մեկնաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Վերոնշյալի հիման վրա՝ Պատասխանողն արձանագրում է, որ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ, մասնավորապես՝ այն մեկնաբանությամբ, որ բացառիկ վերանայման բողոք բերելու հիմք է՝ Սահմանադրական դատարանի՝ դատարանի կիրառած նորմատիվ իրավական ակտն իր մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու և դրույթի՝ այլ մեկնաբանությամբ կիրառելու փաստերը՝ անկախ դատական ակտի տեսակից: Այլ կերպ՝ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասը չի սահմանափակում Օրենսգրքի 403-րդ հոդվածի կիրառությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող իրավադրույթի սահմանադրականությունը պարզելու

համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք Օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով անձի նկատմամբ կայացված՝ խափանման միջոցի կիրառման վերաբերյալ վերջնական դատական ակտը վերանայելու հնարավորություն, համահունչ է Սահմանադրության 61 և 75-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությանը:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործը քննվում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթը քննության առարկա է դարձնում միայն խափանման միջոցի կիրառման վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտերը Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով վերանայելու հնարավորության մասով:

5.1. Խափանման միջոցի կիրառման վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտերը նոր հանգամանքի հիմքով վերանայելու իրավական հնարավորությունը բացառող՝ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասը Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթի, կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտի նշանակության, անձի խախտված իրավունքների՝ Սահմանադրական դատարանի միջոցով դատական պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության համատեքստում:

Անձի իրավունքներն ու ազատություններն իրավական պետությունում կարող են երաշխավորվել, ապահովվել և արդյունավետորեն պաշտպանվել, ի թիվս այլնի, անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացմանը համարժեք սահմանադրական և օրենսդրական երաշխիքների ապահովման պայմաններում: Այս առումով իր ուրույն սահմանադրական առաքելությունն ունի Սահմանադրական դատարանը, որի որոշումներն առանցքային նշանակություն ունեն ինչպես հանրային կյանքում սահմանադրական մշակույթի ձևավորման և զարգացման, այնպես էլ սահմանադրական արդարադատություն հայցող յուրաքանչյուր անձի՝ խախտված սահմանադրական իրավունքների վերականգնման համատեքստում:

Սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների ակտերի համակարգում իր որոշումների առանձնահատուկ իրավաբանական բնույթին: Մասնավորապես՝ 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.

«- սահմանադրական արդարադատություն իրականացնելը և այդ գործառույթի շրջանակներում գործով ըստ էության որոշում կայացնելը, (...), ՀՀ սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է (ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի երկրորդ մաս և 93-րդ հոդված), [համանման կարգավորում առկա է նաև 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասում և 171-րդ հոդվածի 1-ին մասում],

- քննելով սահմանադրական (հանրային-իրավական բնույթի) գործեր՝ սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման դատական համակարգի մյուս մարմինների՝ ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարանների կողմից,

- իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելիս, ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 և 63-րդ հոդվածների պահանջներից [2018 թվականի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ և 63-րդ հոդվածներ], սահմանադրական դատարանը գնահատում է նաև արդարադատական (ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների) պրակտիկան, բացահայտելով նաև կիրառվող (այդ թվում՝ դատական պրակտիկայում) օրենքների (դրանց առանձին դրույթների) սահմանադրաիրավական բովանդակությունը՝ զարգացնելով ինչպես սահմանադրական, այնպես էլ ճյուղային իրավունքը,

- իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշմանը հաջորդում են իրավական հետևանքներ (նոր հանգամանքներ), որոնք պարտադիր հանգեցնում են օրենքով սահմանված կարգով դատական ակտերը վերանայելուն»:

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ «[Սահմանադրական դատարանի] ակտերը ՀՀ իրավական համակարգում ունեն իրենց առանձնահատուկ տեղն ու դերը՝ թե՛ բովանդակությամբ, իրավակարգավորիչ նշանակությամբ և թե՛ ունեցած

իրավական հետևանքների առումներով: Դրանցով կարգավորվող հարաբերությունները վերաբերում են հասարակական կյանքի բոլոր բնագավառներին և իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտներին: Սահմանադրական դատարանի որոշումները ենթակա են կատարման անհապաղ (կամ դատարանի կողմից նախանշված ժամկետներում) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և ենթակա չեն քննարկման (վիճարկման, քննության) պետական, տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի, կազմակերպության կամ անհատի կողմից»:

Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման գործիքակազմի միջոցով խախտված հիմնական իրավունքների վերականգնման ապահովման համատեքստում Սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի ՍԴՈ-984 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն՝ խնդրո առարկա դեպքում, խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու դեպքում: Հետևաբար, դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնման միջոց, պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի իրավաբանական ուժը կորցնելուն»:

Իսկ Սահմանադրական դատարանի 2013 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1099 որոշմամբ ընդգծվել է այն հանգամանքը, որ «(…) սահմանադրական դատարան դիմելու՝ անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով կայացված որոշումների հիման վրա անհրաժեշտ օրենսդրական ընթացակարգերով դատական ակտերի վերանայումը Սահմանադրության գերակայությունը երաշխավորող արդյունավետ միջոց է, հետևաբար նաև՝ սահմանադրաիրավական պահանջ: Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի առաքելությունը հանգում է այդ ինստիտուտի միջոցով խախտված սահմանադրական իրավունքների վերականգնման ապահովմանը: Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայության պայմաններում դատական ակտի վերանայման անհրաժեշտությունը բխում է նաև կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտի էությունից և նշանակությունից: Ուստի, այն դեպքում, երբ անձի նկատմամբ վերջնական դատական ակտը կայացվել է Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչված դրույթի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ սահմանադրական ճանաչված, սակայն ըստ Սահմանադրական դատարանի՝ դիմողի նկատմամբ այլ մեկնաբանությամբ կիրառված դրույթի կիրառմամբ, ապա նշված դեպքի հետևանքը պետք է լինի նոր հանգամանքի հիմքով այդ դատական ակտի վերանայումը: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրի կողմից պետք է նախատեսվեն դրա իրացման համապատասխան կառուցակարգեր:

Ըստ այդմ, Սահմանադրական դատարանն արձանագրում է իր կողմից կայացված որոշումների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների առնչությամբ օրենսդրական կարգավորումների հստակության և արդյունավետության առանցքային կարևորությունը՝ ընդգծելով, որ այդ իրավակարգավորումները մի կողմից՝ անմիջականորեն երաշխավորում են արդարադատության մատչելիությունը, մյուս կողմից՝ ապահովում են անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունը: Նման պայմաններում անձի՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու տեսանկյունից հիմնարար նշանակություն ունի Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա նոր հանգամանքի

հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետ գործարկումը: Այս առումով Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդրական կարգավորումները պետք է հիմնվեն այն ողջամիտ տրամաբանության վրա, որ հանրային իշխանության մարմինները, սահմանափակված լինելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով, պարտավոր են ապահովել խախտված իրավունքների վերականգնումը:

5.2. Սույն գործով սահմանադրաիրավական վեճի քննության շրջանակում Սահմանադրական դատարանը կարևոր է համարում քննության առարկա դարձնել ներպետական օրենսդրությամբ նախատեսված՝ անձի խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված բացառիկ վերանայման հնարավորությունը՝ Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման համատեքստում:

Այսպես՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադիրը, մարդու հիմնական իրավունքները և ազատությունները դիտարկելով որպես ժողովրդավարական և իրավական պետության անսասան հիմքեր, դրանց ապահովումը երաշխավորել է իրավունքների պաշտպանության և վերականգնման արդյունավետ ընթացակարգերով, որոնք կենսագործվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների իրացման միջոցով՝ թույլ չտալով, որ հիմնական իրավունքները և ազատությունները կրեն լոկ հռչակագրային բնույթ:

Սահմանադրական դատարանը, բացահայտելով դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունը, ի թիվս այլնի, արտահայտել է ներքոնշյալ իրավական դիրքորոշումները.

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների

ենթադրյալ խախտումներից» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719),

- «(…) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը (…)» (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249),

- «Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257):

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքը երաշխավորված կլինի, եթե ներպետական օրենսդրական կարգավորումներն ամրագրեն դատական պաշտպանության իրավունքի իրացման համար անհրաժեշտ գործիքակազմ, և որևէ ընթացակարգ (կամ դրա բացակայություն) չխոչընդոտի դատական պաշտպանության իրավունքի իրացմանը:

Միաժամանակ, դատական պաշտպանության իրավունքը քննարկման առարկա դարձնելով սահմանադրական կոնկրետ վերահսկողության ինստիտուտի նշանակության և անձի խախտված իրավունքների վերականգնման առնչությամբ դատական պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության համատեքստում՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում հիշատակել նաև Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ «Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը մասնավորապես բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը: Այս բնորոշ գծերին համահունչ՝ ՀՀ ներպետական օրենսդրությունը նախատեսել է շահագրգիռ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ սահմանադրական դատարանի որոշման արդյունքում տվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը, ինչը լիարժեքություն և արդյունավետություն է հաղորդում սահմանադրական դատարանում անհատական դիմումի հիման վրա անձի սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների պաշտպանությանը»:

Նշված մոտեցմանը համահունչ՝ Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումի հիման վրա՝ անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության համակարգի լիարժեքությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով, օրենսդիրը նախատեսել է դիմողի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ Սահմանադրական դատարանի որոշման արդյունքում տվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը: Մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա» վերտառությամբ 69-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է, որ նույն հոդվածում նշված գործերով՝ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, Սահմանադրական դատարանի 2018 թվականի մայիսի 15-ի ՍԴՈ-1417 որոշման համաձայն՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ «(...) դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով», յուրաքանչյուր դեպքում Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում անհրաժեշտ չէ ամրագրել, քանի որ այն պարտադիր է հիշյալ սահմանադրական օրենքի ուժով:

Միաժամանակ, Օրենսգրքի՝ «Բացառիկ վերանայման վարույթները և բացառիկ վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակը» վերտառությամբ 401-րդ հոդվածի 2-րդ մասը[1] սահմանում է.

[1] Օրենսգրքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 483-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ մինչև նույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ 2022 թվականի հուլիսի 1-ից սկսած բացառիկ վերանայման բողոքները բերվում և քննվում են նույն օրենսգրքով սահմանված կարգով:

«2. Բացառիկ վերանայման ենթակա են՝

1) օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատարանի որոշումը.

2) մինչդատական ակտերի վիճարկման վարույթի շրջանակներում կայացված և օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտը, որով հաստատվում է քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու իրավաչափությունը, քրեական հետապնդումը նորոգելու անհիրավաչափությունը կամ վարույթը կարճելու իրավաչափությունը.

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դատական ակտերի վերանայման արդյունքով վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած որոշումը»:

Իսկ վիճարկվող դրույթի հետ փոխկապակցված՝ Օրենսգրքի՝ «Բացառիկ վերանայման բողոք բերելու հիմքերը» վերտառությամբ 403-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, որպես նոր հանգամանքներով բողոք բերելու հիմք, ի թիվս այլնի, սահմանում է նաև այն դեպքը, երբ Սահմանադրական դատարանը տվյալ վարույթով դատարանի կիրառած նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն իր մեկնաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Միաժամանակ, Օրենսգրքի 407-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով որպես բացառիկ վերանայման վարույթի հարուցումը մերժելու հիմք նախատեսված է այնպիսի դատական ակտի դեմ բողոք բերելը, որը ենթակա չէ բացառիկ վերանայման:

Փաստորեն, Օրենսգրքի վերոնշյալ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ նոր հանգամանքի հիմքով բացառիկ վերանայման գործիքակազմը հնարավոր կլինի կիրառել հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայության պայմաններում.

- Սահմանադրական դատարանը տվյալ վարույթով դատարանի կիրառած նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն իր մեկնաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ,

և, միևնույն ժամանակ,

- դիմողի նկատմամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված դրույթը կիրառվել է կամ Սահմանադրական դատարանի

կողմից այդ դրույթն իր մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված, սակայն այլ մեկնաբանությամբ կիրառվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով, վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատարանի որոշմամբ, ինչպես նաև մինչդատական ակտերի վիճարկման վարույթի շրջանակներում կայացված և օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտով, որով հաստատվում է քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու իրավաչափությունը, քրեական հետապնդումը նորոգելու անիրավաչափությունը կամ վարույթը կարճելու իրավաչափությունը, ինչպես նաև վերը թվարկված դատական ակտերի վերանայման արդյունքով վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած որոշմամբ:

Այսինքն՝ օրենսդրական կարգավորումները հանգում են նրան, որ նոր հանգամանքի հիմքով բացառիկ վերանայման գործիքակազմով հնարավոր է վերանայել բացառապես վիճարկվող նորմում սահմանված դատավճիռները և որոշումները: Ըստ այդմ, այդ նորմում չներառված՝ խափանման միջոցի կիրառման վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտի պարագայում բացառիկ վերանայման վարույթի հարուցումը ենթակա է մերժման այն հիմքով, որ բողոքը բերվել է այն դատական ակտի դեմ, որը ենթակա չէ բացառիկ վերանայման: Արդյունքում ստեղծվում է իրավիճակ, երբ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը ճանաչվում է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ ճանաչվում է Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, սակայն չի ապահովվում դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի վերանայումը (ինչպես նշվեց, այդ պահանջը սահմանված է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասով)՝ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արգելքի պատճառով: Նման պայմաններում Օրենսգրքում դիմողի նկատմամբ կայացված՝ խափանման միջոցի կիրառման վերաբերյալ վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու հնարավորության բացակայությունն արժեզրկում է

անձի՝ սահմանադրական արդարադատություն հայցելու իրավունքի բուն էությունը՝ սահմանադրական արդարադատությունը դարձնելով պատրանքային:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ դատավարական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումները չպետք է խոչընդոտեն Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը, անձի խախտված իրավունքների վերականգնումը: Անձը պետք է ունենա օրինական ուժի մեջ մտած՝ խափանման միջոցի կիրառման վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքով վերանայելու բողոք ներկայացնելու հնարավորություն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը վերանայելու համար՝ պայմանավորված Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արգելքի գոյությունն իմաստազրկում է որոշ դեպքերում Սահմանադրական դատարան անհատական դիմումներ ներկայացնելը, քանի որ Սահմանադրական դատարանի կողմից կայացվող որոշումը, փաստորեն, դիմողի համար կոնկրետ գործով չի կարող լինել վերջնական դատական ակտի վերանայման նախադրյալ, արգելափակվում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով Սահմանադրական դատարանի որոշման կատարումը, փակուղի է մտնում իրավունքի գերակայության, հետևաբար՝ Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը: Ավելին, այդ արգելքի առկայության պայմաններում, որոշ դեպքերում հնարավորություն չի ստեղծվում անձի խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման և պաշտպանության համար, ինչը խնդրահարույց է Սահմանադրության 61-րդ հոդվածով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի առումով:

5.3. Սահմանադրական դատարանը սույն գործով սահմանադրաիրավական վեճն անհրաժեշտ է համարում դիտարկել նաև Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ապահովման լույսի ներքո՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի համատեքստում:

Սահմանադրության 75-րդ հոդվածն ամրագրում է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահ-

մանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրական դատարանը, նախկինում անդրադառնալով սույն սահմանադրաիրավական պահանջի բովանդակությանը, հայտնել է հետևյալ դիրքորոշումները.

«Սահմանադրության վերոնշյալ պահանջն ուղղված է Սահմանադրությամբ բամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ և իրական կենսագործմանը, քանի որ իրավունքի կամ ազատության միայն ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար, ուստի համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու հարցում» (2021 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴՈ-1618 որոշում):

«(…) Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությունից անմիջականորեն բխում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ օրենքով սահմանելու իրավունքի պաշտպանությանը միտված իրավական այնպիսի միջոցներ, որոնք կապահովեն անկախ, անաչառ և մատչելի արդարադատության միջոցով անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ, արդար պաշտպանություն՝ ինչպես գործի ըստ էության քննության, այնպես էլ դատական ակտերի հետագա բողոքարկման շրջանակներում:

(…)

Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջն է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հետևաբար, այս տեսանկյունից Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն իրավունքի իրացման կարգի օրենքով նախատեսման փաստը սոսկ, այլև նման կարգի արդյունավետությունը, այսինքն՝ օրենքի նորմերում բովանդակվող իրավակարգավորիչ այնպիսի միջոցների, ձևերի առկայությունը և դրանց գործադրման հնարավորությունը, որոնք կերաշխավորեն սահմանադրորեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը՝ կոնկրետ դեպքում հաշվի առնելով նաև Սահմանադրության 78, 79, 80 և 81-րդ հոդվածների պահանջները» (2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշում):

«Սահմանադրական դատարանը փաստում է, որ ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը» (2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշում):

«Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները» (2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշում):

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո՝ անդրադառնալով սույն գործով բարձրացված հարցին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը խիստ սահմանափակել է բացառիկ վերանայման առարկայի շրջանակը՝ սահմանելով, որ բացառիկ վերանայման են ենթակա բացառապես օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատարանի որոշումը, մինչդատական ակտերի վիճարկման վարույթի շրջանակներում կայացված և օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտը, որով հաստատվում է քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու իրավաչափությունը, քրեական հետապնդումը նորոգելու անհիրավաչափությունը կամ վարույթը կարճելու իրավաչափությունը, ինչպես նաև վերը թվարկված դատական ակտերի վերանայման արդյունքով վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած որոշումը: Այսինքն՝ օրենսդիրը նոր հանգամանքով դատական ակտի վերանայումը հնարավոր է համարել միայն վերոնշյալ դատական ակտերի դեպքում, ըստ այդմ էլ՝ նշված

դատական ակտերի շրջանակից դուրս կայացված դատական ակտի դեմ բողոք բերելը համարել է բացառիկ վերանայման վարույթի հարուցումը մերժելու հիմք:

Սույն գործով ներկայացված դիմումի հարուցման հիմք ծառայող թիվ ԵԴ/0753/11/21 գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Վճռաբեկ դատարանը որոշել է Դիմողի ներկայացուցչի բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով բացառիկ վերանայման վարույթի հարուցումը մերժել՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանը 2023 թվականի մայիսի 30-ին թիվ ՍԴՈ-1690 որոշմամբ արձանագրել է, որ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է այդ որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ: Սակայն, հիմք ընդունելով 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասը, որում սպառիչ նախատեսված են բացառիկ վերանայման ենթակա դատական ակտերը, որոնց թվում խափանման միջոցի վերաբերյալ կայացրած ակտը ներառված չէ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացուցիչ Ս. Պողոսյանի բողոքի հիման վրա բացառիկ վերանայման վարույթի հարուցումը ենթակա է մերժման, քանի որ բողոքը բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ բացառիկ վերանայման»:

Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով օրենսդիրը չի նախատեսել անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր Դիմողի նկատմամբ կայացված՝ խափանման միջոցի կիրառման վերաբերյալ վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը դիմողի նկատմամբ կիրառված դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանն այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն Դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեև օրենսդրի կողմից Օրենսգրքում սահմանվել են բացառիկ վերանայմանը վերաբերելի

իրավանորմեր, սակայն դրանք, իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի բացակայության պայմաններում, ամբողջապես չեն ապահովում անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունն այնքանով, որքանով խափանման միջոցի կիրառման վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտով անձի հիմնարար իրավունքի խախտումը Սահմանադրական դատարանի կողմից արձանագրվելու պայմաններում չի նախատեսվում անձի նկատմամբ կայացված դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու հնարավորություն, ինչը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, խնդրահարույց է նաև Սահմանադրության 75-րդ հոդվածի համատեքստում:

Ընդ որում, Սահմանադրական դատարանը հատկապես ընդգծում է այն փաստը, որ Սահմանադրական դատարանի 2023 թվականի մայիսի 30-ի ՍԴՈ-1690 որոշման հիմքով Հայկ Մամիջանյանի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով չվերանայելն ըստ էության հանգեցնում է դիմողի՝ Սահմանադրական դատարանի վերը նշված որոշմամբ արձանագրված՝ Սահմանադրության 40-րդ հոդվածով և 61-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավունքների շարունակական խախտման:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու հնարավորություն խափանման միջոցի կիրառման վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտով անձի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, անձի նկատմամբ կիրառված դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն վերջինիս նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, համահունչ չէ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված սահմանադրաիրավական պահանջին, քանի որ չի երաշխավորում Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնական իրավունքի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով անձի նկատմամբ կայացված՝ խափանման միջոցի կիրառման վերաբերյալ վերջնական դատական ակտը վերանայելու հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 40, 61 և 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

4 հունիսի 2024 թվականի
ՍԴՈ-1736

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 11 հունիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Արտաքին գործերի նախարարի տեղակալ Վ. Կոստանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև դիվանագի-

տական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացվելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի ապրիլի 18-ի N 527-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացվելու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի ապրիլի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացվելու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի հունվարի 26-ին Թբիլիսիում՝ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների աշխատանքային հնարավորությունները բարելավելու նպատակով:

2. Համաձայնագրով նախատեսվում է վարձատրվող գործունեությամբ զբաղվելու թույլտվությունները տրամադրել այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում դիվանագիտական ներկայացուցչության կամ

հյուպատոսական հիմնարկի անձնակազմն ընդունող պետությունում մնում է հավատարմագրված:

3. Ըստ Համաձայնագրի՝ վարձատրվող գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը կարող է մերժվել գործունեության այն տեսակների դեպքում, որոնք, ազգային անվտանգության նկատառումներից և այլ ազգային շահերից ելնելով, կարող են իրականացվել միայն ընդունող պետության քաղաքացիների կողմից:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է՝

4.1. թույլատրել Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսական հիմնարկի անձնակազմի ընտանիքի անդամներին, փոխադարձության հիման վրա և Համաձայնագրի դրույթներին համապատասխան, Հայաստանի Հանրապետությունում զբաղվել վարձատրվող գործունեությամբ (հոդված 1),

4.2. Արտաքին գործերի նախարարության միջոցով անհապաղ և պաշտոնապես տեղեկացնել Վրաստանի դեսպանությանը, որ վարձատրվող գործունեությամբ զբաղվելու թույլտվություն հայցող ընտանիքի անդամն աշխատելու թույլտվություն է ստանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության (հոդված 3, մաս 1),

4.3. ապահովել, որ աշխատանքի թույլտվությունների տրամադրման համար գումար չգանձվի (հոդված 4),

4.4. երաշխավորել, որ զբաղվածության կամ վարձատրվող գործունեության բնույթի կամ տեսակի սահմանափակումներ, որոնցում շահառուները կարող են ներգրավվել, չլինեն: Գործունեության այն տեսակների դեպքում, որոնց համար պահանջվում են հատուկ որակներ կամ որակավորումներ, անհրաժեշտ է, որ շահառուն համապատասխանի Հայաստանի Հանրապետությունում այդպիսի մասնագիտությունների կամ գործունեության կատարումը կարգավորող կանոններին (հոդված 5, մաս 1):

5. Ըստ Համաձայնագրի՝ այն դեպքերում, երբ վարձատրվող գործունեություն իրականացնելու թույլտվություն ունեցող շահառուն, 1961 թվականի ապրիլի 18-ի՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի, 1963 թվականի ապրիլի 24-ի՝

«Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի կամ ցանկացած այլ կիրառելի միջազգային փաստաթղթի դրույթների համաձայն, օգտվում է ընդունող պետության քաղաքացիական և վարչական իրավազորության նկատմամբ անձեռնմխելիությունից, այսպիսի անձեռնմխելիությունը չի տարածվում վարձատրվող գործունեություն իրականացնելու ընթացքում կատարած ցանկացած գործողության վրա, և նրա վրա տարածվում է ընդունող պետության քաղաքացիական կամ վարչական օրենսդրությունը:

6. Համաձայնագրի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, եթե վարձատրվող գործունեություն իրականացնելու թույլտվություն ունեցող անձն օգտվում է ընդունող պետության քրեական իրավազորության նկատմամբ անձեռնմխելիությունից, ըստ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի 31 և 37-րդ հոդվածների կամ Համաձայնագրի կողմերի համար պարտադիր ուժ ունեցող այլ կիրառելի միջազգային համաձայնագրի, ուղարկող պետությունը լրջորեն դիտարկում է այդ անձի՝ քրեական հետապնդման նկատմամբ անձեռնմխելիությունը վերացնելու վերաբերյալ ընդունող պետության ցանկացած դիմում, եթե այդ անձը պատասխանատու է վարձատրվող գործունեության իրականացման ժամանակ քրեական հանցագործություն կատարելու համար:

7. Ըստ Համաձայնագրի՝ 1961 թվականի ապրիլի 18-ի՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի, 1963 թվականի ապրիլի 24-ի՝ «Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի և Համաձայնագրի կողմերի համար պարտադիր ուժ ունեցող այլ կիրառելի միջազգային կոնվենցիաների շրջանակներում ընդունող պետությունում վարձատրվող գործունեության մեջ ներգրավված շահառուները կրում են իրենց գործունեության ընթացքում ստացած և այդ գործունեությունից բխող եկամտի նկատմամբ կիրառվող պարտավորություններ՝ ընդունող պետության ազգային օրենսդրության համապատասխան:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները

համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվողգործունեությունիրականացվելումասին»համաձայնագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

11 հունիսի 2024 թվականի
ՍԴՈ-1737

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1737 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացվելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1737 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացվելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1737 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն

իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1737 որոշմամբ 2024 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացվելումասին»համաձայնագրումամրագրվածպարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմա-

նադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդու-

նելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային

փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին

անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ

Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«11» հունիսի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 2 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 11 հունիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ. Տերտերյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնա-

գրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2 համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի ապրիլի 25-ի N 568-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2 համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի ապրիլի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության (այսուհետ նաև՝ Վարկառու) ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև (այսուհետ նաև՝ Բանկ) «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի մայիսի 11-ին, որը փոփոխվել է 2022 թվականի փետրվարի 14-ին (այսուհետ նաև՝ Սկզբնական վարկային համաձայնագիր):

Համաձայնագրով Բանկը Վարկառուին Վարկային համաձայնագրով սահմանված կարգով պետք է տրամադրեր 14,600,000 եվրո գումարի չափով վարկ՝ չորս տրանշով՝ Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) իրականացման համար:

Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրով Բանկի կողմից Վարկառուին տրամադրման ենթակա վարկի գումարի չափը փոփոխվել է՝ կազմելով 17,320,000 եվրո, որը ենթակա է վճարման չորս տրանշով՝ հետևյալ համամասնությամբ՝

1) Տրանշ Ա՝ 5,300,000 եվրոյի չափով,
2) Տրանշ Բ՝ 5,300,000 եվրոյի չափով,
3) Տրանշ Գ՝ 4,000,000 եվրոյի չափով և
4) Տրանշ Դ՝ 2,720,000 եվրոյի չափով:

Ծրագրի նպատակն է աջակցել Վարկառուին Գյումրու քաղաքապետարանի ենթակայության հիմնական ճանապարհների վերանորոգման և արտաքին լուսավորության արդիականացման գործում՝ ներառելով՝ ասֆալտի և մայթերի նորացումը՝ այդ թվում՝ ջրահեռացման ենթակառուցվածքների արդիականացումը, հետիոտների համար նոր տարածքների կառուցումը, փողոցային լուսավորության ենթակառուցվածքների վերանորոգումը, Գյումրու քաղաքապետարանի համար կայանման հայեցակարգի մշակումը:

Սկզբնական վարկային համաձայնագրի դրույթները, բացառությամբ Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրով փոփոխված դրույթների, շարունակում են ամբողջությամբ մնալ ուժի մեջ:

2. «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2 համաձայնագրի (այսուհետ նաև՝ Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր) նպատակն է Վարկառուի խնդրանքով աջակցել Վարկառուին Ծրագրի՝ Գյումրու երկու՝ Անի և Ավստրիական թաղամասերի քաղաքային ճանապարհների բարեկարգմանը և հարակից փողոցների լուսավորությանն առնչվող մասերի իրականացման հարցում: Հետևաբար՝ Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրով Վարկառուն և Բանկը փոփոխություններ են կատարում Սկզբնական վարկային համաձայնագրի որոշ կետերում:

3. Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը կազմված է նախաբանից, երեք հոդվածից և մեկ հավելվածից:

4. Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

4.1. Բանկի պահանջով կատարել այն բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի են Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի համաձայն կատարված կամ կատարվելիք փոփոխությունները գործողության մեջ դնելու համար (հոդված 2, բաժին 2.02.),

4.2. Բանկին վճարել պարտավճար՝ Վարկային համաձայնագրով սահմանված դրույքաչափով, որը ենթակա է վճարման Հասանելի ընդհանուր գումարի նկատմամբ, գումարած Վարկի ցանկացած գումար, որը ենթակա է Փոխհատուցման պարտավորության և դեռևս չի մասհանվել՝ պայմանով, որ Փոխհատուցման անվերապահ պարտավորության ենթակա գումարի նկատմամբ ենթակա Պարտավորավճարը տարեկան 0,5%-ով ավելի է, քան Վարկային համաձայնագրում նշված Պարտավորավճարի դրույքաչափը: Պարտավորավճարը հաշվեգրվում է՝

1) Տրանշ Ա-ի համար՝ սկսած Վարկային համաձայնագրի կնքման ամսաթվից հետո վաթսուներորդ օրվանից, և

2) Տրանշ Բ-ի համար՝ սկսած Տրանշ Բ-ի հասանելիության ամսաթվից հետո յոթերորդ օրվանից, և

3) Տրանշ Գ-ի համար՝ սկսած Տրանշ Գ-ի հասանելիության ամսաթվից հետո յոթերորդ օրվանից,

4) Տրանշ Դ-ի համար՝ սկսած Տրանշ Գ-ի հասանելիության ամսաթվից հետո յոթերորդ օրվանից, կամ

5) Փոխհատուցման անվերապահ պարտավորության ենթակա Վարկի գումարի նկատմամբ վճարման ենթակա պարտավճարի դեպքում՝ Փոխհատուցման այդպիսի անվերապահ պարտավորության թողարկման ամսաթվից, և պարտավճարը հաշվեգրվում և հաշվարկվում է նույն հիմքով, ինչ 3.04 բաժնի «բ» կետի (ii) ենթակետով սահմանված տոկոսը (Հավելված 1, կետ 6)[1],

4.3. Բանկին վճարել միջնորդավճար, որը հավասար է.

1) Տրանշ Ա-ի, Տրանշ Բ-ի և Տրանշ Գ-ի ընդհանուր մայր գումարի մեկ տոկոսը (կամ Վարկային պայմանագրում նշված այլ գումար) և

2) Տրանշ Դ-ի մայր գումարի մեկ տոկոսը (կամ Վարկային պայմանագրում նշված այլ գումար) (Հավելված 1, կետ 6),

[1] Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի հավելված 1-ի 6-րդ կետով սահմանվում է, որ Տոկոսագումարի վճարման պարտավորությունը ենթակա է կատարման Տոկոսագումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին՝ սկսած Փոփոխությունների կատարելու մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող Տոկոսագումարի վճարման առաջին օրվանից:

4.4. վարկի գումարի Տրանշ Ա-ն, Տրանշ Բ-ն և Տրանշ Գ-ն մարել 24 կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին: Ընդ որում, Վարկի առաջին մարման ամսաթիվը կհամարվի Տոկոսագումարի վճարման ամսաթիվը, որը Վարկային համաձայնագրի ստորագրման երրորդ տարին լրանալու օրն է կամ դրանից անմիջապես հետո, իսկ Տրանշ Ա-ի, Տրանշ Բ-ի և Տրանշ Գ-ի մասով Վարկի վերջին մարման ամսաթիվը 2031 թվականի ապրիլի 16-ն է (Հավելված 1, կետ 12),

4.5. վարկի գումարի Տրանշ Դ-ն մարել 24 կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին: Ընդ որում, Տրանշ Դ-ի համար Վարկի առաջին մարման ամսաթիվը կհամարվի Տոկոսագումարի վճարման ամսաթիվը, որը Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի ստորագրման երրորդ տարին լրանալու օրն է կամ դրանից անմիջապես հետո, իսկ Տրանշ Դ-ի մասով Վարկի վերջին մարման ամսաթիվը 2038 թվականի հոկտեմբերի 16-ն է (Հավելված 1, կետ 12):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրում առկա են իրավաբանական տեխնիկայի առերևույթ անճշտություններ և կիրառված եզրույթների իմաստային անորոշություններ: Մասնավորապես՝ Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի Հավելված 1-ի 6-րդ կետում Պարտավորավճարի հաշվեգրման ժամանակացույցը սահմանելիս յուրաքանչյուր Տրանշի հաշվեգրման ժամկետը նշվել է առանձին կետով՝ աճման կարգով՝ ընդհանուր 5 կետով, սակայն այդ կետերը թվագրելիս երկու հաջորդական ժամկետները թվագրվել են միևնույն 3-րդ կետով: Բացի դրանից, Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրում Վարկառուի, ըստ էության, համընկնող պարտավորությունը նկարագրելիս կիրառվում են տարբեր եզրույթներ՝ պարտավորավճար և պարտավճար, սակայն Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի տեքստից պարզ չէ եզրութային տարբերության պատճառը և կողմերի փոխադարձ ֆինանսական հաշվարկներում նշյալ տարբեր եզրույթների օգտագործման իրավական և փաստական հետևանքները:

Ընդսմին, Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշյալ թերությունները չեն կարող ազդել Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության գնահատման վրա:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2 համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

11 հունիսի 2024 թվականի
ՍԴՈ-1738

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 2 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1738 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով ««Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2 համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1738 որոշմամբ որոշել է, որ «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2 համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1738 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը

մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1738 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի

մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2 համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական

դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը

ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«11» հունիսի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 11 հունիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար Գ. Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի դեկտեմբերի 4-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը որոշելու ներդաշնակեցված համակարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի մայիսի 2-ի N 622-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի դեկտեմբերի 4-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը որոշելու ներդաշնակեցված համակարգի մասին» համա-ձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի մասին Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի մայիսի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Տ.

1. «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը որոշելու ներդաշնակեցված համակարգի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի դեկտեմբերի 4-ին Մոսկվայում՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ նաև՝ Միություն) մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը որոշելու, հավաստելու և հաստատելու ոլորտում միասնական սկզբունքների կիրառումն ապահովելու նպատակով:

2. Արտաքին գործերի նախարարության՝ Համաձայնագրի վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին եզրակացության և Համաձայնագիրն ստորագրած կողմերի՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի մարտի 20-ի դրությամբ Համաձայնագիրն ուժի մեջ չի մտել, և Համաձայնագիրն ստորագրած կողմերից որևէ մեկը չի ավարտել Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:

3. Համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է և ընդգրկվում է Միության իրավունքի կազմում:

4. Համաձայնագիրն ունի երկու հավելվածներ՝ **Հավելված թիվ 1՝** «Ապրանքի ծագման հավաստագրի տրամադրման կարգ» և **Հավելված թիվ 2՝** «Ապրանքի ծագման հավաստագրի ձևը և ապրանքի ծագման հավաստագրին ներկայացվող պահանջները»:

5. Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման դեպքում դրանց ծագումը որոշելու, հավաստելու ու հաստատելու մոտեցումների միասնականությունն ապահովելու նպատակով կիրառվում է Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը որոշելու ներդաշնակեցված համակարգը:

6. Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը Միության մաքսային տարածքից դրանց արտահանման շրջանակներում հաստատվում է այն դեպքերում, երբ արտահանման մաքսատուրքերի և ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառումը (այսուհետ՝ կարգավորման առանձին միջոցներ) կախված է ապրանքների ծագումից՝ հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը: Համաձայնագրի 4-րդ հոդվածի կիրառման նպատակ-ների համար դիտարկվում են միայն «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 47-րդ հոդվածին համապատասխան անդամ պետությունների կողմից միակողմանիորեն սահմանվող ոչ սակագնա-յին կարգավորման հետևյալ միջոցները՝ ապրանքների արտահանման արգելք, ապրանք-ների արտահանման քանակական սահմանափակումներ, ապրանքների արտահանման թույլատրման կարգ, իսկ 2-րդ կետի համաձայն՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ապրանքների ծագման հաստատումն անհրաժեշտ է միայն այն ապրանքների համար, որոնց նկատմամբ կիրառվում են կարգավորման առանձին միջոցները, և նույնանման ապրանքների համար ու միայն կարգավորման այդպիսի առանձին միջոցների գործողության ժամանակահատվածում:

7. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության մեջ նշված դեպքում ապրանքների ծագումը որոշելիս երկրի ծագում ունեցող ապրանք է համարվում Համաձայնագրի 5-րդ հոդվածով սահմանված չափորոշիչներին բավարարող ապրանքը:

Համաձայնագրի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն ապրանքը, որն արտադրվել է անդամ երկրների և (կամ) երրորդ երկրների ծագում ունեցող ապրանքների օգտագործմամբ կամ այն ապրանքների օգտագործմամբ, որոնց ծագումն անհայտ է (այսուհետ՝ ծագում չունեցող ապրանքներ), համարվում է այն անդամ պետության ծագում ունեցող, որի տարածքում այդ ապրանքը վերջին անգամ ենթարկվել է մշակման կամ վերամշակման, որը ենթադրում է Համաձայնագրի 5-րդ հոդվածի 4-րդ կետում նշվածներից բացի այլ գործողությունների իրականացում:

8. Համաձայնագրի 7-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ ապրանքի ծագման հավաստագրի տրամադրման ոչ իրավաչափ լինելու կամ ստուգում անցած ապրանքի ծագման հայտարարագրում հայտագրված տեղեկությունների ոչ հավաստի լինելու վերաբերյալ վերիֆիկացնող մարմնի եզրակացությունը հանգեցնում է լիազորված մարմնի կողմից ապրանքի ծագման հավաստագրի չեղարկմանը կամ ապրանքի ծագման հայտարարագրի անվավեր ճանաչմանը:

9. Համաձայնագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

10. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- ապահովել, որ Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը հաստատելու անհրաժեշտության դեպքում երրորդ երկրի տարածք դրանց ներմուծման շրջանակներում այդպիսի ապրանքների ծագման որոշումն իրականացվի այն կանոններով, որոնք սահմանված են Միության՝ այդպիսի երրորդ կողմի հետ միջազգային պայմանագրով, անդամ պետության՝ այդպիսի երրորդ կողմի հետ

միջազգային պայմանագրով, այն միջազգային պայմանագրով, որի մասնակիցներն են բոլոր անդամ պետությունները, կամ այդպիսի երրորդ կողմի օրենսդրությամբ, իսկ վերոհիշյալ ապրանքների ծագումը որոշելու կանոնների բացակայության դեպքում կամ Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագման որոշումն իրականացնող ՀՀ լիազորված մարմնի կամ անձի տնօրինության տակ այդպիսի կանոնների մասին տեղեկատվություն չլինելու դեպքում, ապահովել, որ ապրանքների ծագման որոշումն իրականացվի ապրանքների ծագումը որոշելու՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածով սահմանված չափորոշիչներին համապատասխան (հոդված 3, կետ 1).

- որպես Միության մաքսային տարածքից արտահանման շրջանակներում արտահանվող ապրանքների ծագման հաստատման կարգավորման առանձին միջոց սահմանող պետություն հանդես գալու պարագայում՝ նախապես, սակայն ոչ ուշ, քան դրա սահմանման օրվանից 3 օրացուցային օր առաջ ծանուցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) այդ միջոցի սահմանման, ապրանքների, որոնց վրա այն տարածվում է, և դրա գործողության ժամկետի մասին և ծանուցմանը կցել Հայաստանի Հանրապետության այն նորմատիվ իրավական ակտի անվանումը, որի համաձայն սահմանվում է կարգավորման առանձին միջոցը՝ կցելով նաև այդ նորմատիվ իրավական ակտի ռուսերեն թարգմանությունը (հոդված 4, կետ 3).

- սահմանել ՀՀ լիազորված և վերիֆիկացնող մարմիններ և ապահովել, որ այդ մարմինները Հանձնաժողով ներկայացնեն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ և 7-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ սահմանված՝ իրենց վերաբերելի տեղեկությունները, իսկ այդ տեղեկությունների փոփոխման դեպքում՝ համապատասխան տեղեկատվությունն ուղարկեն Հանձնաժողով՝ այդպիսի փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրից ոչ ուշ (հոդված 6, կետեր 1 և 2, հոդված 7, կետեր 1 և 2).

- ապահովել, որ ՀՀ լիազորված մարմիններն իրականացնեն ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրումը՝ Համաձայնագրի 1-ին հավելվածի կարգին համաձայն, եթե այլ բան սահմանված չէ Միության՝ երրորդ կողմի հետ միջազգային պայմանագրով, Հայաստանի

Հանրապետության՝ երրորդ կողմի հետ միջազգային պայմանագրով, այն միջազգային պայմանագրով, որի մասնակիցն են բոլոր անդամ պետությունները, Հանձնաժողովի որոշումներով կամ այն երրորդ երկրի օրենսդրությամբ, որի տարածք նախատեսվում է ապրանքների ներմուծումը (հոդված 6, կետ 3).

- մաքսային գործառնությունների իրականացումը պարզեցնելու, արտահանմանն աջակցելու և անդամ պետությունների ծագում ունեցող ու Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների համար երրորդ երկրի շուկայի հասանելիության ապահովմանն օժանդակելու նպատակով՝ ապահովել, որ ՀՀ լիազորված մարմինները ստեղծեն վերիֆիկացման էլեկտրոնային համակարգ, որոնք կապահովեն երրորդ երկրի իրավասու պետական մարմնի կողմից ապրանքի ծագման հավաստագրի տրամադրման փաստի, ինչպես նաև այդպիսի հավաստագրում պարունակվող տեղեկությունների՝ մաքսային հայտարարագրման ժամանակ հայտագրված տեղեկությունների հետ համապատասխանության ստուգման իրականացման հնարավորությունը՝ Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ապրանքի ծագման հավաստագրերի տվյալների էլեկտրոնային բազայում պարունակվող տեղեկատվության հիման վրա (հոդված 6, կետ 4).

- ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում՝ ապրանքների ծագման հավաստումը, ինչպես նաև ապրանքների ծագումը որոշելու նպատակով փորձաքննության անցկացումն իրականացնել վճարովի հիմունքներով, ինչպես նաև ապահովել, որ ապրանքների ծագման հավաստման արժեքի վերաբերյալ տեղեկությունները ՀՀ լիազորված մարմինների կողմից ուղարկվեն Հանձնաժողով. դրանք ենթակա են հրապարակման Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում (հոդված 6, կետեր 6 և 7).

- ապահովել, որ ՀՀ վերիֆիկացնող մարմինն ստուգումն իրականացնի ՀՀ օրենսդրությանը համապատասխան, այդ թվում՝ հարցումներ ուղարկելու, արտադրողի արտադրական շինություններում տեսչական ստուգումներ անցկացնելու և (կամ) ապրանքն արտադրողի, վաճառողի և (կամ) ուղարկողի հաշվապահական և (կամ) այլ առևտրային փաստաթղթերի ստուգում իրականացնելու միջոցով. վերիֆիկացնող մարմնի կողմից ստուգման անցկացման համար հիմք է համարվում

երրորդ երկրի իրավասու պետական մարմնի՝ դրա անցկացման վերաբերյալ հարցումը (հոդված 7, կետեր 3 և 4).

- ապահովել, որ ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ վերիֆիկացնող մարմնի կողմից ուղարկվի երրորդ երկրի՝ տվյալ ստուգումը նախաձեռնած լիազորված պետական մարմնի հասցեով, ինչպես նաև լիազորված մարմնի և (կամ) այն ապրանքի տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունք ունեցող անձի հասցեով, որի մասով ստուգում է անցկացվել (հոդված 7, կետ 8).

- երրորդ երկրի կողմից ապրանքի ծագման հավաստագրի ձևին ներկայացվող պահանջներ սահմանված չլինելու կամ լիազորված մարմնի տնօրինության տակ այդպիսի պահանջների մասին տեղեկատվության բացակայության դեպքում՝ ապահովել, որ տրամադրվի Համաձայնագրի 2-րդ հավելվածի համաձայն սահմանված ձևով ապրանքի ծագման հավաստագիր, որը լրացվում է նշված հավելվածով նախատեսված պահանջներին համապատասխան (հոդված 8, կետ 3, պարբերություն 1).

- արտաքին տնտեսական գործունեության վարումը դյուրացնելու և ոչ թղթային տեխնոլոգիաները զարգացնելու նպատակով ձգտել ապահովել ապրանքի ծագման հավաստագրերի էլեկտրոնային տեսքով տրամադրումը, ինչպես նաև ապրանքի ծագման հավաստագրերն ստանալիս ապահովել լիազորված մարմինների՝ անձանց հետ փոխգործակցության էլեկտրոնային ձևաչափը (հոդված 8, կետ 4).

- ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ կիրառել վարչական կամ այլ պատասխանատվության միջոցներ՝ Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքի ծագման հայտարարագրում և (կամ) լիազորված մարմին դիտավորությամբ ապրանքի ծագման, ապրանքի ծագումը որոշելու չափորոշիչների կատարման վերաբերյալ ոչ հավաստի և (կամ) ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար (հոդված 10, կետ 1).

- ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ կիրառել վարչական կամ այլ պատասխանատվության միջոցներ լիազորված մարմինների՝ ապրանքի ծագման փորձաքննության ակտի տրամադրման, Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքի ծագումը որոշելու և (կամ) ապրանքի ծագումը հավաստելու համար պատասխանատու

պաշտոնատար անձանց նկատմամբ՝ այն դեպքում, երբ այդ պաշտոնատար անձանց ակնհայտորեն հայտնի է, որ ապրանքի ծագման վերաբերյալ տվյալները կեղծված կամ ոչ հավաստի են (հոդված 10, կետ 2).

- երաշխավորել, որ ՀՀ լիազորված մարմինները կապահովեն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 4-րդ կետում նշված վերիֆիկացման էլեկտրոնային համակարգերի ստեղծումն ու շահագործման հանձնումը՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 2 տարվա ընթացքում (հոդված 11, կետ 2).

- ապահովել, որ ՀՀ լիազորված մարմնի կողմից հավաստագիրը տրամադրվի թղթային կրիչով և (կամ) էլեկտրոնային տեսքով (հավելված 1, կետ 2).

- ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում՝ ապահովել հավաստագրի տրամադրման հրահանգի (կանոնակարգի) մշակումը և հաստատումը ՀՀ լիազորված մարմնի կողմից և ապահովել, որ ՀՀ լիազորված մարմինն ապահովի նշված հրահանգի (կանոնակարգի) հրապարակումն «Ինտերնետ» տեղեկատվական-հաղորդակցական ցանցում՝ իր պաշտոնական կայքում (հավելված 1, կետ 3).

- երաշխավորել, որ հավաստագրի պատճենը և հաստատող փաստաթղթերը կպահվեն հավաստագիրը տրամադրած ՀՀ լիազորված մարմնում՝ հավաստագիրը տրամադրելու օրվանից առնվազն 3 տարի (հավելված 1, կետ 9):

11. Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև Միության շրջանակներում միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելը, որով սահմանվում են այն ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները, որոնք, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին համապատասխան, ենթակա են վճարման մեկ անդամ պետությունում մեկ այն այլ անդամ պետության ծագում ունեցող ապրանքների համար, որի օրենսդրությանը համապատասխան սահմանվել են արտահանման մաքսատուրքերի դրույքները, Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան արտահանման մաքսատուր-քերի կիրառման նպատակով ապրանքների ծագման հաստատում չի պահանջվում:

12. Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 3 տարվա ընթացքում լիազորված մարմիններն իրավունք ունեն կիրառելու անդամ պետություններում օգտագործվող՝ ապրանքի ծագման մասին հավաստագրերի ձևաթղթերը, որոնք կազմվել են Համաձայնագրի 8-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան նախատեսված՝ ապրանքի ծագման մասին հավաստագրերի ձևից տարբերվող ձևով: Ապրանքի ծագման մասին հավաստագրերի այդպիսի ձևաթղթերը լրացվում են՝ հաշվի առնելով Համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված պահանջները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի դեկտեմբերի 4-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը որոշելու ներդաշնակեցված համակարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

11 հունիսի 2024 թվականի
ՍԴՈ-1739

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1739 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի դեկտեմբերի 4-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը որոշելու ներդաշնակեցված համակարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1739 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի դեկտեմբերի 4-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը որոշելու ներդաշնակեցված համակարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1739 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1739 որոշմամբ 2023 թվականի դեկտեմբերի 4-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը որոշելու ներդաշնակեցված համակարգի մասին» համաձայնագրում

ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրության համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական

դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային

փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է պրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«11» հունիսի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՎԱՐԿ 3449-ARM. «ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ6 ՎԱՆԱՁՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» - ՎԱՐԿԻ ՓԱԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 2 հուլիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ք. Ղալեչյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի դեկտեմբերի 11-ին և 2024 թվականի մարտի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի

միջև «Վարկ 3449-ARM. «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» - վարկի փակման ժամկետի երրորդ երկարաձգում և վարկային միջոցների վերաբաշխում» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի մայիսի 23-ի N 743-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի դեկտեմբերի 11-ին և 2024 թվականի մարտի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Վարկ 3449-ARM. «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» - վարկի փակման ժամկետի երրորդ երկարաձգում և վարկային միջոցների վերաբաշխում» նամակ-համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի մայիսի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ նամակ-համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Վարկ 3449-ARM. «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» - վարկի փակման ժամկետի երրորդ երկարաձգում և վարկային միջոցների վերաբաշխում» նամակ-համաձայնագիրը (այսուհետ՝ Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի դեկտեմբերի 11-ին և 2024 թվականի մարտի 25-ին՝ վարկի փակման ժամկետը մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ը երկարաձգելու և վարկային միջոցների վերաբաշխում կատարելու նպատակով:

2. Նամակ-համաձայնագրով նախատեսվում է «Չբաշխված գումարներ» 4-րդ բաղադրիչից կատարել վերաբաշխում 2,850,000 եվրո գումարի չափով՝ ուղղելով նշված գումարները հետևյալ կատեգորիաներին.

1) 2,500,000 եվրո՝ «Աշխատանքներ և խորհրդատվական ծառայություններ» 1-ին կատեգորիային,

2) 350,000 եվրո՝ «Ավելացող վարչական ծախսեր» 2-րդ կատեգորիային:

3. Վերոնշյալ վարկային միջոցների վերաբաշխման անհրաժեշտությունը պայմանավորված է «Վարկ 3449-ARM. «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրի շրջանակներում 2023 թվականին ավարտված, ինչպես նաև 2024 թվականին գործող պայմանագրերով ֆինանսական պարտավորությունները ժամանակացույցով սահմանված ժամկետներում մարելու անհրաժեշտությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի դեկտեմբերի 11-ին և 2024 թվականի մարտի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Վարկ 3449-ARM. «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» - վարկի փակման ժամկետի երրորդ երկարաձգում և վարկային միջոցների վերաբաշխում» նամակ-համաձայնագրով ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 հուլիսի 2024 թվականի
ՍԴՈ- 1740

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998 Թ. ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 22 հուլիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի (այսուհետ նաև՝ Դիմող),

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող) ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝

Օրենսգիրք) ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին՝ բացառությամբ 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենսգրքի 483-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Օրենսգրքի 54-րդ, 54.1-ին, 54.2-րդ, 54.3-րդ, 54.4-րդ գլուխների դրույթներն ուժը կորցրած չեն ճանաչվել:

Օրենսգրքի՝ **«Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները»** վերտառությամբ 309.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված է.

«3. Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է»:

Օրենսգիրքը 309.1-ին հոդվածով լրացվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-270-Ն օրենքով:

Գործի քննության առիթը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի հունվարի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է՝ թիվ ԵԴ/0253/01/19 գործով «ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշման հիման վրա:

Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 22-ի ՍԴԱՈ-110 աշխատակարգային որոշմամբ «ՀՀ Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, ինչպես նաև 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, ինչպես նաև 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության մասով, կարճվել է:

Ուսումնասիրելով դիմումը, Դիմողի և Պատասխանողի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող և վերաբերելի օրինադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Գործի համառոտ դատավարական նախապատմությունը

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի (մեղադրանք է առաջադրվել ՀՀ

քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասով և 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, որպես խափանման միջոց կիրառվել է գրավ), Սեյրան Մուշեղի Օհանյանի (մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասով, որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին), Յուրի Գրիգորիի Խաչատուրովի (մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասով, որպես խափանման միջոց կիրառվել է գրավ), Արմեն Անդրանիկի Գևորգյանի (մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-ին հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին), 2021 թվականի ապրիլի 6-ին որոշել է.

«1. Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց գրավը վերացնելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը մերժել:

2. Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնել:

Սեյրան Մուշեղի Օհանյանի շարժական և անշարժ գույքի, ֆինանսական (դրամական) միջոցների, բաժնետոմսերի, արժեթղթերի և ակտիվների վրա դրված կալանքը վերացնել:

3. Յուրի Գրիգորիի Խաչատուրովի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Յուրի Գրիգորիի Խաչատուրովի նկատմամբ ընտրված խափանման միջոց գրավը վերացնել:

Արմեն Կամոյի Բադալյանի կողմից 2018 թվականի հուլիսի 28-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ 900013298014 դեպոզիտ հաշվին վճարված 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գրավի գումարը վերադարձնել Արմեն Կամոյի Բադալյանին:

Յուրի Գրիգորիի Խաչատուրովի շարժական և անշարժ գույքի, ֆինանսական (դրամական) միջոցների, բաժնետոմսերի, արժեթղթերի և ակտիվների վրա դրված կալանքը վերացնել:

4. Արմեն Անդրանիկի Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Ռոբերտ Սեդրակի Քոչարյանին, Սեյրան Մուշեղի Օհանյանին, Յուրի Գրիգորիի Խաչատուրովին ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով և Արմեն Անդրանիկի Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքների մասով քրեական գործի վարույթը կարճել:

Քրեական հետապնդման մարմիններին Ռոբերտ Սեդրակի Քոչարյանից, Սեյրան Մուշեղի Օհանյանից, Յուրի Գրիգորիի Խաչատուրովից և Արմեն Անդրանիկի Գևորգյանից գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունները մերժել:

Տուժող Արթուր Սարգսի Ավագյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

(…)»:

1.2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի, Սեյրան Մուշեղի Օհանյանի, Յուրի Գրիգորիի Խաչատուրովի, Արմեն Անդրանիկի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի ապրիլի 6-ի թիվ ԵԴ/0253/01/19 որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Բաղդասարյանի, տուժող Ա. Կետիկյանի, տուժող Ա. Ավագյանի ներկայացուցիչ Ս. Սաֆարյանի, Ռ. Քոչարյանի պաշտպաններ Հ. Խուդոյանի, Հ. Ալումյանի վերաքննիչ բողոքները, 2021 թվականի նոյեմբերի 26-ին որոշել է.

«ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Բաղդասարյանի, տուժողներ Ա. Կետիկյանի և Մ. Թադևոսյանի, տուժող Ա. Ավագյանի ներկայացուցիչ Ս. Սաֆարյանի, Ռ. Քոչարյանի պաշտպաններ Հ. Խուդոյանի, Հ. Ալումյանի վերաքննիչ բողոքները մերժել՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2021թ. թիվ ԵԴ/0253/01/19 որոշումը թողնելով անփոփոխ:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ ստանալու պահից՝ 1-ամսյա ժամկետում»:

1.3. ՀՀ Վճռաբեկ դատարանը, 2024 թվականի հունվարի 19-ին գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա. Դավթյանի վճռաբեկ բողոքը, որոշել է դիմել

Սահմանադրական դատարան՝ 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի և 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, ներկայացնելով թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի դատավարական նախապատմությունը, վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը, ինչպես նաև խնդրո առարկա հարցի շուրջ Վճռաբեկ դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումները, մասնավորապես, նշում է. «Մեղադրողի կողմից անձին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը փոխելու հնարավորության բացակայությունը և դատարանի կողմից քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու բացարձակ պահանջն այն պարագայում, երբ հատուկ հանցակազմ սահմանող քրեաիրավական նորմը, որով որակված է անձի արարքը, ճանաչվում է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, սակայն այդ արարքն առերևույթ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մեկ այլ հանցակազմի հատկանիշներին, *prima facie* հանգեցնում է տուժողի՝ ՀՀ սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների խախտման: Նշվածն իր հերթին հանգեցնում է հիմնական իրավունքները կարգավորելիս օրենքով դրանց իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսելու՝ ՀՀ սահմանադրության 75-րդ հոդվածով նախատեսված պահանջի խախտման: Նման պայմաններում ի հայտ է գալիս արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջի իրականացման անհնարինության խնդիր»:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, 309.1-ին հոդվածի 3-րդ մասի և 366-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումների գործողության պայմաններում բացակայում է մեղադրողի կողմից արարքի իրավաբանական որակումը փոխելու հնարավորությունն

այն պայմաններում, երբ չնայած նրան, որ հանցակազմ սահմանող քրեաիրավական նորմը, որով որակված է անձի արարքը, ճանաչվում է Սահմանադրությանը հակասող և անվավեր, այնուամենայնիվ, կատարված արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մեկ այլ հանցակազմի հատկանիշներին: Դիմողը նշում է, որ վերոնշյալ նորմերի համակցված վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջիններս հնարավորություն չեն տալիս համապատասխան ու անհրաժեշտ դատավարական գործիքակազմի գործադրմամբ փոփոխել մեղադրանքը, մասնավորապես այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի նորմը, որով նախատեսված և որով որակված է անձին մեղսագրվող արարքը, այլևս չի գործում, սակայն այդ արարքն առերևույթ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի մեկ այլ նորմով նախատեսված ընդհանուր հանցակազմի հատկանիշներին:

Վերոնշյալի հիման վրա Դիմողը Սահմանադրական դատարանի ուշադրությունն է հրավիրում վիճարկվող իրավակարգավորումների համատեքստում արարքի իրավաբանական որակումը փոխելու հնարավորության բացակայությունը (իր գնահատմամբ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման առարկայի շրջանակներում օրենսդրական բաց դիտարկելու անհրաժեշտության վրա, ինչի առկայությունն արձանագրելու պարագայում, ըստ Դիմողի, նշված նորմի հետ համակարգային կապի մեջ գտնվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի և 366-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները տվյալ գործի շրջանակներում ենթակա են լինելու անմիջական կիրառման, քանի որ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող նորմերի կիրառման միջոցով:

Դիմողը նշում է. «(…) Սույն գործով Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող իրավական հարցը հետևյալն է. հատուկ հանցակազմ սահմանող քրեաիրավական նորմը, որով որակված է անձին մեղսագրվող արարքը, ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու պարագայում մեղադրողի կողմից արարքի իրավաբանական որակումը փոփոխելու և ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մեկ այլ հանցակազմի հատկանիշներ պարունակող այդ արարքը վերաորակելու հնարավորության բացակայության և դատարանի կողմից քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու պահանջի առկայության պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի կապակցությամբ առկա օրենսդրական բացը և դրա հետ

համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 5-րդ մասերի և 366-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը արդյո՞ք չեն ստեղծում մեղադրանքի պաշտպանության գործառույթի սահմանափակում, տուժողի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտում, այդ թվում՝ սոցիալական արդարության վերականգնման և հատուցում ստանալու իրավունքի իրացման անհաղթահարելի խոչընդոտ, ինչպես նաև՝ հանգեցնում հիմնական իրավունքները կարգավորելիս օրենքով դրանց իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսելու, Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջների խախտման»:

Դիմողը նշում է նաև, որ մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու և (կամ) լրացնելու քրեադատավարական ինստիտուտը պայմանավորող իրավակարգավորումները չեն նախատեսում մեղադրանքի փոփոխման կամ լրացման հնարավորություն այն պարագայում, երբ առաջ է եկել միայն արարքի իրավաբանական որակումը փոփոխելու անհրաժեշտություն՝ նման հնարավորություն նախատեսելով միայն մեղադրանքի փաստական կողմը կազմող հանգամանքների փոփոխության պարագայում:

Ըստ Դիմողի՝ «(…) 1998 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումներն այնքանով, որքանով չեն նախատեսում գործի դատական քննության ընթացքում զուտ մեղադրանքի իրավական կողմը փոխելու հնարավորություն այն պարագայում, երբ քրեաիրավական նորմը, որով որակված է անձին մեղսագրվող արարքը, ճանաչվում է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, ինչն էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ և 366-րդ հոդվածներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ կիրառման արդյունքում անվերապահորեն հանգեցնում է քրեական գործի վարույթը կարճելուն և քրեական հետապնդումը դադարեցնելուն, անհամատեղելի են ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տուժողի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի հետ»:

Դիմողը եզրահանգում է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածում առկա օրենսդրական բացը ստեղծում է մեղադրանքի պաշտպանության գործառույթի սահմանափակման, տուժողի դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների (...) իրացման անհաղթահարելի խոչընդոտ (...)»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, մասնավորապես վկայակոչելով Սահմանադրության 61, 63 և 176-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերաբերելի դրույթները, մեջբերելով Օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված և այլ վերաբերելի իրավակարգավորումները, Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք ակտերում արտացոլված առանձին իրավական դիրքորոշումները, գտնում է. «Մեղադրանքի փաստական հանգամանքների փոփոխությունը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309[1]-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով մեղադրանքը փոխելու որոշում կայացնելու համար, եթե այդ հանգամանքների փոփոխությունը առաջացնում է հանցակազմի հատկանիշների փոփոխություն:

(...)

Հարկ է նաև արձանագրել, որ դատարանի կողմից անձին մեղսագրվող արարքի քրեաիրավական որակման փոփոխությունը օրենսդրությամբ սահմանված երաշխիքների պահպանման պայմաններում բխում է Օրենսգրքով սահմանված՝ գործի արդարացի քննության սկզբունքի էությունից: Օրենսգրքով սահմանված իրավական երաշխիքների պայմաններում անձին մեղսագրվող արարքի իրավական որակման փոփոխությունն ամբողջությամբ անկանխատեսելի լինել չի կարող՝ մասնավորապես հիմնված լինելով անձին մեղսագրվող արարքի փաստական հանգամանքների վրա»:

Անդրադառնալով Դիմողի կողմից բարձրացված ենթադրյալ օրենսդրական բացի առկայության հարցին՝ Պատասխանողը, վկայակոչելով օրենսդրական բացի վերաբերյալ Սահմանադրական դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումները, գտնում է, որ «(...) օրենսդիրը տվյալ իրավակարգավորումը սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը և այդպիսի ընթացակարգի սահմանումը եղել է օրենսդրի նպատակը»:

Պատասխանողն արձանագրում է. «(…) տվյալ դեպքում օրենքի բացը հաղթահարելու անհնարինություն առկա չէ, մասնավորապես, այն պայմաններում, երբ օրենսդրի կողմից սահմանվել է հանցանքի քրեաիրավական որակման հնարավորություն, որի լայն մեկնաբանման պայմաններում հնարավոր է դառնում կիրառել նախկին խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համատեքստում: Բոլոր դեպքերում նշված նորմում սահմանված կարճման ինստիտուտը չի բացառում փաստական հանգամանքների բավարար լինելու դեպքում հանցանքի քրեաիրավական որակումը փոփոխել (մեղադրանքը փոխել)»:

Պատասխանողը խնդրում է. **«(…) գործով ընդունել որոշում վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին»:**

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Հաշվի առնելով, որ սույն գործով սահմանադրաիրավական վեճը հանգում է անձին մեղսագրվող արարքը որակող հատուկ հանցակազմ նախատեսող քրեաիրավական նորմը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու պայմաններում գործի դատական քննության ընթացքում զուտ մեղադրանքի իրավական կողմը փոխելու օրենսդրական հնարավորության ենթադրյալ բացակայության հարցին՝ տուժողի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների երաշխավորման համատեքստում, սույն դիմումով վիճարկվող օրինադրույթների սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- Օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասը, հաշվի առնելով վերջինիս իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, որին համապատասխան՝ անձին մեղսագրվող արարքը որակող քրեաիրավական նորմը գործի դատական քննության ընթացքում Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու պայմաններում հանգեցնում է արարքի հանցավորությունը պահպանվելու դեպքում մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու անհնարինության, համապատասխանո՞ւմ է արդյոք Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին՝ տուժողի դատավարական կարգավիճակ ունեցող անձի հիմնական իրավունքների պաշտպանության առումով՝ հաշվի առնելով նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակեր-

պական կառուցակարգերի և ընթացակարգերի՝ օրենքով սահմանման՝ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված պահանջը:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սույն սահմանադրաիրավական վեճի քննության համատեքստում վիճարկվող դրույթների սահմանադրականությունը տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը երաշխավորելու առումով գնահատելիս Սահմանադրական դատարանն արձանագրում է.

Սահմանադրության՝ ***«Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը»*** վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության՝ ***«Արդար դատաքննության իրավունքը»*** վերտառությամբ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանն այդ առնչությամբ՝ մասնավորապես արտահայտելով ներքոնշյալ իրավական դիրքորոշումները.

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում, կետ 6).

- «(...) Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշում, կետ 6):

Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի սեպտեմբերի 24-ի ՍԴՈ-1477 որոշման շրջանակներում արձանագրել է. «Սահմանադրական

դատարանը Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածները բազմիցս դիտարկել է որպես մեկ միասնական իրավական երևույթ: Դա, մասնավորապես, վերաբերում է արդարադատության մատչելիության իրավունքին՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի:

Այնուհանդերձ, Սահմանադրության 63-րդ հոդվածի իրավակարգավորումը կազմում է արդար դատաքննության իրավունքի առանցքը, քանի որ այդ իրավունքի կիրառության շրջանակն ամրագրելուց բացի սահմանում է նաև դրա առավել ընդհանրական երաշխիքները:

(…) Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված են անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն սկզբունքները, որոնց համատեքստում Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ: Այդ դիրքորոշումներն արտացոլում են նաև միջազգային իրավական փորձի համալիր ուսումնասիրության արդյունքները» (կետ 4.1):

Արդյունավետ դատական պաշտպանության կամ այլ կերպ՝ արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքի նորմատիվ սահմաններին և ապահովման երաշխիքներին Սահմանադրական դատարանը նախկինում անդրադարձել է նաև ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222 որոշումներում՝ սահմանելով արդյունավետ դատական պաշտպանության ապահովման իրավական երաշխիքների ցանկ, որի ամբողջությամբ պահպանումը ձևավորում է անհրաժեշտ իրավակառուցակարգային նախադրյալներ արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման համար: Սույն սահմանադրաիրավական վեճին վերաբերելի երաշխիքներն են այն, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ.

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում.

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ

իրավունքի բուն էությունը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն՝

- «(...) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի իրավունքի գերակայության լույսի ներքո, որի հիմնարար ասպեկտներից է իրավական որոշակիության սկզբունքը, որը պահանջում է, որ դատավարության մասնակիցներն ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները» (տե՛ս Case of Běleš and Others v. the Czech Republic, գանգատ թիվ 47273/99, 12.11.2002, § 49).

- «(...) ընթացակարգային նորմերը կիրառելիս ներպետական դատարանները պետք է խուսափեն և՛ չափազանցված ձևականությունից, որը կազդի ընթացակարգի արդարացիության վրա, և՛ չափազանցված ճկունությունից, որը կհանգեցնի օրենքով սահմանված ընթացակարգային պահանջների վերացմանը» (տե՛ս Case of Walchli v. France, գանգատ թիվ 35787/03, 26.10.2007, § 29, Peca v. Greece (no. 2), գանգատ թիվ 33067/08, 10.06.2010, § 30).

- «(...) դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի» (տե՛ս Case of Efstathiou and others v. Greece, գանգատ թիվ 36998/02, 27.07.2006, § 24, Case of Vamvakas v. Greece, գանգատ թիվ 36970/06, 16.10.2008, § 26, Case of Louli-Georgopoulou v. Greece, գանգատ թիվ 22756/09, 16.03.2017, § 39).

- պետությունը կարող է սահմանել արդարադատության մատչելիության իրավունքի սահմանափակումներ. պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճան սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը,

որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը (տե՛ս Case of Khalfaoui v. France, գանգատ թիվ 34791/97, final 14/03/2000, § 36):

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային պրակտիկան, իր՝ 2020 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1559 որոշմամբ արձանագրել է. «(...) դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների արդյունավետ կենսագործումն ապահովելու համար պետք է օրենսդրորեն երաշխավորել ինչպես դատարանի մատչելիության, դատարան դիմելու հնարավորության ապահովման, այնպես էլ՝ գործն անկախ և անաչառ դատարանի կողմից արդարության պահանջների՝ մրցակցության և հավասարության սկզբունքների պահպանմամբ քննելու իրավական հնարավորությունը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տուժողը՝ որպես քրեական վարույթի լիիրավ սուբյեկտ, հանդես գալով մեղադրանքի կողմում, ունի հետապնդվող շահերի ուրույն շրջանակ, որոնք ուղղված են հանցագործությամբ տուժողի խախտված սուբյեկտիվ իրավունքների վերականգնմանը և պատճառված վնասի հատուցմանը կամ հատուցման համար անհրաժեշտ իրավական հիմքերի ձևավորմանը: Այլ կերպ՝ եթե դատական վարույթում մեղադրողը հետապնդում է իրավակարգի պաշտպանության, հանցագործությունների բացահայտման և մեղավորներին դատական կարգով քրեական պատասխանատվության ենթարկելու հանրային-իրավական նպատակներ, տուժողը նշյալ նպատակների հետ մեկտեղ կամ այդ նպատակների միջոցով հետապնդում է իր խախտված իրավունքների կամ ազատությունների պաշտպանության և իրեն պատճառված վնասի հատուցման իրավաչափ շահեր: Հետևաբար՝ պետությունը, այդ թվում՝ Սահմանադրության՝ կյանքի հիմնական իրավունքը (24-րդ հոդված) երաշխավորող 3-րդ հոդվածի, վերջինիս՝ որպես անմիջականորեն գործող իրավունքի իրականացման համար արդյունավետ կառուցակարգեր նախատեսելու պահանջ սահմանող 75-րդ հոդվածի, ինչպես նաև Սահմանադրության 3-րդ հոդվածը որպես անփոփոխ ամրագրող 203-րդ հոդվածի ուժով պարտավոր է իրավակառուցակարգային արդյունավետ միջոցներ ձեռնարկել տուժողի դատավարական կարգավիճակի արդյունավետության երաշխավորման և վերջինից բխող դատավարական իրավունքների ամրագրման և գործնական իրացման ուղղությամբ: Ընդսմին, տուժողի դատավարական կարգավիճակի լիարժեք իրացումը մեծապես կախված է մեղադրողին վերապահված դատավարական իրավունքների արդյունավետ իրաց-

ման կառուցակարգերի առկայությունից և դրանց կենսագործման պայմանների երաշխավորվածությունից:

Քրեական դատավարությունում դատախազության՝ քրեական հետապնդում հարուցելու և իրականացնելու, դատարանում մեղադրանքը պաշտպանելու գործառույթների իրականացման առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջիններիս միջոցով ապահովվում է ոչ միայն հանցագործությունների բացահայտման, հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու **հանրային** շահի, այլև դատավարության մասնավոր մասնակից տուժողի դատավարական կարգավիճակ ունեցող անձի **մասնավոր** շահերի պաշտպանությունը:

Օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *տուժող է* ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/34 բանաձևով ընդունված՝ «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների» հռչակագրի իմաստով՝ «զոհեր» եզրույթի ներքո հասկացվում են անձինք, որոնց անհատապես կամ կոլեկտիվ կերպով անդամ պետությունների գործող ազգային քրեական օրենքների, ներառյալ՝ իշխանության հանցավոր չարաշահումն արգելող օրենքների խախտմանը հանգեցնող գործողության կամ գործողության բացակայության հետևանքով վնաս է հասցվել, ներառյալ՝ մարմնական վնասվածքները, բարոյական և նյութական վնասները, հոգեկան տանջանքները կամ նրանց հիմնարար իրավունքների էական կրճատումը (Հավելված, բաժին «A», մաս 1): Ազգային օրենսդրությանը համապատասխան՝ նրանք ունեն ***արդարադատության մեխանիզմներից օգտվելու հնարավորություն*** և իրենց հասցված վնասի արագ փոխհատուցման իրավունք (Հավելված, բաժին «A», մաս 4):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» R(85)11 հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծված է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական

արդարադատության նպատակներն ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործադրումը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը:

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԾԴ/0097/01/09 քրեական գործով 2010 թվականի մարտի 26-ի որոշման շրջանակներում, inter alia անդրադառնալով տուժողի իրավական կարգավիճակին, նշել է. «(...) **տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է իրեն հասցված վնասի վերականգնումը, իրեն վնաս պատճառած արարքի հանգամանքների լրիվ բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը և արդարացի պատժի նշանակումը: Այդ շահերի ապահովման երաշխիքներից է տուժողի իրավունքը, որպեսզի իր գործով դատական քննությունն ընթանա «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ»** (կետ 18):

Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեական արդարադատությամբ տուժողի արժանապատվության հարգումը, նրա իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը քրեական արդարադատության կարևորագույն խնդիրներն են, որոնց անտեսումը կարող է հանգեցնել տուժողի իրավունքների և ազատությունների՝ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների հետ անհամատեղելի նսեմացման:

Այդ առումով անհրաժեշտ է երաշխավորել քրեական դատավարության շրջանակներում տուժողի իրավունքների լիարժեք իրացումն ու դրանց պաշտպանությանը միտված համապատասխան իրավական կառուցակարգերի առկայությունը: Հետևաբար՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության վերոնշյալ վերլուծության լույսի ներքո Սահմանադրական դատարանը փաստում է, որ տուժողի օրինական շահերի պաշտպանությունը պայմանավորված է նաև քրեական դատավարության հանրային մասնակցի՝ դատախազի կողմից *գործուն կառուցակարգերի միջոցով* ենթադրյալ հանցավոր արարք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, մեղադրանքի պաշտպանության գործառույթներն իրականացնելու արդյունավետ հնարավորության ապահովմամբ:

Դատական քննության ընթացքում դատախազի՝ որպես մեղադրանքի կողմի առանցքային գործառույթը մեղադրանքը պաշտպանելն է: Դատախազի հենց այդ գործառույթն արդյունավետ իրականացնելու գործիքակազմից է կախված տուժողի օրինական շահերի ապահովումը բոլոր այն դեպքերում, երբ գործը վերաբերում է նաև տուժողի իրավունքների կամ ազատությունների դեմ կատարված քրեական օրենքով արգելված արարքին: Համապատասխան գործառույթն իրականացնելով՝ դատախազը ոչ միայն հանդես է գալիս հանրային շահերի, այլև հանցագործության հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով (mutatis mutandis, Սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 7-ի ՍԴՈ-906 որոշում, կետ 6): Քրեադատավարական այլ հարաբերություններում դատախազության այլ սահմանադրական լիազորությունների վերաբերելիությամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(…) նման օրենսդրական կարգավորման պայմաններում՝ տուժողի շահերի միակ պաշտպանը, վերոնշյալ սահմանադրական լիազորությունների շրջանակներում, դատախազն է, (…)» (2017 թվականի հունիսի 13-ի ՍԴՈ-1373 որոշում, կետ 6):

Այսպիսով, տուժողի իրավունքների լիարժեք իրացումը պայմանավորված է նաև դատախազի, մասնավորապես՝ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ամրագրված՝ դատարանում մեղադրանքը պաշտպանելու գործառույթի պատշաճ իրականացումից, ինչն էլ, իր հերթին, պայմանավորված է նաև օրենսդրական մակարդակում վերաբերելի իրավակարգավորումների, վերջիններիս շրջանակում գործուն կառուցակարգերի առկայությամբ:

Հիշատակված արձանագրությունները հիմք ընդունելով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում **դատախազի՝ մեղադրանքի պաշտպանության գործառույթի պատշաճ և արդյունավետ իրականացման հարցին անդրադառնալ Օրենսգրքում առկա կարգավորումների՝** առաջին ատյանի դատարանում դատական քննության փուլում գտնվող գործով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու՝ մեղադրողի (դատախազ) լիազորության իրացման օրենսդրական սահմանների լույսի ներքո:

Օրենսգրքի՝ *«Դատական քննության սահմանները»* վերտառությամբ 309-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և **միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք**

է առաջադրվել: Այլ կերպ՝ դատական քննության սահմանները սահմանափակված են մեղադրյալների շրջանակով և վերջիններիս առաջադրված մեղադրանքով:

Այդ համատեքստում՝ քրեական դատավարությունը ճանաչողական գործունեություն է, ինչով պայմանավորված՝ քրեական դատավարության տարբեր փուլերում (ենթափուլերում) օբյեկտիվորեն հնարավոր է ի հայտ գան (բացահայտվեն) այնպիսի նոր հանգամանքներ, որոնք, չհանդիսանալով քրեական հետապնդման մարմինների, այդ թվում՝ մեղադրողի (դատախազի) թերացումների արդյունք, անհրաժեշտաբար կպայմանավորեն քրեական վարույթի սկզբնական (ենթա)փուլերում առաջադրված մեղադրանքը դատական քննության փուլում փոփոխելու օբյեկտիվ անհրաժեշտություն:

Հենց դրա հաշվառմամբ է օրենսդիրը դատախազին վերապահել առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու լիազորություն: Այսպես՝ Օրենսգրքի՝ ***«Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները»*** վերտառությամբ 309.1-ին հոդվածով սահմանված է առաջին ատյանի դատարանում դատաքննության փուլում գտնվող գործով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը փոփոխելու երկու ռեժիմ: Դրանցից մեկը, որն ամրագրում է ստացել Օրենսգրքի հիշյալ հոդվածի 3-րդ մասով, մեղադրանքը փոխելու հնարավորություն է նախատեսում՝ առանց լրացուցիչ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, մասնավորապես՝ մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում **հետազոտված ապացույցներն** անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է:

Վերոնշյալ օրինադրույթի բովանդակային վերլուծության արդյունքով Սահմանադրական դատարանը փաստում է, որ, *առանց լրացուցիչ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, մեղադրողի կողմից մեղադրանքը կարող է փոփոխվել բացառապես ներքոնշյալ իմպերատիվ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.*

ա. առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում (մեղադրանքը կարող է փոփոխվել ինչպես մեղմացման, այնպես էլ խստացման առումներով).

բ. մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը.

գ. դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները

պետք է անհերքելիորեն վկայեն, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է:

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՔԴ/0002/01/13 քրեական գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ արձանագրել է. «Հիշատակված քրեադատավարական նորմով նախատեսված ընթացակարգը կիրառելի է միայն դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտման պարագայում (...)» (կետ 23):

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/0147/01/19 քրեական գործով 2024 թվականի մայիսի 10-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Նման իրավակարգավորումներից հետևում է, որ դատաքննության ընթացքում ապացույցների հետազոտումը համարվում է մեղադրանքի փոփոխման պայման և բացառվում է մեղադրանքի փոփոխություն, որը չի հանդիսանում դատարանում ապացույցների հետազոտության արդյունք: (...) ապացույցների հետազոտման արդյունքում փոփոխվել կարող են բացառապես մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքները: Արարքի իրավաբանական որակումը, արտահայտելով մեղադրանքի փաստ-իրավունք բաղադրիչների կապը, դուրս է ապացույց-փաստ կապի շրջանակից, ուստի դրա փոփոխությունը չի կարող հանդիսանալ ապացույցների հետազոտման անմիջական արդյունք, ինչը նշանակում է, որ մեղադրանքի իրավական տարրը՝ իրավաբանական որակումը, ինքնուրույն, առանց փաստական հանգամանքների փոփոխության, դատարանում փոփոխվել չի կարող:

(...)

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարության սկզբունքի, ինչպես նաև միջազգային-իրավական կարևորագույն փաստաթղթերով երաշխավորված մարդու հիմնարար իրավունքների հետևողական կենսագործումն ապահովելու նկատառումներից ելնելով, անհրաժեշտություն է առաջացել վերանայելու և զարգացնելու առանց քննչական գործողությունների կատարման մեղադրանքի փոփոխման կառուցակարգի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումը և արձանագրելու, որ առանց քննչական գործողությունների կատարման փաստական հանգամանքների մասով մեղադրանքը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն այն դեպքում, երբ ապացույցների հետազոտման արդյունքում ի հայտ են եկել և հաստատվել են այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են անձին նոր մեղադրանք ներկայացնելու անխուսափելիության մասին: Հետևաբար, առանց քննչական գործողությունների կատարման մեղադրանքի փոփոխման

կառուցակարգի դեպքում ևս մեղադրանքը փոփոխող հանգամանքներն իրենց բնույթով պետք է նոր լինեն, այսինքն, մինչ այդ պահն օբյեկտիվորեն դուրս գտնվեն մինչդատական վարույթն իրականացնող իրավասու մարմնի իմացության տիրույթից» (կետ 11.1):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի տեքստի իմաստային սահմանները, իր դատական մեկնաբանություններով նշված նորմին հաղորդել է այնպիսի բովանդակություն, որի համաձայն՝ առանց քննչական գործողություններ կատարելու մեղադրանքի փոփոխությունը կապվել է բացառապես ապացույցների հետազոտման արդյունքում մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքների փոփոխության հետ՝ **անհնար համարելով դատարանում մեղադրանքի փոփոխությունը՝ առանց դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտման:**

Մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքը փոփոխելու երկրորդ ռեժիմը նախատեսում է քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու միջոցով մեղադրանքի փոփոխության հնարավորություն (Օրենսգրքի 309.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Մասնավորապես՝ եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն:

Դատարանում մեղադրանքի փոփոխության վերոնշյալ ռեժիմի գործարկման նախապայման է այնպիսի հանգամանքների ի հայտ գալը, որոնք մինչդատական վարույթի շրջանակներում հայտնի չէին և հայտնի լինել չէին կարող. ուստի՝ դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս գնահատում է՝ արդյոք մեղադրանքի ծավալի (սահմանների) փոփոխության համար հիմք հանդիսացող փաստական հանգամանքները մինչդատական վարույթում հայտնի եղե՞լ են, թե՞ ոչ կամ արդյոք կարո՞ղ էին հայտնի լինել:

Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-872 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սահմանադրականության ստուգման առնչությամբ նշել է. «(…) օրենսդիրը մեղադրողի՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքի իրացման համար սահմանել է մի շարք պարտադիր նախապայմաններ, որոնք կոչված են երաշխավորելու քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, և որոնք անվերապահորեն պետք է հաշվի առնվեն դատական պրակտիկայում: Դրանք են՝

ա) եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում,

բ) եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու,

գ) վերոհիշյալ հիմքերի առկայությունը պետք է գնահատի դատարանը,

դ) նիստը կարող է հետաձգվել բացառապես անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար,

ե) նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ,

զ) հետաձգումը չի կարող նպատակ հետապնդել լրացնելու նախկինում կատարված թերի նախաքննությունը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից ներկայացված մեկնաբանությամբ՝ Օրենսգրքի 309.1-ին հոդվածով ամրագրված կարգավորումները թույլ են տալիս մեղադրողին դատական քննության ժամանակ մեղադրանքը փոփոխել միայն սահմանափակ դեպքերում, և դատարանում մեղադրանքի փոփոխման երկու իրավական ռեժիմների դեպքում (քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու միջոցով և առանց լրացուցիչ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու) **մեղադրանքի փոփոխումը հնարավոր է բացառապես մեղադրանքի փաստական կողմի փոփոխությամբ (չբացառելով փաս-**

տական կողմի փոփոխությամբ պայմանավորված նաև իրավական կողմի փոփոխության հնարավորությունը):

Արդյունքում՝ Օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի օրենսդրական կարգավորումներով՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, բացառվում է մեղադրանքի իրավական կողմի ինքնուրույն փոփոխությունը՝ մեղադրանքի փաստական կողմի փոփոխությունից անկախ:

Սահմանադրական դատարանը, սակայն, անհրաժեշտ է համարում արձանագրել, որ մեղադրանքի իրավական կողմի՝ արարքի իրավական գնահատականի փոփոխությունը միշտ չէ, որ կարող է կապված լինել մեղադրանքի փաստական կողմի փոփոխության հետ: Հնարավոր է իրավիճակ, երբ առանց մեղադրանքի փաստական կողմի փոփոխության առաջանա մեղադրանքի իրավական կողմի՝ արարքին տրված իրավական գնահատականի փոփոխության անհրաժեշտություն:

Նման իրավիճակ հնարավոր է առաջանա նաև այն դեպքում, երբ ամբաստանյալին մեղսագրվող արարքը

Այդպիսի իրավիճակը կապված չէ մեղադրանքի փաստական կողմի փոփոխության հետ, ըստ այդմ՝ այն չի կարող բացահայտվել ապացույցների հետազոտման, քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման արդյունքում:

Միաժամանակ, իրավակիրառ պրակտիկայում տրված նշված մեկնաբանությունը՝ մեղադրանքի փաստական կողմից անկախ՝ իրավական գնահատականի փոփոխության բացառման առումով, կաթվածահար է անում դատախազության՝ մեղադրանքի պաշտպանության սահմանադրական գործառույթի իրացումը՝ ի թիվս այլնի, հանգեցնելով նաև դրանով պաշպանվող տուժող(ներ)ի մասնավոր շահերի ոտնահարմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ այն մեկնաբանությունը, որ օրենսդրի մոտեցման համաձայն՝ մեղադրանքի իրավական կողմի ինքնուրույն փոփոխությունը՝ մեղադրանքի փաստական կողմի փոփոխությունից անկախ անհնար է, չի կարող հանդիսանալ առանց քննչական գործողությունների կատարման մեղադրանքի փոփոխության հիմք, ինքնին, սահմանադրականության առումով խնդրահարույց է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, որի համաձայն՝ մեղադրողի կողմից առանց

մեղադրանքի փաստական կողմի փոփոխության մեղադրանքի իրավական կողմի՝ արարքի իրավական գնահատականի փոփոխությունը բացառվում է այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի կողմից ամբաստանյալին մեղսագրվող արարքը որակող հատուկ հանցակազմ նախատեսող քրեաիրավական նորմը Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվում, հանգեցնում է տուժողի իրավունքների պաշտպանության երաշխավորվածության խաթարման, իրավունքի գերակայության սկզբունքի խախտման ու իրավական անվտանգության լուրջ սպառնալիքների:

5.2. Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Նշված պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ ու իրական կենսագործմանը, քանզի իրավունքի կամ ազատության սոսկ ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար. ուստի՝ **համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական մակարդակում ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու համար:**

Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման շրջանակներում անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, փաստել է. «(…) ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) *արդյունավետ իրականացման համար* (2) *անհրաժեշտ* (3) *կազմակերպական* (4) *կառուցակարգեր* և (5) *ընթացակարգեր*: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը» (կետ 4.5):

Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշմամբ արձանագրված է. «Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում

է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները» (կետ 4.1):

Սույն գործի նյութերի ուսումնասիրության համաձայն՝ թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի շրջանակներում **ամբաստանյալներին մեղսագրվող ենթադրյալ արարքների քրեաիրավական որակման հիմքում դրված հատուկ հանցակազմ նախատեսող իրավանորմը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածը, Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 26-ի ՍԴՈ-1586 որոշմամբ Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչվելու պայմաններում, ըստ տվյալ գործով մեղադրանքի կողմի, անհրաժեշտություն է առաջացել նրանց կողմից կատարված ենթադրյալ արարքին տալ նոր՝ այլ հանցակազմ նախատեսող իրավանորմով գնահատական,** սակայն համապատասխան (վիճարկվող) իրավակարգավորումների պայմաններում, միայն արարքի իրավական որակումը փոփոխելով՝ արարքը վերաորակելու և նոր մեղադրանքով քրեական գործի վարույթը շարունակելու հնարավորությունը բացառվում է:

Վերոնշյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ համապատասխան օրենսդրական կարգավորումների այնպիսի մեկնաբանումը, որի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքով հատուկ հանցակազմ նախատեսող նորմի (ՀՀ քրեական օրենսգրքով ընդհանուր հանցակազմից առանձնացված և դրա մասնավոր դրսևորումը հանդիսացող հատուկ հանցակազմի)՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում գործողությունը դադարելու հետևանքով քրեական դատավարությունում անհնար է դառնում մեղադրանքի պաշտպանության գործառույթի իրացումը՝ պայմանավորված մեղադրանքի իրավական գնահատականը փոփոխելը բացառելու հանգամանքով, և առաջ է գալիս քրեական հետապնդման դադարեցում և/կամ քրեական գործի վարույթի կարճում, չի ապահովում Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջների արդյունավետ կենսագործումը, արգելակում/խաթարում է մեղադրանքի պաշտպանության սահմանադրաիրավական գործառույթի իրացումը՝ որպես հետևանք հանգեցնելով նաև տուժող(ներ)ի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտման:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ մարմինները պետք է առկա կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը մեկնաբանեն այնպես, որ Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ հանցակազմ նախատեսող իրավանորմը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում ապահովեն դատարանում մեղադրողի կողմից մեղադրանքի փաստական կողմից անկախ՝ բացառապես մեղադրանքի իրավական կողմի փոփոխության հնարավորությունը, ըստ այդմ՝ մեղադրողի՝ մեղադրանքի պաշտպանության գործառույթի իրացումը, որպիսի ճանապարհով հնարավոր կդառնա ապահովել տուժողի շահերի պաշտպանությունը քրեական վարույթում և վերջինիս արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացումը՝ կանխելով իրավական անվտանգության հնարավոր սպառնալիքները: Հակառակ պարագայում, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ հանցակազմը սահմանող նորմի գործողության դադարեցման պայմաններում արարքի իրավական որակման փոփոխության բացառումը մեղադրողի կողմից, այն է՝ արարքն ընդհանուր հանցակազմը սահմանող նորմով վերաորակելու անհնարինությունը, հանգեցնում է քրեական դատավարությունում տուժողի կարգավիճակ ունեցող անձանց՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով երաշխավորված իրավունքների խախտման:

5.3. Սահմանադրական դատարանը հարկ է համարում Օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը գնահատել Օրենսգրքի 309.1-ին հոդվածի 1-ի մասի հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ:

Օրենսգրքի 309.1-ին հոդվածի 1-ի մասի համաձայն՝ եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու՝ առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

Օրենսգրքի 309.1-ին հոդվածի 1-ին մասը սահմանում է դատական վարույթի ընթացքում մեղադրողի որոշմամբ մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու հնարավորություն մինչդատական վարույթում օբյեկտիվորեն անհայտ հանգամանքների առկայության պարագայում: Ընդ որում՝ օրենսդիրը նախատեսել է մեղադրանքի փոփոխման երկու ռեժիմ՝ անմիջապես մեղադրանքի փոփոխման անհրաժեշտության ծագումից հետո՝ նույն դատական նիստում, կամ դրա անհնարինության դեպքում՝ դատարանի կողմից դատական նիստը հետաձգելուց հետո մեղադրանքի լրացմամբ կամ փոփոխմամբ և մեղադրյալին նոր մեղադրանքի առաջադրմամբ:

Սույն դիմումի համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ մինչդատական վարույթում օբյեկտիվորեն անհայտ հանգամանքների առարկայական շրջանակին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշյալ հարցի պարզաբանման համար անհրաժեշտ է բացահայտել օրենսդրի նպատակը՝ ելնելով քրեական դատավարության ընդհանուր խնդիրներից: Այսպես՝ Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությունն իրականացվում է՝ ապահովելու համար անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ: Օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝ քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և Օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի, ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի, ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման:

Վկայակոչված օրինադրույթներից հետևում է, որ՝

- քրեական վարույթի առաջնային խնդիրը հանցագործությունից զերծ կամ առնվազն նվազ հանցավորությամբ հասարակության և պետության առկայությունն է, որտեղ անձի իրավունքները պաշտպանված կլինեն հանցավոր ոտնձգություններից,

- պետությունը՝ ի դեմս իրավասու պետական մարմինների, պոզիտիվ պարտականություն է կրում հայտնաբերել և քրեական պատասխանատվության ենթարկել հանցանք կատարած անձանց:

Սահմանադրական դատարանը նկատում է, որ սահմանելով քրեական վարույթի ընդհանուր խնդիրները՝ օրենսդիրը կարևորել է հանցանք կատարած անձանց բացահայտման և քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով իրավակարգի ապահովումը: Ընդ որում՝ հանցանքի ներքո օրենսդիրը նկատի է ունեցել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ցանկացած հանցանք, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մեղսագրելի է անձին: Այսինքն՝ օրենսդիրն իրավաչափ և արդյունավետ է համարել այն քրեական վարույթը, որի արդյունքում քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից կապահովվեն բոլոր միջոցները հանրորեն վտանգավոր արարքների բացահայտման և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Այդ միջոցներից մեկը վարույթն իրականացնող մարմնի կողմից անձին մեղսագրված արարքի որակումն ու վերաորակումն է, որի միջոցով համապատասխան հիմքերի ու ապացույցների առկայության դեպքում անձի կողմից դրսևորված վարքագծին տրվում է քրեաիրավական գնահատական՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հանցակազմը, որն առավել ճշտորեն և որոշակիորեն մոդելավորում է անձի հակաիրավական վարքագիծը:

Քննարկվող իրավանորմի նման մեկնաբանությունն արտահայտում է նաև քրեական վարույթում տուժողի իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը, երբ որոշակի անձի որոշակի վարքագիծն առաջացրել է քրեաիրավական հետևանքներ՝ ներառյալ՝ տուժողին վնասի պատճառում, որն արդարադատության իրականացման միջոցով ենթակա է վերականգնման՝ համապատասխան արդյունավետ կառուցակարգերի գործադրմամբ, ինչը սահմանադրի հրամայական պահանջն է (Սահմանադրության 75-րդ հոդված):

Սույն պարագայում Սահմանադրական դատարանը նկատում է, որ մեղադրողը, առաջնորդվելով ՀՀ քրեական օրենսգրքի (2003 թ.) 12-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ արարքի հանցավորությունն ու պատժելիությունը հանցանքի կատարման պահին գործող օրենքով որոշելու սկզբունքով, օբյեկտիվորեն չի կարող կանխատեսել մեղադրյալին (ամբաստանյալին) մեղսագրվող արարքի որակման հոդվածի՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշման ընդունումը. հետևապես՝ եթե

դատական վարույթի ընթացքում փաստվում է, որ Սահմանադրական դատարանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան իրավանորմը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, և մեղադրողը գտնում է, որ կատարված արարքը կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի այլ գործող հոդվածով, ապա նա, Օրենսգրքի 309.1-ին հոդվածի հիման վրա, իրավասու է մեղադրանքի լրացմանը կամ փոփոխմանն ուղղված քայլեր ձեռնարկել՝ գնահատելով այն հանգամանքը, որ՝

ա. առկա է հանցագործության դեպք,

բ. հանցագործության արդյունքում տուժել են անձինք,

գ. պահպանվել են այդ արարքին մեղադրյալների առնչությունը և օբյեկտիվ կապը, և պատշաճ իրավական ընթացակարգով չեն հերքվել նրանց առաջադրված մեղադրանքները:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածը չի բովանդակում Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի՝ հանցակազմ սահմանող նորմը հակասահմանադրական ճանաչված լինելու հիմքով քրեական հետապնդման դադարման կոնկրետ հիմք, արարքների հանցավոր լինելը պահպանվելու դեպքում մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելը չի կարող դիտարկվել օրինականության սկզբունքի և արդար դատաքննության իրավունքի խախտման լույսի ներքո՝ հաշվի առնելով, որ դրանցով հավասարապես ապահովվում են կողմերի շահերի պաշտպանությունը՝ քրեական դատավարության խնդիրների լուծման ուղղությամբ:

Ամփոփելով վերոնշյալը՝ *Սահմանադրական դատարանը գտնում է, որ 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի այն նորմը, որով որակվել է ամբաստանյալին մեղսագրվող արարքը, Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելիս մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը (նրան մեղսագրվող արարքի իրավական որակումը)՝ ամբաստանյալի արարքում քրեական օրենքով նախատեսված այլ արարքի հատկանիշների առկայության պարագայում՝ անկախ դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտումից:*

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի

1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի այն նորմը, որով որակվել է ամբաստանյալին մեղսագրվող արարքը, Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելիս մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը (նրան մեղսագրվող արարքի իրավական որակումը)՝ ամբաստանյալի արարքում քրեական օրենքով նախատեսված այլ արարքի հատկանիշների առկայության պարագայում՝ անկախ դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտումից:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 հուլիսի 2024 թվականի
ՍԴՈ-1741

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԵՎՐԱՋԱՍԹ) ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան — 6 օգոստոսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Արդարադատության նախարարի տեղակալ Կ. Կարապետյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հուլիսի 4-ի N 1018-Ա որոշմամբ հավանություն է տվել 2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հուլիսի 9-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը և հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսել քաղաքում:

2. Համաձայնագրի ընդհանուր նպատակն է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում Եվրաջասթի և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջև համագործակցության խթանումը: Նշված նպատակին հասնելու համար Համաձայնագրով թույլատրվում է անձնական տվյալների փոխանակումը Եվրաջասթի և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջև՝ ահաբեկչության, փողերի լվացման, թրաֆիքինգի և այլ ծանր հանցագործությունների քննության և դրանցով քրեական հետապնդում իրականացնելու ուղղությամբ Եվրաջասթի և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջև միջազգային համագործակցության զարգացման նպատակով՝ միաժամանակ անհրաժեշտ երաշխիքներ ապահովելով անհատների հիմնարար իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ անձնական տվյալների գաղտնիության և պաշտպանության իրավունքի հետ կապված:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. ապահովել Եվրաջասթի և Հայաստանի իրավասու մարմինների միջև համագործակցությունը Եվրաջասթի գործունեության ոլորտներում և իրավասությունների ու խնդիրների շրջանակում, ինչպես սահմանված է Եվրաջասթի մասին կանոնակարգով՝ համաձայն Եվրոպական միության (այսուհետ՝ Միություն) մասին պայմանագրի և Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի, և սույն Համաձայնագրի (հոդված 2),

3.2. նշանակել առնվազն մեկ համակարգող Հայաստանի Հանրապետության ներպետական իրավասու մարմիններից՝ Եվրաջասթի և Հայաստանի իրավասու մարմինների միջև հաղորդակցությունը և համագործակցությունը դյուրացնելու նպատակով, ինչպես նաև վերջինիս նշանակել նաև որպես ահաբեկչության հարցերով համակարգող՝ այդ մասին տեղեկացնելով Միությանը, իսկ համակարգողին փոխելու դեպքում՝ տեղեկացնել Եվրաջասթին (հոդված 4),

3.3. Համաձայնագրով նախատեսված համագործակցությունը դյուրացնելու նպատակով Եվրաջասթ գործուղել Համագործակցության հարցերով դատախազ՝ սահմանելով վերջինիս լիազորությունները և գործուղման տևողությունը՝ Եվրաջասթի հետ համաձայնեցմամբ (հոդված 5, պարբերություններ 1 և 2),

3.4. ապահովել, որ Համագործակցության հարցերով դատախազը և Համագործակցության հարցերով դատախազի օգնականներն ունենան օտարերկրյա իրավասու մարմինների հետ համագործակցության լիազորություն (հոդված 5, պարբերություն 4),

3.5. ապահովել, որ Համագործակցության հարցերով դատախազը և Համագործակցության հարցերով դատախազի օգնական(ներ)ը, Հայաստանի ներպետական օրենսդրության համաձայն, հասանելիություն ունենան ներպետական քրեական կամ Հայաստանի ցանկացած այլ ռեգիստրում պարունակվող տեղեկություններին, ինչպես նաև վերջիններիս լիազորել ուղղակիորեն կապ հաստատել Հայաստանի իրավասու մարմինների հետ (հոդված 5, պարբերություններ 5 և 6),

3.6. տեղեկացնել Եվրաջասթին՝ Համագործակցության հարցերով դատախազին և Համագործակցության հարցերով դատախազի օգնականներին՝ Համաձայնագրին համապատասխան, Հայաստանում իրենց առաջադրանքները կատարելու կապակցությամբ վերապահված իրավական լիազորությունների ճշգրիտ բնույթի և ծավալի մասին (հոդված 5, պարբերություն 7),

3.7. երաշխավորել, որ Համաձայնագրի շրջանակում հայցվող և ստացվող անձնական տվյալները ենթակա լինեն մշակման միայն հանցագործությունների կանխման, նախաքննության, հայտնաբերման կամ քրեական հետապնդման իրականացման կամ պատիժների կատարման նպատակներով՝ Համաձայնագրի 10-րդ հոդվածի 6-րդ կետի և իրավասու մարմինների համապատասխան լիազորությունների սահմաններում (հոդված 9, պարբերություն 1),

3.8. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն ամենաուշը մինչև անձնական տվյալները փոխանցելու պահը հստակ նշեն տվյալների փոխանցման կոնկրետ նպատակը կամ նպատակները (հոդված 9, պարբերություն 2),

3.9. ապահովել, որ Համաձայնագրի շրջանակում անձնական տվյալների փոխանցումը և դրանց հետագա մշակումը իրականացվեն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված կարգով (հոդված 10, պարբերություն 1),

3.10. ապահովել ստացող մարմնի պարտականության կատարումը՝ անձնական տվյալների նկատմամբ հասանելիության և դրանց օգտագործման առնչությամբ փոխանցող մարմնի կողմից Համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված

ցանկացած սահմանափակում պահպանելու ուղղությամբ՝ կապված, մասնավորապես, անձնական տվյալների միջնորդավորված փոխանցման, որոշակի ժամանակահատվածից հետո դրանք ջնջելու կամ ոչնչացնելու կամ դրանց հետագա մշակման հետ (հոդված 10, պարբերություն 3),

3.11. երաշխավորել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի պարտականությունը՝ ձեռնարկել պատշաճ տեխնիկական և կազմակերպչական միջոցներ, որպեսզի հնարավոր լինի ցույց տալ, որ տվյալների մշակումն իրականացվում է Համաձայնագրին համապատասխան, և որ նշված տվյալների սուբյեկտների իրավունքները պաշտպանված են (հոդված 10, պարբերություն 4),

3.12. պահպանել Համաձայնագրով նախատեսված երաշխիքները՝ անկախ նշված տվյալների սուբյեկտի ազգությունից և առանց խտրականության (հոդված 10, պարբերություն 5),

3.13. երաշխավորել, որ Համաձայնագրի համաձայն փոխանցվող անձնական տվյալները ձեռք չեն բերվի Հայաստանի Հանրապետության համար պարտադիր ճանաչված՝ միջազգային իրավունքով նախատեսված՝ մարդու իրավունքների խախտմամբ, և որ ստացված անձնական տվյալները չեն օգտագործվի մահապատժի նշանակման կամ ցանկացած այլ ձևի դաժան կամ անմարդկային վերաբերմունքի պահանջ ներկայացնելու, դրանք նշանակելու կամ իրագործելու համար (հոդված 10, պարբերություն 6),

3.14. ապահովել, որ անձնական տվյալների բոլոր փոխանցումներն իրականացվեն Համաձայնագրի 10-րդ հոդվածի համաձայն՝ հաշվի առնելով այդ փոխանցումների նպատակները (հոդված 10, պարբերություն 7),

3.15. հանցագործությունից տուժած անձանց, վկաների կամ այնպիսի այլ անձանց վերաբերյալ անձնական տվյալների փոխանցումը, որոնք կարող են տեղեկություններ տրամադրել քրեական հանցագործությունների վերաբերյալ, թույլատրել միայն այն դեպքում, եթե դա յուրաքանչյուր առանձին դեպքում խիստ անհրաժեշտ է և համաչափ ծանր հանցագործություններով նախաքննություն և քրեական հետապնդում իրականացնելու համար (հոդված 11, պարբերություն 1),

3.16. ռասայական կամ էթնիկական ծագման, քաղաքական հայացքների, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքների կամ արհեստակցական միությանն անդամակցելու, գենետիկ տվյալների,

ֆիզիկական անձի եզակի նույնականացման նպատակով մշակված կենսաչափական տվյալների վերաբերյալ տեղեկություններ բացահայտող անձնական տվյալների, ֆիզիկական անձի առողջությանը կամ սեռական կյանքին կամ սեռական կողմնորոշմանը վերաբերող տվյալների փոխանցումը թույլատրել միայն այն դեպքում, եթե դա յուրաքանչյուր առանձին դեպքում խիստ անհրաժեշտ է և համաչափ ծանր հանցագործություններով նախաքննություն և քրեական հետապնդում իրականացնելու համար (հոդված 11, պարբերություն 2),

3.17. նախատեսել լրացուցիչ երաշխիքներ՝ Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն, անձնական տվյալների մշակման համար, այդ թվում՝ դրանց նկատմամբ հասանելիությանը ներկայացվող սահմանափակումներ, անվտանգության լրացուցիչ միջոցներ և միջնորդավորված փոխանցման մասով սահմանափակումներ (հոդված 11, պարբերություն 3),

3.18. արգելել այնպիսի որոշումների կայացումը, որոնք հիմնված կլինեն բացառապես փոխանցված անձնական տվյալների ինքնաշխատ մշակման վրա (ներառյալ՝ պրոֆիլավորումը), ինչը բացասական իրավական հետևանքներ է առաջացնում կամ բացասական ազդեցություն ունի տվյալների սուբյեկտի վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք օրենքով թույլատրված են ծանր հանցագործություններով նախաքննություն և քրեական հետապնդում իրականացնելու համար, ինչն ապահովում է տվյալների սուբյեկտի իրավունքների և ազատությունների պատշաճ երաշխիքներ, այդ թվում՝ առնվազն մարդու կողմից միջամտություն ստանալու իրավունքը (հոդված 12),

3.19 թույլ չտալ, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Համաձայնագրի շրջանակում ստացված անձնական տվյալները փոխանցեն Հայաստանի այլ մարմինների, եթե չեն կատարվում Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված բոլոր պայմանները (հոդված 13, պարբերություն 1),

3.20. երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին արգելվեն Համաձայնագրի շրջանակներում ստացված անձնական տվյալների փոխանցումները որևէ երրորդ երկրի մարմիններին կամ միջազգային կազմակերպությանը՝ բացառությամբ, եթե պահպանված են 13-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված բոլոր պայմանները (հոդված 13, պարբերություն 2),

3.21. նախատեսել տվյալների սուբյեկտի իրավունքը՝ Համաձայնագրի համաձայն փոխանցված անձնական տվյալները մշակող մարմիններից

ստանալ այն փաստի հաստատումը, թե արդյո՞ք իրեն վերաբերող անձնական տվյալները մշակվում են Համաձայնագրով սահմանված կարգով, և եթե այդպես է, ապա հասանելիություն ընձեռել Համաձայնագրի 14-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված տեղեկություններին (հոդված 14, պարբերություն 1, մաս 1),

3.22. երաշխավորել տվյալների ցանկացած սուբյեկտի Համաձայնագրի համաձայն փոխանցված անձնական տվյալներ մշակող մարմիններից տվյալների սուբյեկտին վերաբերող ոչ ճշգրիտ անձնական տվյալների շտկում ստանալու իրավունքը, որը ներառում է Համաձայնագրի շրջանակներում փոխանցված թերի անձնական տվյալները լրացնելու իրավունք՝ հաշվի առնելով մշակման նպատակները (հոդված 15, պարբերություն 1),

3.23. երաշխավորել, որ տվյալների ցանկացած սուբյեկտ իրավունք ունենա Համաձայնագրի համաձայն փոխանցված անձնական տվյալներ մշակող մարմիններից պահանջելու ջնջել տվյալների սուբյեկտին վերաբերող անձնական տվյալները, եթե անձնական տվյալների մշակումը խախտում է Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետը կամ 11-րդ հոդվածի 2-րդ կետը, կամ եթե անձնական տվյալները պետք է ջնջվեն մարմինների համար պարտադիր իրավական պարտավորությունը կատարելու համար (հոդված 15, պարբերություն 2),

3.24. ապահովել, որ անձնական տվյալները փոխանցող մարմինը և մշակող մարմինը միմյանց տեղեկացնեն Համաձայնագրի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված դեպքերի մասին, ինչպես նաև ապահովել, որ տվյալները մշակող մարմինը շտկի, ջնջի նշված անձնական տվյալները կամ սահմանափակի դրանց մշակումը՝ փոխանցող մարմնի կողմից ձեռնարկված գործողություններին համապատասխան (հոդված 15, պարբերություն 4),

3.25. նախատեսել Համաձայնագրի 15-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն պահանջն ստացած մարմնի պարտականությունը՝ առանց անհարկի ուշացման տվյալների սուբյեկտին գրավոր տեղեկացնել, որ անձնական տվյալները շտկվել են, ջնջվել կամ, որ դրանց մշակումը սահմանափակվել է (հոդված 15, պարբերություն 5),

3.26. նախատեսել, որ Համաձայնագրի 15-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերության համաձայն պահանջն ստացած մարմինը տվյալների սուբյեկտին գրավոր ներկայացնի Համաձայնագրի 15-րդ հոդվածի

6-րդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը (հոդված 15, պարբերություն 6),

3.27. Համաձայնագրի շրջանակներում փոխանցվող անձնական տվյալների վրա ազդող անձնական տվյալների խախտման դեպքում նախատեսել, որ Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմիններն այդ խախտման մասին անհապաղ ծանուցեն միմյանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան վերահսկիչ մարմիններին, բացառությամբ եթե հավանական չէ, որ անձնական տվյալների այդ խախտումը կարող է վտանգել ֆիզիկական անձանց իրավունքներն ու ազատությունները, և միջոցներ ձեռնարկեն դրա հնարավոր բացասական հետևանքները մեղմելու համար (հոդված 16, պարբերություն 1),

3.28 . նախատեսել Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների պարտավորությունը՝ փաստաթղթերով հիմնավորելու Համաձայնագրի շրջանակներում փոխանցված անձնական տվյալների վրա ազդող անձնական տվյալների ցանկացած խախտում, այդ թվում՝ խախտման հետ կապված փաստերը, դրա հետևանքները և ձեռնարկված շտկման միջոցները՝ դրանով հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության համապատասխան վերահսկիչ մարմիններին ստուգելու Համաձայնագրի 16-րդ հոդվածի պահանջների կատարումը (հոդված 16, պարբերություն 4),

3.29. նախատեսել անձնական տվյալների խախտման մասին առանց անհարկի ուշացման տվյալների սուբյեկտին հաղորդելու Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների պարտավորությունն այն դեպքում, երբ հավանականություն կա, որ Համաձայնագրի 16-րդ հոդվածում նշված անձնական տվյալների խախտումը կարող է մեծապես վտանգել ֆիզիկական անձանց իրավունքներն ու ազատությունները (հոդված 17, պարբերություն 1),

3.30. Համաձայնագրի շրջանակներում ստացված անձնական տվյալների պահպանման կամ այդ տվյալների պահպանման անհրաժեշտության պարբերական վերանայման համար նախատեսել համապատասխան ժամկետներ, որպեսզի այդ տվյալները պահպանվեն ոչ ավելի, քան անհրաժեշտ է այն նպատակների համար, որոնց համար դրանք փոխանցվում են (հոդված 18, պարբերություն 1),

3.31. ապահովել անձնական տվյալների հավաքման, փոփոխման, դրանց նկատմամբ հասանելիության, բացահայտման, այդ թվում՝ միջնորդավորված փոխանցման, դրանց համադրման և ջնջման համար

նախատեսված մատյանների կամ այլ փաստաթղթերի վարում, դրանք՝ ըստ պահանջի, հասանելի դարձնել վերահսկիչ մարմնին և օգտագործել միայն տվյալների մշակման օրինականությունը ստուգելու, ներքին մշտադիտարկման և տվյալների պատշաճ ամբողջականությունն ու անվտանգությունն ապահովելու համար (հոդված 19),

3.32. ապահովել տեխնիկական և կազմակերպչական միջոցառումների իրականացումը՝ Համաձայնագրի շրջանակներում փոխանցված անձնական տվյալների պաշտպանության նպատակով (հոդված 20, պարբերություն 1),

3.33. տվյալների ինքնաշխատ մշակման մասով ապահովել այնպիսի միջոցառումների իրականացում, որոնք նախատեսված են Համաձայնագրի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ (հոդված 20, պարբերություն 2),

3.34. նախատեսել մեկ կամ մի քանի անկախ պետական մարմիններ, որոնք պատասխանատու են տվյալների պաշտպանության համար՝ վերահսկելու Համաձայնագրի կատարումը և ապահովելու վերջինիս հետ համապատասխանությունը՝ անձնական տվյալների մշակմանն առնչվող ֆիզիկական անձանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով (հոդված 21, պարբերություն 1),

3.35. ապահովել, որ յուրաքանչյուր վերահսկիչ մարմին իր առաջադրանքները կատարելիս և իր լիազորություններն իրականացնելիս գործի ամբողջովին անկախ, զերծ լինի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի արտաքին ազդեցությունից, ինչպես նաև չսպասի ցուցումների կամ չստանա դրանք, և յուրաքանչյուր վերահսկիչ մարմնի անդամ ունենա պաշտոնավարման որոշակի երաշխավորված ժամկետ, ինչպես նաև կամայականորեն պաշտոնից ազատվելու դեմ երաշխիքներ (հոդված 21, պարբերություն 2),

3.36. ապահովել, որ յուրաքանչյուր վերահսկիչ մարմին ունենա մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ, տարածք և ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ են իր առաջադրանքների և լիազորությունների արդյունավետ կատարման համար (հոդված 21, պարբերություն 3),

3.37. ապահովել, որ յուրաքանչյուր վերահսկիչ մարմին ունենա քննություն և միջամտություն կատարելու արդյունավետ լիազորություններ՝ իր կողմից վերահսկվող մարմինների նկատմամբ հսկողություն իրականացնելու և իրավական գործընթացներ սկսելու համար (հոդված 21, պարբերություն 4),

3.38. ապահովել, որ յուրաքանչյուր վերահսկիչ մարմին ունենա լիազորություն՝ լսելու անհատների կողմից ներկայացվող բողոքներն իրենց անձնական տվյալների օգտագործման վերաբերյալ (հոդված 21, պարբերություն 5),

3.39. նախատեսել, որ տվյալների յուրաքանչյուր սուբյեկտ, անկախ այլ վարչական կամ արտադատական պաշտպանության որևէ միջոցից, ունենա արդյունավետ դատական պաշտպանության միջոցի իրավունք, եթե գտնում է, որ իր անձնական տվյալների՝ Համաձայնագրին ոչ համապատասխան մշակման արդյունքում խախտվել են Համաձայնագրով երաշխավորված իր իրավունքները (հոդված 22, պարբերություն 1),

3.40. ընդունել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Եվրաջասթից չեն կարող պահանջել վերադարձնել պատժիչ կամ ոչ փոխհատուցելի վնասների փոխհատուցումը (հոդված 24, պարբերություն 3),

3.41. նախատեսել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն իրենք կրեն Համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացած ծախսերը, եթե Համաձայնագրով կամ աշխատանքային պայմանավորվածությամբ այլ բան սահմանված չէ (հոդված 25),

3.42. նախատեսել յուրաքանչյուր իրավասու մարմնի պարտականությունը՝ հրապարակելու իրենց կոնտակտային տվյալները, ինչպես նաև Համաձայնագրի շրջանակներում երաշխավորված անձնական տվյալների երաշխիքների վերաբերյալ հստակ և պարզ լեզվով տեղեկություններ սահմանող փաստաթուղթը, այդ թվում՝ տեղեկություններ՝ ընդգրկելով առնվազն Համաձայնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «գ» ենթակետերով նախատեսված կետերը և տվյալների սուբյեկտների իրավունքների իրականացման համար հասանելի միջոցները, և ապահովել, որ այդ փաստաթղթի պատճենը տրամադրվի մյուս Կողմին (հոդված 28, պարբերություն 1),

3.43. ապահովել, որ իրավասու մարմիններն ընդունեն կանոններ, որոնք կհստակեցնեն, թե գործնականում ինչպես է կիրառվելու անձնական տվյալների մշակման վերաբերյալ դրույթների կատարումը, եթե այդպիսի կանոններ դեռևս չկան, ինչպես նաև ապահովել, որ կանոնների պատճենն ուղարկվի մյուս Կողմին և համապատասխան վերահսկիչ մարմնին (հոդված 28, պարբերություն 2),

3.44. մյուս Կողմին ծանուցել Համաձայնագրի կատարումը 21-րդ հոդվածի համաձայն վերահսկելու և դրա հետ համապատասխանությունն ապահովելու համար պատասխանատու վերահսկիչ մարմնի մասին (հոդված 28, պարբերություն 3):

4. Վերոգրյալից բացի, Համաձայնագրի Նախաբանում որպես վերաբերելի նորմատիվ աղբյուրներ նշվում են մի շարք միջազգային պայմանագրեր, մասնավորապես՝

4.1. 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում կնքված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2002 թվականի մարտի 20-ին Ազգային ժողովի Ն-264-2 որոշմամբ (ՍԴՈ-350)), որն արտացոլված է նաև Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիայում,

4.2. 1981 թվականի հունվարի 28-ին Ստրասբուրգում կնքված «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2012 թվականի փետրվարի 27-ին Ազգային ժողովի ԱԺՈ-315-Ն որոշմամբ (ՍԴՈ-1001)),

4.3. 2018 թվականի հոկտեմբերի 10-ին Ստրասբուրգում կնքված «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի փոփոխող Արձանագրությունը (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2021 թվականի նոյեմբերի 24-ին ՀՕ-348-Ն օրենքով (ՍԴՈ-1588)):

5. Ըստ Համաձայնագրի՝ Համաձայնագրի կատարման համար պատասխանատու մարմիններ են գլխավոր դատախազությունը և արդարադատության նախարարությունը:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին, ինչպես նաև Սահմանադրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ Հայաստանի Հանրապետության՝ իրավական պետություն լինելու պահանջին և անձի՝ Սահմանադրության 3, 31, 34, 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքներին:

7. Միաժամանակ, գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրի

Հավելված 2-ի՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածի նպատակների համար Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների ցանկում նշված են Հայաստանի Հանրապետության դատարանները, որից հետո առանձնացված են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, Հակակոռուպցիոն դատարանը, Վերաքննիչ քրեական դատարանը և Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը՝ առանց Վճռաբեկ դատարանը հիշատակելու:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

6 օգոստոսի 2024 թվականի
ՍԴՈ-1742

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԵՎՐԱՋԱՍԹ) ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1742 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի օգոստոսի 6-ի ՍԴՈ-1742 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի օգոստոսի 6-ի ՍԴՈ-1742 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի

դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով

սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի օգոստոսի 6-ի ՍԴՈ-1742 որոշմամբ 2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական

դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայաց-

ված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության

պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող

պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է փրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«06» օգոստոսի 2024թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ

2024 թ. օգոստոսի 14-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը հանդիպում է ունեցել քաղաքավարական այցով Սահմանադրական դատարան այցելած՝ Հայաստանի Հանրապետությունում Իրաքի Հանրապետության դեսպանության գործերի նորանշանակ ժամանակավոր հավատարմատար՝ դոկտոր Ալի Աբդուլքարեմ Ութավիի հետ:

Հանդիպմանը ներկա են եղել նաև Հայաստանի Հանրապետությունում Իրաքի Հանրապետության դեսպանության առաջին քարտուղար Սաադ Ֆադալա Համզան և դեսպանության իրավական բաժնի պատասխանատու Հասան Կոկազ Կամաշը:

Ողջունելով հյուրերին՝ Սահմանադրական դատարանի նախագահը բարձր է գնահատել սահմանադրական արդարադատության ոլորտում հարաբերություններն ակտիվացնելու, փոխայցերի և փորձի փոխանակման վերաբերյալ Իրաքի Դաշնային գերագույն դատարանի առաջարկությունը և վերահաստատել է այդ ուղղությամբ աշխատանքների իրականացման պատրաստակամությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության Բարձր դատարանների հարաբերություններն ինստիտուցիոնալ մակարդակով ամրապնդելու ուղղությամբ աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ հարցեր:

Դոկտոր Ալի Աբդուլքարեմ Ութավին, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, նշել է, որ ինքն անձամբ բոլոր ջանքերը կներդնի՝ նպաստելու երկու բարեկամ երկրների միջև դատական ոլորտում համագործակցության արդյունավետության բարձրացման և ամրապնդման համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ «ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ» ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՍՏԱՑԵԼ ԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

Սահմանադական դատարանում տեղի է ունեցել 2024 թվականի «Ամառային դպրոցի» շրջանավարտների ավարտական վկայականների հանձնման պաշտոնական արարողությունը, որին մասնակցել են ՍԴ նախագահ Արման Դիլանյանը, փոխնախագահ պարոն Վ. Գրիգորյանը, դատավորներ տիկին Ս. Սաֆարյանը և պարոն Դ. Խաչատուրյանը, Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության նորանշանակ դեսպան տիկին Մարիեկ Մոնրոյ-Վինթերը, «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ նախագահ տիկին Լ. Հակոբյանը:

Միջոցառման շրջանակներում ՍԴ նախագահն առանձնազրույց է ունեցել ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության նորանշանակ դեսպանի հետ, որին հաջորդել է «Ամառային դպրոցի» մասնակիցների հավաստագրերի հանձնման հանդիսավոր արարողությունը: Շրջանավարտներին ողջունել են Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության նորանշանակ դեսպան Մարիեկ Մոնրոյ-Վինթերը:

Սահմանադրական դատարանի 2024 թ. «Ամառային դպրոցը՝ ՀՀ ԲՈՒՀ-երի իրավագիտության ֆակուլտետների ուսանողների համար կայացել է սեպտեմբերի 7-8-ին՝ Ծաղկաձորում: Դպրոցի ունկնդիրների համար դասախոսություններով են հանդես եկել ՍԴ փոխնախագահ Վահե Գրիգորյանը («Միջազգային և սահմանադրական իրավունքների հարաբերակցությունը»), դատավորներ Սեդա Սաֆարյանը («Սահմանադրական դատարանի դերը մարդու հիմնական իրավունքների պաշտպանության գործում») և Դավիթ Խաչատուրյանը («Մարդու իրավունքների սահմանափակման լեգիտիմությունը», «Դատական ակտիվիզմի սահմանները»), իրավապաշտպան Արտակ Զեյնալյանը («Սահմանադրաիրավական վեճ»): Բանախոսները նաև պատասխանել են մասնակիցների հարցերին:

«Ամառային դպրոցն» իրականացվել է «Աջակցություն Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ նախաձեռնությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի հրավերով պաշտոնական այցով Երևան է ժամանել Իրաքի Հանրապետության Դաշնային գերագույն դատարանի նախագահ Ջասիմ Մուհամմադ Աբուդի գլխավորած պատվիրակությունը:

Այցի ընթացքում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության Բարձր դատարանների ներկայացուցիչների մասնակցությամբ աշխատաժողով, որի ավարտին կստորագրվի «ՀՀ Սահմանադրական դատարանի և ԻՀ Դաշնային գերագույն դատարանի միջև համագործակցության մասին» հուշագիր:

ԻՀ Դաշնային գերագույն դատարանի պատվիրակությունը հանդիպումներ կունենա ՀՀ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԵՎ ԻՀ ԴԱՇՆԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի հրավերով սեպտեմբերի 7-ից 13-ը Իրաքի Հանրապետության Դաշնային գերագույն դատարանի նախագահ Ջասիմ Մուհամմադ Աբուդի գլխավորած պատվիրակության՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում սեպտեմբերի 12-ին ՀՀ Սահմանադրական դատարանում տեղի է ունեցել ՀՀ Սահմանադրական դատարանի և ԻՀ Գերագույն դաշնային դատարանի առաջին համատեղ աշխատաժողովը:

Հայաստանի և Իրաքի Բարձր դատարանների ընդլայնված կազմով աշխատանքային քննարկումների շրջանակներում մասնավորապես անդրադարձ է կատարվել Հայաստանում և Իրաքում Սահմանադրական դատարանի և Դաշնային Գերագույն դատարանի կառուցվածքին, գործունեության առանձնահատկություններին, հանրային իշխանության համակարգում Բարձր դատարանների դերին, այլ դատարանների և սահմանադրական մյուս մարմինների միջև փոխհարաբերություններին:

Աշխատաժողովն ամփոփվել է «ՀՀ Սահմանադրական դատարանի և ԻՀ Դաշնային Գերագույն դատարանի միջև համագործակցության մասին» հուշագրի ստորագրմամբ:

Հուշագրի նպատակն է նպաստել իրավական ոլորտում փոխգործակցության և համագործակցության շրջանակի ստեղծմանը,

սահմանադրական արդարադատության ոլորտում փորձի փոխանակմանը, երկու երկրների սահմանադրական իրավունքների և դրանց գործնական կիրառման ուսումնասիրությանը՝ սահմանադրական իրավունքի ոլորտում վեճերի լուծման համատեքստում՝ նպատակ հետապնդելով խթանել սահմանադրական արդարադատությունը և երաշխավորել համընդհանուր ճանաչում ունեցող ժողովրդավարական սկզբունքները, ինչպես նաև մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների պաշտպանության երաշխիքները:

Կարևորելով հուշագրի ստորագրմամբ հարաբերությունների մեկնարկը՝ ՀՀ ՍԴ նախագահ Արման Դիլանյանը հույս է հայտնել, որ հուշագրով նախանշված դրույթները գործնական դրսևորում կստանան՝ դառնալով սահմանադրական արդարադատության ոլորտում հայ-իրաքյան արդյունավետ համագործակցության գրավական:

ԻՀ Դաշնային գերագույն դատարանի նախագահ Ջասեմ Մուհամմադ Աբուդը, ընդգծելով Իրաքի Բարձր դատարանի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի կարևորությունը և շնորհակալություն հայտնելով հրավերի համար, իր հերթին, ՀՀ ՍԴ նախագահին և դատավորներին հրավիրել է փոխադարձ պաշտոնական այց կատարել Իրաքի Հանրապետություն՝ համոզմունք հայտնելով, որ նման աշխատանքային հանդիպումները զորեղ ազդակ կհանդիսանան երկու երկրների Բարձր դատարանների միջև ձևավորվող հարաբերությունների զարգացման համար:

Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցի շրջանակներում Իրաքի Դաշնային գերագույն դատարանի պատվիրակությունն այցելել է նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ծանոթացել Մայր տաճարի թանգարանում պահվող սրբազան մասունքներին և կրոնական արվեստի ուրույն նմուշներին, ինչպես նաև Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի Մատենադարան, որտեղ երկու երկրների բարձր դատարանների ներկայացուցիչները ծանոթացել են հայ միջնադարյան մատենագրությանը, ինչպես նաև այլալեզու ձեռագրերի հավաքածուներին: Հյուրերն այցելել են նաև Գեղարդի վանական համալիր, եղել են Գառնու հեթանոսական տաճարում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՎԱՇԻՆԳՏՈՒՆ



2024 թվականի հունիսի 24-ից 28-ը Սահմանադրական դատարանի պատվիրակությունը՝ փոխնախագահ պրն. Վահե Գրիգորյանի գլխավորությամբ, դատավորներ տկն. Սեդա Սաֆարյանի, պրն. Էդգար Շաթիրյանի և պրն. Դավիթ Խաչատուրյանի, ՍԴ մամուլի քարտուղար տկն. Քրիստինե Մելքոնյանի և ՍԴ նախագահի խորհրդական տկն. Ալինա Փխրիկյանի կազմով այցելել է ԱՄՆ, որտեղ հանդիպումներ են ունեցել ԱՄՆ Գերագույն դատարանում, ԱՄՆ այլ դաշնային դատարաններում, ինչպես նաև ԱՄՆ այլ դաշնային մարմիններում և իրավունքի գիտական շրջանակների ներկայացուցիչների հետ:

ՍԴ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ՄԵԿՆԵԼ Է ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

2024 թ. հունիսի 25-ից 29-ը Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանն աշխատանքային այցով մեկնել է Սանկտ Պետերբուրգ: Այցն իրականացվել է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի հրավերով:

Երվանդ Խունդկարյանը Սանկտ Պետերբուրգում մասնակցել է «Իրավունքների պաշտպանություն և սահմանադրական վերահսկողություն» միջազգային համաժողովին: 24 երկների բարձր դատարանների և միջազգային մասնագիտական կազմակերպությունների մասնակցությամբ տեղի ունեցած համաժողովում ընդգրկվել է երկու նիստ՝ «Սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովման նպատակով սահմանադրական վերահսկողության հարուցումը/նախաձեռնումը» և «Իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ որպես սահմանադրական վերահսկողության արդյունք» խորագրերով:

Այցի շրջանակներում ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանը մասնակցել է Սահմանադրական վերահսկման մարմինների Եվրասիական ասոցիացիայի աշխատանքին, որի ընթացքում ի թիվս այլ հարցերի քննարկվել են սահմանադրական բողոքի ընդունելիության չափանիշներին, ՁԼՄ-ների հետ համագործակցությանը վերաբերող հարցեր:

Սանկտ Պետերբուրգի XII միջազգային իրավական համաժողովի (ՍՊՄԻՀ) շրջանակներում ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանը մասնակցել է նաև «Արհեստական բանականության իրավունք և մարտահրավերներ» թեմայով սեմինարին: ՍՊՄԻՀ-2024-ի աշխատանքային ծրագիրը կազմվել է ինը թեմատիկ բլոկից, որոնք ձևավորվել են 700 բանախոսների մասնակցությամբ ավելի քան 120 պանելային նիստերից:

«Իրավունքը՝ գլոբալ հավասարակշռության հիմք» կարգախոսով համաժողովը մեկտեղել է իրավաբանական, դատական, քաղաքական շրջանակների, միջազգային մասնագիտական կազմակերպությունների, կրթական, ակադեմիական հաստատությունների և ԶԼՄ-ների ավելի քան 5000 ներկայացուցիչների՝ շուրջ 80 երկրներից:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱՉԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փախրիկյան

Ստորագրված է տպագրության՝ 10.08.2024թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը 70X100 1/16
Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
http://www.concourt.am

Вестник Конституционного Суда Республики Армения N 3(115)2024
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3(115)2024
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 3(115)2024

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am